

ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆ

ԸՆՏԻԲ ԵՐԿԵՐ

ՏԱՄԸ ՇԱՏՈՐՈՎ

Հատոր Երրորդ

Լեգենդներ, բալլադներ, պոեմներ,
դրամատիկական երկեր, երգիծանք եւ հումոր

ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏ - 2010

ՀՏԴ 891.981-8 Խանյան
ԳՄԴ 843
Խ 256

**Կազմեց՝ Սոկրատ Խանյանը
Խմբագրեց՝ Դովիկ Մուսայելյանը**

ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆԻ 80-ամյակի
կապակցությամբ հատորները տպագրվում են
ԼՂՀ գրողների միության վարչության եւ
Արցախի պետական հանալսարանի
գիտական խորհրդի երաշխավորությամբ

ԽԱՆՅԱՆ Ս. Ա.

Խ 256 Ընտիր Երկեր: Երրորդ հատոր: Լեգենդներ, բալլադներ, պոեմներ, դրամատիկական Երկեր, Երգիծանք եւ հունոր: Սոկրատ Խանյան: «Սոնա» գրահրատարակչություն, Ստեփանակերտ,
2010 թ.: 480 էջ :

Հատորում տեղ են գտել Սոկրատ Խանյանի
լեգենդները, բալլադները, պոեմները, դրամատի-
կական Երկերը, Երգիծական ստեղծագործու-
թյունները:

ԳՄԴ 843

ISBN 978-99941-58-37-9

© Ս.Խանյան, 2010

© «ՍՈՆԱ» ԳՐԱՇՐԱՄԱԿՉՈՒԹՅՈՒՆ



ՍՈԿՐԱՏ ԽԱՆՁԱՆ - 75

Լրացավ բանաստեղծ, թարգմանիչ, գրականագետ, լրագրող ու հասարակական գործիչ, բանասիրական գիտությունների դրկտոր, պրոֆեսոր, Արցախի պետական համալսարանի գրականության ու ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչ Սոկրատ Աղալարի Խանջյանի ծննդյան 75-ամյակը: Դժվար է հավատալ, որ մեր սիրելի Սոկրատը 75 տարեկան է, թեպես նրա հետ գրական առաջին փորձերից սկսած անցել եմ գրեթե կես դարի ստեղծագործական դժվարին ու ինքնահատատման մի երկար ճանապարհ, որի սկիզբն ազդարարել են նրա «Կարկաչ» եւ իմ «Բարի ճանապարհ» երախայրիքները դեռևս 1959 թվականին: Ասում եմ՝ դժվար է հավատալ, որովհետեւ տարիների խանդավառ, կենսախինդ, եռանդուն, գեղեցիկ ու շիկ Սոկրատի եւ այսօրվա 75-ամյա բանաստեղծի պահվածքի ու կեցվածքի, կենսասիրության, ստեղծագործական անսպառության միջեւ ոչ մի փոփոխություն չի զարնվում աչքի: Սակայն մի հայացք նետելով նրա գրական անուրանալի ու անժխտելի վաստակին՝ այնուամենայնիվ մտածում ես՝ չէ՞ որ այն տարիների արգասիք է, տանյակ տարիների, որոնց ստեղծագործական հանրագումարը 75-է:

Գրական ասպարեզ իշխելով 1950-ական թվականների սկզբից, նա ընթերցողների դատին ներկայացրեց 15 բանաստեղծական ժողովածու, ավելի քան մեկ տասնյակ գրականագիտական ուսումնասիրություն, գրականագիտությունն ու պոեզիան զուգորդելով իրար՝ հասնելով ակնառու հաջողությունների:

Ծնվել է 1930 թվականի հունվարի 22-ին, Հադրութի շրջանի Աղբովաղ (այժմ՝ Ակնաղբյուր) գյուղում, 1947 թվա-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԴԵՆ

Կանին գերազանց գնահատականներով ավարտել է Եղիլլու (այժմ՝ Ուստաձոր) գյուղի միջնակարգ դպրոցը, այնուհետեւ 1953-ին՝ Բաքվի Վ.Ի.Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի եւ գրականության բաժինը։ Աշխատանքային գործունեությունը նա սկսեց Բաքվում հրատարակվելով «Կոմունիստ» (հայերեն) թերթից՝ որպես լրագրող, միաժամանակ սովորելով ասպիրանտուրայում, որն ավարտեց 1965 թվականին՝ պաշտպանելով «Ն. Զարյանի դրամատուրգիան» թեմայով թեզ, ստացավ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան եւ մինչեւ 1969 թվականն աշխատեց իր ավարտած բուհի հայոց լեզվի եւ գրականության ամբիոնում որպես դոցենտ։ 1969 թվականին Ս.Խանյանը տեղափոխվեց Ստեփանակերտ եւ առ այսօր հայ գրականություն է դասավանդում Արցախի պետական համալսարանում։

Բեղմնավոր է Ս.Խանյանի գիտամանկավարժական գործունեությունը։ Չբավարարվելով ձեռք բերածով, նա ՀՀ ԳԱԱ Ս. Արենյանի անվան գրականության ինստիտուտում «Հայրենիքի ճակատագիրը հայ պոեզիայում (1950-90-ական թթ.)» թեմայով պաշտպանեց թեզ՝ ստանալով բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան։ Ս.Խանյանը 1984 թվականից դեկանվարում է նախ ԱրՊՀ-ի հայոց լեզվի եւ գրականության, ապա՝ գրականության եւ ժուռնալիստիկայի ամբիոնը։

Ս.Խանյանի 1959 թվականին «Կարկաչ» խորագրով բանաստեղծությունների ժողովածուին հաջորդեցին «Սիրտս թեզ հետ է», «Արեւար», «Լեռների երգը», «Չո անունից», «Կարոտի կրակներ», «Արցախյան ղողանջներ», «Իմ ծիածանը» եւ այլ ժողովածուներ։ «Արցախի արծիվը» պոեմի համար արժանացավ ԼՂՀ նախարարների խորհրդի

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԴԵՆ

Եղիշեի անվան մրցանակի: Ս.Խանյանը ԽՍՀՄ գրողների միության անդամ է 1958 թվականից, այժմ ԼՂՀ եւ Հայաստանի գրողների միության անդամ է: Բանաստեղծի ստեղծագործությունները պատշաճ գնահատականի են արժանացել Ն.Զարյանի, Մ.Արմենի, Մ.Կորյունի, Ս.Սողոմոնյանի, Դ.Գասպարյանի, Հ.Սերոբյանի, Ս.Արգումանյանի եւ այլ գրականագետների եւ բազմահազար ընթերցողների կողմից ու պատահական չեն, որ նա մի շարք մրցանակների դափնեկիր է, արժանացել է ԼՂՀ «Կաչագան Բարեպաշտ» մեդալի: Հիրավի, անուրանալի ու պատշաճ գնահատականի է արժանի Սոկրատ Խանյանի ստեղծագործական, գրականագիտական ու գիտամանկավարժական վաստակը: Նա այսօր էլ երիտասարդական խանդավառությամբ ու ավյունով շարունակում է իր ճակատագրական առաքելությունը, արժանանալով բոլորին ու համընդհանուրի սիրուն ու հարգանքին: Սրտանց շնորավորենք մեր ընկերոջն ու բարեկամին ծննդյան 75-ամյակի առթիվ եւ ամենայն բարին մաղթենք մեր մշակույթի անխոնջ նվիրյալին:

Արմեօ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Արցախի Կոմունիստ», հունվար, 2005 թ.

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՄԵՐ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԳՈՅԱՄԱՐՏԻ

Մեր ամենօրյա խոսք ու զրուցի մեջ մշտապես հոլովում ենք վանք, եկեղեցի բառերը, եւ չենք Ըկատում, որ դրանք հաճախ մեր հոգու մեջ ու մեր լեզվի վրա փոխարինում են բերդ հասկացությանը: Դա հատուկ է հայերիս մտածողությանը, որովհետեւ դարերի ընթացքում մեր ամենաապահով տունը միշտ էլ եղել են վաճերն ու եկեղեցիները՝ աստվածային մեր բերդերը:



Հայոց հինավուրց բերդերից է Գտչավանքը, որի շուրջն էլ հիմնականում ծավալվում են այն գործողություններն ու իրադարձությունները, որոնք պատկերվում են Օշանավոր բանաստեղծ Սուկրատ Խանյանի «Արցախի արծիվը» պրեմում: Այս գործը մեկ տարի առաջ կարդացել էի ու ողջունել ավագ գրչեղբորս՝ այս համարելով մեր գրական նորոյա ձեռքբերումներից մեկը: Պատկերման առանձնահատկությունները, հոգեբանական բացահայտումները, ժողովրդական մտածողության ընդգծված խորությունն ու հստակությունը առաջին իսկ ընթերցումից գրավեցին իմ ուշադրությունը: Եվ ցանկություն առաջացավ բարի ճանապարհի խոսք ասել դրամատիկ շեշտերով հարուստ մեր պատմությունը գեղարվեստորեն ներկայացնող այս ստեղծագործու-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՄԱՆ

թյանը, որը մեզանում հաջողված առաջին փորձերից մեկն է: Բանաստեղծը դարեր առաջ կատարված փաստերն ու իրադարձությունները մեկնաբանում, ներկայացնում է այնպիսի թարմությամբ ու համոզիչ պատկերներով, ասես դրանք տեղի են ունենում հենց հիմա, մեր մարտաշունչ օրերում: Եվ դեռ հողի մեջ չներծծված նույն այդ հողի համար կյանք տվող հայ քաջորդիների արյունը, պատմության տողերն արդեն ծաղկվում են բանաստեղծի վրձնով: «Ութը հարյուր հիսուներեքին» ծավալված գործողությունների տակ քիչ է մնում դնել այսօրվա գոյամարտի տարեթիվը՝ 1994 ամսի... Խոսքը պոեմում հեռու է ավելորդ պաճաճներից ու, ինչպես մեծ մտածողը կասեր, «արվեստի թույնից»:

Սար չէր, Եսայու սպիտակ ձին Էր ձյունի պես շողուն,
Որ խրխնջում Էր իր թռիչքի մեջ՝ Քիրսին հավասար:

Նշենք, որ «Արցախի արծիվը» պոեմի մեջ առկա են էպոսային տարրեր, որոնք եւ գրողի խոսքը դարձնում են ավելի գունեղ ու անմիջական: Հովսեփի, Եսայի Ապու Մուսեի, Շուշանի, Բուղայի եւ մյուս կերպարները բարձրացվել են գեղարվեստական պատշաճ մակարդակի վրա: Եսայու կերպարը ստեղծելիս հեղինակի հայացքն ավելի շատ սնունդ է առել մեր նորօրյա գոյամարտի հերոսներից, նրանց հայրենանվեր սիրագործություններից: Հենց դրանում պետք է փնտրել ինչպես Եսայու, այնպես էլ մյուս հերոսների կերպարների ամբողջական ու համոզիչ լինելը: Արցախյան գոյամարտի նահատակների անուններով հավատավոր մեր ժողովուրդը դեռ կկառուցի վանքեր ու եկեղեցիներ, մա-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԴԵՆ

տուրներ, որոնցով Ե՛լ ավելի կբարձրանան մեր լեռնագագաթները, Ե՛լ ավելի կսրբանան: Հիրավի, մեր մարտիրոսված քաջորդիների անունները մեզ համար նոր բերդեր են դառնում: Ու նրանցով Արցախն անառիկ է մնում:

Պատմահերոսական այս պոեմում բանաստեղծը հարուստ գույներով է ներկայացնում մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի այնպիսի մանրամասներ, որոնք ստեղծագործության ընդհանուր հյուսվածքին տալիս են պարզություն ու անմիջականություն, խոսքի համն ու հոտը տեղը պահում, գործողությունները դարձնում ակնահաճո... Այդպիսիք են, օրինակ, նշանդրեքի, հարսանիքի, զորահանդեսի, Եսայուշոջագայության, ճակատամարտի եւ այլ պատկերներ:

«Արցախի արծիվը» պոեմը ընդհանրության մեջ ընկալվում է որպես հին ու նոր ժամանակների խորքից ելած տաղանդավոր մի գոչի հիշատակարան: Հիշատակարան հայոց հին ու նոր գոյամարտի:

Կարդան ՀԱԿՈԲՅԱՆ

«Արցախի Արծիվը» պոեմի
առաջարանը, 1995թ.

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ՝ ԷՊԻԿԱԿԱՆ ՇՆՋՈՎ

Ումանտիկական-գեղագիտական կայուն կառույցը նրան, ի վերջո, հաճգեցրեց բանաստեղծական նոր ենթաժանրի բնագծի նվաճման: 1995-ին լույս տեսավ Ս.Խանյանի «Արցախի արծիվը» պատմական պոեմը, ուր իններորդ դարի հերոսամարտերի շնորհիվ պատկերվում է հին ու նոր Արցախի ազատաբաղդ ողին: Պոեմի գործողությունները ծավալվում են հրաշակերտ Դիզակ աշխարհում, Գտչավանքի բարձրաբերձ տեղաբներում: Այդ շրջանում մեր պատմական թշնամիները արաբներն էին հավանաբար, այստեղից էլ պատումի դյուցազնական շունչը, որը էպիզմի գերակա լիցքով գոեթե նորանոր քայլ է Ս.Խանյանի բազմամյա ստեղծագործական փորձառության մեջ: Մեր նշած էպիզմը իր վարպետ փոփոխական կշռությով,- հաճելիորեն հիշեցնում է Սասնա երգը, նրա անհաշիվ պատումները:

Պատմական նյութեր բանաստեղծը քաղել է թովմա Արծրունու երկասիրությունից՝ այն հարստացնելով ժամանակակից ենթմաստներով, վերհանելով թշնամու դեմ պայքարի մշտահմա բովանդակությունը: Հայրենի բնության խոր ճանաչումն օգնում է Ս.Խանյանին՝ առարկայական դարձնել երկիրը, հողը շնչով ու տրոփով լցնել մի հաճամանք, որ անուղղակի գորացնում է սերը, ընթերցողին ամրակայում դյութիչ ժննդավայրում, կյանքի իմաստը այսպես միահյուսում ազատագրության սրբազն հրին:

Շարաբա ցեղից ավագակապետ Բուղան, որ մինչեւ այդ ավերել է Կասպուրականն ու Սասունը, հրդեհել Սյունաց երկիրն ու Դվինը, հասել մինչեւ Գարդման ու Ուտիք, որ հնագան-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԴՅԱՆ

Դեցրել էր Շիրակի աշխարհը՝ իր ծառայամետ Սմբատ ու Մուշեղ Բագրատունիներով, իր մահն է գտնում Տողա անտառներում, այն Դիզակա բարձունքներում, որը պատսպարել էր իր վախկոտ սիրտը: Հագարացիները այստեղ հանդիպում են Եսայ դյուցազնի ու նրա կամարի գինվորների հումկու, միասնական բռունցքին, գինվորներ, որոնք բանաստեղծի գոտած արտահայտությամբ՝ պտտահողմ էին ու ցասման եռք:

Հայ միջնադարյան էպոսին բնորոշ հատկանիշներով հարուստ այս ստեղծագործության մեջ մենք տեսնում ենք նաև հավատարմություն թափառիկ, ավանդական պատումին, ինչպես, ասենք, երբ երկու կողմի հսկաները ելնում են մենամարտի՝ վճռելով պատերազմի ելքը: Այդպես էլ Եսայը եւ Բուլղա՛ «մեկը մայր հողից բուսած մի բարձունք», մյուսը՝ «Օենգ Վիշապ», «սեւագույն մի արջ»: Մենամարտի եռաշերտ պատկերների մեջ Սոկրատ Խանյանը ուրվագծում է այս երկու հակադիր կերպարները՝ դարձյալ ելնելով ավանդավեպի փորձառությունից իր հողը պաշտպանողը բարի է, արդարամիտ, զորեղ, բայց եւ գիշել գիտի, քանի որ վստահ է իր ուժերի ճիշտ բաշխմանը: Ահա թե ինչու նրա վերջին հարվածը անկասելի է: Եսայը սպանում է ոչ այնքան իր թշնամուն, որքան պատժում է չարը: Միջներ Բուլղայի կերպարում իշխում է պարծենկոտությունը, տիրակալի կիրքը, վավաշոտ, ավարառու եւ լկտի պահվածքը: Եթե Բուլղան զոհվում է կովի մեջ՝ գիշելով ուժեղին, Եսային սպանում են Օենգությամբ, թիկունքից, ընդհանուր հաղթանակի, ցնծության պահին...

Ինչ խոսք, «Արցախի արծիվը» պոեմի ծնունդը այս միջոցին խիստ խորհրդանշական է, այն տողորում է անվեհեր արցախցուն՝ իր այսօրվա պայքարում իմաստավորում հին ու նոր կոհկները՝ հավերժի տեսանկյունից: Նորագույն ժամանակներում ի հայտ են գալիս նոր հովսեփիներ ու եսայներ, թեև փոփոխական է թշնամին ու նրա պայքարի ձեւերի ընտրությունը:

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԴԵՆ

Անփոփոխ է միայն պայքարի ոգին, մեկ էլ՝ Եսայի, այսինքն՝ քաջության զարմն է անվախճան:

Բայց նրա ոգին թեւաբախում է Արցախի վրա.

Սեգ Տողասարի Գտիչն ու ոգին փարվում են իրար:

Սարը՝ պատվանդան, վաճքը՝ սուրբ գիրը, իսկ ոգին՝ ճրագ,

Մեկը՝ թանկ օջախ, մեկը՝ մագաղաթ, իսկ մեկը՝ կրակ:

Սարը կանգուն է, գիրը հոլովվող, կրակն անմարում,

Եվ այդ կրակով Եսայն ապրում է Հայոց աշխարհում:

Տեսել են նրան՝ դարերի անթեք ճամփեքը մտած,

Արցախի գրկում իր վրճացող նժույգին նստած,

Տեսել են նրան, նրան տեսնում են ու կտեսնեն դեռ՝

Թուրն ու խաչն առած՝ որպես Արցախի հավերժական տեր:

Խոսքը կապում է ժամանակները, Եսային դարձնում ազատության խորհրդանիշ: Այն տարողունակ է, հետապնդած իմաստը՝ ավելի քան պարզ, քանի կա Տեսանողը՝ Բանաստեղծի աչքը, անպարտ է Արցախը՝ հայատրով ու հայաշունչ: Նոր ժամանակի մեջ այդպիսի Տեսանող է ավագ սերնդի բանաստեղծներից՝ Սոկրատ Խանյանը, իսկ դա արդեն մատնանշում է յուրովի հոբելյան նշող բանաստեղծի թերեւս գլխավոր առանձնահատկությունը:

Սուրեն ԴԱՆԻԵԼՅԱՆ

Բանասիրական գիտությունների

դոկտոր, պրոֆեսոր

24 հունվարի, 1996թ.

«ԱՐՑԱԽԻ ԱՐԾԻՎԸ» ԱՍՔ Է

ԱՅՎԱՅԻ բանաստեղծ Սոկրատ Խանյանի ստեղծագործության վերջին տարիների հիմնական թեման արցախյան գոյամարտն է: Հայտնի են նրա «Նահատակ լուսո» պոեմը՝ նվիրված լեգենդար Ավոյին, հերոս տանկիստ, սուրբ նահատակ Մհեր Դանիելյանի քաջագործությունները պատկերող «Մհեր» վավերագրական պոեմը, բանաստեղծական շարքերը:

Իսկ նրա «Արցախի արծիվը» պատմական պոեմը գեղարվեստական հետաքրքիր մի ասք է Արցախի հերոսական ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմական կարեւոր ժամանակահատվածի հերոսապատումի մասին: Այն հատկապես հնչել է մեր օրերում, երբ դեռ շարունակվում են գրվել մեր մեծ պատմության անթառամ էջերը: Այս ստեղծագործությունը սերունդ դաստիարակող գեղեցիկ գործ է: Հեղինակը, չնայած իր պոեմի թեման ընտրել է 9-րդ դարի ռեպերն ու իրադարձությունները, բայց կարծես նկարագրում է մեր ժողովրդի ազատագրական պայքարի այսօրվա հերոսությունները: Իշխան Եսայու, Հովսեփի եւ մյուս նվիրյալների մասին կարդալիս, մեր հայացքի առջեւ վեր է հառնում հայ ժողովրդի հավաքական կերպարը, աննկուն ու աննահանջ արցախցին՝ միշտ պատրաստ իր արյան գնով պաշտպանելու հայրենի հողը: Ասես տեսնում ենք մեր օրերի հերոսներին՝ լեգենդար Ավոյին, գեներալներ Սամվել Բաբայանին ու Սեյրան Օհանյանին, գնդապետներ Մովսես Հակոբյանին եւ Կարո Բաբայանին, Սամվել Հարությունյանի... եւ շատ շատերին, որոնց կյանքի գլխավոր նպատակը Արցախի ազատագրական սուրբ գործն է:

Բանաստեղծ Սոկրատ Խանյանը հավատարիմ է մնացել այն ժամանակվա շրջանի ոգուն եւ միշտավայրին, որը դարձել է ստեղծագործության առանցքը: Նրանում տեսնում ենք Գտիչ Վանքն ու Տողասարը, Ամարասն ու Ազորիս, մեր այրուծիերի հերոսական հաղթարշավը, թշնամու պարտված զինվորների հուսահատ կախուստը... Այսուղև ամեն ինչ արցախական է՝ մետաքսակար չուխան հագին քաջ Խաչի պապին, Հովսեփը՝

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՄԱՆ

Սուլր գիրքն առած, ակոսների մեջ՝ եզներ լծած, զորականներ,
զորք ու զորագլուխ՝ ինչպես ամուր լեռնապար, Շուշանիկը՝
շուշանահոտ, խնջողա, ավելուկ, փիփերթ, թանով, չորաթան,
ժենգյալով հաց, ջջջլախսի...

Բանաստեղծ Վ. Հակոբյանը Ս. Խանյանի «Արցախի արծի-
վը» պոեմը գնահատել է որպես «Հիշատակարան մեր հին ու
նոր գոյամարտի»: Գրքի նախաբանում Հակոբյանը գրել է, որ
այդ գործը մեր գրական նորօրյա ձեռքբերումներից մեկն է իր
պատկերման առանձնահատկություններով, հոգեբանական
բացահայտումներով, ժողովրդական մտածողության ընդգծ-
ված խորությամբ եւ հստակությամբ: Գրքի բոլոր բաժինները
սերտորեն կապված են միմյանց: Նախերգանքում հետաքրքիր
գույներով նկարագրվում են Գտիչ Վանքը, լեռնապարը՝ ուր
աստղացող դարերի շունչն ու շքերթն է, վրնջացող այրուճիե-
րը, այրերը քաջասիրտ, պայազատներն Արցախի:

«Հարկահավաք» բաժինը կարդալիս, թվում է, թե նախկին
սովետական կարգերում ենք, երբ աղրքեցանական իշխանու-
թյունները ամեն կերպ ձգուում էին Ղարաբաղը պահել այնպի-
սի ծանր կացության մեջ, որ արցախցիները թողնեն հայրենի
հողն ու տունը եւ բոնեն պանդխոտության ուղին, այրախտվ՝
լուծելով նաև Ղարաբաղի հայաթափման խնդիրը: Ահավասիկ.

- Յուսուֆը կանչեց հարկահավաքին,
- Ասաց.- Արդլահ, Արցախը քոնն է,
- Կհասնես այստեղ բերքահավաքին,
- Իրար կիսանես ծեսեր ու տոներ,
- Առաջին հերթին կչափես ոսկին
- Եվ հետո կառնես, առանց մի խոսքի,
- Ամեն մի շնչից ուղիղ չորս դիրհեմ,
- Ամեն երդիկից մի պարան, մի գորգ,
- Մի ձիասոպրակ, ծեռնոցներ բրդե,
- Մի ջորի՝ թեկուզ տերը լինի որբ...

Եվ այս տիսուր պատկերներից հետո հաճելի ապրումներով
ենք կարդում այն տողերը, ուր նկարագրվում է Եսային՝ ասես
մի նոր Սասունցի Դավիթ...

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՄԱՆ

- Դատ լինի, թե դատաստան,
Վճիռը Եսայինն է,
Ճրագը Դիզակա տան
Ամենուր իր ձեռքին է...
Մարտերի ոգին է կուռ,
Մարսափը հագարացոց...

Ոճական հետաքրքիր ձեւեր է օգտագործել բանաստեղծ Ս. Խանյանը, նրա տողերը մերթ կրակված են, այրող, մերթ՝ հանդարտ ու հանդիսավոր... եւ դրան հասնում է վարպետորեն, հաճախ էլ, դրանք միավորելով, ստեղծում մի հետաքրքիր ու բարդ գամմա...

Պոեմն ունի նաև ճանաչողական մեծ արժեք, նրանում բանաստեղծական պատկերավոր լեզվով հարուստ տեղեկություններ են հաղորդվում Արցախի պատմության, մեր դարավոր եկեղեցիների, սուրբ այրերի, գարմանահրաշ խաչքարերի եւ մեր հերոսական ժողովրդի մասին, այն ասես ազգագրական գողտրիկ տեղեկատու է, այստեղ մենք տեսնում ենք մակարների խումբ, հարսանիքի թամադա, զունաչիների, ընծաներ՝ արծաթե գոտի, մետաքս ու կերպաս եւ այլն:

Բանաստեղծ Ս. Խանյանի «Արցախի արծիվը» պոեմն ունի դաստիարակչական մեծ արժեք, սերունդ կրթող գործ է, երիտասարդների մեջ ծեւավորում է հայրենասիրական սուրբ զգացմունքներ, վրեժի եւ ցաման կողքին՝ մարդասիրություն, հարգանք, սիրո կողքին՝ ատելություն՝ թշնամու ու բարբարությունների նկատմամբ, ծնողասիրություն, ազնվություն, բարոյական այլ վսեմ հատկանիշներ։ Պոեմը ժամանակի ծնունդ է եւ կունենա երկար կյանք։

Արկադիա ԹՈՎՄԱՍՅԱՆ

Բանաստեղծ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

«Եղիցի լույս», ռեկտեմբեր, թիվ 9, 1995 թ,

ԽԱԶԻ ՕՐՀՆԱՆՔՆ ՈՒ ԹՐԻ ՇԱՌԱՋԸ



Սոկրատ Խանյանը օրերի հետ համաշափ քայլող բանաստեղծ է: Նա ապել է բարդ, բազմակողմանի եւ ներդաշնակ կյանք: Ե՛վ անձնական, Ե՛ւ քաղաքացիական մտահոգությունները նրան օր-օրի հարստացրել են, իմաստնացրել: Ժողովրդի ճակատագրի հետ կապված բոլոր մտահոգիչ հարցերին նա պատախանել է Ե՛ւ որպես բանաստեղծ ու լրագրող, Ե՛ւ որպես գրականագետ, Ե՛ւ որպես հասարակական գործիչ: Նա անդադար հետեւել է ինքնաստուգման եւ ինքնաճանաշման սկզբունքին: Ինչ արել է, համարել է քիչ, ծգտել է ավելին անել, եւ որ կարեւորն է, բյուրեղանալ: Ղարաբաղյան պրոբլեմի լուծման հենց առաջին օրվանից բանաստեղծը առաջին շարքերում էր: Նկատի չունենալով Պոլյանիչկո-Սաֆոնովյան ռեժիմի սարսափելի հետեւանքները, նա արդարացի իր խոսքն էր ասում հանրահավաքներում, տարբեր երկրներից ժամանած պատվիրակների հետ հանդիպումներում, ելույթ էր ունենալու ռադիոյով, հեռուստատեսությամբ, թերթերի եւ ամսագրերի էջերում: Մոսկվայից Աղրբեցանի կառավարող շրջանների պատվերով Ստեփանակերտ ժամանած իրավապահ մարմինների կողմից բազմիցս կանչվել է Ս. Խանյանը: Նա հայ ժողովրդի պատմության իր իմացությամբ ապացուցում էր, որ Արցախը, Ուտիքը, Մեծ Հայքի 10-րդ եւ 11-րդ նահանգներն են, որ այդ տարածքում ստեղծված Այութական եւ հոգեւոր մշակույթի հուշարձանները հայկական մշակույթի խոսուն վկայություններ են, ապացուցում էր

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱԴՐԵՆ

Լենինի եւ Ստալինի ապօրինությունը Ղարաբաղի, Նախիջենացի հարցում:

Խանյանը Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մանկավարժ-գիտնականների հետ միասին հետամուս էր լինում աղոքեցանցի վայ գիտնականների ելույթներին, հոդվածներով եւ նամակներով պատասխանում, ապացուցելով նրանց զեղծարարությունը հայ ժողովրդի, հատկապես արցախահայ հատվածի պատմության վերաբերյալ:

1990թ. ապրիլի 24-ին Հայոց Մեծ եղեռնի 75-ամյակի առթիվ Ստեփանակերտում՝ Մեծ Հայրենականի, Սումգայիթի եւ հայոց երկրաշարժի հիշատակին կառուցված համալիրում հավաքված ժողովրդի առջեւ ելույթ ունենալու պատճառով, երկու օր անց, դաժանորեն քաշքաշելուց հետո Պոլյանիչկո-Սաֆոնովյան ոհմակի հրամանով ձերբակալեցին բանաստեղծ Ս. Խանյանին, Գ. Գաբրիելյանին, Հ. Բեգլարյանին, Ա. Թովմասյանին, դոցենտներ Հ. Գրիգորյանին եւ Ռ. Բալյայանին: Նրանց նախ բանտարկեցին Ստեփանակերտի ջրի մաքրման շենքում: Այն ժամանակվա կուսակցության մարզկոմի շենքի առջեւ ժողովուրդը ցույց կազմակերպեց, պահանջելով ազատ արձակելու իր մտավորականներին: Գեներալ Սաֆոնովի հրամանով խորհրդային զինվորները կրակ բացեցին ցուցարարների վրա՝ եղան վիրավորներ:

Սակայն հալածանքը հայ մտավորականների դեմ դադար չի առել: Չնայած այդ ամենին, Արցախի մտավորականները, այդ թվում եւ Ս. Խանյանը, շարունակել են իրենց գործունեությունը՝ ժողովրդին համախմբելու, նրա գոյամարտը գեղարվեստորեն արտացոլելու ուղղությամբ:

Ինչպես երբեք, չափազանց բեղմնավոր գտնվեց Ս. Խանյանի գրիչը ղարաբաղյան շարժման եւ պատերազմի տարիներին: Նա ընթերցողին հանձնեց բանաստեղծական իր ժո-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՄԱՆ

ղովածուները. «Կարոտի կրակներ» (1990), «Արցախյան ղողաքներ» (1991), «Ցավի եւ սիրո պոեզիա» (մենագրություն Վ. Հակոբյանի ստեղծագործության մասին), «Թ. Հովհաննի սիրանքը» (գիտական ուսումնասիրություն), «Բ. Զանյանի պոեզիան», «Գ. Գարդիելյանի աշխարհը», «Տաղանդի լույսը» (Ժ. Անդրյանի մասին), «Արցախյան պատերազմը եւ հայ պոեզիան» աշխատությունները: Բացի դրանցից, Ս. Խանյանը սիստեմատիկորեն հանդես եկավ բանաստեղծական նոր շարքերով, սեղանին դրեց «Արցախի արծիվը», «Մհեր» եւ «Նահատակ լուսո» պոեմները: «Արցախի արծիվը» պոեմի համար Ս. Խանյանը արժանացավ ԼՂՀ նախարարների խորհրդի 1992թ. Եղիշեի անվան մրցանակից: «Նահատակ լուսո» պոեմից առանձին հատվածներ տպագրվեցին «Հայ գինվոր» եւ «Մարտիկ» թերթերում: Պոեմը նվիրված է լեգենդար հերոս Մոնթե Մելքոնյանի (Ավոյի) սուրբ հիշատակին:

Ս. Խանյանի ժողովածուների մասին տպագրված գրախոսականներում համարյա բոլոր քննադատները նկատել են, որ նրան հաջողվում է ստեղծել բանաստեղծական սյուժեներ: Եվ ոչ միայն այդ: Դեռևս երրորդ՝ «Սիրտս ձեզ հետ է» գրքում (1966) Ս. Խանյանը գետեղել էր «Հայրենի գյուղ» քննադական պոեմը: Անդրադառնալով գյուղական թեմային, Ս. Խանյանը բավականին հաջող թեմաներով ստեղծել է սրտառուց մի երկ, որի մեջ ճշմարտացիորեն արտացոլված են արցախցու սերը դեպի իր հայրենի օջախը, նրա խիզախությունը, հայրենասիրությունը եւ հայրենի հողից բարիքներ քամելու նրա հմտությունն ու վճռականությունը: Հինգ մասից բաղկացած պոեմում ընթերցողի առջեւ բացվում է հետաքրքիր մի աշխարհ՝ իր ուրույն գույներով, մարդկանցով, երազանքներով:

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՄԱՆ

Խանյանի հաջողությունները պոեմի ժանրի բնագավառում առավելագույնս բացահայտվեցին «Արցախի արծիվը», «Նահատակ լուսո», «Մհեր» ծավալուն ստեղծագործություններում:



* * *

Արցախյան պատերազմի տարիներին Ս. Խանյանը դրսեւորեց իր ստեղծագործական կարողությունները նոր երանգներով, նոր ընդգրկումներով։ Նա ուղղակի նոր թռիչքներ ունեցավ։ «Արցախի արծիվը» պոեմը հանդիսացավ բանաստեղծի հարուստ փորձի արգասիքներից մեկը։ Մի հայացք ձգելով գրականության պատմությանը, հանդիպում ենք բազմաթիվ օրինակների, երբ արվեստագետը մտքի վերելքի շրջանում լրիվ բացահայտում է իր տաղանդը, իհարկե, շարունակելով նախորդ շրջանի իր ձեռագիրն ու նախասիրությունները։ «Արցախի արծիվը» Խանյանի համար նման օրինակի դրսեւորումներից է։ Պետք է նշել, որ Խանյանը իր ստեղծագործություններում մի անգամ չէ անդրադարձել մայր ժողովորի անցած հերոսական էջերից։ Հայաստանին եւ Արցախին նվիրված նրա բանաստեղծությունների շարքում մենք զգում ենք այդ հանգամանքը։ Տարիների կուտակումները այստեղ կատարեցին իրենց դերը։ Կենսական խորը տպավորություններով եւ գեղարվեստական հնարանքների ձեռքբերումներով հարուստ բանաստեղծը ձեռք մենաց 9-րդ դարին, մի ժամանակահատված, երբ հայ ժողովուրդը հեծում էր արարական խալիֆայության ծանրածանը լծի տակ։ Հայ պատմագրության ականավոր ներկայացուցիչ Թ. Արծրունին իր «Արծրունյաց տան պատմություն» գրքում հանգամանորեն նկարագրել է արարական զավթիչների դեմ այն կենաց եւ մահու պայքարը, որ

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԴԵՆ

Մղել է հայ ժողովուրդը Հայոց աշխարհի տարբեր մասերում։ ԱՅսահ պատմիչը դարերին է հանձնել առանձնապես Մուշում, Սասունում եւ Արցախում տեղի ունեցած հերոսական այն ընդվզումները, որ կատարել է մեր ժողովուրդը։ Մուշում Յուսուփ գորավարի, այնուհետեւ Բուղայի ոտնձգություններն ու հալածանքները հայ ժողովրդի դեմ պատմիչը Ակարագրել է անհուն ցասումով։ Հայտնի է, որ 850թ. Մուշում Յուսուփ ոստիկանի սպանությունից հետո Հայաստան Աերխուժեց արաք գորավար, ծագումով թուրք Բուղան բազմահազարանոց բանակով։ Նա հրի ու սրի մատնելով հայոց գյուղերն ու քաղաքները, հասել է Դիզակի գավառի Տող գյուղին։ Այն ժամանակ Դիզակի առանցահիկ իշխան Եսայի ապու Մուսեն իր փոքրաթիվ զորքերով դիմակայեց Բուղայի բազմահազարանոց բանակին եւ ջախչախիչ հարված հասցրեց նրան։ Թ. Արծրունին հպարտության զգացումով է Ակարագրում Եսայի ապու Մուսեի հերոսամարտը 853 թվականին, որը մոտեցրել է հայ ժողովրդի պետականության վերականգնումը 885 թվականին։ Ս. Խանյանը որպես թեմա ընտրելով պատմական այս իրադարձությունը, փաստորեն, արձագանքել է արցախյան արդի պատերազմին, որի ընթացքում հերոսացան Եսայի ապու Մուսեի թոռները հանդիսացող բազում արցախցիներ։ Պատմությունը լեզու առած խոսեց Խանյանի պոեմում՝ հանուն այսօրվա հաղթանակի եւ ապագա խաղաղ կյանքի։

Պատմության ընկալման իր փիլիսոփայությամբ Խանյանը Ակարագրում է հայ ժողովրդի հերոսական Էջերը, այն Աերկայացնելով որպես դաս այսօրվա սերնդի համար։ Օտար բռնակալների դեմ մղած պայքարը հայ ժողովրդի կենսագրության մեջ ստեղծել է ապրելու եւ գոյատեւելու յուրովի կենսահայեցողություն։ Առաջին հերթին նա ընդգծել է ժողովրդական իմաստությունը, որ սրով եկող թշնամու դեմ պետք է մարտնչել

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՄԱՆ

Արով, այլապես չես ապրի: Այս կենսահայեցողությունն էլ հենց ընկած է Խանյանի պոեմի հիմքում:

Պոեմը բաղկացած է նախերգից, վերջերգից եւ երեք մասից: Առաջին մասը կազմված է հինգ գլխից, երկրորդ մասը՝ վեց, երրորդ մասը՝ ինը: Այն աչքի է ընկնում կուռ կառուցվածքով, պատկերային թարմ հյուսվածքով, գաղափարական հստակ ու առողջ լուծումներով: Սկզբից մինչեւ վերջ զգացվում է պոեմի հղացման երակը, այն է՝ սրից եկողը սրով էլ կընկնի: Կառուցվածքային տարրերի յուրահատկությամբ պոեմը հայ դասական պոեմի ավանդույթների գեղեցիկ շարունակությունն է: Պոեմի նախերգում Խանյանը ընթերցողին տեղափոխում է Գտիչ վանք: Նա, թերթելով անցյալի գիրքը, հոգու եւ մտքի աչքերով տեսնում է մեր պապերի հերոսական գոյամարտը: Դա մի դաս է, որ ազդարարում է միշտ.

Հող ու թի լուսե ոգին
Գիրն է ազգի եւ մարդու,
Ով դրանցով կամքը կոփի,
Ծնկի չի գա իր կյանքում:

Խանյանը նախերգում դիմում է տեսիլքի հնարանքին: Սա պայմանական մի ելակետ է, որ հնարավորություն է տալիս ընթերցողին մտքով տեղափոխվելու անցյալի գիրկը: Տվյալ դեպքում Տողասարի գագաթին եղած հեքիաթային աշխարհի մասին է խոսքը, ուր երեւում են վրնջացող այրուձիեր, գիճուրյալներ, արիասիրտ այրեր, ահարկու գորավարներ, բիրտ ցեղեր, հարկահավաքներ, հարկատուներ եւ այդ ֆոնի վրա Արցախի պայազատները: Բանաստեղծը նշում է իր տեսիլքային հանդիպումը իշխան Եսայու հետ, որի հագին «Մետաքսակար չովսան» է, կողքին կապած «Թուրը Առան»: Բանաստեղծը իշխան Եսայու հանդեպ եղած իր ժառանգորդի սերը ընդգծելու

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԴԵՆ

Համար նրան համեմատում է Խաչի պապի հետ: Հայ մարդու սովորությամբ Եսայը բացում է մառանի դուռը, իր թրծած գավաթով առնում գինի ու հաց, պապենական հավատով խմում երեք կենաց: Հեքիաթային իմաստուն ծերունու պես Եսայը առաջինը խմում է Արցախյան հողի, երկրորդը՝ այդ հողը պաշտպանող Երի, երրորդը՝ արցախցու կենացը: Կենացները առաջարկելուց հետո իշխան Եսայը հեծնում է իր ծին եւ սլանում Բուղայի դեմ, որ վիշապի պես չոքել էր Տողասարի լանջերին: Բանաստեղծը, իրեն համարելով այդ պայքարի պատմագիր, դիմում է ընթերցողներին:

ԵՎ բերում եմ իմ այս գիրը,
Որ ձեր սրտի հետ խոսի,
Պատմի անմահ քաջի մասին,
Մեր պապերի հավատով,
ԵՎ Եսայու կենացն ասի
Հենց իր թողած գավաթով:

«Արցախի արծիվը» պոեմի նախերգանքում Ս. Խանյանը ընթերցողի մեջ ստեղծում է համապատասխան տրամադրություն: Նա ընտրելով տեսիլքային տարրը, ակնարկում է իշխան Եսայու հերոսական պայքարը, որ այնուհետեւ ցույց է տալիս պոեմի ընթացքում: Խանյանը պոեմի առաջին մասի առաջին գլխում նկարագրում է Տողասարի գագաթին թառած Գտչավանքի մի բարեժափիտ առավոտ, լիքը աչքալուսանքով: Գավառապետ Հովսեփի տանը տղա է ծնվել: Բանաստեղծը հենց պոեմի սկզբից դիմել է բանահյուսական, Էպոսային նկարագրության հնարանքներին, եւ դա մեծապես հաջողվել է նրան: Գտչավանքում թելին է տալիս Հովսեփի տղա ունենալու լուրը, անմիջապես սկսվում է նորածնի փառաբանությունը:

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԴՅԱՆ

Մանուկ չէ նա, հրաշք է մի,
Աչքերն արեւ,
Լուսնաշողիկ այտեր ունի,
Թմփլիկ թեւեր:
Ժամերով է աճում տղան
Բարուրում պերճ,
Քիչ է մնում նստի, խաղա
Մի օրվա մեջ:

Առասպելական երեւույթը ուրախացնում է ժողովրդին եւ նորածնի հորը առաջին հերթին այն բանի համար, որ տղան մեծանալով, «Հոր թիկունքը դառնա, գավառ պահի, Պիտի նստի իր Դիզակա Պապի գահին»: Հովսեփը պատմական անձնավորություն է: Թ. Արծրունին հայտնում է, որ նա առանշահիկ-ներից է, եղել է երեց, բայց սիրել է թուրք, հզորացրել ու շենացրել գավառը: Նա իր որդուն կնքել է Եսայ մարգարեի անունով: Ինչպես նկարագրում է բանաստեղծը՝ Եսայի ծննդյան լուրը ամբողջ Արցախում հնչում է որպես ախորժալուր երգ: Դա բնական զգացում է, որովհետեւ Դիզակը հանդիսացել է Արցախ աշխարհի հարավային դարպասը՝ փոված Արաքսի ափին՝ ընդգրկելով բավականին ծավալուն տարածք:

Ս. Խանյանը հմտորեն եւ անմիջական-հոգերանական շտրիխներով է պատկերում Հովսեփի հայրական զգացումները.

Իսկ Հովսեփը թեւածում էր
Արծվի նման,
Երգ էր ասում, սեղան բացում,
Որդեհմա:
Թուրն էր հագել, գոտին կապել,
Հայկածին էր,
Զարի դուռը պիտի փակեր,-
Արցախի էր:

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՄԱՆ

Ս. Խանյանը իր կենսափիլիսոփայությամբ, մտածողությամբ, զգացմունքներով կարողացել է թափանցել ստեղծագործության բուն էռության խորքերը եւ գեղարվեստորեն բացահայտել դեպքերն ու իրադարձությունները, կերպավորել իր հերոսներին: Պոեմն ունի սուր կոնֆլիկտ, բանաստեղծը կոնֆլիկտի հիմքում դրել է հայ ժողովրդի ըմբռստ պայքարը արաբական խալիֆայության դեմ: Այս հանգամանքն էլ հենց պոեմին հաղորդել է Էպոսային բնույթ: Պոեմի սկզբից մինչեւ վերջը հանդես են գալիս Աերհակ ուժերը՝ ազատաբաղձ հայ ժողովուրդը եւ զավթիչ խալիֆայությունը: Վիպական երկի թելադրանքով Խանյանը խմբավորել է իր հերոսներին: Որոշակի հարաբերությունների մեջ դնելով դրական եւ բացասական կերպարներին, Խանյանը ստեղծել է հայրենասիրական մի հիանալի երկ: Ելնելով պոեմի սյուժեից, բանաստեղծը ներկայացնում է հաջորդաբար ծագող ու լուծվող երեւույթները, հակադրությունները: Դրանով է բացատրվում պոեմի իրադարձությունների ժամանակագրական նկարագրությունը: Այն սկսվում է գլխավոր հերոսի՝ Եսայու ծննդով, բայց բավականին տեղ է հատկացված նրա հորը՝ Գավառապետ Հովսեփին: Հովսեփը հաջողված կերպար է: Խանյանը կարողացել է նրան ներկայացնել հայ-արաբական փոխհարաբերությունների ֆոնի վրա: Հենց առաջին մասի առաջին գլխում ցույց է տրված Հովսեփի համբավը ոչ միայն Արցախ աշխարհում, Հայաստանում, այլև արաբական խալիֆաթի մոտ: Նրա անունը լսելով, խալիֆաթը հոխորտում էր եւ ձգտում վրեժինդիր լինել նրան՝ հանդուգն բնավորության համար: Հովսեփը լավ գիտեր թշնամուն՝ նենգ խալիֆին.

Գիտեր, որ նա մի հրեշ է,
Վիշապ է, ցին:

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՄԱՆ

Ուստի միշտ պատրաստ էր՝ դիմակայելու հագարացոց զորաբանակներին:

Առաջին մասի երկրորդ գլխում նկարագրված է արդեն տասնութամյա Եսայու քննավորությունը։ Այդ տարիքում Օրա առջեւ բացվել էին «Գիտության կապ ու հնար»։ Եսայը հանճարաշուրթ երիտասարդ է, հմտւտ գրիչ է, կարգվել է վարդապետ, եղել է Արցախի բոլոր գավառներում։

Նա տիրապետում է հունարենին, պարսկերենին, արաբենին։ Բայց ամենից կարեւորը, ինչպես ներկայացնում է բանաստեղծը, այն է, որ.

Սերտել է թրի լեզուն,
Գնդեր է վարում հոր հետ,
Զինվոր էր մի Հայկազուն,
Դարձել է ռազմագետ։
Թե հայրը կովի մեկնի,
Թիկունքին Եսայն է քաջ։
Հոր միտքը ինչ էլ երկնի,
Որդին է քննում առաջ։
Դատ լինի, թե դատաստան,
Վճիռը Եսայինն է,
Ճրագը Դիզակա տան
Ամենուր իր ձեռքին է։

Եսայը ժողովրդական հերոսի համբավ է ձեռք բերում։ Նա շշլախտի է խաղում գյուղացիների զավակների հետ, Օրանց հետ լինում կիրճերում ու ձորերում։ Նա «Իշխանի հետ իշխան է, Մշակի մոտ՝ ռամիկ»։ Տասնութամյա Եսայը արդեն հասցրել է դառնալ մարտերի ոգին։ Լուրջ հասնում է Յուսուֆ ոստիկանին, որ Հովսեփի գործերը արդեն վարում է որդին…

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՄԱՆ

Գնալով պոեմում ավելի հարստանում եւ բացահայտվում են հերոսների ըմբռնումները, նրանց հոգեքանությունը: Երրորդ գլուխը, որ կոչվում է «Հարկահավաք», ճշմարտացի ներկայացնում է արաբական խալիֆայության ծանր հարկահանություններն ու դրանց արյունալի հետեւանքները: Հիմք ընդունելով հայ պատմիչներ Սեբեոսի, Մ. Կաղանկատվացու, Ղեւնդի, Հ. Մամիկոնյանի, Թ. Արծրունու, Հ. Դրախմանակերտցու պատմագրություններում եղած հաղորդումները արաբական հարկահանությունների եղանակների ու չափերի մասին, Խանյանը գեղարվեստորեն հաջողված պատկերներով նկարագրում է դրանք:

Հարկահավաքին հաջորդում է գորահավաքը: Հենց «Զորահավաք» Էլ Վերնագրված է պոեմի չորրորդ գլուխը: Խանյանի բանաստեղծական կուտակումներն այստեղ տվել են իրենց արդյունքը: Թարմ ու անպանույն մի պատկերով է սկսվում գլուխը: Նկարագրելով աշնանային Արաքսը, Խանյանը նուրբ շտրիխներով պատկերում է Դիզակը եւ նրա դիրքը Արցախի համար: Հարավային սահմանը՝ Արաքսը, Հյուսիսայինը՝ Իշխանագետը: Երկու քույրեր, մեկը մյուսին հարեւան, բայց վրդովվել են նրանք: Մուշից հասել է ահարկու բոթը, որ հինգ բյուր գործով նենգ հարկահավաք Արդղլահը մահվան կոհինչով սուրում է դեպի Դիզակ, դեպի Արցախ: Դիզակցին աշխատանքը թողած գենք է վերցնում՝ պաշտպանելու իր օջախն ու տունը: Խանյանը վարպետորեն է նկարագրում պատերազմի հետեւանքով թափուր մնացած դաշտերն ու արտերը, այգիներն ու մառանները: Բանաստեղծական հրաշալի մի պատկեր է հետեւյալ հատվածը.

Ու վրդովվել է դիզակցու հոգին,
Քթոցը թողած թթենու գոգին,

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՄԱՆ

Յորենը կալում, խնձորը ծառին,
Աշնան նոր լորին ձիգ քոլասարին,
Բացված բամբակը անծիր դաշտերում,
Քաղցր խաղողը մեծ-մեծ տաշտերում,
Եզները անլուծ, ճիպոտը մաճին,
Մեռոնված գինու գավաթը փարչին,
Թողած նոր խուզը ոչխարի հոտի,
Վերցրել է թուրը ու կապել գոտին...
Տունն ու գործերը հանձնելով կանանց,
Այրերն իշել են կիրճերը անանց...

Արցախյան անձնանուններից օգտվելով, Խանյանը ժողովրդական զորաբանակի հայրենաշունչ մի հմայիչ պատկեր է ստեղծել: Կարդալով այն, զգում ես, որ հայրենյաց կոփվը մղում են երեկվա մշակն ու դարբինը, ուսուցիչն ու հոգեւորականը: Այս պատկերը արցախյան կոլորիտի վառ նմուշ է: Թվարկելով մարդկանց ու գյուղերի անունները, բանաստեղծը ընդգծում է նաև պատմական Դիզակի սահմանները: Զորաբանակի մեջ են տողեցի Զանին, քոչքեկցի Փանին, տումեցի Ադամը, թաղասեղցի Արամը, ագոխցի Արշամը, ջրակուսցի Սարգիսը: Իրենց խմբերով պայքարի են եկել Հաղորդի, Էտիլի, Հարավի, Ակնաղբյուրի, Ցորի, Մեծ Թաղերի գյուղացինները:

Ժողովրդական զորաբանակը ղեկավարում է Հովսեփը, որի մոտ որդին է՝ Եսայը: Նրանց համեմատելով Մռովի եւ Քիրսի, ինչպես նաև Մասիսների հետ, Խանյանը ընդգծում է հայրենի լեռների եւ նրանց տերերի հավերժացած եւ կենսական ավիշ դարձած անխախտելի կապը: Զորաբանակը Տողի կիրճերից պիտի գնա ափը Արաքսի, դեպի ստորոտը Սյուս Հարանդի, դեպի Հորադիզ, որտեղով պիտի խուժի Աբովլահը: Պատերազմական գործողությունները պիտի ծավալվեն Արաքսի ափին:

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԴՅԱՆ

Հովսեփը իմաստուն եւ քաջ զորապետ է: Նա գործում է ժողովրդական կենսափորձին ապավիճած: Իր շուրջը համախմբելով զորքն ու զորականներին, խորհուրդ է տալիս բռունցքվել, հիշեցնելով.

**Ամեն մի երկիր՝ իր մեջ բաժանված, միշտ էլ կչռի,
Միասնությունն է կոիվների մեջ ոսկին գերում:**

Ծփվելով ժողովրդի հետ, Հովսեփը լավ գիտե ռամիկներին, ազատին, մեծին, ազատորդուն, գիտե, թե «մարտի մեջ թշնամու վիզը ով խիստ կոլորի, ով դիտակետը կարող է հսկել գիշերներն արթուն»: Նրա խոսքը հակիրճ է, վճռական. «Կամ պիտի մեռնենք, կամ կյանք պարգեւենք մեր որդիներին»: Հոգեբանական պատկեր է ստեղծվում այստեղ, չէ՞ որ Հովսեփի մոտ հենց իր որդին է՝ Եսայը. «Եթե մեկտեղ են, ամեն մի սառուցյ կարող են ջարդել»:

Խանյանը ուսումնասիրել է հայոց այրուծիու պատերազմական արվեստի մասին եղած հաղորդումները եւ հմտորեն օգտագործել պոեմում: Հենց այս գլխում նա ներկայացնում է Դիզակի այրուծիու մարտական գործողությունները, որ հաճելի տպավորություն են թողնում: Թշնամին անհամար է: Պատմիչ թ. Արծրունու գրքից օգտվելով, բանաստեղծը նկարագրում է թշնամու բանակի ամբողջ կազմը, որի մեջ են փակլեւան-ըմբշամարտիկներ, բազում դրոշներ, անքանակ փողեր, անհամար թմբուկներ, նիզակակիրներ, նետաձիգներ, կապաճակիրներ, տապարակիրներ, մեքենաներ: Նրանց դեմ կանգնած է Դիզակի այրուծին: Երեք կողմից սեղմելով թշնամուն, արցախսցիները հրաշքներ են գործում:

Տեղի է ունենում ճակատամարտ: Վճռական ու հանդուգն այդ գոյամարտը պատկերային համոզիչ հյուսվածքով է ստեղծված պոեմում: Երկու կողմերի անզիջում պայքարը,

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՄԱՆ

Հովսեփի եւ Եսայու զորավարությունը, հայ զինվորների խիզախությունը Ակարագրված են ասես ականատեսի կողմից: Հոգեբանական մի լուծում է մտցված այստեղ: Թշնամին շուրջկալ է անում Եսայուն, նրա մահն անխուսափելի էր, սակայն Հովսեփը կրծքով պաշտպանում է որդուն, ինքը դառնալով թշնամական նիզակի զոհը: Մարտը վերջանում է դիզակցիների հաղթանակով: «Սայր Արաքսի գրկից բարձրանում է արեւը նորից», ուսերի վրա զորքը տուն է բերում ընկած քաջերին: Հովսեփին հասցնում են Գտիչ Վանքը եւ հանձնում հողին: Ինչպես բանաստեղծն է ասում.

Աստղերով լեցուն Հայոց մատյանում այդ օրը գրվեց.

«Հովսեփը գնաց, եկավ Եսայը՝ իր հորն արժանի»:

Արցախյան կոլորիտն ստեղծող ու ժողովրդական ավանդույթները ներկայացնող պատկերները պոեմին հաղորդում են Էպոսային բնույթը: Այս առանձնահատկությունը իրեն զգացնել է տալիս նաև Երկրորդ մասում: Այստեղ հատկանշական են համարյա բոլոր բաժինները: «Հանդիպում» գլխում Ակարագրված են Քիրսա սարի լանջերին փոված անտառները, որ ժողովուրդն անվանում է Արեւսար: Եսայը ամեն տարի՝ ձմեռ թե աշուն, ընկերների հետ որս էր անում: Մի անգամ էլ որսի ժամանակ հանդիպում է Տումի գյուղի տանուտեր Աղամի աղջկան՝ Շուշանիկին: Եսայը Սասնա ծոերին հատուկ բնավորությամբ իր սերն է հայտնում Շուշանիկին, իսկ Վերջինս էլ ասես Տովիճարի, Դեղնուն Ծամի, Խանդութ Խաթումի եւ Գոհարի ժառանգորդն է, նրանց ամոթխածությամբ եւ սիրո ազնվագույն ընկալմամբ պատասխանում է քաջին: Երկրորդ մասի Երկրորդ գլուխը կոչվում է «Նշանդրեք»: Հաճելի լուրջ տարածվում է Տողում, որ քաջ իշխանը աղջիկ է ընտրել: Այդ մասին կարդում ենք.

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՄԱՆ

Տումուց մինչեւ Տող թեւում է լուրը,
Կամուրջ են հյուսում երկու գերդաստան,
Աղոթք էր դարձել Ե՛ւ Թթու ջուրը,
Որպես զուգերի հանդիպման վկան:
Սուրբ Դիզափայտը ժայռում էր Թիրսին,
Որպես սրբազն՝ ձեռքին բուրկառը,
Աշնան երկներանգ գորգերը ուսին
Աչքալուսանք էր հղում Թարթառը:

Այդ աչքալուսանքին մասնակցում է ամբողջ Արցախը՝ ծայրեծայր: Բնության անձնավորման եղանակով Խանյանը ընդգծում է Դիզակի երիտասարդ իշխանի հանդեա առաջացած համաժողովրդական մաքուր սերը: Դա երկրի եւ հերոսի համաձույլ ըդգրկման եւ փոխադարձ Ըվիրվածության խորհրդանիշ է, ժողովրդական բանահյուսության ավանդությներով ստեղծված հիանալի պատկեր: Նորափեսայի Օշանդրեքը Ակարագրվում է որպես ժողովրդական տոնահանդես: Առանձին շտրիխներով Խանյանը ստեղծել է արցախյան սովորությները Վերծանող հետաքրքիր պատկերներ, որոնցից զգում են մեր հնօրյա նահապետական նիստ ու կացի գեղեցկությունն ու բույրը:

Բանաստեղծական թարմ պատկերների մի ամբողջություն է Օշանդրեքի Ակարագրությունը: Խորապես ծանոթ լինելով արցախահյության ավանդությներին, Խանյանը ներկայացնում է Օշանդրեքի ամբողջ ընթացքը, ծնողների զգացումներն ու նվիրատվության հետ կապված օրինանքները: Անգուգական մի օրինակ է Եսայու մոր հուզաշխարհը եւ ակնկալությունները Ակարագրող այս պատկերը՝ կապված հարսնացուի հետ.

Եսայու մայրը մոտեցավ Օրան,
Թաճկ նվերները մեծ սինու վրա:
Հնծայեց նախ մի ոսկե մատաճի,
Ասաց. «Մայրիկը քո ցավը տաճի,

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՄԱՆ

Ուկու պես լինես իմ որդու համար,
Ի՞նձ էլ ընդունես ոնց հարազատ մայր»:
Ընծայեց արծաթ-ոսկենախշ գոտի,
Ասաց. «Թող լինեք միշտ իրար կողքի»:
Բազուկին հագորեց նուրբ ապարանջան,
Ասաց. «Իրարից լմեք միայն ջան»:
Նվիրեց մետաքս եւ ականջօներ,
Ասաց. «Իմ որդուն պարգևես շողեր»:
Ընծայեց փայլուն մի ոսկե շղթա,
Ասաց. «Ինչ ուզես, Վերինը քեզ տա»:
Սինիից վերցրեց ոսկե զարդասեղ,
Ասաց. «Մարթում եմ քեզ պատիվ ու սեր»:
Հետո նվիրեց ովունքներ շողուն.
Ասաց. «Զեր կյանքը անցնի միշտ Տողում...
Այնուհետեւ ինձ ի՞նչ է հարկավոր,
Մի գեղեցիկ հարս, այն էլ հարգեւոր:
Քեզ շատ է հավան Եսայս, Շուշան,
Միշտ ծաղկես ինչպես բուրավետ շուշան,
Մեր մի օջախը թռող տասը դառնա,
Դիզակը քեզնով միշտ հպարտանա»:

Նշանդրեքը նկարագրվում է նաեւ ժողովրդական երախտագիտության եւ հիշողության պայծառ ֆոնի վրա: Թեւում է գովեստը՝ քաջին արժանի, իսկ հիշում են «Զոհերին ոտքի վրա»:

Սիրո հավատարմության, հայրենի օջախի հետ անհատի ճակատագրի սերտ կապի, կանացի տագնապի, տղամարդու կամքի ուժի եւ անձնուրացության հրաշալի պատկեր է երկրորդ մասի երրորդ գլուխը, որ կոչվում է «Երազ»: Շուշանի երազը ոչ միայն նշանվող զույգերի ներկան պատկերող կանխազգացում է, այլեւ օրինակելի ընտանիք կազմելու վերաբերյալ արցախցի զույգերի պատրաստակամությունը ցուցաբրող ասք: Հեքիաթային-տեսիլքային կենսական է Շուշանի երազը:

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԴԵՆ

Նա Եսայուն պատմում է, որ երազում իրենք թելում եւ հանում են Վերին Միակին, որի մոտ Որդին էր, իսկ դեմք՝ Հոգին: Նրանք արցախցի գույգին նստեցնում են իրենց քով, ողջունում: Արարիշը ջրդեղում է Եսայու թուրը, Թրիստոսը օծում է մեռնոնվ, իսկ Հոգին զինում է Եսայու ոգին: Նրանք հաղթության պսակ են դնում Եսայու գանգուրներին.

Ասացին. «Երկիր ունես՝ մի եղեմ,
Կիսումեն ձախից, կիսումեն աջից,
Պարտություն երբեք չի լինի աջիդ...»:

Թրիստոսը բուրվառը ձեռքին գույգին սրբության ծիրանի է հագցնում եւ մաղթում.

Դուք դառնալու եք
Հարգված պապ ու տատ,
Օջախով ամուր ու պարսպապատ:
Արցախը ձեզնից դաս է առնելու,
Ու ձեր պատկերի առաջ փառավոր,
Խոնարհվելու են սերունդները նոր:

Կարդալով այս տողերը, աչքերիդ առջեւ հառնում է տաղանդավոր քանդակագործ Ս. Բաղդասարյանի «Մենք ենք մեր սարերը» քանդակը, որ խտացնում է արցախցի պապի ու տատի հավատարիմ սերը միմյանց Ակատմամբ եւ հայրենի օջախին ու լեռներին կապված լինելու նրանց երազն ու կյանքը: Կասկածից դուրս է, որ Խանյանը իր այս պատկերը ստեղծելիս Ակատի է ունեցել նաև ականավոր արվեստագետի աշխարհին ծանոթ հուշակոթողը: Երկու դեպքում էլ՝ Ե՛ւ քանդակագործը, Ե՛ւ բանաստեղծը արցախցու առջեւ առաջին հերթին բացում են հենց արցախցու մաքրամաքուր հոգու աշխարհը՝ որպես ինքնանաշման, ինքնահաստատման խորհրդանիշ:

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՄԱՆ

Գեղարվեստական խոսքի նրբություններով Խանյանը պոեմի երկրորդ մասի չորրորդ գլխում Ակարագրում է Եսայու Եւ Շուշանիկի հարսանիքը: Ժողովրդական կյանքի, ավանդությունների, սովորությունների, կենցաղի խոր իմացությամբ միայն կարելի է ստեղծել նման պատկեր: Ամբողջ գլուխը, որ անվանված է «Հարսանիք», փայլում է խոսքի հղկվածությամբ, ժողովրդական հոգեբանության, մտածողության եւ բառ ու բանի հագեցվածությամբ, պատկերավորությամբ, երաժշտականությամբ: Պոետական նրբերանգներով նախ ներկայացվում է հարսանեկան արարողությունը աղջկա տաճը՝ թագավորանիստ Տումի գյուղում՝ «պատվասեր, հպարտ ու բարձերով խիստ»: Փեսայի տնից մակարների խումբն է եկել՝ հեծած հրեղեն ձիեր, եկել են «Եսայու համար հարս տանելու»: Արցախական հարսանիքի օրենքները պահպանվում են կարգ ու կանոնի թելադրանքով.

Կրակ են կտրել, երգում են, պարում,
Հարս ու փեսային գովում են անվերջ,
Թամադան բեղի ծայրն է ոլորում,
Հարսանքում չկա ոչ կոհվ, ոչ վեճ:

Պատկերի ամեն մի տող աչքի է ընկնում այս կամ այն կերպարի բնութագրական հագեցվածությամբ: Առաջին հերթին խոսք է գնում Աղամի մասին, որ «Քաջն Հովսեփի զինակիցն էր», «Խորհրդատուն է հիմա՝ փեսայի»: Ինչպես բանաստեղծն է դիպուկ ընդգծում, «Փորձն ու եռանդը երբ որ միանան, Սարեր շուր կտան, կթեքն գետեր»: Հրաշալի մի գեղանկար է հարսանիքի առավոտվա նկարագրությունը: Մակարները քննարկում են, թե ո՞ր գյուղերով, պար ու նվագով «Հարս ու փեսային պիտի տանեն տուն», «Ով պիտի նստի օժիտի վրա»: Հարսանեկան հանդեսի դարավոր սովորությունների նկարագրությամբ Խանյանը հասել է անժխտելի հաջողության: Ամ-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՄԱՆ

բողջ գլուխը մի հսկա կտավ է ասես, որի վրա կարելի է դրսեւրել հարսանիքի ընթացքը՝ բոլոր մասնակիցներով եւ արարողություններով։ Աղջկան հոր տնից դուրս բերման եպիզոդը դրամատիկ մի հոյակապ պատկեր է, որ չես կարող կարդալ առանց հուզմունքի…

Մարտական քննչանքի եւ տագնապի, հայրական խորհրդի եւ վստահության հոյակապ պատկեր է ստեղծված, որի մեջ շողջողում է ժողովրդական անքիծ հոգեբանությունը, ծնողական անաղարտ սիրո հմայքը։

Այնուհետեւ մեջբերվում է Նանի օրհնանքը, որից հետո մակարները հարս ու փեսի հետ Տումի գյուղից պիտի հասնեն Տող-Գտչավանք։ Հայկական հարսանիքի ավանդական արարողությունների հաջորդականությամբ այնքան բնական եւ անմիջական է պատկերը, որ հոգուդ խորբերում ասես զգում ես նվազի ձայնը, մտքի աչքերով տեսնում շքերթը։

Եվ Ներսես քեռին իր զուռնան զլեց,

Կարոտի մի երգ սարերում ծլեց.

«Վո՛յ, աման, աղե ջան, տանում են,

Հորից-մորից հանո՞ւմ են»։

Հարսանեկան ուղեկցողի քարավանը շարժվում է դեպի Մսիրենես գյուղը, հետո ճամփան իջնում եւ փարվում է Հակակու գյուղին, այնտեղից՝ Մեծ թաղեր։ Հին սովորության համաձայն հարազատները սեղաններ են բացում բակերում, զույգին ընծաներ նվիրում։

Հարսանքավորները հասնում են Գտիչ, այսն հարսի ոտքի տակ ափսե է դնում, որ փշրի «որպես դարերից եկող մի նշան, բարության, սիրո խորհրդանշան»։

Իսկ մայրը առած ընկույզ ու դրամ,

Առատ ցանում է Գտիչի դրան,

Ասես աստղեր է ցանում նա վերից,

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՄԱՆ

Արծաթ դրամն է փայլում արեւից,
Պատաճիներն են հավաքում ուրախ,
Օրհնամք ու ժախտ շրթների վրա:

Երեկոն իշնելուն պես տղայի տանը շարունակվում է հարսանիքը:

Խանյանը ստեղծագործական արվեստի խորաթափանցությամբ, ժողովրդական կենցաղային միջավայրի իմացությամբ ներկայացնում է հարսաճիքը փեսայի տանը՝ ստեղծելով տվյալ ժամանակաշրջանի ամբողջական մի պատկեր: Նվազողների, գուսանների, հարսանքավորների պատկերմամբ, կենցաղային դրվագների ընդգրկմամբ բանաստեղծը հասել է հաջողության: Գյուղական հարսաճիքի միջավայրը ներկայացվում է բյուրեղյա մաքրությամբ, հերոսները աչքի են ընկնում իրենց անաղարտությամբ ու հոգեկան գեղեցկությամբ: Խանյանը նահապետական ժամանակների բացահայտմամբ, գեղարվեստորեն խորացնում եւ ընդհանրացնում է ժողովրդական սովորությունները: Հարսաճիքի նկարագրման ընթացքը կապված է Եսայու եւ Շուշանիկի ջերմ սիրո, հայրենի օջախի հետ կապված տագնապի եւ պատասխանատվության զգացումի հետ: Այդ են Վկայում եւ գուսանների ձններգերը, եւ հարսանքավորների ապրումները: Օգտագործելով հայ ժողովրդական էպոսի գեղարվետական առանձնահատկությունները, Խանյանը մեջբերում է տարեց եւ ջահել գուսանների գովքը Եսայու մասին:

Խանյանը գուսանների երգից հետո հեգեբանական մի նոր էջ է բացահայտում: Ակնաղբյուրցի տանուտեր Խաչին, որ մասնակցում է հարսաճիքին, հայտնում է հաճելի լուրը, որ զուտնաչի Ներսես քեռին հյուսել է մի պարեղանակ, որ կոչվում է «Շուշանիկի»: Հայտնի է, որ «Շուշանիկի»-ն հայ ժողովրդական պարեղանակների մեջ կարեւոր տեղ է բռնում: Այն առանձնապես տարածված է եղել Արցախում: Խանյանը

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՄԱՆ

Ելնելով պարեղանակի անունից, այն կապում է իր հերոսուհու Շուշանի հետ։ Դժվար է ասել, որ պատմականորեն փաստը այդպես է եղել։ Բայց դա չէ կարետրը։ Կարետրն այն է, որ «Շուշանիկի» պարեղանակը ընծայված է հայուհու հոգեկան գեղեցկությանը, բարոյական մաքրությանը, քնքշությանը, սիրո վերությանը։ Բանաստեղծը օգտագործել է երեւույթը՝ փառաբանելու պոեմի հերոսուհուն, որն էլ իր հերթին հայ կնոջ բարեմասնությունների խտացված պատկերի մի հիանալի օրինակ է։ Այստեղից էլ պոեմում այդ պարեղանակի բնութագրման համոզիչ ու հոգական երանգը։ «Շուշանիկի» եղանակի մասին կարդում ենք.

Նվագ չէ դա, սարի հով է,
Յարին փարվող գարնան զով է,
Ե՛վ կարոտ է, Ե՛ւ տրտմություն,
Հյե եռք է, ուրախություն,
Սիրո կանչ է, սիրո երազ,
Նվիրում է, կարմիր մուրազ...

Հուզիչ տեսարան է նաեւ պարեղանակի տակ հարս ու փեսի թեւաբաց պարի պատկերը։

Խանյանը տագնապալից այդ օրերի հարսանիքը Ակարագրում է նաեւ հայրենասիրական մղումների տեսանկյունից։ Այն ոչ միայն զվարճալի հարսանիք է, այլև «տոն է զինավարժության»։ Չե՞ որ ալեկոծված է Հայոց տան սիրտը, Բուղան չոքել է Կասպուրականում, ամբողջ լեռնաստանում արյուն է ու մահ։ Բուղան կատաղած ինչպես չար հողմ, վառելով անգամ անտառները, ավերում էր հայոց երկիրը։ Բորբոքվել է նաեւ հայ ժողովորի ցասումը։

Արցախը ծառս էր եղել ալեկոծ,
Բուղան գալիս է ինչպես թունոտ օձ։
Դիզակն՝ Արցախի դարպասը ամուր,

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԴԵՆ

Արցախը՝ Հայոց Աղվանքի կտուր,
Զայն էին տալիս մայր Հայաստանին.
- Մենք զավակներն ենք հայկյան Առանի,
Զարամիտ Բուղան թող գա դեպի մեզ,
Մենք ճրան միջից կանենք երկու կես:

Գնալով եռում է հարսանիքը: Խմում են Եսայու կենացը,
բայց նա պապական կարգով շնորհակալություն հայտնելով
խնջույքի մասնակիցներին, առաջարկում է խմել արցախցինե-
րի կենացը, որոնք երբեք չեն ների ոստիներին: Նա վստահորեն
երգիծում է թշնամուն, ասելով.

Մեր ոտքերի տակ կչոքի Բուղան,
Ոնց փղի վրա հաշող շան թուզան:

Եսայու այս շանթակուտակ խոսքից սկիզբ է առնում ծաղ-
րատոն մի կատակ, որ կրկնում են ահել ու ջահել: Նրան միա-
նում է նաեւ Շուշանը, միաժամանակ տագնապալից հիշելով
հոր խոսքը.

Մենք չենք ունեցել երբեք խաղաղ քուն,
Կովում փառք ու մահ մեկ են շառաչում,
Թուրքն իշխան-մշակ-սեր չի ճանաչում:

Եսայը այդ խոհերից հանում է Շուշանին եւ հրավիրում
պարի.

Թվում էր երգն էր իշխում աշխարհում,
Ոչ թե այս զույգը, Գտիշն էր պարում՝
Հոգում օրհնանքը սրբազն խաչի,
Ձեռքերում ուժը պսակվող քաջի...

Խանյանը իր գլխավոր հերոսի ճակատագրի հետ կապված
ամեն մի զեղման մեջ հոգեբանական մի նոր էջ է բացահայ-
տում: Եսայը ամուսնանում է, անցնում է տարին, եւ նա տղա է
ունենում: Ցնծություն են ապրում Եսայու տատը, մայրը, վեր-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԴԵՆ

Իիշում Հովսեփի երազանքը՝ կապված հարազատ օջախի եւ Դիզակա տան ապագայի հետ: Հովսեփը երազում էր, որ արու թռո ունենար, որ իր «Պողպատե թուրը առներ, Խաղացներ ոնց խաղալիք ու ծիծաղեր ալիք-ալիք», որպեսզի.

Չայնը հասներ Արարտան,
Հաստատեր, որ կա՛ Հայաստան,
Որ ծնվում են Հայեր ու Վարդան,
Թե՛ Արցախում, թե՛ Սասնա տանն:
Որ չի մարել օջախը մեր,
Որ միշտ կապրի Արցախը մեր:

Եսայը հոգեկան երջանկություն, նոր լիցք է ստանում տղայի ծնունդով: Նա ուրախությամբ փայփայում է մորը, նա-
գին, վանքով աղոթում, որ Վերինը բարի աչքով նայի իր ըն-
տաճիքին, Արցախին, Հայոց աշխարհին: Եսայու առաջարկով
քահանան զավակին կնքում է Մովսես անունով, որ խելոք լինի,
ինչպես Խորենացին: Այսպիսով, Դիզակա իշխանի երազանքի
մեջ միասնական է շափաղում մտքի եւ ուժի, հոգեկան եւ ֆի-
զիկական առողջ միասնության գաղափարը: Եսայի իշխանի
համբավը այնպիսի համարում ուներ ամբողջ Արեւելքում, որ
խալիքը նրան որդու անունով կոչում է «Ապու Մուսե, Ասել է
թե՝ Մովսեսի հայր»:

Համարձակությամբ Ս.Խանյանի «Արցախի արծիվը» պոե-
մը կարող ենք համարել Արցախի միջնադարյան կյանքի հան-
րագիտարան: Միջնեւ հիմա ոչ մի բանաստեղծ լայն կտավի
վրա այնպես խոր ու ճշմարտացի, գեղարվեստական անպա-
նույն առանձնահատկություններով չի պատկերել արցախահա-
յության նիստն ու կացը, մարտական ոգին, անզիջում պայքա-
րը արաբական խալիֆայության դեմ այնպես, ինչպես Խանյա-
նը այս պոեմում: Այս առնչությամբ կարող ենք միայն նշել

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԴԵՆ

Վ. Հակոբյանի «Տաճարն աստծո» պոեմը: Երկուսն էլ միանգամայն ինքնատիպ, առանձնահատուկ լեզվառնական փայլատակումներով, կերպավորման արվեստով, գաղափարական լուծումներով արդի հայ պոեզիայի մեջ հիանալի ներդրումներ են:

«Արցախի արծիվը» պոեմում էջից-էջ, գլխից-գլուխ նոր երանգներ են երեւան գալիս, ընդգրկում հստակ ու պատկերավոր խոսքի, հոգեբանական լիցքավորման նոր ելեւջներ: «Ծրջագայություն» գլուխը, որով ավարտվում է պոեմի երկրորդ մասը, պոետական վարպետության մի նմուշ է: Ըստ սովորության Եսայ իշխանը շրջագայում է Դիզակի բոլոր բնակավայրերում, ծանոթանում գավառի առօրյա պրոբլեմներին, կարգ ու կանոնին, հանդիպում մարդկանց, սեղան նստում նրանց հետ, շնորհավորում նորապսակներին, հիշում նահատակներին, մի գավաթ մաճառ խմում, աղոթում սրբատներում: Խանյանը ուղղակի նկարել է արցախյան նիստ ու կացը, խոհանոցը, ժողովրդի ապրելակերպը: Բերենք մի հատված.

Հաց է կորել շատերի հետ,
Կերել խնջողգ, ավլուկ, փիփերթ,
Ճաշակել է մի տեղ թանով,
Մի տեղ խաշիլ՝ չորաթանով:
Մի տեղ կուրկուտ ու լոբաճաշ,
Մի տեղ փլավ ու կճեխաշ,
Մի այգու մեջ հոնի կաթուկ,
Մի օցախում՝ մոշաթթու,
Մի տեղ որսի թարմ խորոված,
Կանաչ լորի՝ լավ սխսորած,
Մի ավանում՝ ժանգալով հաց,
Միշտ ժպտադեմ ու սրտաբաց:
Կարճ է խոսել, չի սիրել ճառ,
Խմել է մի գավաթ մաճառ,

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՄԱՆ

Խնդրել Աստծուն բարեհամբույր,
Որ չանտեսի սեր ու համբույր,
Դիզակին լավ աչքով նայի,
Բերք ու բարիք չխնայի...

Իշխանը նշել է ժամանակի ամենատագնապալից հոգսը, այն, որ իր բանակին դեպի Տող է քշում Բուղան, «Որի առաջ պետք չէ սողալ, պետք է խմբվել, դառնալ բռունքը, Եվ անել միշտ ոստիսի հունձք, որ հասկանա մեր թշնամին, որ մենք հողմ ենք, ոչ թե քամի»: Իշխանը ժողովրդական երգիծանքի խարագանիչ հարվածով ծաղրում է Բուղային.

Չի խնայում նա ոչ ոքի,
Դիվային է նրա հոգին,
Սատանա կա ամեն պողին,
Պիտի շարդենք մենք այդ բռղին...

Խանյանը համոզիչ գույներով ցույց է տալիս համաժողովրդական սերը իշխանի հանդեպ, արցախսցիների պատրաստակամությունը՝ զորահավաք լինելու դեպքում պատրաստ երկայանալ Գտչավանք:

Եպիկական շնչի տեսակետից առանձնապես աչքի է ընկնում պուեմի երրորդ մասը: Այստեղ բանաստեղծը ցույց է տալիս Բուղայի գլխավորությամբ արաբական զորքի ներխուժումը Ուտիք եւ ապա Արցախ: Երրորդ մասի առաջին գլուխը կոչվում է «Դեպի Տող»: Խանյանը լավ է հասկանում իր կերպարների հոգերանությունը: Նա Բուղայի արտահայտությունների միջոցով ընդգծում է նրա ամբարտավանությունը, խարդախությունը, դաժանությունը: Ավերելով Պարտավը, նա երազում է Արցախի դարպասը հանդիսացող Դիզակի ավերումը եւ ավարումը: Հիրավի, Բուղայի գինվորների ոտքերի տակ «մոխրանում էին շենքը մեկ-մեկ, Մի ճենճերահոտ երկինք էր բռնել Ուտիքի հո-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՄԱՆ

ղում»: Բանաստեղծը պատկերային համոզիչ հյուսվածքով Աերկայացնում է Բուղայի եւ Օրա գործի դաժանությունը:

Այդպես կատաղած, նա հասնում է Արցախի հնագույն բնակավայրերից՝ Տող, որի մոտ, բարձունքի վրա թառած է Գտիչ վանքը, իշխան Եսայու օրբանը:

Օգտվելով Թ. Արծրունու գրքից, Ս. Խանյանը բանաստեղծական նոր հնարանքներով բերում է Բուղայի նամակ-հոխորտանքը՝ ուղղված Եսայուն, Օրանց միջեւ տեղի ունեցած առաջին ճակատամարտը, այդ ֆոնի վրա Սմբատ Բագրատունու անբացատրելի ծառայությունը Բուղային, Սմբատի որդու՝ Մուշեղի նախատինքը հորը:

«Ծուղակ» չորրորդ գլխում ցույց է տրված խալիքաթի զինվորների Աենգությունը հայ հայրենասերների հանդեպ: Գերված հայ զինվորներից մեկի՝ Հաբեթնակի խոսքը հնչում է որպես ժողովրդական իմաստության եւ խաղաղասիրության, անձնուրացության եւ ոգու արիության խորհրդանիշ:

Բուղան հրամայում է գերված Հաբեթնակին, որ իր յոթ հոգուց բաղկացած խումբը հավատափոխ լինի, օգնի բռնելու Եսայուն:

Բուղայի հրամանով գլխատում են Հաբեթնակին եւ Օրա զինակիցներ Վարուժամին, Վարդամիկին, Եղիշեին, Գրիգորիսին: Սարգսին հաջողվում է ազատվել եւ լուրջ հասցնել Եսայուն:

Երրորդ մասում բացահայտվում են Բուղայի բնավորության անմարդկային գծերը եւ հակակշիռ նրան՝ Եսայու վեհությունն ու խիզախությունը: Հետաքրքիր է Բուղայի հրովարտակի բանաստեղծական մեջբերումը: Բուղան վերջին անգամ զգուշացնում է Եսայուն, որ բարձունքից իշնի եւ հայատակվի իրեն, հիշեցնելով իր հաջողությունները եւ արյունալի ճակատամարտերը Հայոց գավառներում: Բուղայի վերջին ճիգը արտահայտված է վերջնագրում: Սակայն նա անսպասելիորեն ստանում է Եսայու նամակը: Թ. Արծրունու «Պատմության»

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԴԵՆ

Մեջ բերված է իշխան Եսայու այդ պատասխանը: Հարազատ մնալով բնագրին, Խանյանը հաջողությամբ բանաստեղծականացրել է այն, որ պոեմի հրաշալի էօքրից է:

Խաղաղասեր Եսայը այլ կերպ գործել չէր կարող: Նա հարկադրված է թուր վերցնելու՝ հայրենի աշխարհը պաշտպանելու համար: Եթե Եսայ իշխանի գործողություններում հիմնականը Արցախի պաշտպանության շահերն են, ապա Բուղայինը՝ ավերելու եւ ավարելու տեսչն է, որոնք ել նրան տանում են կործանման: Երկու հակառիկ կողմերի այս ձգութևներով ել պայմանավորված են նրանց գործողությունները: Հերոսներից յուրաքանչյուրի բնավորությունը կոնկրետանում է այս հիմնական պրոբլեմի շուրջ: Պոեմի սյուժեն բացահայտվում է հայրենիքի պաշտպանության գաղափարի հիման վրա: Եսայը հայկան Առանի նետ ու աղեղով ոտքի է ելնում արաբական խալիֆայության դեմ՝ լավ հասկանալով, որ առանց պայքարի հնարավոր չէ փրկել ու պահպանել օջախ հայրենին: Պոեմի նախավերջին՝ «Հաղթանակ» գլխում Խանյանը դրսեւրել է Էպիկական ժանրի մեջ ունեցած իր տաղանդը: Հարազատ մնալով ժողովրդական վիպերգերի, առանձնապես Էպոսի ավանդություններին, Խանյանը ինքնատիկ ու թարմ պատկերներով ցույց է տվել պարտության դատապարտված բռնակալի Վերջին փորձերը եւ նրա դիմաց հայրենի հողից ուժ ու կամք առած Եսայու խորտակիչ հարվածը: Բանաստեղծը գունեղ ու տեսանելի պատկերներով ներկայացնում է մի կողմից դեպի Գտիչ Վանք սողացող թշնամական բանակի գործողությունները, մյուս կողմից՝ իշխան Եսայու ժողովրդական զորագնդի իր պատրաստականությունը՝ ոստիսին խորտակիչ հարված հասցելու համար: Եսայը զորքի առջեւ

Ասաց. «Մենք գիտենք ինչի համար ենք ելել պայքարի,
Մեր ոտքերի տակ հայրենի հողն է, օրրանը մեր թանկ,

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՄԱՆ

Որ մեր օջախի անմար կրակը երթեք չմարի,
Պիտի ոսդիմ իրեն հասնելիք պատասխանը տանք»:

Բացելով բերդի կուռ դարպասները, հեղեղի նման դուրս է հորդում Եսայու զորքը: Բոլորից առաջ շողում էր գավառապետի թուրք: Դիզակա զորքը քառաթեւ խաչ էր կազմել, զինվորյալները մոնջում էին, գետնին նետում ոսդիմ: Եսայու աշխարհազորայիններին ոգի էին հաղորդում Գտչավանքի հոգեւորականները: Ժողովուրդը մի բռունքը է դառնում: Արար զորքը նահանջում է, կրվի դաշտում հանդիպում են Եսայն ու Բուղան: Նրանք մենամարտում են ինչպես Սասունցի Դավիթն ու Մսրա Մելիքը: Եպոսին հատուկ առասպելական չափազանցություններով Խանյանը պատկերում է երկու դյուցազունների անզիջում կրիվը: Հաղթանակը շահում է Եսայը՝ տապալելով Բուղային: Արցախի իշխանի նիզակից ճեղքվում են Բուղայի կուրծքը եւ որովայնը: Հայոց զորքը ցնծություն է ապրում: Սակայն Բուղայի օգնական Արդին խախտում է օրենքը եւ դարան մտնում անտառի խորքում: Քրտնած Եսայը քրտնած նժոյգով իշնում է գետը, որ իր ձեռքերով լվանա ձիու մեջքը, թփերի միջից կատաղած Արդին կանգնում է Եսայու դեմ-դիմաց: Եսայը այսուծի ուժով ոլորում է թշնամու վիզը: Սակայն ձորից հագարացիների խումբը Եսայուն տանում է անտառի խորքը: Բոթը հասնում է Գտչավանք, հայ զինվորյալները իշնում են գետափ, որոնում Եսայուն, բայց իզուր: Չկար Եսայը: Իսկ Արդին Տողասարում պարտվելուց հետո ներկայանում է խալիֆին: Վերջինս արհամարհանքով է ընդդունում Օրան, համարում թույլ ու անկամ, իսկ Բուղային՝ ոչնչություն: Պոեմում Խանյանը Տողում Բուղայի պարտությունը եւ մահը գնահատում է որպես արժանի հատուցում, իսկ այդ պատերազմում Եսայու հետ կապում է նրա անմահության գաղափարը: Ինչպես բանաստեղծն է գրում.

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՄԱՆ

Զկար Եսայը, որտե՞ղ հեղեցին արյունը քաջի,
Որտե՞ղ է ննջում, ո՞ր կաղնու ներքո կամ ո՞ր ժայռի տակ,
Որտե՞ղ թաղեցին առանց սալմոսի եւ առանց խաչի,
Ո՞ր հողին ձուլվեց, որտե՞ղ մոխրացավ նրա սիրտը տաք:

Պոեմի յուրաքանչյուր գլուխ, յուրաքանչյուր Էպիգոդ
բանաստեղծական կատարման, բովանդակության եւ ձեւի
միասնության օրինակելի պատկեր է: Դրա լավագույն վկայու-
թյուններից է «Հաղթանակ» գլխի հատվածներից մեկը՝ Ավիր-
ված Արցախա նահատակների հավերժությանը:

«Հաղթանակ» գլխի վերջին պատկերում նկարագրված է
Բուլայի օգնական Արդիի հանդիպումը խալիֆի հետ: Նա ծն-
կաշոք պաղատում է, որ խալիֆը ների պարտության համար,
որ նոր զորքեր տա՝ թողած ավարը Արաբստան բերելու: Խալի-
ֆը Բուլայի պարտությունը համարում է խայտառակություն,
այպանում նրա հիշատակը.

Իսկ Գոչավանքում մեծ հաղթանակի շունչն էր թեւածում,
Երգասանները գովքն էին անում արցախցիների,
Որ ութը հարյուր հիսուններեքին, սրերով հատու,
Հայոց պետության վերածննդի հիմքերը դրին:

Պոեմի վերջին գլուխը վերնագրված է «Հյուրը»: Թ.Արծ-
րունին իր «Պատմության» մեջ այնպես է նկարագրել Արցա-
խը, այնպիսի ոգեւորությամբ է պատմել արցախցիների հերո-
սական պայքարը, որ թվում է, թե նա եղել է Արցախում: Հաս-
տատված չէ, արդյո՞ք նա եղել է պատմական Հայաստանի
այդ նահանգում: Ս. Խանյանը պատկերում է Թ. Արծրունու այ-
ցը Արցախ, կոնկրետ՝ Ամարաս: Հանդիպմանը ներկայանում են
Արցախի տասներկու գավառների աշխարհիկ եւ հոգեւոր դասե-
րի ներկայացուցիչները, արժանին հատուցելով մեծ պատմի-
չին եւ զորյալ մարտիկների հիշատակին: Թովման իր ելույ-
թում ընդգծում է.

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԴԵՆ

Դիտի ապրի քաջ Եսայը զրուցներում հավերժաբառ,
Քաջերի հետ նա կմտնի մատյանիս մեջ մեսրոպատառ:
Արժանի է քաջ Եսայը, արժանի է մեր ասքերին,
Նրա թուրը նոր ուժ տվեց արցախական հրաշքներին:
Դարերի մեջ Արցախը սեգ արծիվներ է ծնել անթիվ,
Դիզակեցի իշխանին էլ անվանում են լեռան արծիվ:

Պոեմը ավարտվում է վերջերգով, որի մեջ Խանյանը մեր պատմական անցյալի հերոսական ոգին կապում է Ըերկայի եւ ապագայի հետ: Այդ ընթացքում խորհրդանշվում են Տողասարի գագաթին թառած Գտչավանքը, Եսայու ոգին եւ հայոց գիրը, «Սարը կանգուն է, գիրը՝ հոլովկող, կրակն անմարում», այդ կրակով Եսայն ապրում է Հայոց աշխարհում: Բանաստեղծը Եսայի անմահությունը տեսնում է Արցախա լեռներում տեղի ունեցած բոլոր իրադարձությունների եւ գործողությունների մեջ: Սերունդները նրան տեսել են իր նժույգին նստած մերթ սեղուկների դեմ մարտնչելիս, մերթ՝ մոնղոլների, մերթ՝ թուրքերի.

Հիմա տեսնում են Մոռվի, Թիրսի կանաչ լանջերին,
Նժույգին հեծած, ականջն Արցախս արդար կանչերին:
Սուրբ հանել է թուրք բուղաների սերնդի հանդեպ,
Որ մեր Արցախը ապրի դարեդար, ինչպես հայոց բերդ,
Տեսել են նրան, նրան տեսնում են ու կտեսնեն դեռ,
Թուրքն ու խաչն առած որպես Արցախի հավերժական տեր:

Ս. Խանյանը «Արցախի արծիվը» պոեմը գրելիս հմտորեն շարունակել է ժողովրդական էպոսի եւ ավանդավերի գեղարվեստական մշակումների ավանդույթները: Բանաստեղծը հարազատ մնալով պատմական իրադարձություններին, յուրովի մեկնաբանություն է տվել թեմային: Օգտվելով Թ. Արծրունու եւ մյուս պատմիչների գրքերից, իր կերպարներին ցույց է տվել պատմական-քաղաքական կոնկրետ հարաբերությունների ոլորտում: Հայ ժողովորդի ազատագրական պայքարը ներ-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՄԱԿԻ

Կայացվում է որպես արդարացի գոյամարտ: Այդ ֆոնի վրա Էլ ցույց է տրվում երկու հակադիր ուժերի, հակամարտ նպատակ-ների բախում: Հայ-արաբական հակամարտ հարաբերությունների ընթացքում հաճես են գալիս հայ ժողովրդի բնավորության գծերն ընդհանրացնող իշխան Եսայը եւ արաբական խալիֆայության դաժանությունը մարմնավորող Բուղան: Հայ ժողովուրդը խաղաղասեր է, աշխատասեր, նրա միակ նպատակն է պաշտպանել իր հայրենի հողն ու ազգային, ընտանեկան սրբությունները: Արցախս զինվորյալները ինքնակամ նետվում են մարտի, Եսայու ղեկավարած ազատագրական պայքարին մասնակցում անձնուրաց: Եսայը բարձր է գնահատում հայրենիքի անկախության, եւ խաղաղության արժեքը եւ իրեն զոհաբերում է Արցախս աշխարհի, ամբողջ Հայաստանի անկախության ճանապարհին:

Եսայը հայրենասեր լինելու հետ մեկտեղ ժողովրդասեր է, ընտանիքի պատիվը բարձր պահող այր, անձնազոհ ընկեր է, մարտական ընկեր: Խանյանը այս ամենը բացահայտել է գեղարվեստական թարմ պատկերներով:

Նույն հաջողությամբ նա ստեղծել է Հովսեփի, նրա զինակիցների, արաբական խալիֆայության դաժանությունը ներկայացնող Յուսուֆի, Բուղայի, Արդլահի, Արդիի կերպարները:

Առինքնող, ռեալիստական նուրբ երանգներով են ստեղծված արցախցի կանանց կերպարները: Առանձնապես հաջողված է Շուշանիկը: Նա հայ կնօց բարեմասնությունների խտացումն է: Նա հավատարիմ կին է, քննույշ մայր, հայրենիքի ճակատագրով ապրող զինվոր:

«Արցախի արծիվը» պոեմը վերջին տարիներին ստեղծված լավագույն ստեղծագործություններից է, արդի հայ պոեզիայի գեղեցիկ էջերից մեկը:

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԴԵՆ

* * *

1994թ. Ս. Խանյանը գրեց «Նահատակ լուսո» պոեմ՝ Ավիրված Ղարաբաղյան պատերազմի լեգենդար հերոս Մոնթե Մելքոնյանի (Ավոյի) սուրբ հիշատակին: «Արցախի արծիվը» երկից հետո այս պոեմը մի նոր երանգ պէտքարտեց Խանյանի ստեղծագործական աշխարհին, ապացուցեց, որ բանաստեղծը վերելք է ապրում, ավելի են բյուրեղանում նախասիրությունների շրջանակները: Դրանք առանձնապես նկատվեցին հերոսության թեմայի շրջանակներում: Այդ մոտիվը, ինչպես տեսանք, կարմիր թելի պես անցնում է բանաստեղծի բոլոր ժողովածուների միջով: Մեր ժողովրդի անցած դժվարին ճանապարհն է թելադրում այդ թեման: Դրանով պետք է բացատրել այն երեւությը, որ հայ գրականության մեջ իշխող է եղել հենց հերոսականության մոտիվը: Արդի հայ պոեզիայում նոր գույներով բացահայտվեց խնդրո առարկա թեման, որն արդեն Աղրթեցանի կողմից արցախահայությանը պարտադրված պատերազմի թելադրանքն է: Հերոսականության արտացոլմանը ձեռնամուխ եղան արդի բոլոր հայ բանաստեղծները ոչ միայն Արցախում, այլև աշխարհի չորս ծայրերում եղած գրական բոլոր օջախներում, որովհետեւ ղարաբաղյան պատերազմը ոչ միայն Արցախի խնդիրն է որոշում, այլ հայ ժողովրդի ճակատագրի: Այդ կապակցությամբ երիցս ճիշտ էր Ավոն, երբ ընդգծում էր, որ Արցախը տանով տալով, մենք կշրջենք հայոց պատմության վերջին էջը: Ուստի թեմայի աշխուժացումը պետք է դիտել որպես համահայկական երեւություն: Ահա թե ինչու բանաստեղծները նորից հետադարձ հայացք ձգեցին դեպի մեր պատմության խորթերը, այն շաղկապելով ներկա օրերի հերոսական շնչի, կոնկրետ՝ Արցախյան գոյամարտի հետ: Ս. Խանյանը, ինչպես համոզվեցինք, ակտիվորեն մասնակցեց այդ պատվարեր գործին, պատմության կանչով ընթերցողին հանձնեց «Արցախի

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՄԱՆ

արծիվը» եւ ապա մերօրյա հերոսականության պատվերով «Նահատակ լուսոն»:

Ժանրային առումով «Նահատակ լուսոն»-ն հերոսական պոեմ է՝ քնարական շաղախով։ Նրանում առկա են ռեալիստական խոր ընդհանրացումներ, հոգեբանական նուրբ վերլուծություններ, զգացմունքային խտացումներ։ Պոեմի նյութը իրական է։ Գլխավոր հերոսը զորապետ Մոնթե Մելքոնյանն է, ֆոնը՝ Արցախի զորագնդերի մահու եւ կենաց գոյամարտը ազերի զավթիչների դեմ։ Բանաստեղծը փառաբանում է լեգենդար Ավոյի փառքն ու արտասովոր սիրանքը։ Պոեմը բաղկացած է երկու մասից։ Առաջին մասը ընդգրկում է յոթ գլուխ, երկրորդը՝ ութ։ Ավոյի համառոտ կենսագրությունը, Արցախում պատերազմական գործողություններին մասնակցելը հիմնական ատաղջ են ծառայել պոեմի համար։ Երկի հյուսվածքի մեջ մեծ դեր է կատարել բանաստեղծի երեսակայությունը։ Ուեալ իրականության եւ գեղարվեստական հնարանքի եզրերը միաձույլ են, իրար լրացնող։ Հայրենասիրական զգացմունքը Խանյանին հնարավորություն է տվել երկին հաղորդել հուզականության շերմ լիցք։ Պոեմի հաջողությանը մեծաաես նպաստել է հայ ժողովրդի պատմության առնչությունը Ավոյի կենսագրության հետ։ Հերոսի արմատները կապվում են Սասունի, հայոց մեծ եղենից տեղահան եղած մի տոհմի, այսինքն՝ արեւմտահայության ճակատագրի հետ։ Պոեմի մուտքը ընթերցողին տանում է հենց այդ ճակատագրի հետքերով։ Առաջին գլուխը, որ վերնագրված է «Ծնունդ», անմիջապես ներկայացնում է Մոնթե-Ավոյի ճակատագիրը։

Պոեմի երկրորդ մասը նվիրված է Մոնթեի գործունեությանը Արցախում։ Այստեղ Խանյանը պատկերում է գործողությունների կովմինացիոն կետերը՝ այդ շրջանակներում բացահայտելով հերոսի հայրենասիրական մղումներն ու փիլիսոփայությունը։ Մոնթեն ներկայացվում է եւ որպես զինվոր, եւ որպես քա-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱԴՐԵՆ

Դաքագետ: Պոեմից իմանում ենք, որ Մոնթե Մելքոնյանը Արցախ է հաճախել 1991թ. աշնանը: Նա սեպտեմբերին արդեն մասնակցում էր Շահումյանի շրջանի՝ պատմական Գյովիստանի մարտերին: Նա հենց առաջին պարից աչքի է ընկնում ռազմավարական իր արվեստով, քաջությամբ, վճռականությամբ: Գյովիստանի Մանաշիդ, Բուզլուկ, Էրքեց, Կարաչինար, Վերին-շեն գյուղերում Մոնթեն չի խնայում կամք ու հնար: Տարածվում է լուրջ, որ նա սովորական զինվոր չէ: Չորս ամիս Գյովիստանում մարտնչելուց հետո Մոնթեն 1992-ի Ամանորին Մարտունիում՝ Հին Կարանդայում, դառնում է հանուր հրամանատար: Երկրորդ մասի երկրորդ գլխում, որ կոչվում է «Երդում», սրտառուց զեղումներով պատկերվում են հերոսի որդիական սերն ու զգացումները Արցախի հանդեա: Դա Մոնթեի բնավորության գլխավոր հատկությունն է: Խանյանը կարողացել է ցույց տալ, որ իր հերոսի վարմունքը առաջին հերթին բխում է դեպի իր պապեական հայրենիքն ու մայր ժողովուրդն ունեցած որդիական ազնիվ սիրուց: Երկրորդ, նրա արցախասիրությունը ակունքվում է հայ ժողովորի ներկայի եւ ապագայի համար Արցախի դերի գիտակցումից եւ երրորդ, այդ գիտակցական վարմունքից էլ բխում է նրա անձնազոհությունը: Ահա, այդ ամենի խտացումից ծնվում է Մոնթեի բարոյական կերպարը: Փորձության տարբեր աստիճաններում բացահայտվում են հերոսի բնավորության գծերը: Մոնթեի միտքն ու հոգին լուսավորում են նրա ճանապարհը: Նրա բոլոր գործողությունները ներքնարուկս մղումների արդյունք են: Խանյանը պատկերային թարմ հյուսվածքներով, հերոսի շրթերով ցույց է տալիս նրա ազնիվ վարքը: Մոնթեն Արցախ է եկել իր պապերի արյան կանչով, եկել է փրկելու Արցախի կապույտ երազը՝ Մայր Հայաստանին վերամիավորվելու նրա արդար տենչը: Եկել է դարձել Եմիշճան գյուղի բնակիչ եւ Արցախսմոր առջև խոստովանում է.

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԴԵՆ

Զինվորի երդում ես քեզ եմ տալիս,
Ու պիտի անսամ քո հրամանին,
Եղբ հրամանը մորից է գալիս,
Այնտեղ անելիք չունի թշնամին:

Խանյանը պոեմում չի սքողել դառն ճշմարտությունը: Նա բացահայտում է թշնամու դիմագիծը: Այսօրվա ազերի սպան ու զինվորը երեկվա Ալփ-Արսլանի, Թալեաթ փաշայի թոռներն են, որոնք ուրիշի հողերին եւ ստեղծածին տիրելու ծարավով կանգ չեն առնում ոչնչի առջեւ, դիմում են նենգության, խարեւության, պատմության գեղծարարության, դաժանության, վերածվում արյունախում մարդակերների: Ազերի սպայի անմարդկային վարմունքն է ցույց տրվում «Դաժանություն» երրորդ գլխում: Մարտունու շրջանի Ամիրանլար ազերական գյուղը, հիրավի, դարձել էր չարիք շրջակա հայկական գյուղերի համար: Պատկերվում է հայ գյուղացիների ծանր ապրումները եւ նրանց անելանելի վիճակը: Հայտնի է, որ պատերազմի առաջին ամիսներին արցախյան շատ ընտանիքներ որոշել են հեռանալ Արցախից, մարտարաշուում թողնելով միայն կրկող ազատամարտիկներին: Ավոն դեմ էր նման քայլին: Պոեմում լուսաբանված է այդ իրողությունը: Եվ ահա, երբ մի անգամ կանայք, ծերերը դիմում են Ավոյին, թե ինչպես վարվեն նման պահերին, ո՞ւ գնան, Ավոն պատախանում է.

- Ո՞ւր պիտի գնանք,- ասում է Ավոն,-
Ո՞ւմ պիտի թողնենք մեր լավ շեները,
Հին ու նորօյա երազով, ցավով,
Մենք Արցախինն ենք, Արցախը՝ մերը:
Պիտի բռունցքվենք՝ ճակատ ու թիկունք,
Պիտի պաշտպանենք հենց ինքներս մեզ,
Արցախցին ե՞րբ է ցույց տվել թիկունք,
Դժվարությունն այս կանցնի ծխի պես:

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԴԵՆ

Խանյանը ստեղծել է հակադրություն իր հայրենիքը պաշտպանող հայ գինվորի եւ ուրիշի հողին աչք տնկած ազերի ասկերի միջեւ։ Արցախցին լույս է տանում հայենի բարձունքն ի վեր, իսկ ազերին ուզում է վառել ողջ Արցախը։ Ասկերը դարձել է պատմության գեղծարարներ թուրք պատմաբանների գոհը։ Նրան հավատացնում են, որ հայն Արցախում գաղթական է, որ այստեղի վաճերը, եկեղեցիները թուրքն է կերտել.

Որ Մովսես ու Դավթակ թուրք են,
Թուրք են Գոշն ու Արեւեցին,
Որ Ալավկա Որդին թուրք է,
Թուրք է նաև Գանձակեցին.
Որ թուրքինն են խաչքարերը,
Կամուրջները կամարակուռ,
Որ թուրքինն են եւ դարերը,
Եվ դարավոր վանք ու մատուռ։

Բանաստեղծը ցույց է տալիս հայ գինվորի արյունակցական կապը պատմական անցյալի հետ։ Նա գիտակցում է, որ թուրք մտավորականները դիմում են հերյուրանքի, որ սեփականնեն Արցախի հողն ու մշակույթը։ Արցախցին ինչպես կարող է հաշտվել նման ստի հետ։

Արցախցին ինչպես չասի,
Պապիս տումն ու տեղը հայ է,
Շիրիմը հայ, խաչքարը հայ,
Սրբավայրն ու մատուռը հայ,
Աղքրի ակը եւ ջուրը հայ,
Պատի հիմքում պատգամը հայ,
Կալի եւ թին, եւ կամը հայ,
Պապենական խոսքը արդար

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՄԱՆ

Եվ հայերեն, եւ հայտառ...
Ամարասի պատերը կուռ
Հայերեն են խոսում դարեր,
Հայերեն են աղոթք կարդում
Գտչավաճքի վեմ ու քարեր,
Հայերեն են միշտ գրուցում
Գանձասարի պատերը սեգ,
Հայերենն է իր մատուցում
Դադիվաճքը ինչպես մի բերդ:

Ս. Խանյանին հաջողվել է Ավոյին ցույց տալ որպես ուժեղ ամհատականություն: Հերոսը բազմակողմանի հատկությունների կրողն է: Նա հայրենասեր է, ժողովրդասեր, ընկերասեր, թշնամու հանդեպ ցասումնալից, օջախի պատիվն իմացող:

Հայտնի է, որ Ավոն իր գորագնդով մասնակցել է Արցախի բոլոր Վճռական ճակատամարտերին: Նա իր գորավարական տաղանդն է ցուցաբերել Շուշվա, Ջրաբերդի, Ջալբաջարի, Ասկերանի եւ այլ շրջանների թշնամական կրակակետերի ոչնչացմանը: Պոեմում գեղարվեստորեն հետաքրքիր հնարանքներով պատկերված է Ավոյի խիզախությունն ու ունակությունը այդ բախտորոշ գործողություններում: Ավոն ցույց է տրված որպես կանթեղ, նրբազգաց, անգամ հողի լեզուն հասկացող իմաստուն այր: Նա պայքարի է նետվում «հողի կոչով ու հորդորով», հայրենի հանդին, դաշտին, արտին բացելով իր սիրու որդիական սիրով: Ավոն իր ժողովրդի պատմության գիտակն է, նա ցավ է զգում, երբ տեսնում է, որ թշնամին արմատներ է նետում հայոց հին ավաններում ու գյուղերում:

Պոեմն ավարտվում է «Խիզախում» հատվածով, որտեղ Ակարագրվում է Ավոյի հերոսական կյանքի վերջին էջը: Հարազատ մնալով պատերազմական իրադարձությունների հաջորդա-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԴԵՆ

Կանության ու ճշմարտությանը, Խանյանը Աերկայացնում է Ավոյի շրջափակման մեջ ընկերու պատմությունը, խորին ափսանքով ու սրտի ցավով ցուց տալիս լեգենդար զորապետի ողբերգական մահը: Պոեմի վերջին հատվածը հուզական լիքը Աերկայացնում է 1993թ. հունիսի 12-ին Ավոյի նահատակության դեպքը եւ այդ կապակցությամբ տեսիլքային պատկեր՝ նվիրված հերոսի հավերժացած խորհրդին: Թշնամին ջախջախվել է.

Բայց չկա Ավոն՝ Աստվածը մարտի,
Քնել է խաղաղ, հավիտյան քնով,
Ծիածանվել է ասես շրթերին
«Արցախ իմ, քայլիր հաղթության հունով
Ծառայել եմ քեզ որդիական սիրով,
ԱՅԻՆ մեջ էլ որդիդ կմնամ,
Հոգիս վառել եմ քո հոգու հրով,
Կովող ոգուր մեջ մարտի կգնամ,
Կգնամ մարտի ցավով աններում,
Մինչեւ կհասմես քո հաղթանակին,
Երջանիկ եմ ես, մայր իմ, որ հեռվում
Զայնդ լսեցի ճիշտ ժամանակին,
Եկա, մի հյուզեն դարձա հույս-շողիդ,
Եկա, ծովվեցի սրբազան հողիդ,
Զակնկալեցի ոչ փառք, ոչ համբավ,
Ին վերջին խոսքն է. «Քեզ բարի ճամփա»:

Խանյանի «Նահատակ լուսո» պոեմը արցախյան գոյամարտին նվիրված մի հրաշալի հերոսապատում է, արժանի լեգենդար Ավոյի անվանն ու փառքին: Ուշագրավ է նաև «Մհեր» պոեմը՝ նվիրված նահատակ հերոս Մհեր Դանիելյանի խիզախությանը:

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԴԵՆ

Արցախյան շարժման ու պատերազմի տարիներին Ս.Խանյանի գրիչը եղավ բեղմնավոր, ինչպես երբեք: Նա բացի իր վերոհիշյալ պոեմներից, գրել է բանաստեղծությունների շարքեր, որոնք մի ստվար ժողովածու կարող են կազմել: Տեղի է նշել, որ Արցախում թնդանոթների որոտի հետ բանաստեղծների մուսաները ավելի ակտիվացան: Արցախյան պոեզիան, հիրավի, այդ տարիների ընթացքում վերելք ապրեց: Գրքեր ու շարքեր տպագրեցին ոչ միայն ավագ սերնդի ներկայացուցիչները, այլև երեւան եկան տասնյակ երիտասարդ պուտներ, ընթերցողի հետ հանդիպեցին ոչ միայն առանձին բանաստեղծություններով, այլ գրքերով: Ավագ սերնդից Գ.Գաբրիելյանի, Վ.Հակոբյանի, Հ.Բեգլարյանի եւ մյուս տաղանդավոր գրողների հետ իր ազդեցիկ խոսքն ասաց Խանյանը: «Խորհրդային Ղարաբաղ» թերթում, «Արցախ» ամսագրում, շրջանային մամուլում Խանյանը հաճախակի է հանդես եկել: Նրա հրաշալի բանաստեղծական շարքերը տպագրվեցին երեւանում «Հայ գրող», «Դաշնակցություն» թերթերում, հաղորդվեցին ռադիոյով եւ հեռուստատեսությամբ: 1989թ. սկսեց լուս տեսնել ԼՂ Գրողների կազմակերպության օրգան «Արցախ» ամսագիրը: Հենց առաջին համարում գետեղվեցին Խանյանի «Իմ Ղարաբաղը» բանաստեղծությունը, հատված «Արցախցիները» պոեմից:

Ամեն անգամ, երբ ժողովրդի ճանապարհին խտանում են սեւ ամպերը, երբ սպանում է թշնամին, զինվորագրվում է գրականությունը: Պատմությունը նման պահերին լեզու առած խոսում է նոր սերնդի հետ: Արցախյան պատերազմի տարիներին էլ մեր գրականությունը հարստացավ պատմական անցյալին նվիրված ստեղծագործություններով: Խանյանի գրական հունձքում եւս պատմական թեմատիկան հնչեցվեց՝ կապված արդիական խնդիրների հետ:

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԴԵՆ

Այդ առումով արժե նշել «Արցախ» ամսագրի 1990թ. 5-6 համարներում տպագրված շարքը, որի մեջ մտնում են «Կավագ վաճքը», «Տեսիլք», «Պապիս պատիվը», «Ես Արցախն եմ» հիանալի բանաստեղծությունները։ Կավագը պատմական Դիզակի վաճքային համալիրներից է՝ կառուցված 12-13-րդ դարերում։ Այն գտնվում է Արեւադրին դեմ-դիմաց, բարձունքի վրա։ Խանյանը նկարագրելով կիսավեր վաճքը, հաստատում է, որ մինչեւ հիմա էլ այն հայոց «դարերի կնիքը վրան, Էլի շնչում է եւ վշտոտ, եւ նուրբ»։ Դեռ ավելին,

Աշխարհի վրա մատ է թափ տալիս,
Մատից աստղերի շողեր են ցայտում,
Թիրսը՝ դեպ իրեն, ինքը՝ դեպի թիրս,
Թայլում են անվերջ, բայց չեն հանդիպում։

Վաճքը այսօր սեղուկ-թուրքերին կանչում է դատի այն բանի համար, որ նրանց թոռները կեղծում են պատմությունը, որ իբրեւ իրենք են կառուցել։ Եթե այդպես է, ապա ինչո՞ւ հենց այդ սեղուկի թոռը ավարեց վաճքի դուռը, ջարդեց խաչը։ Վաճքը լեզու առած հայտարարում է.

Զինվորյալներ են ուխտավորներս,
Փրկության ժամին շեփորն է հնչում,
Ծլարձակում են թաղված հույսերս,
Հիմքերս կյանքի ավիշ են շնչում։
Մրսած բառերս կարթնանան նորից,
Կշարականվեմ հոգեւոր մարտում,
Կհառնեմ մի օր մթամած ձորից,
Կրկին կրառնամ խղճի դպրատում։

Ինչպես նկատում ենք, բանաստեղծության մեջ հնչում է պայքարի կոչը։ Հետաքրքիրն այն է, որ այս շարքն ստեղծվել է այն օրերին, երբ դեռևս Արցախում մոլեգնած էր խորհրդային

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԴԵՆ

Իշխանության երկաթե օրենքը՝ հովանի դարձած Պոլյանիչկո-Սաֆոնովյան ոհմակին, երբ յուրաքանչյուր արդար խոսքի համար հայ մտավորականին հալածում էին, մետում Շուշվա բանտը, մեղադրում ազգայնամոլության, սեպարատիզմի, ազգային թշնամանք սերմանելու մեջ: Սակայն ի հեճուկս հայ ժողովրդի հանդեպ բացահայտ այդ թշնամանքի, հնչում է ազատության եւ անկախության կոչող երգը: «Կավագ վանքը» երգի անմիջական շարունակություն կարելի է համարել Խանյանի «Տեսիլք» բանաստեղությունը: Այստեղ նկարագրության օրյեկտը Ամարասն է: Բանաստեղծը գրում է, որ արցախցիներին «զատել են իր անցյալից, քանինել մեր սուրբ տունը»- խարված Ստալինի սուստ խոստումներից: Այդպես, տառապել ենք տարիներ շարունակ եւ այսօր «հողն է տնքում մեր ցավերից»: Դառը խոհերի մեջ բանաստեղծը փարվում է Ամարասին, ուր լսում է «Մեծ Մաշտոցի» ձայնը, խոսում Գրիգորիսի հետ: Բացիւմ է տեսիլքը՝ կապված արցախցիների նորօրյա պայքարի հետ.

Ապավինած խաչ ու գրին
Շարք են կանգնում սրբերը բյուր՝
Իսկ դեմ-դիմաց հենված թրին,
Ժպտում է մի Արցախա ծուռ:
Իսկ նրա շուրջ զորքն Արցախի,
Խաչ ու թրի հովանու տակ,
Հիմնն է երգում առանց վախի,
Գովում կոիկ ու հաղթանակ:
Եվ օրհնելով պայքար ու հող,
Թուր են տալիս ինձ պողպատե,
Որ Արցախի բախտով վառվող
Սերունդներին ես կտակեմ:

Պատմական անցյալի սրբազն քաջերը, անմարում հիշատակ դարձած պապերը, Արցախ աշխարհը դարավոր ոստիների

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՄԱՆ

Հարձակումներից պաշտպանած այրերը Խանյանի հայրենասիրական եւ պայքարի երգերում դարձել են խորհրդանշիչեր, նոր սերունդներին գոյամարտի կոչող դաս ու ազդակներ: Բանաստեղծական թարմ ու ինքնատիկ պատկերներով, հոգեբանական համոզիչ բացահայտումներով շարքի մեջ ընդգծվում է «Պապի պատիվը» ստեղծագործությունը: Պատիվը՝ կապված արցախուր քաջության, հայրենասիրության, վճռականության հետ, շնչավորված է այստեղ: Պապի պատիվը քնարական հերոսի ուսերին թառել է ինչպես առասպելական թռչուն, նոր ձայնը զրնում է քնարական հերոսի ականջներում, հույսերին ժպտում թիրսա սարը, ծփում՝ Արեւատարը: Բանաստեղծը մեջբերում է հայոց սրբազն քաջերի անունները, Վերջիշում Դիզակա հերոսներին՝ տումեցի Թեւանին, ակնաղբյուրցի Աբգարին.

Նժերի ձին է խրխնջում Գեղում,
Արձագանքում է նրան անտառը,
Թշնամիների հենց պարտված տեղում
Դրոշ է դառնում նրա հանճարը:

Պատմական անցյալի հերոսներն ու հերոսամարտերը տեսիլի փոխված գոյամարտի են կոչում նոր զինվորյալներին, որ զրոխամբվում են թիրսի լանջերին ու ծածանում պայքարի դրոշը: Շարքն ավարտվում է «Ես Արցախն եմ» բանաստեղծությամբ: Բանաստեղծի հավատը հայրենի օջախի հավերժության հանդեպ վառ է եւ շղոշողուն: Առհավատչյան մեր հին կոթողներն ու երգերն են, որոնք խոսում են հայերեն: Ոգեւորված բանաստեղծը բացականչում է.

Հայեր են սեգ սարերս,
Խաչքարերս էլ՝ հայեր են,
Իմ հայածին դարերը,
Կպայքարեն հայերեն:

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԴԵՆ

Ինչպես տեսնում ենք, արցախյան շարժման հենց առաջին օրերից բանաստեղծը իր գրչեղբայրների հետ միասին հնչեցնում է պայքարի կոչը՝ համոզված լինելով, որ հայրենի երկրամասի անկախությունը կապահովվի միայն ազատագրական գոտեմարտի միջոցով:

Հերոսության թեման ժամանակի թելադրանքով դաշնում է Ս. Խանյանի Վերջին տարիների ստեղծած գրութերի լեյտմուտիվը:

Լեռնային Ղարաբաղի ազատության եւ անկախության խնդիրը, որպես իրական հող, հերոսական բռվանդակություն է հաղորդում Ս. Խանյանի նոր ստեղծագործություններին: Ընթերցողները շերմորեն ընդունեցին Խանյանի բանաստեղծությունների նոր շարքերը «Հայ գրող» (2 մարտի, 1992, հ. 3) եւ «Ղաշնակցություն» (հունիս, 1992, հ. 12) թերթերի էջերում: «Հայ գրող»-ում տպագրված շարքը սկսվում է «Մաշտոցն Արցախում» բանաստեղծությամբ: Պատահական չէ այդ թեմայի աշխուժացումը հայ պոեզիայի արցախյան հատվածում:

Խնդիրը կայանում է նրանում, որ աղրբեջանական զեղծարար գիտնականները Արցախ աշխարհը համարում են ալբանական-աղրբեջանական-թուրքական, դրանով իսկ ժխտում հայության պատմական արյաները Մեծ Հայքի տասերորդ այդ լայնարձակ նահանգում: Շրջանցում են այն բոլոր հուշարձանները, որոնք հառնել են հայի ծեռքերով եւ կրում են մեր ժողովրդի ոգու կնիքը: Պարզ է, որ նման պարագայում հայ մտավորականությունը չափութ է լիի: Ճիշտ է, ժամանակին Բ. Ռուբենյանը, Պ. Սեւակը եւ ուրիշներ պատասխանել են թուրք զեղծարարներին, սակայն արածը դեռ դիչ է, որովհետեւ թուրքական արշավը Հայոց Արցախի պատմության դեմ նոր թափով շարունակվում է նաև այսօր: Եվ ահա, եթք Աղրբեջանը սանձազերծել է պատերազմ արցախցիների դեմ, հայ ազատամարտիկների կողքին գենքի ուժգնությամբ մարտնչում է նաև գրականությունը՝ առաջին պլանի վրա մղելով ոչ միայն առօրյայի խիզախությունը:

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՎՈՒՆ

Յը, այեւ անցյալի հերոսական էջերը եւ հայտնի անհատների գործունեությունը: Այդ տեսակետից հատկանշական են Խանյանի «Մաշտոցն Արցախում», «1992-Ամանոր», «Զարելացրեք անտառը» բանաստեղծությունները: Խանյանը Մաշտոցի անվան հետ է կապում Արցախի հայաշունչ ոգով մեռնվելը, անմար լուսո խորան դարնալը, ինչպես պուտն է ընդգծում.

Նրա շնչից ծնվեց դպիրն Ամարասի,
Պատմագիրը ծնվեց, երգիչը մեծ,
Հայոց երգերը հին նման մեղվապարսի,
Ծուրջպարի մեջ առան բարձունք ու քերծ:
Ու շքերթը ծնվեց մեսրոպանուն մանկանց,,
Մեսրոպացան օջախ, սեր ու հարգանք,
Անգամ բողբոջներին ու թերթերին ծաղկանց,
Հովը պար էր բռնում նրա անվամբ:
Եվ նա եկավ Արցախ՝ լույսը հոգու վրա,
Եվ դարերում դարձավ նրան սատար,
Նրա աղոթքներով, օրհնանքներով նրա
Ողջ Արցախը դարձավ մեսրոպատառ:

«1992-Ամանոր» բանաստեղծությունը հեղինակի ծանր ապրումների արդյունք է: Հայտնի է, որ 1992-ի տարեմուտին Արցախը ումբակոծվում էր չորս կողմից, Ստեփանակերտը դեռևս օդակման մեջ էր: Բանաստեղծը դառնացած է աշխարհից, Ամանորի թեւերին տեսնում է Արցախի արյունը, արթնացել է մարդակեր գազանը, ճգոտում է քերել հայոց տառերը Արցախա թերթերից, զավթել անգամ մեր երգերը.

Խլացած աշխարհը նորից
Չի լսում օգնության կանչերս,
Կուրացած աշխարհը նորից
Չի տեսնում անարդար տանջվելս:

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՄԱՆ

Սակայն բանաստեղծը չի հուսալքվում, նա «Զահելացրեք անտառը» հրաշալի բնաստեղծության մեջ քնարական հերոս ընտրելով իր Խաչատուր պապին, արդար է համարում այն պատերազմը, որ զոհեր խելով հանդերձ, ապահովում է ժողովրդի ազատությունն ու անկախությունը: Բանաստեղծությունը գրված է քնարական շնչով, ժողովրդական մտածելակերպի, արտահայտամիջոցների կնիքով: Խաչատուր պապը խորհուրդ է տալիս ջահելացնել անտառը: Բազմանշանակ նա ասում է.

Ուր նայում ես՝ ծերերն են շատ,
Կարծես ստերջ է դարը,
Փոքրերով է տունն արեւատ,
Զահելացրեք անտառը:

Բանաստեղծը վերհիշում է իր մանկության օրերին հնչած այս խորհուրդը եւ որ ընկալում էր միանշանակ, ուղղակի.

Ինձ թվում էր՝ հայրս, քեռիս,
Պիտի գնան մեր սարը,
Ճյուղահատեն ծառերը հին,
Զահելացնեն անտառը:
Կոիվ եղավ, տուն չդարձան
Իմ քեռին ու եղբայրը,
Պապիս խոսքը նոր հասկացա՝
Զահելացրեք անտառը:

Ծարքի հաջողված գործերից են «Ես Էլ այսպես թող ապրեմ», «Լորիս Ճգնավորյանին», «Խորհուրդ» բանաստեղծությունները, որոնք վերը նշված ստեղծագործությունների համաձուլվածքում նոր խոսք են բանաստեղծի համար:

«Դաշնակցություն» թերթը Խանյանի նոր բանաստեղծությունների շարքը տպագրել է համառոտ անոտացիայի ուղեկցությամբ, որ բերում ենք որոշ կրճատումով.

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԴԵՆ

«Բանաստեղծ, թարգմանիչ Սոկրատ Խանյանը ապրում եւ ստեղծագործում է Ստեփանակերտում։ Բանաստեղծը 12 ժողովածուների հերիխակ է։ Վերջերս Երեւանի պետական համալսարանի հրատարակչությունը լույս ընծայեց նրա նոր գիրքը՝ «Արցախյան ղողանջները», որի քնարական հերոսը հարազատ քերծու քարափներին կառչած, իր պապենական հողն ու օցախը կոծքով պաշտպանող հայրտ արցախին։ Այս հրաշալի գրքի հուզաթաթավ բանաստեղծությունների տողերի միջից բարախում են մարտնչող սիրտն ու հավատի ոգին։

Ծանր է տաղանդավոր բանաստեղծի ճակատամարտը՝ իր սքանչելի տաճարների զանգերի լեզվակը հատել փորձող բիրտ ուժերի դեմ, ինքն էլ քաջ գիտե, սակայն այլ ճանապարհ չկա, պիտի մարտնչել նաև գրչով։ Ու դեպի թշնամու դիրքերը մղվող ազատամարտիկի աներերությամբ մարտնչում է Սոկրատ Խանյանի հոգնել չիմացող գրիչը՝ շանթ ու որոտ տեղալով ոստիի վրա։ «Ի վերջո, հաղթանակը մերը կիմնի, քանզի մենք գիտենք՝ ինչի համար ենք կուլում»։ Մրածից մեկ տարի առաջ ասված նրա խոսքերն ենք հիշում, որ այսօր իրականություն են դարձել, վկան՝ մեր վերջին հաղթանակները եւ ամենամեծը՝ Շուշիի ազատագրումը...»։

Ծարքը բացվում է «Ո՞ց մնամ» սրտառուչ բանաստեղծությամբ։ Քնարական հերոսը գործի թերումով Արցախում չէ։ Նրա հարազատը հրոդորում է, որ չվերադառնա Արցախն, որովհետեւ այնտեղ պատերազմ է ընթանում, Վտանգավոր է։ Քնարական հերոսը հիշում է Արցախից իրեն կանչող ձեռքերը, հերկերը, վերքերը, պապի խիդճը, թոռան ճիշը եւ ընդհանրացնում։

Իմ կյանքն ու բախտն են կանչում այնտեղից,
Դատիվն ու թախտն են կանչում այնտեղից,
Իմ սուրբ օցախն է կանչում այնտեղից,
Ինչպես չգնամ։
Արցախն է կանչում, ասա, ո՞ց մնամ...

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԴԵՆ

Այս բանաստեղծությունը արցախյան ցավի արձագանքն է։ Հայտնի է, որ պատերազմի սկզբնական շրջանում որոշ արցախցիներ հեռացան հարազատ օջախներից եւ ծվարեցին հեռութերում։ Արդարացված եւ չարդարացված այս լրումները համաժողովրդական քննարկման առարկա դարձան։ Ս. Խանյանը այդ երեւութիւ թարմ հետքերով գրեց բանաստեղծությունը, որի հիմնական ատաղձը մարտնչող Արցախի զինվորը դառնալու լուսավոր գաղափարն է։

Շարքի «Արծիվը» բանաստեղծության մեջ Խանյանը պատմական էքսկուրս է կատարում։ Նա հայ ժողովրդի ուժի խորհրդանշ՝ հանդիսացող արծվի բանաստեղծականացման միջոցով նշում է մեր պատերից ժառանգած հերոսականությունն ու վճռականությունը։ Պատկերելով ժայռի ամհաս կատարին բազմած արծվի եւ իր ծագերի թոփքները, բանաստեղծը ընդհանրացնում է։

Պարզ է, թե ինչու քաջ պապերը մեր
Ուժի խորհուրդը արծիվն են ընտրել։

«Կարոտս» բանաստեղծության քննարական հերոսը իր կարոտը ներկայացնում է որպես «չհոգնող ճամփորդ», որ «թուզում է լույսից Էլ արագ»։ Խոսք բացելով ընթերցողի հետ, նա ընդգծում է, որ իր կարոտը Սիփահն ու Վարագն են, Աստղիկի մեծ սերն է, Տիգրամի համբավը, Մաշտոցի գրերն են եւ Վարդանի արշավը։ Իր կարոտը նա կամրջում է ներկայի հետ, այն համարում Արցախի թեւերը։

Որդիհական ոգեշունչ մի խոսք է «Երկիր Հայոց» բանաստեղծությունը։ Քննարական հերոսը իրեն համարում է հայոենիքի երգով բարուրված որդի, որ հիմա օրորում է նրա երգը։ «Եվ ափիդ մեջ հասակ առած, քեզ առել եմ իմ ափի մեջ» - ընդգծում է քննարական հերոսը եւ խոստանում, որ առանց սուլը Հայոենիքի իր ապրելը իմաստ չունի։ Շարքի վերջին ստեղծագործությունը կոչվում է «Դարերդ ի վեր»։ Բանաստեղծը դիմելով Արցախ աշխարհին, ներկայացնում է նրա հերոսական պատմու-

ԱՌԱՋԱՔԱՆԻ ՓՈԽԱՐԴՅԱՆ

թյունը՝ արիությունը, աշխատասիրությունը։ Բայց 20-րդ դարում «Մի Աենգ ուղեղ» եւ «Մի սեւ ձեռք» Արցախը նետեցին կառափ-նարան։ Սակայն Արցախն ապրեց՝ անկախության երազը հոգում եւ ոտքի ելավ վերամիավորվելու իր մորը՝ Հայաստանին։ Նպատակը հստակ է, երազը՝ վճռական։

Զո պատիկն եմ ուզում պահել,
Զո անունը, քո լեզուն...


Թշնամին ուզում է Արցախից խլել լեզուն, խաչել նրան, սակայն զուր ջանքեր են դրանք, որովհետեւ հայրենիքը պայքարում է իր պատվի համար։ Շարքն ավարտվում է «Խաչենաձոր» հրաշալի բանաստեղծությամբ։ Նկարագրելով Արցախի երակներից մեկը՝ Խաչենաձորը, բանաստեղծը նրա սարերը համեմատում է այրուծիու հետ, ծառերը՝ նետերի, ժայռերը՝ սրած թրերի։ ԱՅօնավորելով Խաչեն գետը, Խանյանը հիշում է իր Խաչի պայի արծաթ գոտին։ Արյունակցական այդ կապը բերում հասցնում է մեր օրերին։ Խաչեն ձորում ապրած մեր պապերի հուշերին գումարվում են մեր սրտերի երազները։

Ճանապարհը շարունակվում է։ Ս. Խանյանի նոր ստեղծագործությունները ապացուցում են, որ նա նման է իսկ եւ իսկ իր մայր Արցախի բնությանը՝ միշտ թարմացող, բուրող, ինքն իրենից վերընջյուղվող։ Հավատացած ենք, որ բանաստեղծը դեռ շատ հանդիպում ներ կունենա ընթերցողների հետ,- նոր կուտակումներով, նոր ժողովածուներով։

ԱՆԱՀԻՄ ԱԹԱՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ
«Կարոտի եւ սիրո կրակներ», «Սոնա» հրատ., 2000թ.

ՀԵԳԻՆՊԱՆԻ, ԽԱՔՔԱՐԴԱՆԻ, ՇՈՒՄԱՆԻ (1960-2008)



Արցախցիները պողպատից կարծր են,
Վեհ են ու բարձր են եւ անողոք,
Բարեկամների դիմաց միշտ քաղցր են,
Իսկ չարերի դեմ՝ բռունցք, բողոք:
Դարի ոզին են արցախցիները,
Խղճի դրոշն են ազգերի մեջ,
Արցախցիները նոր աստվածներ են՝
Կվառեն կյանքի կանթեղն անշեց:

ՀԱՅՐԵՆԻ ԳՅՈՒՂ

(Քնարական պոեմ)

1.

Ողջո՞ւյն քեզ, ողջո՞ւյն, գյուղ իմ հայրենի,
Դու իմ օրորան, իմ մայր կաթողին,
ճամփաս աշխարհում ուր էլ որ տանի,
Դարձյալ քեզ հետ է իմ վառվող հոգին:
Անունների մեջ՝ շրթերիս վրա,
Առաջինը քո անունն է հնչում.
Ուր էլ լինում են, անուշ մոր ննան,
Կարոտով դու ես, դու ես իմած կանչում:
Քո գրկի մեջ են ես հասակ առել,
Դու ես իմած սնել քո անուշ կաթով,
Քո հույզերն են իմ կրծքի տակ վառվել,
Քեզ են պարտական իմ երգով, կյանքով:
Ուրախացել ես իմ ամեն քայլով,
Ուսուցանել ես ինձ՝ սիրել կյանքը,
Ասել ես, որդիս, աշխատանքով է
Գալիս ու ծիում մարդու բերկրանքը:
Դու աշխատավոր, դու աշխատասեր,
Մայր հողի լեզվի աննման թարգման,
Դու առատության անսպառ ակունք,
Իմաստուն մշակ, բարի պարտիզան:
Քո գիրկն են եկել ես գարնան հետքով,
Արբել եմ կրկին լույսերով քո հորդ,
Քո ծիլ ու ծաղկով, այգիներով քո,
Որպես քո որդին, ոչ որպես ճամփորդ:
Վաղուց ու վաղուց երազել են ես

Թանկագին իմ մայր, քո գովքը երգել,
Բայց ամեն անգամ սիրող որդու պես
Լեզուս լուլ է, սիրուս տրոփիել:
Քո զավակների՝ իմ եղբայրների,
Ազնիվ ջանքն է միշտ թեւավորել ինձ,
Ախ, որի՞ մասին գրեմ ես, որի՞.
Բոլորն հերոսներ, քաջ՝ մեկը մյուսից:
Դուք ինձ կնծ ենթեք, եղբայրներ իմ բյուր,
Մեկիդ մասին եմ գրում այս անգամ,
Մեկիդ եմ ձոնում իմ այս երգը հուր,
Թե շտապում եք, անունը կտամ:
Դուք գիտեք նրան, սիրում եք, հարգում,
Դուք ձեր պարծանքն եք համարում նրան,
Ահա քայլում է նա ձեր արանքում,
Գյուղատնտես է, անունը՝ Արամ:

2.

Այգիների միջով մենք քայլում ենք դանդաղ,
Գարնան շունչն ենք զգում ամեն քայլափոխում,
Զյունը սարերից է շողում հայացքով պաղ,
Ճողը արդեն զարթնել, իր զգեստն է փոխում:
Վազի շունչն ենք զգում բողբոջելուց առաջ,
Ճոնին ձորում դեղին իր լաչակն է փռել,
Ճեռվից հասնում է մեզ գարնան ջրի շառաչ,
Սալորենին ասես նորահարս է դառել:
Թփերի տակ կապույտ մանուշակն է ժպտում,
Իր բուրմունքը խառնում հողի թարմ գոլորշուն,
Կտուց-կտցի դրած զառ հավքերն են երգում,
Իրենց բույնի տեղն են ասես թե որոշում:
Արամն այնպես է իր շուրջը տարված նայում,

Ասես էլ չի տեսել այսպիսի մեծ զարթոնք,-
Բնությունից չքնաղ ի՞նչ կա այս աշխարհում,-
Ասում է նա, շնչում, հպարտ ու լիաթոք:
Դասկանում եմ նրան, հայացքի մեջ կարդում
Մի չգրված պոեմ՝ մի սեր անհուն, անբիծ,
Մի սեր, որ իր կյանքն է մայր հողի հետ կապում,
Մի սեր, որ իր կյանքն է դարձնում իմաստնալից:
Զրուցում ենք ջերմին... Նա պատմում է մեկ-մեկ,
Թե որ այգին իրենք երթ, ինչպես են օցել,
Թե որ վազը քանի տարեկան է հիմա,
Թե որ օղակ երկրին ինչքան բերք է հանձնել:
- Պետք է վազի լեզուն լավ իմանալ, թե չէ
Նա բերք չի տա երթեք, կխռովի մարդուց,
Այս խորհուրդը բարի մեր պապերի խոսքն է,
Խորհուրդն այս իմաստուն լսել եմ դեռ մանկուց:
Արան ավարտում է խոսքը իր սրտառուց
Ու հայացքը ձգում այգիների հեռուն,
Որտեղ տրակտորն է կուրծքը ճեղքում հողի,
Որտեղ նվիրական աշխատանքն է եռուն:

3.

Մենք հասնում ենք խնձորենում՝
Դաշնած այգու շեմքին,
Մի պահ տիսրությունն է իշնում
Արամի թուխ դեմքին:
- Ի՞նչ պատահեց,- հարցնում եմ ես,-
Ինչո՞ւ դու տիսրեցիր,
Արամ, ասա, ինչո՞ւ այդպես
Դամկարծ ընկճվեցիր:

- Այս ծառի հետ պատմություններ,
Բյուր հուշեր կան կապված:
Այստեղ իմ ժիր մանկությունն է
Անցել երազ դարձած:
Յայրս հնուտ այգեգործ էր,
Ամենուրեք հայտնի,
Երբեք, երբեք նա իր փորձը
Չէր թողնում գաղտնի:
Գալիս էին մոտ գյուղերից
Ու խորհուրդներ հարցնում,
Ուր էլ լիներ, այգու կողքով
Անտարբեր չէր անցնում:
Զահելներին խրախուսում էր,
Սիրով օգնում թույլին.
- Հողը, որոդիս,- նա ասում էր,-
Նախատում է ծույլին:
Ամեն անգամ, երբ ճիպոտը
Մի փայտե ձի դարձրած
Գալիս էի ես հորս մոտ,
Գրկում էր ինձ հուզված:
- Գյուղատնտես պիտի դառնաս,-
Միշտ դիմում էր նա ինձ,
Անուն պիտի հանես, տղաս,
Բարիք քամես հողից:
Երբ դպրոցը ավարտեցի,
Քաղաքում ինձ գտա,
Հորս տենչը կատարեցի,
Ինստիտուտ մտա:
Երեք տարի ուսանեցի,
Գրքից միշտ անբաժան,

Բայց հայրենի հողը խուժեց
Մեր ոսկը դաժան:
Դայրս թողեց սիրած այգին,
ճակատ նետվեց գյուղից,
Ընկերների հետ իմ անգին
Ես է՝ երրորդ կուրսից:
Եվ պատահեց՝ Բեռլինի մոտ
Դանդիացինք իրար,
Մեր սրտերում անհուն կարուտ,
Տենչեր, հույզեր վարար:
Դայրս այնպես գրկել էր ինձ,
Փայփայում էր այնպես,
Թվում էր, թե փայտե իմ ձին
Դենքած մանուկն եմ ես:
Մենք մի վաշտում, իրար կողքի
Կռիվ էինք մղում,
Եվ մայրիկիս՝ հայր ու որդի
Ձերմ ողջույններ հղում:
Այդ թեժ պահին նենգ թշնամու
Գնդակը ինձ կպավ,
Դայրս ցասման հուրն իր սրտում,
Տխուր ինձ մոտ եկավ:
Նա փաթաթեց ծեռքիս վերքը
Ու գրոհեց կրկին,
Եվ բարձունքի վրա հանկարծ
Ընկավ՝ վերքը կրծքին:
Վերջին խոսքը ու պատվերն էր,
Որ լավ անուն հանեմ,
Որ մայրիկիս եւ գյուղը մեր
Ես մտահան չանեմ...

... Ամեն անգամ այգու միջով
Երբ այստեղ եմ գալիս,
Ղեմս է Ելնում պատկերն իմ հոր,
Սիրտս արցունք է լալիս:
Մինչ Արամը կվերջացներ
Պատմությունն իր տիտուր,
Թռվոալով մեզ մոտ վազեց
Մանուկն իր՝ թեժ մի հուր:
Եկավ եւ հոր գիրկը նետվեց,
Իր փայտն ձին ձեռքին,
Եվ ժպիտը դանդաղ փայլեց
Արամի թուխս դեմքին...

4.

Արտի եզրին կանգնել է նա
Ու նայում է հոգեհնա
Ղեղի կանաչ հեռուն,
Յայրենական դաշտը անծիր,
Արտի ամեն-ամեն մի ծիլ
Նոր տենչեր են բերում:
Նա ցորենի ծիլն է շոյում,
Աչքերի մեջ խիճն է շողում,
Կապում ոսկի կամար,
Չէ՞ որ քամի՝ քամի՝ տարի
Պայքարել է կանքով արի
Այդ տեսակի համար:
Թեկուզ գոհ է, բայց անհանգիստ,
Ղաշտի միջով արեւանիստ
Նա քայլում է խոհուն,
Պարզած թեւերն իր խոր մտքի,

Նոր բարձունքի, նոր թռչքի
Համար է նա խորհում:
Խորհում է նա. ինչպես ամել,
Ինչպես մի նոր գագաթ հանել,
Հայրենի գյուղն իրենց,
Որ երջանիկ ամեն մի տան,
Առատության ծովը ծփա՝
Անսպառ ու անվերջ:
Ու գտնում է, գտնում է նա
Առատություն բերող ճամփան.

- Այո՛, դիմել հողին,-
Բարիքները իր հնայուն՝
Յողը երբեք չի խնայում
Յնուտ խնամողին:
...Արամն ահա տուն է գալիս,
Որդուն համբույրներ է տալիս,
Փայփայում ու շոյում,
Իսկ որդին էլ սիրունատես,
Թռվում է թիթեռի պես
Ծաղկանկար շորում:
Կինը թերթն է բերում օրվա,
Ողջագուրվում, ասում.- Արամ,
Շնորհավոր լինի...
Գյուղում ուրախ երգն է հորդում,-
Մեծարում են Յերսոս որդուն,
Որդուն իր արժանի:

5.

Հայրենի գյուղ իմ աննման,
Դու ծաղկեփունջ բուրունավետ,

Զրուցեցի եղբոր նման
Քո քաջ որդու՝ Արամի հետ:
Զրուցեցի եւ հիացա
Նրա խելքով, նրա ջանքով,
Քո լուսառատ գալիքին նա
Նվիրվել է ամբողջ հոգով:
Ամեն մի թիզ հողդ գիտե,
Գիտե նրա քաղցր լեզուն,
Ամենուր էլ նա քեզ հետ է,
Դու ես, դու ես նրան հուզում:
Դու նրանով ուրախ ես շատ,
Ես այդ գիտեմ, հայրենի գյուղ,
Դու դարավոր կաղնի մի ծառ,
Նա քո բնից հառնած մի ճյուղ:
Դու սնունդ ես տվել նրան,
Նա իր ուժն է քեզ պարզեւում,
Տես ինչպես է իր շուքի տակ
Քեզ փայփայում, քեզ պարզեւում,
Տես ինչպես է իր շուքի տակ
Քեզ փայփայում, քեզ արեւում:
Դու բարիքներ ծնող մի նայր,
Նա քո կրծքից բխած աղբյուր,
Դու բարձունքներ տանող ճամփա,
Նա քո ճամփին ծաղիկ ու բույր:
Գուցե իր ջերմ սիրո մասին
Նա քեզ ոչինչ, ոչինչ չասի,
Սակայն որդուդ անցած ճամփան
Զգվում է ոնց բարի համբավ,
Բարի համբավ, որի համար,
Յպարտ է միշտ ամեն մի նայր:

ՈՒԽՏԱՉՈՐ (Լեգենդ)

Յիանալի մարդ էր պապս,
Նա բարի էր, իմաստում,
Մինչեւ մի գործ չէր կատարում,
Երբեք հացի չէր նստում:
Նրա շուրթերից, ուր էլ լիներ,
Յուշ ու հերիաթ էր հոսում,
Պապ էր, բայց իր պապի մասին
Յրծվանքով էր միշտ խոսում:
Նայում էր նա մեր դաշտերին,
Մեր սարերին երկնաքեր,
Պատմում. նրանց անունները,
Որ դարից են մեզ հասել:
Մի անգամ էլ, գարնան մի օր,
Մենք բարձրացանք Արեւադր,
Մեր դեմ-դիմաց Ուխտաձորն էր՝
Անտառապատ ու անծայր:
Պապս նայեց, նայեց երկար,
Ու խոսք բացեց մեղրածոր,
Թե ինչու է մեր անտառը
Կոչվում այսպես՝ Ուխտաձոր:

... Եկել էր նա՝ Զինգիզ խանը,
Ամպ էր իջել կովկասին,
Պիտի անցներ մեր անտառով
Իր զորքի հետ միասին:
Պիտի անցներ նա Արեւամուքը,
Քասներ՝ աչքը ուր կտրեր,

Ով հանդմեր ճամփին կանգնել,
Նրա լեզուն կտրեր:
Բայց մեր հորի այն ո՞ր քաջն էր,
Որ ոսխին վիզ ծռեր,
Ոչ մի հերոս թշնամու դեմ
Սուրբ պատյան չի դրել:
Յավաքվել են ամեն կողմից,
Յերոսները Արցախի,
Յավաքվել են, պարիսա դառել
ճանապարհին ոսխի:
Ինացել է Չինգիզ խանը
Ու վագրի պես կատաղել.
«Վաղն Արեւար պիտի հասնենք,
Ել չպետք է հապաղել»:
Ու հետեւյալ լուսաբացին
Շառաչել են բյուր թրեր,
Չինգիզ խանը ահաբեկված
Կատաղել է ու փրփրել.
«Պիտի փոխել ճանապարհը,-
Ղիմել է նա զորքերին,-
Ղեռ չեմ տեսել այսպիսի ճարտ,
Չեմ հավատում աչքերիս»:
Պարտված, ջարդված հեռացել է
Արյունաբրու թշնամին,
Յաղթանակն է թեւին տվել
Մեր սարերում այդ ժամին:
Նահատակված մեր քաջերին
Բերել են մի առավոտ
Ու թաղել են այդ անտառում,
Կարկաչահոս առվի մոտ:

Ու նրանց սուրբ գերեզմանը
Դարձել է մի ուխտավայր,
Իսկ անտառը մեր դարավլոր
Նրանց շիրմին լացող մայր:
Ճաջորդել է դարը դարին,
Սերունդներ են եկել նոր,
Եվ անունը մեր անտառի
Մնացել է Ուխտաձոր:

1967թ., գ. Ակնաղյուր

ԱՐԵՎԸ

(Լեգենդ)

Արեւն աստղերի քույրն էր ոսկեվարս՝
Յրաբորբ, իրակ,
Նրա մեծ սիրտը եռացող օվկիան,
ճարճատող կրակ:
Թեժ էր էռթյամբ, թվում էր՝ չար էր,
Յաճախ աստղերի նախանձն էր շարժում...
Ու եկավ մի օր, Արեւը մենակ
Այնքան դառնացավ,
Որ իր քույրերից թաքուն հեռացավ:
Բեղը նոր ծլած երկիրն իր ճամփին
Յանդիալեց նրան,
Սիրեց, սեր առավ
Ու կյանք արարեց իր կրծքի վրա:
Երկիրը երդվեց Արեւի սիրով,
Արեւի հրով վառեց բյուր ջահեր,
Ու մինչեւ հինա նրա սիրով է
Մնում միշտ ջահել:

... Երկրի-Արեւի սերն անցավ մարդկանց,
Սակայն մի գաղտնիք մնաց առեղջված,
Թե ինչո՞ւ Արեւն առանց Սեր-Երկրի
Կարող է ապրել, սնել տիեզերք,
Առանց Արեւի՝ Երկիրը... Երբեք:

1967թ., գ. Ակմաղբյուր

ԱՐԵՎԱՐ

(Լեզենո)

Մեր Արեւարը դյուցազուն է մի,
Ոտքերը հողում, գլուխն աստղերում,
Նա հազարամյա կնճիռներ ունի,
Երազներ ունի հոգու խորքերում:

Արեգ է եղել անունը նրա,
Եղել է անվախ ու քաջաբազուկ,
Ուր գնացել է՝ իր ճանապարհը
Միշտ զարդարել է գործերով բազում:

Յովազի նման եկել է մի օր,
Չինգիզ խանը նենգ,
Մեր շեն գյուղերը մատնել կրակին
Եվ արտ ու արոտ արյունով ներկել:

Արեգը խիզախս զինվորների հետ
Թշնամու դեմ է ելել քաջարի,
Սրեր են շաշել գիշեր ու ցերեկ,
Յողն է տնքացել ոտքի տակ չարի:

Ծանր օրեր են հաջորդել իրար,
Դեղնել են իրից դաշտերն անմշակ,
Եվ ժողովուրդը դիմել է նրան.
«Ի՞նչ անենք, Արեգ, ասա, ո՞ւր գնանք»:

Արեգն, ասում են, մի սար է դարձել,
Սրտում կուտակած ցասում ու կրակ,
Ճեղքել է կուրծքը, իրաբուխ քացել,
Թշնամուն թողել ժեռ քարերի տակ:

Ու երբ փրկվել է հողը հայրենի,
Ուրախությունից արտասվել է նա,
Աղբյուր է դարձել արցունքը վճիտ,
Որ ծառ ու ծաղիկ ծարավ չմնան:

Եվ ժողովուրդը սիրով մի անհում,
Կուրծքն է զարդարել ծաղկունքով հազար
Եվ նահատակված որդու անունը
Դարերին հանձնել որպես Արեւար:

1971թ., գ. Ակնաղյուր

ԷՍՔԻՉՆԵՐ

Սոցիալիստական աշխատանքի հերոս
Սուրեն Աղամյանին

1.

Սիրելի հերոս,
Չենք տեսել իրար,
Չենք ողջագուրվել որպես սրտակից,
Երբեք չենք եղել մենք զրուցակից,
Սակայն, հավատա,
Որ միշտ էլ սիրտս հպարտացել է
Քո լավ անունով,
Խիզախ գործերիդ
Խորք ու անհունով:
Ուր որ եղել եմ՝
Սիրիրում լինի,
Թե Կարպատներում,
Ամենահզոր կառույցում դարի,
Մեր բոլոր-բոլոր քաջերի կողքին
Անունդ եմ լսել, մեկ էլ... ճարտարի:
Եվ ոչ միայն ես...
Երգի է փոխվել քո կյանքը արդեն,
Երգով են դիմում մարդիկ քեզ հիմա,
Իմ այս նամակն էլ ընդունիր, հերոս,
Թեկուզ մենք կյանքում չենք տեսել իրար:

2.

Թեկուզ այդպէս էլ չհանդիպեցինք
(Մարշալներ էիր ընդունում այդօր,
Յապարտանում է իմ սիրտը դարձյալ),
Բայց քո փոխարեն մեզ հետ խոսում էր
Խաղողի վազը,
Ու մեր հարցերին
Պատասխանում էր նույնու այգին,
Պատասխանում էր
Գալիքի ծայնը ձեր դաշտ ու հանդի:
Քո փոխարեն մեզ
Պատասխանում էր մի այգեգործի
Ինքնագոհ ժպիտ,
Մի հողագործի ցորնագույն հայացք,
Եվ օղակավար մի թուխ աղջկա
Սրտաբուխ հիացք:

3.

Մեզ ասում էին լռակյաց ես քիչ,
Չես սիրում երկար խոսել ու ճառել,
Որ քիչ էլ բարդ ես, որ հաճախ մարդիկ
Դժվարանում են հասկանալ հոգիու:
Ես լսում էի ու շուրջս նայում՝
Յարազատ գյուղիդ:
Նա մի իրաշք է, վարդերի մի փունջ,
Որ ճառագել է արդար վաստակով,
Նրա քարակերտ ամեն մի շենքից
Ես տեսնում էի ժպիտները քո:

Պարզ երեւում էր քո բյուրեղ հոգին
Մեծ պալատների շքեղ խոյանքում,
Քո խոհերը ջինջ, քո ձգտումները
Ես տեսնում էի ամեն խոյակում:
Եվ չեն սխալվում, քո հոգին բարդ է,
Բարդ՝ մեր հմայիչ խոյակների պես,
Բարդ է, բայց շքեղ, ոնց մայիսյան վարդ,
Գույների հյուսվածք, ծիածանն ինչպես:
Սարդու անունը վաստակի մեջ է,
Լավ գործերով է մարդն անմահանում,
Յոգիդ տենչերի մի ելեւէջ է,
Որ քեզ դարերի գագաթն է տանում:

4.

Թվերն, ասում են, միշտ չոր են լինում,
Բայց քո թվերը թրիչք են, թեւեր,
Յողի նուրբ լեզուն ով հասկանում է,
Նա կարող է լոկ վերընթաց թեւել:
Երանի նրան, ով որ կարող է
Յողի հետ քեզ պես քաղցր գրուցել,
Քեզ պես հասկանալ նրա զարկերը,
Քեզ նման հողից բարիքներ հնձել:
Ես չէի կարող չգրել երգն այս,
Ընդունիր խոսքս որպես հիացմունք,
Թող քո բարության տաղանդը պայծառ
Գյուղու միշտ տանի բարձունքից-բարձունք:

1971թ., գ. ճարտար

ԴԵՊԻ ՀԱՎԵՐԺՈՒԹՅՈՒՆ

Դ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ պայծառ հիշատակին

1.

Լոռու սարերում աստղերի շուրջպար,
Զորերում Լոռու գետերի համերգ,
Լեռների լանջին ծաղկունքի աշխարհ,
Ձերմ աչքալուսանք, օրորոցի երգ:
Աշխարհ էր եկել Լոռում մի մանուկ,
Բարուրվել վառվող աստղերի ցոլքում,
Աշխարհ էր եկել՝ առասպելների
Յերսոների պես հրդեհներ հոգում:
Կրակված սրտով Դավիթ էր մի նոր,
Յասակ էր առնում նա սարերում լուրք,
Միտքը սեզ Լոռու անդունդներից խոր,
Ժահտը Լոռվա ծաղկունքի պես նուրբ:
Սիրտը երգերի թրիռով լեցուն,
Ղողանջն էր խմում իր հոր նվազի,
Աշխարհի հեքիաթ դռներն էր բացում,
Սրտում ցոլքերը արեւածագի...

2.

Դսեղում ծաղկունք, Դսեղում աստղեր,
Մանկական խաղեր, այբուբեն, տառկապ,
Զալալօղլիում իր պես ժիր տղերք-
Զալալօղլիում գրքերի աշխարհ:
Դսեղի բուրող ծաղիկների հետ
Գիտելիքների իր փունջը կապեց,
Յույզը հորձանքվեց ոնց լեռնային գետ,

Երգի աշխարհում իր ուժը չափեց,
«Հոգուս հատորը» թառավ շրթերին
Եվ երազների օվկիանը մտավ,
Այդ օրից դարձավ երգերի գերին,
Երգի քարքարոտ ճանապարհն ընկավ:
Զալալօղլիից ճամփան ոլորվեց,
Բյուր կեռնամներով իին Թիֆլիս տարավ,
Բայց բավիղներում նա չմոլորվեց,
Երգի նոր թասը իր ձեռքը առավ:

3.

Լորին հոգու մեջ նա Թիֆլիս բերավ,
Զուլվեց Թիֆլիսի ուրույն աշխարհին.
Ներսիսյան դպրոց... գիտության ծարավ...
Լուսավոր դեմքեր այն դաժան դարի:
«Զեյթունցիների քայլերգը» լսեց,
Ու սեղմեց Շաֆֆու ձեռքը հաղթական,
Նա Աղամյանի Յամլետով տարվեց
Եվ Քաթիպայի երգերը կարդաց:
Խմեց հայ երգի առատ ակունքից,
Երգերն աշխարհի ամբարեց իր մեջ,
Գեղեցիկ խոսքի անհաս բարձունքից
Սկսեց սերմանել կրակներն անշեց,
Սկսեց սերմանել՝ ինչ ջերմ է ու լավ,
Բռնկվեց գալիք լույսի ծարավով,
Կյանքի դառնության դաշտերը ելավ,
Սիրտը մղկտաց մշակի ցավով...

4.

Նա Վերմատանն էր, բայց սիրտը՝ Լոռում,
Օրինանքն էր լսում նա իր պապերի,
Սաքոյի ձայնը խավարչտին ծորում,
Մոր ողբն էր լացում անբախտ Մարոյի:
Նա հյուր էր լինում Սարոյին, Մոսուն,
Յորդորում՝ գերի չմնան հնին,
Անուշի համար արցունքն էր հիսում,
Խմում էր կյանքի դառնության գինին:
Նա ծերունու հետ բռստան էր մտնում
Ու վառվում նրա հառաչանքներով,
Չորբան Չատու հետ սարերն էր ելնում,
Տառապում նրա տառապանքներով:
Մտքի թեւերով մտնում էր Սասուն
Ու ողջագուրվում Մեծ Մհերի հետ,
Դավթի բերանով ոսխին սաստում՝
Ամբողջ եռթյամբ դարձած սեր ու երգ:

5.

Արարատի պես մի հսկա դարձավ,
Շեփորվեց նրա անունն ամենուր,
Եղավ Զավախքում, տեսավ Փարվանան՝
Ալիքների մեջ՝ սիրո անշեջ հուր:
Նա Թմկաբերդի լեզենդը լսեց,
Յյուր եղավ ասես անվախ Թաթուլին,
Բերդի ձայները հավաքեց, հյուսեց,
Նզովեց չարը, օրիներգեց բարին:
Թիզ առ թիզ շրջեց դաշտն Արարատյան,
Յնայվեց նրա կենսաբեր հողով,

Անիում մտավ գիրկը պատմության,
Սիրտը բռնկված որդիական դողով:
Անցած դարերը տեսավ բազմահեծ,
Ոտք դրեց ամեն կածան, ճանապարհ,
Հայոց բարձրագահ լեռներին փարվեց,
Ինքը դառնալով մի հայոց աշխարհ:

6.

Իր ժամանակի արձագանքն էր նա,
Սրտի զարկերն էր իր ժողովրդի,
Բախս էր վիճակվել հողմաշունչ մի դար,
Եվ փոթորկված էր նրա ծով հոգին:
Նա ծնվել էր վարդ ցանելու համար,
Սակայն ստիպված վերք էր դարմանում,
Ցարը ազգերն էր հանում իրար դեմ,
Ինքը հաշտության խոսքեր էր ցանուն:
Ժողովուրդներին իր ձայնն էր հղում՝
Երգերը փոխած սպիտակ դրոշի,
Նրանց ճամփեքին նա սեր էր հեղում,
Իսկ թշնամնքը դարձնում էր փոշի:
Կովկասի երեք հին եղբայրներին
Կոչ էր անում չար հողմերը վանել,
Չլսել արյամբ սնված ցարերին,
Ռուս ժողովրդին միշտ ապավինել:

7.

Նա մարմնացումն էր լավի ու բարու,
Բայց լավի ճամփան փշոտ էր, քարոտ,
Նա ցանկանում էր արեւ ու գարուն,

Երազում՝ կյանքում լուսե առավոտ:
Ամեն մի երգը մի ողջ աշխարհ էր,
Ամեն մի բառը դարման էր ու դեղ,
Բայց եկան մի օր դաժան ուժերը,
Զերբակալեցին, նետեցին Սետեխ:
Պետերբուրգ տարան ու տարան Մոսկվա,
Արդարությունն էր նրա հետ քայլում,
Կապանքների մեջ ու բանտում անգամ
Նրա հուր հոգու արեւն էր փայլում:
Նա՝ հալածական մեծ բանաստեղծը
Կրկին տուն դարձավ, իր սիրած Կովկաս,
Կրկին մայր հողի հառաջը լսեց,
Դյուսեց երգերը իր անմահական:

8.

Երգերի թեւով արցունք էր սրբում,
Դույս էր ներարկում տառապած սրտին,
Դուր էր պարզեւում մրսողին ցրտում,
Զով անում մարդուն՝ ամառվա տապին:
Երկրի բախտով էր սիրտը բաքախում՝
Իր ժողովրդի դառնացած կյանքով,
Դույս ու հավատի դռներն էր բախում,
Իր արեւային ծովածուի հոգով:
Երազում էր նա մի լույս հանգրվան,
Երբ պատերազմի կրակը ծփաց,
Երբ հուր ու մոխիր դարձան Մուշ ու Վան,
Դայկական-Պարը փլվեց որբացած:
Դայրենի Զանգուն արցունքով լցվեց,
Պոետի վշտի դուռը ճռչաց,

Բզկտված երկրի վշտերին լծվեց,
Անհուն ցավերից իր սիրտը ճչաց:

9.

Որբի լեռներում, վշտի լեռներում,
Իր պայծառ հույսի դրոշն էր պարզել,
Նա սփոփում էր ու քաջալերում,
Ցանում էր հավատ ու ցանում էր սեր:
Դավերի միջից լույս էր նշնարում,
Ցայացքը հառած հեռու Յյուսիսին,
Նրա հավատը երբեք չէր մարում,
Երգ էր օրորում գալիքի մասին:
Երբ Յոկտեմբերի թեւերին թառած
Լույսի հեղեղը ծփաց Կովկասում,
Նա իր զրնգուն քնարը առած
Ողջումի խոսքն իր ասաց իմաստուն:
Ժողովուրդների մեծ ընտանիքով
Ցնայված՝ երգն իր պարզեց աշխարհին,
Եվ իր աստղալից, տառապած հոգով
Նվիրվեց երկրի նոր ճանապարհին:

10.

Երգի շշուկներ կային կրծքի տակ,
Տենչերի անշեց արեւներ կային,
Թեւաբախում էր նրա սրտուն տաք
Ավերված, ծնված հողը հայրենի:
Զգտում էր մի նոր դեղ-դարման ցանել
Տարագիրների խորախոր վերքին,

Զգուում էր ցավն ու մրմուռը վաճել
Դարերով հյուծված իր ժողովրդի:
Բայց մահը Եկավ ու չոքեց դրան,
Երգերի օվկիան սիրտը հալածեց,
Եկավ, փոթորկեց հույզերը նրա,
Եկավ ու ծաղկուն այգին խորշակեց:
Ու լրեց նրա քաղցրախոս լեզուն,
Ժպտուն աչքերը փակվեցին հավետ,
Թողեց մի աշխարհ՝ երգերով լեցուն
Եվ ընկերացավ հավերժության հետ:

11.

Նրա անունը մեր սրտի մեջ է,
Նրանով երգի անհունն ենք չափուն,
Շոգու խռովը է, երազ է, տենչ է,
Արվեստի սար է՝ լույսով ճառագուն:
Գեղեցիկ խոսքի վկայական է,
Աշխարհի երգում պարոլ է անմեռ,
Մորմոք է, խինդ է, մի Յայաստան է,
Երգերի ներկան ու գալիքն է մեր:
Նրա երգերով սեղան ենք նստուն
Ու շուրջպար բռնում նրա երգերով,
Սիրո աշխարհում տալիս ենք խոստուն
Եվ հասունանուն նրա հերկերով:
Դարերի առաջ ճակատն է մեր բաց,
Նա մեր քերթության Արարատն է մեծ,
Նա հողազնդի վշտով տառապած
Սի ազնիվ սիրտ է, անհաս բանաստեղծ:

1969թ., Բարու

ԲԱԼԼԱԴ ՍԻՐՈ ՄԱՍԻՆ

Այգի տարավ ինձ ճամփաս,
Ես նստեցի մի քարի,
Լսում էի հիացած
ճռվողյունը հավքերի:
Ճանկարծ... քրտնած ու շփոթ,
Մի զույգ կանգնեց իմ դիմաց,
Վիճում էին կրակոտ,
Վիճում էին սրտաբաց.
- Ես ասում եմ սեր չկա,
Սերը հնում է եղել,-
Զայնն էր հնչում աղջկա,-
Սերը վաղուց է մեռել:
- Սեր կա, բայց շուտ է մարում,
Նա հավերժ չէ մշտական,
Այսօր սիրտ է պարուրում,
Վաղը տեսար էլ չկա:
Ես ցնցվեցի ու ելա,
Ասես սիրտը իմ խոցվեց,
- Ո՞նց թե սերը էլ չկա,
Սիրո դուռը ո՞վ գոցեց:
Սերն ապրում է հավիտյան,
Ճարցրեք սիրող սրտերին,
Առանց սիրո աշխարհում
Զմռան շունչը կտիրի:
Սերը հաճույք չէ միայն,
Սերը ինաստն է կյանքի,

Առանց սիրո ոչ մի մարդ
Չի հասնի իր բերկրանքին:
Սերը համբույր չէ թեթեւ,
Յառաջանք չէ անհնաստ,
Պուրակների զարդ չէ նա,
Որ նայես ու հիանաս:
Վիճում էինք... եւ... զարմանք...
Կարծես մի ծայն հասավ ինձ.
- Սերն են,- ասաց,- սերն են,- կան,
Յավիտյան է իմ հոգին:
Օջախների սյունն են ես,
Կյանքի հուրն են ու գինին,
Թե չլինեմ, սրտերում,
Չարը ոստայն կիհնի:
...Ասաց սերը ու գնաց,
Ինչպես գարնան թարմ արեւ,
Իսկ այն աղջիկն ու տղան
Ամաչեցին ինձ նայել:

1970թ., Բաքու

ԱՐԵՎԱՎՐԻ ՀԵՔԻԱԹԸ

(Բալլար)

Արեւարը ամեն օր
Լուսաստղի հետ արթնանում
Եվ իր չուխան փեշավոր
Պապիս ննան է հագնում:

Առած բակը դարավոր,
Զրում է մարգ ու այգի,
Նա մերթ դառնում է հնձվոր,
Մերթ էլ գնում է փայտի:

Ապա հեքիաթն է պատմում
Անմահական կրակի,
Ինքն էլ ասես թե փոխված
Հավերժական ճրագի:

- Սիրեք լույսը, բալիկներ,
Սիրեք գիրը ու բարին,
Խելոք եղեք, իմացեք
Անցուղարձը աշխարհի:

Ով պաշտում է իր հողը,
Նրա ճամփան է ծաղկում,
Հայրենի հող սիրողը
Միայն սեր է վաստակում:

Այս հեքիաթն է քաղցրաբառ
Պատմում ցրտին ու տապին
Արեւարը մեր կանաչ՝
Միշտ սիրելի մեր պապին:

1975թ., գ. Ակնաղբյուր

ԲԱԼԼԱԴ ՄԱՍՈՒՑԻ ԵՎ ՅՈՂԻ ՄԱՍԻՆ

Սոցիալիստական աշխատանքի
հերոս Սամվել Մամունցին

Գարնան քնքուշ առավոտ էր,
Մանուշակի անուշ հոտսն էր,
Խառնվուն շողին.
Նա տագնապած այգի մտավ,
Շրջեց, շրջեց, հուզաբաթավ
Բարեւեց հողին:

Յողը լսեց ձայնը նրա,
Զեռքը դրեց կրծքի վրա,
Բարեւը առավ,
Սակայն տխուր տեսավ որդուն,
Ինչ-որ թախիծ իջավ հոգուն
Ու հարցմունք արավ.

ՅՈՂ

Ի՞նչ է եղել, որդիս,- ասաց,-
Ինչո՞ւ ես դու այդպես հուզված,
Ինչո՞ւ ես տրտուն,
Քեզ չեմ տեսել այդպես երբեք,
Սիրում ես դու նվագ ու երգ,
Ի՞նչ կա քո սրտուն:

ՍԱՄՎԵԼ

Սեւ ամպեր կան Մռով սարին,
Ծանր պիտի անցնի տարին՝
Անձրեւով անվերջ,
Զահել այգին մեր ջրարբի,
Յիշանդությամբ կտառապի
Թոռ ու թացի մեջ:

ՀՈԴ

Դալար մնա կուօդ, որդի,
Մի պղտորիր խաղաղ հոգիդ,
Մի տխրիր այդպես,
Դու ընկերներ ունես արի,
Որ պահերին քո դժվարին
Թեւ-թիկունք են քեզ:

ՍԱՄՎԵԼ

Շնորհակալ եմ, մայր իմ բարի,
Թող որ կյանքիս ծանապարհին
Միշտ լույսդ հորդի,
Որտեղ էլ որ նեղն եմ ընկել,
Սիրով միշտ քո մոտն եմ եկել՝
Բարի խորհրդի:

ՀՈՇ

Վազը քնքուշ փայփայեցեք,
Թե պետք լինի՝ անքուն կացեք,
Սնուցեք դեղով,
Ամեն հատիկ, ամեն ողկույզ,
Պահպանեցեք ոնց աչքի լույս
Դուք սրտի դոդով...

...Այգիներում բերքը ծփաց,
Յողը ծառկեց, հողը խնդաց,
Կանաչեց նորից,
Որդին այնպես ուրախացավ,
Ասես համբույր նա ստացավ
Յարազատ մորից:

Մռով սարը կանչեց ժպտում.
- Յաղթանակի հետքը սրտում
Ծնվեց նոր փարոս...
Մի ողջ երկիր ծափահարեց,
Սամվել որդուն սիրահարվեց,
Անվանեց հերոս...

1975թ., Մարտակերտ

ՎԱՐՊԵՏԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Ավ. Խսահակյանի
պայծառ հիշատակին

Ես հրաշքով գարնան մի օր,
Հավերժական ճամփորդ դարձա
Ու շրջեցի աշխարհով մեկ,
Որոնեցի ոտնահետքերը Վարպետի:
Սահարայով անցա, հասա Արաբստան,
Ու բացվեցին դարպասները իհն Բաղդադի,
Արու-Լալա-Մահարի մնջ բանաստեղծը
Նստած էր իր հավերժությամբ օծված թախտին.
- Նա այստեղ էր, ինձ մոտ էր նա,
Երգ էր կարդում հոգեհմա,
Նրա հոգին տիեզերք էր մի լայնահուն,
Շատ ըմբոստ է եւ կրակոտ,
Ավետիքին որոնեցեք արեւի մոտ...
Ես Պարսկաստան հասա մի օր,
Ու վարդերի բուրող պսակ Շիրազ մտա,
Արեւելքի հսկա երգչին՝
Ծեր Սաադուն այնտեղ գտա...
- Հենց քիչ առաջ Ավետիքը իմ հյուրն էր թանկ,
Նա իմ վերջին գարնան մասին
Իր իմաստուն խոսքը կարդաց,
Գարունների եղբայրն է նա,
Մի դեզերեք հեռուներում,
Ավետիքին որոնեցեք գարուններում...
Իտալական անտառները ինձ կանչեցին,
ճանփաս տարավ դեպի Հօռոմ,

Գարիբալդուն հանդիպեցի.

- Նրան գիտեմ,

Իմ զինվորի արի կամքը, ուժը երգեց.

Նա այնտեղ է, ուր մարդն է դեռ կապանքներում,

Ավետիքին որոնեցեք ազատության ճամփաներում...

Ցուազ ձեռքիս գերմանական հողը հասա,

Գյորեն ասաց.

- Ավետիքին տեսա այստեղ,

Գիտունների հետ էր վիճում,

Որոնեցեք նրան այնտեղ,

Որտեղ կյանքի, երգի մասին

Վեճ է լինում մի անզիջում...

Յասա Յյուսիս,

Որին միշտ էլ նայել եմ ես ինչպես հույսիս,

Սիրտս ցնծաց, երբ Պուշկինին

Տեսա կապույտ Նեւայի հետ զրուցելիս,

Երբ որ տեսա Լերմոնտովին՝

Պոեմները իր հյուսելիս...

Խոնարհվելով նրանց առաջ,

Դարցմունք արի, թե չե՞ն տեսել մեր Վարպետին:

- Վարպետն,- ասին,- եղավ բոլոր երկրներում,

Առաջ ցուազ իր ճամփորդի,

Նա աշխարհի ամեն փորձն ու գործը տեսավ,

Գնաց գիրկն իր ժողովրդի,

Նրա սիրտը տառապեց ու հարստացավ,

Յողագնդի հերկերի մեջ,

Ավետիքին որոնեցեք

Ժողովրդի վերքերի ու երգերի մեջ...

Յասա Կովկաս,

ՀԱԳԱՆՊԱՆԵՐ, ՔԱՔՔԱՊԱՆԵՐ, ՊՈՆՄԱՆԵՐ

Մեծ Շոթային տեսա այնտեղ,
Սայաթ-Նովա մեծ գուսանին,
Շրջում էին թորի ափին սիրով անհուն:
Ու նրանց էլ ես Վարպետի մասին հարցրի.

- Նա քիչ առաջ թամադան էր՝

Եղբայրական մեր խնջույքի,

Եղբայրության օջախներուն

Որոնեցեք Ավետիքին...

Թորի ափից եկա, հասա

Պապենական հանդ ու կալին,

Յարցմունք արի ես մաճկալին,

Մաճկալը նախ ձեռքը դրեց

Կրծքի վրա ու շշնջաց.

- Նա այստեղ է...

Յրազդանին հարցմունք արի,

Ժպտաց, ծփաց.

- Նա այստեղ է...

Մաքառումի միջով անցա

Ու միացա նոր օրերի բախտն իր գտած

Ժողովորդիս մեծ շքերթին,

Յոգուս խորքում դողանջները նրա երգի,

Կոպերիս տակ այգաբացի գույները պերճ,

Դարձած քայլող ռադիոկայան,

Ելա նաեւ սեգ կատարը Արագածի,

Եվ աշխարհի չորս ծայրերից

Անթիվ ձայներ ալիքվեցին իմ հոգու մեջ.

Ավետիքի ջերմ երգերը հար հնչեղ են,

Յավերժական իր երգերով Ավետիքը ամեն տեղ է:

1975թ, Ստեփանակերտ

ԱՐՑԱԽՑԻՆԵՐԸ

1.

Յազար տարի առաջ Մեծն Նարեկացին
Իր հայացքը ուղղեց Միակ Աստօնուն,
Յոգու ցավը պատմեց՝ խրոխտ ու առնացի,
Մի ցավ, որ մեզ հետ է ու չի անցնում:
Աստված չանաց նրան, մի բառ չասաց,
Որ հաստատի՝ ինքը կա[՞], թե չկա,
Գուցե վարանում էր Նարեկացու դիմաց,
Վարանում էր, այո՛, մեր «Նարեկը» վկա:
Անպատասխան մնաց Մեծն Նարեկացին,
Աստված չուզեց, որ նա հասնի իրեն,
Քանզի համոզված էր, որ այդ «զժված» հայը
Արդարամիտ խոսքով պիտի հաղթեր:
Այդ հասկացան իսկույն մեր պապերը խելոք,
Ընբռուտությունն իրենց դարձրին դրոշ ու զենք,
«Նարեկն» անգիր արին ու հիշեցին մտոք,
Սակայն շշնչացին. «Մեր Աստվածը մենք ենք,
Մենք ենք մեր Աստվածը մեր սարերի վիա,
Մեր սարերից բարձր, մեր հոգու մեջ,
Մեր ձեռքերով պիտի վառենք աստղերը մեր
Եվ հայ պիտի ապրենք դարեր անվերջ»:
Եվ ապրեցին նրանք՝ հայկաբազուկ ու հայ,
Վանքեր կառուցեցին հոյականար ու սեզ,
Ոչ թե կույր ու մոլոր աղորթելու համար,
Այլ մեսրոպյան գիրը դարձնելու երգ ու տեզ:
Եվ ապրեցին նրանք՝ հայկաբազուկ ու հայ,
Խաչքարերի լեզվով բացած սիրտ ու հոգի,

Գանձասարի հանգույն ճակատները միշտ բաց,
Իրար համար դարձած Տեր Աստված ու Որդի:
Եվ ապրեցին նրանք վարդանացած հավետ՝
Ավարայրից մինչեւ Սարդարապատ,
Թեկուզ տեսան անթիվ վերք ու աղետ,
Սակայն միշտ մնացին արդարադատ:

2.

Սակայն միշտ մնացին արդարադատ
Ու լծվեցին արդար դարի հետքին,
Երազեցին՝ կօքա արդար մի դատ
Եվ կրոնեն իրենց սուլր մոր ձեռքից:
Բայց չարն ուժեղ եղավ,
Բարին եղավ տկար,
Բարուն էլ ի՞նչ մեղա,
Երբ չարը կար:
Չարը բռնեց ձեռքից Արցախ որդու,
Խլեց մորից, ասաց. «Ապրիր ոնց որբ»,
Մոր դեմ ասես անմեղ իր գառն էին մորթում,
Խսկ որդու դեմ հանգընում մոր Արեւը բորբ:
Չարը ուժեղ եղավ,
Չաղթեց նաեւ Աստծուն...
Չաղթեց՝ շուրջն ամենուր արյուն հեղելով,
Արցախն, ա՝խ, ի՞նչ աներ, ինչպե՞ս շտկեր ծուռը,
Վերքն ինչպե՞ս բուժեր իին դեղերով:
Բարից հաց էր քամուն,
Լուս էր քամուն ջրից,
Քրտինքն առու դարձնում, ջրում այգի,
Ուշքն ու միտքը սակայն
Իր անգին մոր մոտ էր,
Կարոտ նրա խոսքին ու քնքշանքին:

3.

Արցախիները հոգով արի են,
Սրտով պայծառ են ու բարեմիտ,
Խոսքով ու գործով մեկ ու բարի են,
Եվ միշտ ատում են արարքը բիրտ:
Եվ ելան նրանք՝ մեկմեկու համար
Դարձած սուրբ Աստված եւ սուրբ Որդի,
Սակայն սրտերում աղոթքի տեղակ
Վերակառուցման դարի ոգին:
Եվ ելան նրանք համարձակ, վստահ,
Տրված արդար խոսքի արդար դատին,
Սակայն կեղծիքն ու կեղծը անարդար
Նրանց սեղմեցին քարե պատին:
Արցախիները սակայն արդար են,
Մորը սիրողը ի՞նչ անարդար,
- Մեր մո՞րն ենք ուզում, մեր լեզո՞ւն, խո՞սքը,
Դա մեր երա՞զն է հազարամյա:
Մենք հավատում ենք մեր լուս երազին,
Ասում են նրանք՝ հոգով արթուն,
Իսկ մայրը հեռվում ճշում է ցավից
Եվ չար ուժերին դատապարտում:

4.

Արցախիները պողպատից կարծր են,
Վեհ են ու բարձր են եւ անողոք,
Բարեկամների դիմաց միշտ քաղցր են,
Իսկ չարերի դեմ՝ բռունցք, բողոք:
Դարի ոգին են արցախիները,
Խղճի դրոշն են ազգերի մեջ,
Արցախիները նոր աստվածներ են
Կվառեն կյանքի կանթեղն անշեց:

1988թ., Ստեփանակերտ

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑ

Ազգային հարց...
Սիա՝ քանի՛-քանի՛ տարի
Ինձ տանջում է հարցն այս հզոր,
Հարցն այս հզոր, որ բեմ հանեց
Մարդը՝ ինքը եւ խճճվեց,
Եվ խճճվեց դարեր ի վեր,
Միայն խոսեց ուժի դիրքից,
Իր նմանի հանդեպ դարձավ
Ավարառու, գազան, դահիճ,
Եվ իրեն էլ նետեց ճահիճ:

Ազգային հարց...
Ի՞նչ ազգային,
Քանզի մեկը բազմաքանակ, նաեւ խուժդուժ,
Մեկը թվով փոքր ու տկար,
Նման դեպքում էլ ո՞վ հաշիվ կտա խելքին,
Թեեւ խելքը, եթե փոքր ես,
Դու ուժեղի հանդեպ պետք է
Միշտ ծնկի գաս,
Միշտ մեծարես,
Ծափահարես,
Եվ բազմազան քո տուրքը տաս:
Թե տրտնջաս, կուտես ապտակ,
Թե բողոքես, հար կննջես սեւ հողի տակ:
Այսպես, ահա՛, բեմ է հանվել
Հարցն ազգային,
Որի տուտը ուժեղների ձեռքի մեջ է,

Իսկ ուժեղը ապրում է միշտ
Մեղքերի մեջ, ցեխում թաղված:

Ազգային հարց...
Նա շողջողաց ճնշվածների ահեղ շնչից
Եվ ազգերի խոհերի մեջ ծիածանվեց...
Բայց ապրում էր Բեղավորը,
Մեր դարավոր երազանքի
Խաթարողն ու մեղավորը,
Նրա ամուր կրնկի տակ
Եվ ուղեղի զառանցանքում
Հարցն ազգային ձեւափոխվեց,
Ինքնորոշման կեղծ լաթ դարձավ,
Գունազրկված թույլ ծածանվեց
Եվ սասանվեց:

Ազգային հարց...
Իմ վարդագույն երազներում
Խաչի պապիս ձայնն է հնչում.
- Որդի՛ս, ազգը ազգին պիտի սրտանց հարգի,
Օգնի սրտանց,
Լինի ազնիվ թե՛ հարեւան եւ թե՛ եղբայր,
Որ չհենվի գենքի ուժին,
Որ չխլի նրա հողը,
Երբեք չասի. «Ես ուժեղ եմ,
Իսկ դու մժեղ»:
Չասի. «Լեզուն իմ հարուստ է,
Քոնը՝ աղքատ,
Ինը երգ է նուրբ սոխակի,
Քոնն ագռավի կրինչ է լոկ»:
Չասի. «Խոսիր իմ բարբառով,

Քո դպրոցը հար մոռացիր,
Քո սահմանը նե՛ղ է,- չասի,-
Իմ սահմանը անվերջ, անծիր»:

Այո՛, որդիս,
Ազգը պիտի ազգին ասի.
«Իմ բարեկամ, իմ հարազատ,
Արի ապրենք եղբայրաբար,
Դու տեր մնա քո օջախին,
Իսկ ես ել՝ իմ:
Դու քո լեզվով խոսիր, երգիր.
Ես՝ իմ լեզվով,
Քո օրրանը թող քեզ մնա,
Իմ օրրանը հերիք է ինձ,
Թե աքոռ կա, թող խելոքը նստի, իրավ,
Գիր ու գիրը կա,
Ստեղծողը թող վերծանի,
Եվ ամեն ազգ իր դրոշը թող ծածանի:
Թող ոչ ոքի չբաժանեն, որ հար տիրեն,
Թող միանա որդին մորը,
Որ ազգերի սերությունը արեւի հար,
Որ կանաչի արդարությամբ
Աշխարհն արար»:

Ազգային հարց...
Իմ վարդագույն երազներում
Միշտ հնչում է պապիս ձայնը:
Այս լուսավոր աշխարհի մեջ
Մինչեւ ե՞րբ է
Պապիս տենչը մնալու տենչ:

1988թ., Ստեփանակերտ

ՍՈՒՐԲ ՀԱՅԸ ՎԿԱ

(Էսքիզներ)

1.

Արեւն ուսին Արեւսարը,
Նորց շողեր է ցանում,
Արտամիջյան ճանապարհը
Ինձ դեափի գյուղ է տանում:
Մի դեղնավարս հասկ են պոկում
Ու տրորում ափիս մեջ,
Ամեն հատիկ իմ ջերմ հոգում
Ծիլ է տալիս լուսառեչ:
Ծփում է ոնց կյանքի լեզենդ,
Փարվում սրտիս թելերին,
Դառնում է կանչ, դառնում է հելք
Եվ ինձ տանում թեւերին:

2.

Հատիկները ուլունք դառած,
Հմայում են ու գերում,
Ամեն հատիկ լեզու առած
Մի թանկ հուշ է ինձ բերում:
Հիշում են ես կռվի բոթը,
Բաժանվելը սրտերի,
Մեկ էլ հնձող ձեռքի կարոտ
Սարսուները արտերի:
Արտերի մեջ ամեն մի հասկ
Աշխարհ պահող մի աշխարհ,
Ամեն հատիկ հաղթության Ասք,

Կյանքը սնող մի նշխար:
Մանկությունը մեր մոռացանք,
Դասունացանք արտի հետ,
Դարձանք ինձվոր, կալվոր դարձանք,
Դարձանք կյանքին օգնող ծեռք:
Սովորեցինք հողի լեզուն,
Հողի ուժով դիմացանք,
Ու մայր հողի հույսով լեցուն,
Դացի գինը իմացանք:

3.

Դուրս եմ գալիս արտի միջից,
Գլուխս կախ՝ հասկի պես,
Մեքենայի զիլ սուլոցից
Սթափվում եմ, կանգնում ես:
Իմ ընկերն է, մեքենայով
Եկել է ինձ ընդառաջ,
Մեզ այդ պահին պարուրում են
Եվ ժպիտներ, եւ հառաչ.
- Մոռացել ե՞ս...
- Չեմ մոռացե՞լ...
Ու նայում է հասկերին:
- ճերմակե՞լ ես...
- Դիմացե՞լ ես
Կյանքի դժվար վազքերին:
Եվ մեքենան թեւեր առաջ
Բարձրանում է լանջերով,
Դոմնաների հրացոլքն եմ
Տեսնում հոգու աչքերով:

Երկու աշխարհ՝ արտ ու դոմնա,
Ին երազներն են հերկում,
Մետաղի եւ հացի ուժն են
Զգում ծնվող իմ երգում:

4.

Ուր էլ հասնենք, հացը հաց է,
Եվ հզոր է, եւ բարի,
Յացը լյանքի լուսաբացն է,
Փրկությունն է աշխարհի:
Մեր երազին թեւեր տվող
Ուսկե ալիքն է հացը,
Յրթիռների տանող ուժն է,
Մեր մեծ գալիքն է հացը:
Մարդու իհն ու նոր հուշի մեջ
Յացը լույս է անմարում,
Խավարի ու մշուշի մեջ
Յացը հույս է արարում:
Յին դարերից հաց ու հավատ
Մարդու կամքն են ջրդեղել,
Յավատազուրկ դար եղել է,
Առանց հացի չի եղել:

5.

Ճամփին մի կտոր հաց տեսա ընկած,
Կարծեցի սրտիս կեսն էր հոշոտվում,
Կարծեցի թե ին լույս երազանքն է
Տրորվում այդպես, այդպես փոշոտվում:
Մոռանալ հացը, այդ ասել է թե՝

Մոռանալ մանկան,
Մոռանալ մորը,
Այդ ասել է, թե հավետ մոռանալ
Հացն այդ վաստակող քրտնաբոր հորը:
Մարդու պատիվը հացից է ծնվում,
Հացը մեր փառքն է, մեր շունչն ու հոգին,
Մոր կարից հետո հացով է սնվում
Քնքույշ մանուկը եւ կանգնում ոտքի:

6.

Հարեւանիս քաջ տղան
Սիրել էր մի աղջկա,-
Կարծես կարից էր ծնված,
Մի աշխարհ էր արեւկա:
Տղան գնաց ու եկավ,
Կպել էին իրարու,
Քանի գնում, փոխադարձ
Նրանց սերն էր վարարում:
Մի օր տղան հորն ասաց.
- Հայրիկ, գնանք նշանի,
Լավ աղջիկ եմ ընտրել ես,
Մեր օջախին արժանի:
Հողի մշակ ու հերոս
Հայրը ուրախ էր անչափ,
Կարծես տունը լցվել էր
Երջանկությանք ափեափ:
Իջավ պայծառ երեկոն,

Գյուղը ժպտաց լուսերում,
Յարազատ ու բարեկամ
Լողում էին հույզերում:
Սովորությամբ հին ու նոր,
Աղջկա տուն գնացին,
Յայրը սակայն հետ դարձավ,
Բոլորը լուռ մնացին:
Տղան վազեց հոր ետքից.
- Ո՞ւր ես գնում դու այդպես,
Գուցե դիպա՞ն քո քեֆին,
Ցուրտ խո՞սք ասին գուցե քեզ:
- Ոչ ոք ոչինչ ինձ չասաց,
Ախր ինձ ո՞վ չգիտի,-
Յայրը մռայլ շշնջաց
Ու կանգ առավ որդու դեմ.
- Ես խոսք չունեմ, որդի ջան,
Գեղեցիկ է սիրածդ,
Նայում էի ես նրան,
Թռվում էր հուրիրան,
Բայց զարմացա, զայրացա,
Երբ նա մտավ խոհանոց,
Եվ մի չոր հաց դեն նետեց
Թեթեւամիտ ու անհոգ:
Այդ օջախը ատեցի,
Որդիս, ինչպես ու դիմանամ,
Յացի գինն ով չգիտի,
Մեր գինն ինչպես կիմանա:

7.

Ամեն անգամ, երբ սերմը
Յողի գիրկն են նետում,
Ինձ քվիւմ է, թե կյանքի
Մեծ դասագիրքն եմ սերտում:
Յուրաքանչյուր հունդի մեջ
Մի լույս աշխարհ եմ տեսնում,
Յողի աչքերն եմ տեսնում,
Յուրաքանչյուր հունդի մեջ:
Այդ աչքերն ինձ ժպտում են
Աստղերի պես հրավառ,
Ամեն ծիլը շնչում է
Արեգակին հավասար:
Յողից ելնող ամեն ծիլ
Ժպիտ ունի մանկական,
Տրոփում է իմ սիրտը
Անհուն սիրով հայրական:
Երբ ճեղքվում է ամեն սերմ,
Ին բերկրանքն է վարարում,
Ասես մի ողջ հողագունդ
Նոր է կյանքով արարվում:
Ծովերի ծափն եմ լսում
Ծլող ամեն հունդի մեջ,
Առողջ ամեն ծիլի մեջ
Օվկիանոսներն են խոսում:
Ինչքան էլ զենք կուտակվի,
Մի օր նետվելու է ծով,
Կյանքը պիտի հաստատվի
Սրբազն աղ ու հացով:

8.

Ուր էլ գնաս աշխարհում,
Յացը ունի մի անուն,
Յաց արարող մարդը միշտ
Բարի անուն է հանուն,
Յացով ազգ են ճանաչում
Եվ տալիս են թանկ պատիվ,
Յացի համը միակն է,
Յացի տեսակն է անթիվ:
Յացով մարդը միշտ ունի
Ազնիվ մարդու համարում,
Իսկ ով կորցնում է հացը,
Ուրացող են համարում:
Ով անբան է, չգիտե
Կյանքի ուղին ոնց անցնի,
Ամենուրեք ասում են.
«Յացը նրան կուրացնի»:
Յաց արարենք ու պաշտենք,
Յացից բարձր ուժ չկա,
Թե երդումի հետ հաշտվենք,
Երդվենք. «ՍՈՒՐԲ ՅԱՑԸ ՎԿԱ»:

1990թ., Ստեփանակերտ

Ս Ե Ր

1.

Սեր, Դու ինձ համար
Իջար աստղերից,
Օծվեցիր գարնան վարդերի բույրով
Եվ արեւային շողերի թույրով:
Ժպտացիր, ինչպես աղջիկն է ժպտում...
Այո, ժպտացիր աղջկա տեսքով,
Ու պոետական երազով, եռքով,
Ես փարվեցի քեզ:
Փարվեցի այնպես,
Ասես մարմինս հունցել էր Աստված,
Պահել քեզ համար:
Ին մարմինը կար,
Ճոգիս Դու դարձար,
Աշխարհը քեզնով ես ճանաչեցի,
Ին կյանքը քեզնով իմաստ ստացավ:
Ճանդեր ու դաշտեր ծաղիկներ հազան,
Երկինքը բացեց փեշերն իր կապույտ,
Ողջ տիեզերքը հիացավ քեզնով
Եվ ճանապարհիդ լույս ցանեց առաստ:
Իջար աստղերից
Աղջկա տեսքով,
Ճոգուս ճերմակը քեզնով ներկեցիր,
Քեզնով հերկեցիր աշխարհը հոգուս,
Ինձ ուխտավորի երազ տվեցիր
Եվ հավերժորեն դարձրիր Զո գերին,

Թե քաղցրություն կար,
Քեզանով գտա,
Թե բարձրություն կար,
Ղասա Քեզանով:

2.

Սեր իմ,
Աստղերից ծփանքով իջար,
Ես ինքնամոռաց ծուլվեցի եռքիդ,
Թվաց բերկրանքի աղբյուրն եմ գտել,
Օվկիանն եմ մտել աստղալից կյանքի...
Թվաց աշխարհն եմ քեզանով գրկել,
Ակունքն եմ գտել իմ անրջանքի:
Բայց, ավա՞ղ, Սեր իմ,
Երբ Դու իմացար,
Որ հոգին ես իմ,
Ուզեցիր դառնալ երազն իմ հոգու,
Երբ Դու իմացար,
Որ ծարավ եմ քեզ,
Ծարավի կրակ դարձար բորբոքուն,
Երբ Դու իմացար,
Որ հիվանդ եմ ես,
Բալասան դարձար՝ դժվար գտնելի,
Երբ Դու իմացար
Ծովն ես իմ տենչի,
Ավազան դարձար՝ դժվար մտնելի,
Եվ երբ իմացար՝
Ծունչս հատնում է
Առանց քեզ, Սեր իմ,

Փայփայեցիր ինձ,
Ասացիր.
«Միայն այդպես պիտ սիրել,
Սերը ծաղկի չէ, որ բուրմունքն առնես
Ու նետես անփույթ,
Սերը սառ ջուր չէ,
Որ ծարավդ առնես
Եվ անցնես առաջ:
Եվ բալասան չէ, սերը, ինացիր,
Որ ցավի պահին հիշես միմիայն,
Սերը սոսի չէ,
Որ տոթից նեղված
Ստվերում քնքուշ
Կազդուրվես մի պահ
Եվ շարունակես քո ուղին երկար:
Սերը քաղցրության ծառից է ծնվում,
Սակայն սմբում է լոկ տառապանքով,
Ով որ տառապել գիտե իմ ճամփին,
Փարվում եմ նրան ես նուրբ քնքշանքով»:
Եվ այս իմաստուն գրուցից հետո
Սեր իմ, ես դարձա տառապյալը քո,
Դարձա օրիներգուդ, դարձա ուխտավոր,
Գիտեի, որ Ձեզ կիասմեմ մի օր:

3.

Եվ եկա, հասա...
Եվ Դու արեւը դարձար իմ հոգու,
Երգ էի գրում, ինձ հետ էիր Դու,
Արտ էի ջրում, ինձ հետ էիր Դու,

Ինձ հետ էիր Դու, երբ հոգմում էի,
Յողի մշակին, երբ օգնում էի,
Ինձ հետ էիր Դու:
Եվ անրջանքս ծիածանվում էր,
Երբ ինձ հետ էիր,
Եվ երազներս ծածանվում էին,
Երբ ինձ հետ էիր,
Դու գալիս էիր աստղերի շողով,
Մեր՝ իրար ծուլված սրտերի դողով,
Ես զգում էի համը քո բույրի,
Ես տեսնում էի գույնը համբույրիդ,
Եվ ինձ թվում էր՝ եթե չլինես,
Աստղերը իրենց գահերից կընկնեն,
Եվ ինձ թվում էր...
Եվ ինձ թվում էր...
Այդ Դու ես միայն թեւերն աշխարհի,
Որ կխորտակվի առանց քեզ բարի...
Ծաղիկներ էիր իմ ճամփին ցանում,
Ինձ խռովըներից Դու էիր հանում...
Երգիս ընթացքը վարում էիր Դու...
Եվ այդպես, Մեր իմ,
Դարձար իմ բախտը, իմ զարկերակը,
Իմ կյանքը դարձար,
Դարձար օջախիս անմար կրակը...
Այնպես ծուլվեցի քո այրումներին,
Այնպես ինքնակամ եւ ինքնամոռաց,
Որ տառապանքս քաղցրության փոխվեց,
Որ սիրտս վառվեց, մոխիրը մնաց...

4.

Բայց էլի Դու կաս,
Քանզի ձուլված ես իմ արյան եռքին,
Քանզի առանց Քեզ
Ես սեւահող եմ, բայց առանց բերքի,
Քանզի առանց Քեզ
Ես ծաղկի թուփ եմ, բայց առանց ծաղկի,
Քանզի առանց Քեզ
Կարող եմ շնչել՝ առանց բերկրանքի,
Սեր իմ, օրինում եմ
Երկունքդ աստղային,-
Երկունքդ աստղային,
Դարձած հողեղեն,
Երկրային դարձած,
Դարձած հրեղեն:
Արար-աշխարհի զարկերակն ես Դու,
Առանց Քեզ սրտերը ո՞նց կբարախնեն...
Ում չես այցելում Դու կյանքում երբեք,
Նրանք դժբախտ եմ:
Արեւի շող ես, գարնանային ցող,
Զրի կարկաչ ես եւ ալվան կակաչ,
Առողջ բողբոջ ես, ծլարձակող հունդ,
Քեզնով են շնչում Մարդ ու երկրագունդ:
Դու առավոտ ես՝
Միայն լույս ծնող,
Դու ջերմ կարոտ ես,
Վառման հույս ծնող,
Դու նահը ժխտող

Արարման ընթացք,
Յավերժությունը
Փրկող Դու խարկանք:
Ծածանվիր հավետ
Երակների մեջ,
Բոցերդ նետիր
Կրակների մեջ,
Տառապանքներից ծնվիր նորից-նոր,
Աշխարհը փրկիր
Իր ճամփից մոլոր...

1991թ., Ստեփանակերտ

Այս այգու մեջ մի կածան կար,
Այն կածանը ո՞ւր է հիմա,
Ին խնդության խոսող վկան,
Ասեք, ինչո՞ւ լուր է հիմա,
Նա սերս առնում իր թեւերին,
Ինձ կանչում էր իմ սիրո մոտ,
Կյանքին նայեք, սերը քի՞չ է...
Կածանն էլ է դառնում կարոտ:

1991թ., Ստեփանակերտ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ոեհան ես, համիդ մատաղ,
Ուրց ես լեռան, ծամիդ մատաղ,
Չառ ու զարբար հագած դուշ ես,
Անուշ խոսքով լիքը հուշ ես,
Նուռ ու նուշ ես, ջանիդ մատաղ:

(Ժողովրդական)

Ա.

Օրվա ունքամիջից տիսրություն էր կաթում,
Փաթաթվել էր ամպը երկնի պարանոցին,
Մի կրակված կարոտ հոգուս դուռն էր թակում,
Սոլորվածի նման ձեռքը դրած ծոցին:
Արեգակն ինչպես հեռվից երևացիր,
Սիրտս խուտուտ եկավ, եւ կարոտս ժպտաց,
Թվաց գիրկն է բացել տիեզերքը անծիր,
Վառման իր աստղերով եւ շողերով իր թաց:
Բարեւեցինք իրար ու քայլեցինք լռին,
Այդ լռության միջից մի վառ հուշ էր խոսում,
Շշնջում էր մեղմիվ այն հեքիաթը մեր հին,
Որ մեր երազների, արյան մեջ է հոսում:

Բ.

Կիսատ-պռատ մի հեքիաթ
Ու սրտաբուխ մի համբույր,
Պարուրել են սիրտս տաք
Իմ հուշերի շարքում բյուր:
Երազներիս պարտեզում

Ժպտացել ես դու անվերջ,
Որպես անուրջ եւ հուզում,
Որպես կարոտ մի անշեջ:
Յիմա քայլում ենք մեկտեղ՝
Փարված հուշի թեւերին,
Մեզ ուղեկցում է սիրով
Ալեկոնում մի վերին:
Այս, ինչ լավ է, ինչ տեղի՞ն
Յուշն այն՝ առած նոր թեւեր,
Օրերի մեջ այս դեղին
Սփոփում է սիրտը մեր:
Սփոփում է, եւ խոսքս
Թրթռում է իմ շրթին,
Ու մի տեսիլք իրաբորք
Շորորվում է իմ կրծքին:
Այդ տեսիլքի մշուշում
Յանդիպումն է մեր սրտանց,
Որ քո անունն է հուշում
Կարոտներիս ցողով թաց:

գ.

Կարոտը խոր, ճամփան կարճ,
Ժամանակը թեւավոր,
Երազանքը աննահանջ,
Սպասումը ահավոր:
Այս պտույտի մեջ ընկած
Ո՞նց քայլեցինք, չիմացանք,

Դաժան կյանքի նվիրած
Յարվածներին դիմացանք:
Նորից մեկտեղ ենք քայլում,
Նորից ապրում ենք հուշով,
Նորից ուղին մեր առջեւ
Ծանրացած է մշուշով:
Բայց մի աստղ լուսավոր
Մեր երազի կատարին,
Մեզ ձեռքով է անում նոր,
Աստված բարին կատարի:

Դ.

Ա՞խ, այս ճամփան լիներ անվերջ,
Եվ չնթներ օրն այս լուսե,
Այս կարոտը մնար անշեջ
Եվ արարեր բերկրանք ու սեր:
Յանդիպումն այս դառնար սկիզբ,
Ժամն օր դառնար, օրը՝ տարի,
Այն ժամանակ ես կասեի.
«Բարին շատ է այս աշխարհի»:

24.08.1993 թ., Ստեփանակերտ

ԲԱԼԼԱԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿՐԱԿԻՑ ԾՆՎԱԾ ՊԱՏԱՆԻ ԱՌԱՆԻ ՄԱՍԻՆ

Արցախյան ազատամարտի պատաճի
նահատակների սուրբ հիշատակին

Այս գիշեր, երազիս մեջ,
Մօռվի լանջերն ի վեր
Թեւում էր մի պատաճի:
Դեմք մի խարույկ անշեջ,
Շուրջ բուրոր բուրող վարդեր
Եվ աստղեր քանի՞։
Պատաճին թեւեց-գնաց,
Խարույկին հասավ-մնաց
Ու նայեց հեռուն:
Եվ հեռվից երկու հոգի
Եկան ու նրա կողքին
Կանգնեցին սիրով:
- Եկե՞լ ես,- հարցրին նրանք:
- Եկել եմ,- ասաց տղան:
- Ապրես,- ասացին:
Նստեցին կարմիր ձիեր,
Սլացան Մօռվն ի վեր,
Յոգով հրածին:
Ավոն էր ու բեկորը,
Պատաճի Առանն էր, որ
Յասել էր նրանց,
Միասին զենքերն առած,
Վրեժի կրակ դառած
Նետվեցին մարտի:

Մռովի լանջերն ի վար,
Արյունն էր հոսում վարար
Դաժան թշնամու:
Քաջերը մայր Արցախի,
Մոխիրը չար ոսոխի
Տվեցին քամուն:
Դադարին ես գնացի,
Սեղմեցի ձեռքն Առանի
Եվ զրույց բացի,
Ասացի՝ հայրդ է կանչում,
Ասացի՝ մայրդ է կանչում,
Եղբայրդ՝ առնացի:
Նա ասաց. «Բարեւս տար,
Երբ բացվի արեւն արդար,
Այնժամ կզան տուն,
Գնա եւ հորս ասա,
Գնա եւ մորս ասա՝
Զմնան անքուն:
Ասա, որ միշտ իմ հոգին
Կլինի իրենց կողքին,
Ամեն մի պահի,
Կլինի Մռովի մեջ,
Կլինի Թարթառի մեջ,
Արցախ աշխարհի»:
Եվ այդժամ Ավոն եկավ,
Բեկորը այդժամ եկավ,
Պատանիներ անթիվ,
Միասին զենքերն առած,
Վրեմի կրակ դառած,
Նետվեցին մարտի:

1993 թ.Ստեփանակերտ

ՍԻՐՈ ԿՐԱԿՆԵՐ

1.

Սիրտս մտար միանգամից,
Օր ու գիշեր դարձել ես տենչ,
Նորերի մեջ նոր ես անբիծ,
Աստղ ես դարձել իմ հոգու մեջ:
Յազարի մեջ ընտիր զարդ ես,
Օրինյալ լինի ծնունդը քո,
Գարնանաբույր անփուշ վարդ ես,
Ուր էլ գնամ, իմն ես հոգով:
Դրախտն ի՞նչ է հայացքիդ դեմ,
Մասսյաց ամռան հով ես շոյող,
Երբ քայլում ես, թվում է, թե
Ռաշխ ես՝ իրե, արեւաշող:
Նայվածքը՝ ծով, ժպիտդ՝ հուր,
Երմեկ նրան, ում սիրում ես,-
Մահ չունի նա, չունի մրմուռ:

Սարերում երգող իմ հով,
Իմ երազ, սիրո իմ ծով,
Ռոպե իմ հոգեթով,
Ուրցի բույր՝ ինձ հույս բերող,
Մանուշակ՝ ինձ միշտ գերող:
Երգիս մեջ ու սրտիս մեջ
Մշտավառ հուր ես անշեջ:
Քո սերը իմ ջերմ հոգում
Երկնային լույսով օծված
Զանգակ է դարձել զնգուն...

2.

Թող աչքերիդ նայեմ, արեւմեր կան այնտեղ,
Այնտեղ կրակներ կան, թող որ ես ջերմանամ,
Թող որ հմայվեմ քո նազանքներով շքեղ,
Թող քո քնքանքներով միշտ հմայված մնամ:
Թող ըմբոշխնեն բառո՞ւ արեւահունց ու վառ,
Աստվածային ձայնդ թող փայփայի հոգիս,
Տենչիս սարերն ի վեր, սրտիս սարերն ի վար,
Յրեշտակի շունչդ թող ես զգամ կողքիս:
Երազել եմ կյանքում միայն թուխս արեգակ,
Որոնածս դու ես, գտել եմ քեզ արդեն,
Քո հուր ժպիտները կառնեն իմ կրօքի տակ
Ու կպահեն այնտեղ որպես գարնան վարդեր:

3.

Սարերն այստեղ կապուտի մեջ
Լող են տալիս ու նազում,
Այս սարերին աստեղնամերձ
Այնքա՞ն լավ ես դու սազում:
Յովերն այստեղ սիրո շոյանք,
Ծաղիկները՝ սիրաբույր,
Վարդե՞րն են են քեզ տվել քնքանք,
Թե՞ քեզնից են առել թույր:
Ծվարել են ծաղկի եւ քո
Գեղեցկության արանքում,
Աստվածները քեզ նմանին
Յազվադեպ են առաքում:

4.

Ես քեզ ծաղիկ անվանեցի,
Շփոթվել եմ, իմ անգին,
Ծաղիկը թող ծաղիկ մնա,
Դու ես իմաստն իմ կյանքի:
Ծաղիկները ծիածանի
Գոտին երկնին են տալիս,
Իմ տենչերը հրակարնիր
Սրտիդ խորքից են գալիս:
Ծաղկաբույրը՝ անտես մի եռք,
Ղմայում է ու զնում,
Իմ սրտի մեջ ամենուրեք
Քո լույս ժպիտն է մնում:

5.

Ժայռի պունկին մի ծաղիկ տեսա,
Դա մանուշակ էր եւ քեզ էր նման,
Վտանգի միջով ես նրան հասա,
Պոկեցի զգույշ եւ հոգեհմա:
Դու ինձ հետ չէիր, որ նվիրեմ քեզ,
Բայց պահում եմ այն գրքիս արանքում,
Փայփայում եմ միշտ սրտով սիրակեզ,
Եվ կպահպանեմ իմ ամբողջ կյանքում:
Ի՞նչ խորհուրդ ունի կյանքն այս աշխարհում,
Քեզմով պաշտում եմ նույր մանուշակին,
Կարծես թե քեզ եմ ես ապաշխարում,
Ասել է քեզ եմ աղոթում, անգին:

6.

Յանդիաբելով դու իմ ճամփիմ,
Երկու ընծա տվիր, անգին,
Մեկը՝ սիրո բուժված վերքս,
Մեկն էլ՝ սիրո գժված երգս...

7.

Թե աստղերին եմ նայում,
Զո աչքերն են ժպտում ինձ,
Թե ծառերին եմ նայում,
Զո թեւերն են գրկում ինձ,
Գետի կարկաչ եմ լսում,
Չայնդ է գալիս, փարվում ինձ,
Կարմիր կակաչ եմ տեսնում,
Սիրուդ հուրն է վառում ինձ:
Դու ապրում ես իմ սրտում
Մայր բնության պատկերով,
Լինեմ ուրախ, թե տրտում,
Գալիս եմ քո հետքերով,
Զո կարոտը առնում եմ
Աստղից, ծաղկից ու ծառից
Ունքերիցդ թեւ առած
Գարնանային ծիծառից:

8.

Թե կարող ես՝ ցույց տուր ինձ
Յանգրվանը Մեծ սիրո,
Ասա՝ ինչպե՞ս են նորից
Վառվում սիրո ջերմ իրով...
Ասա՝ ինչո՞ւ սրտերը
Սիրո բարձունք չեն հասնում,

Ինչո՞ւ ձմռան ցրտերը
Սիրո միջով են անցնում:
Ինչո՞ւ հորիզոնի պես
Սերը հեռվից է կանչում,
Խոր ձորերի մեջ ասես
Անհաս գետ է կարկաչում:
Ինչպե՞ս հասնես դու նրան,
Պատախան տուր, իմ անգին,
Սերդ՝ կրակ հուրիրան,
Սիրտս՝ զոհն այդ կրակի:
Գուցե Աստծո կամքով է
Սերը դարձել տառապանք,
Տառապանքս քեզ ՆՎԵՐ,
Իմ երազած ԵՐԱԶԱՆՔ:

9.

Թեժ վտանգից մի վախենա,
Գոնե քնքո՞ւյշ ժպտա ինձ,
Վառվող սիրտս թող հագենա
Քո երկնային քնքշանքից:
Երազել եմ ամբողջ կյանքում
Սիրո անձրեւ, սիրո հուր,
Քո սիրով եմ ես տառապում,
Յեքիաթային իմ համբույր:
Կյանքը՝ հեքիաթ, սերը՝ երազ,
Մենք հեքիաթի հերոսներ,
Չարը՝ դաժան, բարին՝ մուրազ,
Բարի սիրտս քեզ նվեր:

1998-1999 թթ., Ստեփանակերտ

ԵՎ ԴՈՒ ԵԿԱՐ ՄԻԱՆԳԱՄԻՑ

1.

Եկար այնպես միանգամից,
Ասես երկնից իջած շաղիկ,
Ասես պոկված ծիածանից
Նուրբ անրջանք ու սուրբ տաղիկ:
Միանգամից դեմս ելար,
Այնպես խուտուտ եկավ գիրկս,
Ճրաշքի պես թեւեր առած
Ձերմացրիր հոգիս, սիրտս:
Ճողեղեն չես, արեւ ես թուխ,
Տիեզերքից իջած կրակ,
Նվիրումով քո ինքնաբուխ
Դու դառնում ես հույզ ու ճրագ:
Քնքշություն ես դառնում, երազ,
Դու դառնում ես լուսե պատրանք,
Քո երգեցիկ բառերի տակ
Քաղցրանում են ձգտում ու կյանք:

2.

Իմ սեր-անրջանք,
Աղավնու թեւ ես ու ծովի ալիք,
Երկրպագում եմ քեզ միշտ արբունքով,
Ժպիտներիդ մեջ տեսնում մի աշխարհ,

Թող մտնեմ սիրտդ
Եվ այնտեղ փնջեմ աստղերն իմ բախտի,
Քո երազները առնեմ ավիս մեջ,
Ինչպես հնձվոր՝ ցորենը հասկի:
Ես ողջ էությամբ սիրուդ հերկերում
Մի երջանկացած հողվոր կդառնամ,
Տագնապով, դողով իմ նուրբ երգերում
Հոգուս դրները քո դեմ կրանամ:
Ծնկաչոք իջած կաղորեմ անվերջ,
Որ արյան փոխված միշտ մնաս իմ մեջ:
Նայիր աչքերիս՝ քո կրակներն են
Այնտեղ ճարճատում,
Քո ձեռքով վառած նուրբ ճրագներն են
Լույս տալիս հոգուս, վիշտս փարատում:
Լուսատղ դառած ճառագիր ճամփիս,
Թող լույսը քեզնով հոգիս թափանցի,
Երբ լույսն ու սերը մեկտեղ են գալիս,
Սիրտն էլ է դառնում ջերմ ու թափանցիկ:
Իմ սեր-անրջանք,
Վառվիր, թող քեզնով իմ բախտին տիրեմ,
Թեւավորիր ինձ, թող քո քնքշությամբ
Աշխարհը սիրեմ:

3.

Մի ծիծեռնակ թեւեց պատշգամբիս մոտով,
Ունքերիդ կեռը ծիածանվեց իմ դեմ,

Պարտեզի մեջ մի վարդ ժպտաց գարնան հոտով,
Ասես քո ժպիտը նուրբ ծածանվեց իմ դեմ:
Բարդին հովի թեւին նազեց այնպես քնքույշ,
Նազուկ քո իրանը կոպերիս տակ հառնեց,
Բնությունն այդ ժամին քեզ այնպես էր ննան,
Որ իմ ուշըն ու միտքը մեկեն իրար խառնեց:
Իմ արեւի կտոր, Աստղիկ իմ դիցուիի,
Իմ աստղային արբունք, իմ հողեղեն քնքշանք,
Այս ի՞նչ աստվածային ճանապարհով եկար,
Ինչպես մտար սիրտս, պարգեւեցիր թերկրանք:
Թոռ ծնկի գամ քո դեմ, օրինեմ գալուստը քո,-
Չեմ թաքցնում, սեր իմ, քեզ պաշտում եմ հոգով,
Թոռ քեզանով սերս երգի փոխված հորդի:

4.

Ես խորհում եմ լոկ քո մասին,
Ո՞վ իմանա ի՞նչ ես խորհում,
Աչքերս քեզ շատ բան ասին,
Իմ աչքերում դու տեսար ո՞ւմ:
Տառապանքս դեն նետեցի,
Որ քեզանով արբունք դառնամ,
Հոգուդ խորքում ի՞նչ երգեցիր,
Ո՞ւմ ամունով թեւեր առար:
Առեղծված է կյանքը, սեր իմ,
Ո՞վ է լուծել, որ մենք լուծենք,

Արի, արի փարվենք իրար,
Մեզ մոռացած ջերմ զրուցենք:
Յյուսենք սիրո հեքիաթը մեր,
Մեր հանդիպման ժամ ու օրից,
Կյա՞նքն է սերը, թե՞ սերն է կյանք,
Թող առեղծված մնա նորից:

5.

Զո աչքերը ինձ ժպտացին,
Ու թագվեցին իմ աչքերը,
Զո շուրթերը թոթռացին,
Ցանաքեցին իմ շուրթերը:
Զո ձեռքերը ինձ գրկեցին,
Ու թուլացան իմ ձեռքերը,
Զո երգերը ինձ տնտղեցին,
Նորոգվեցին իմ վերքերը:
Յոզուդ ծովը քնքշանք մանեց,
Յիմնահատակ եղավ հոգիս,
Սերդ եկավ երկինք հանեց
Սիրո ծովում անողոքիս:
Պատրանք դարձավ իմ անցյալը,
Սերս այնպես հոյակե՛րտ էր,
Մի՞թե սերն էլ անծիր-անծայր
Իր սուրբ ճամփին ունի շերտեր:
Ինքնամոռաց տրվել եմ քեզ,

Քո սրտի դեմ սիրտս եմ բացում,
Սակայն ամպոտ երկնքի պես
Ինչո՞ւ է միշտ սիրտս լացում...

6.

Ինչո՞ւ չեկար, ի՞նչ էր եղել,
Սրտիս ձայնը քեզ չէ՞ր հասնում,
Ճոգիս քո դեմ չէի՞ պեղել,
Խիղճդ ոչ մի խո՞սք չէր ասում:
Ինչո՞ւ չեկար, դուռս բաց էր,
Թպրտում էր սիրտս անվերջ,
Տիրությունս, որ միշտ թաց էր,
Քեզ էր մնում սիրով անշեջ:
Ուզում էի ճշալ երգով,
Թեկուզ երգում՝ ուրախանալ,
Ուզում էի քո իսկ ձեռքով
Սրտիս թեքված դուռը բանալ:
Զայնդ այնպես ամոքի՞չ է,
Սպասել եմ երկա՞ր-երկա՞ր...
Տառապանքս մի՞թե քիչ է,
Ինչո՞ւ չեկար, ինչո՞ւ չեկար:

1983 -1999 թթ.,
Զերմուկ-Ստեփանակերտ

ՔՈ ՍԵՐԸ

1.

Քո ձայնը խտացված սեր է,
Պարզվում է՝ սերը ձայն ունի,
Քո ձայնը խտացված գույն է,
Պարզվում է՝ սերը գույն ունի:
Քո ձայնը հնչում է իմ սրտում,
Պարզվում է՝ քո սերը բույն ունի,
Քո սերը արյունիս եռըն է,
Քո սերը՝ դա չասված իմ երգն է...

2.

Քո սերը թեւ առավ իմ սրտից,
Քո սրտի միջով հասավ ինձ,
Քո սերը իմ սիրո գարունն է,
Գարունը քո սիրով հասավ ինձ,
Աստված ես դարձել իմ սրտում,
Դարձել ես իմ սիրտը շոյող ձեռք,
Գարնան մեջ դու ես ինձ ժպտում,
Այս ի՞նչ է կատարվում ինձ հետ:

3.

Ի՞նչ հանդիպման պահ է, Աստված,
Ե՞րբ են այսպես հրավառվել,
Սիրտս Ե՞րբ է իր երազին
Յասել այսպե՞ս, այսպես փարվե՞լ:
Ե՞րբ են աստղերն իջել այսպես
Ու պար բռնել իմ շուրջ բոլոր,

Երջանկության խարույկի մեջ
Ե՞րբ եմ հալվել այսպես մոլոր:
Ե՞րբ է խոսել ծաղիկն ինձ հետ,
Ե՞րբ է արեւն ինձ նախանձել,
Սիրո գույներն իմ ցիր ու ցան
Կարոտ դառած Ե՞րբ եմ ինձել:
Շնորհակալ եմ քեզնից, աշխարհ,
Որ իմ սերը չխեղինցիր,
Ինձ թվում էր, թե սիրուս մեջ
Պիտի հավետ մնաս անսիրտ:

4.

Այնպես լիներ, որ աշխարհը
Ժպիտներով քո լվացվեր,
Քուն մտներ քո ժպիտներով,
Ժպիտներիդ լույսով բացվեր:
Նա բարությամբ կօծվեր հավերժ
Ու կդառնար լույսի աղբյուր,
Այնպես լիներ, որ աշխարհը
Քո ձեռքերից առներ համբույր:

5.

Սիրոս նորից թփրտաց,
Շողքդ երեւաց,
Քար աշխարհից խռոված
Յոգիս երերաց,
Սերս ծփաց անվրդով,
Արյունս խաղաց,
Տենչերս քո շրթերին
Ցրվեցին շաղած:
Քո աչքերում ես տեսա

Իմ բախտը անհաս,
Սուրբ ցրվեց իմ ծանփից,
Ի՞նչ լավ է, որ կաս...

6.

Տիրությամ, թախծի պահին
Ինձ հետ ես էլի,
Օրերը ոնց էլ սահեն,
Ինձ հետ ես էլի,
Լույսի պես փոխվել իմ մեջ,
Զուլվել իմ հոգուն,
Դարձել ես կարոտ ու տենչ,
Անմարուն, հորդուն:
Գարուն է եկել նորից,
Քո իրաշք տեսքով,
Եվ ասես շոյուն է ինձ
Քո քնքույշ ձեռքով:

7.

Ոչինչ չեմ ուզում այս մեծ աշխարհից,
Միայն թե հնչի քո ձայնը քնքույշ,
Քո ձայնը սրտիս թեւեր է տալիս,
Ավիշ է տալիս, տալիս է նոր ուժ:

Ոչինչ չեմ ուզում այս մեծ աշխարհից,
Միայն թե տեսմեն ժայտները քո,
Քո ժայտներն ինձ թեւեր են տալիս,
Միրտս լցվում է աշխուժով, երգով:

Ոչինչ չեմ ուզում այս մեծ աշխարհից,
Միայն թե լինես հավետ իմ կողքին,
Քեզնով աշխարհն եմ սիրում կրկնակի,
Քեզնով արեւ է դառնում իմ հոգին:

8.

Եվ ամբողջ գիշեր քունս չտարավ...
Եվ երազներս թափառում էին
Մոլորված ու խենթ,
Մի տեսիլք էիր դարձել իմ դիմաց
Ու խաղում էիր
Երազներիս հետ...

Սիրտս ափիդ էր, մերք քնքշանքներով
Փայփայում էիր, ժատում մեղմորեն,
Ես դողում էի
Տագնապած հոգով...

Ասես խաղողի ողկույզ էր սիրտս,
Դու գինի էիր քամում հաճույքով:

9.

Ին մտերիմ, իմ հեռավոր,
Ինձնից պոկված լույսի իմ շող,
Երազի ծառ իմ մենավոր,
Ինձ հար տանջող իմ սրտի դող:
Ին սիրո գետ՝ հավերժ հորդուն,
Ին ծիածան՝ ապրող իմ մեջ,
Քաղցր-քաղցր իմ տառապանք,
Տառապանքից ծնված իմ տեսչ:

10.

Առավոտներս քեզնով բացվեին,
Քեզնով լցվեին առավոտներս,
Սիրո ծաղկունքս քեզնով բացվեին,
Քեզնով բուրեին ալ նարոտներս:
Երազներս հար քեզնով հոսեին,
Քեզնով խոսեին երգիս բառերը,
Սիրո երգերս շրթերին առաջ
Քեզնով հնչեին գալիք դարերը:

11.

Այս ի՞նչ է կատարվում ինձ հետ,
Անենուր քո ծայնն եմ լսում,
Թե ծաղիկ, թե առու, թե գետ
Իմ սիրո կարոտն են կիսում:
Այս ի՞նչ է կատարվում ինձ հետ,
Պատկերդ կոպերիս տակ է,
Արեւի նման իրաբորք,
Արեւի նման միշտ տաք է:
Կարծեցի օրերի փոշին
Իմ սերը կծածկի անհետ,
Բայց ինչպես ես ինձ մոռանամ,
Այս ի՞նչ է կատարվում ինձ հետ:

1986-1999 թթ., Ստեփանակերտ



Տեսել են նրան՝ Եսայ դյուցազնին՝ Սարդարապատում,
Տեսել են նրան մեր ազատության ամեն մի մարտում,
Հիմա տեսնում են Մռովի, Քիրսի կանաչ լանջերին,
Նժոյգին հեծած, ականջն Արցախա արդար կանչերին:
Սովոր հանել է թուրք բուղաների սերնդի հանդեպ,
Որ մեր Արցախը ապրի դարեղար, ինչպես Հայոց քերդ,
Տեսել են նրան, նրան տեսնում են ու կտեսնեն դեռ,
Թուրքն ու խաչն առած որպես Արցախի հավերժական տեր:

ԱՐՑԱԽԻ ԱՐԾԻՎԸ

(Պատմական պոեմ)

Պոեմը 1992 թ. արժանացել է
ԼՂՀ կառավարության
Եղիշեի անվան
ամենամյա մրցանակին

ՆԱԽԵՐԳ

Այցելեցի Գտիչ վաճքին,
Երբ սաղմոս էր նա կարդում,
Այնպես գոհ էր, ասես ճանփին
Թշնամու թուրն էր ջարդում:
Նայեցի վար, նայեցի վեր,
Արեգակն էր ին կողքին,
Սիրտս մեկեն առավ թեւեր,
Եվ աստղացավ ին հոգին:
Աստղավորված հոգուս լուսով
Թերթեցի գիրքն անցյալի,
Ուր խոսում են մեզ հետ հույսով
Մեր պապերը պանծալի:
Խոսում են ու դասեր տալիս
Յարատեւման ու հողի,
Որ ինքն իրեն փառք չի գալիս
Երկիր ու հող սնողին:
Յող ու թոի լուսե ոգին
Գիրն է ազգի ու մարդու,
Ով դրանցով կամքը կոփի,
Ծնկի չի գա նա կյանքում:

Ու խորհուրդն այդ առած իմ մեջ
Տողասարի գագաթին,
Շրջում էի հազարատենչ,
Տրված խղճի մեծ դատին,
Երբ մի տեսիլք բացվեց իմ դեմ,
Դեքիաթային մի աշխարի,
Այդ աշխարհն էլ ինչպես եղեմ
Զգվել էր ոնց լեռնապար:
Լեռնապարում այդ աստղացող
Դարերի հունչ ու շքերթ,
Այրուձիեր վրնջացող,
Սարսափի, ամկում ու վերելք:
Զինվորյալներ, այրեր քաջսիրտ,
Զորավարներ ահարկու,
Լեգեններ ու ցեղեր բիրտ,
Յարկահավաք, հարկատու,
Անց են կենում՝ ուսած դարեր,
Խօնված աջից ու ձախից,
Նրանց առջեւ արդար ու վեհ
Պայազատներն Արցախի:
Ու նրանց մեջ գերում է ինձ
Իշխան Եսայն արեւաչ,
Որ թեւ առած Տողասարից
Գալիս է ինձ ընդառաջ:
Մետաքսակար չուխան հագին,
Կապած թուրը Առանի,
Ինչպես իմ քաջ Խաչի պապին,
Դուռն է բացում մառանի,
Առնում գինի, առնում է հաց,
Պապենական հավատով

Ու խմում է երեք կենաց
Մի կավակուռ գավաթով.
- Առաջինը վերցրեք խմենք
Յողի կենացն Արցախի,
Մեր սուրբ հողը քանի ունենք,
Մեր սիրտն ուրախ կրախի:
Այս երկրորդն էլ պիտի ընպենք
Կենացը մեր թրերի,
Որ դարերում երբեք չապրենք
Թշնամուն ճորտ ու գերի:
Այս երրորդն էլ՝ Արցախեցու
Կենացն, ամեն թեժ պահի
Ինքն իր հողին դառնա նեցուկ
Եվ օջախը վառ պահի:
Դայ ծնվել է, հայ էլ ապրի,
Մեր պապերին արժանի,
Իր հավատին հավատարիմ՝
ճամփա չտա խուժանին:
Յետո հեծած նժույգն իր խենք,
Կապեց թուրը սրասայր,
Գոչեց.- ի զե՞ն, հայոց քաջե՞ն,
Առաջ դեպի Տողասար:
Շափաղ տվեց կայծակի պես,
Ղեաի լեռը ժայռանիստ,
Ուր չոքել էր վիշապն ինչպես
Դագարացոց զորքը խիտ:
Ուր հարազատ մի լեռնաշխարհ,
Ծփում էր ոնց վշտի ծով,
Ուր ոստիկան Բուղան էր չար
Պարզել թուրը արնածոր:

Շառաչեցին սրերն անթիվ,
Շանք էր դարձել Եսայը,
Նա ճախրում էր ինչպես արծիվ,
Ոտքերի տակ սեգ սարը:
Մընչում էր հարվածի հետ
Ու թեւածում աջ ու ձախ,
Ու կռվի մեջ այդ բազմաթեւ
Մի Եսայ էր, մի Արցախ:
Դարձել էի պատմագիրը
Առանձին հերոսի...
Եվ բերում եմ ին այս գիրը,
Որ ձեր սրտի հետ խոսի,
Պատմի անմահ քաջի մասին,
Մեր պապերի հավատով,
Եվ Եսայու կենացն ասի
Յենց իր թողած գավաթով...

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ
ԳԼՈՒԽ 1
ԱՉՔԱԼՈՒՍԱՆՔ

Յին Դիզակում, Քիրսա սարին,
Այգը բացվեց,
Խնդությունից Տողասարի
Աչքը բացվեց:
Գտչավանքում լուսածեգին
Կյանքը շողաց.
Գավառապետ քաջ Յովսեփին
Ծնվեց տղա...
Մանուկ չէ նա, իրա՞շք է մի,

Աչքերն արեւ,
Լուսնաշողիկ այտեր ունի,
Թմփիլիկ թեւեր:
Ժամներով է աճում տղան
Բարուրում պերճ,
Քիչ է մնում նստի, խաղա
Մի օրվա մեջ:
Յոր թիկունքը պիտի դառնա,
Գավառ պահի,
Պիտի նստի իր Դիզակա
Պապի գահին:
Եվ Յովսեփի՛ Սուլբ գիրքն առած,
Որդուն տեսավ,
Մարգարեի փառքով վառված
Կոչեց Եսայ:
Աչքալուսանք լուրն այս բարի,
Ոնց քաղցր երգ,
Սկիզբ առավ Տողասարից,
Թռավ բեկ-բեկ,
Գնաց, ծեծեց հին գավառում
Դարպաս ու դուռ,
Թեւաբախեց ողջ Արցախուն,
Ախորժմալուր:
Իսկ Յովսեփի՛ թեւածում էր
Արծվի նման,
Երգ էր ասում, սեղան բացում,
Որդեհնա:
Թուրն էր հազել, գոտին կապել,-
Յայկածին էր,
Չարի դուռը պիտի փակեր,-

Արցախի էր:
Խալիֆի մոտ ով էլ գնար,
Միշտ հարցնում էր.
- Ի՞նչ է անում դիզակեցին,
Բարեւ չարե՞ց:
Երկու անգամ հարվածեցին,
Յաղթահարեց...
Մեկ է, նրա հախից կգամ,
Կգամ մի օր,
Նրան ողջ-ողջ իրին կտամ,
Ինչպես մի լոր:
Նա՝ կոտորի զինվորներիս
Առյուծածին,
Պահի խարջը հաղթողներիս
Ու հալածի՞:
...Յոխորտում էր ամեն անգամ,
Որ չի ների,
Նա լավ գիտեր արցախակամ
Յեծյալներին:
Լավ գիտեր եւ քաջ Յովսեփը
Նենգ խալիֆին,
Գիտեր, որ նա մի իրեշ է,
Վիշապ է, ցին:
Արաքսի ձախ ափերն ի վեր,
Սինչեւ Սյունիք,
Ճին Դիզակը ձիգ ձգվել էր
Որպես ժամիք:
Գիշեր ու զօր պատրաստվել էր
Պատերազմի,

Լեռնաշխարհը զինվորյալ էր,
Դաշտ՝ ռազմի:
Կապած թուրք առանակուռ
Գնդերը հոծ,
Մնում էին ամենակուլ
Յագարացոց:

ԳԼՈՒԽ 2

ՅԱՍՈՒՆԱՑՈՒՄ

Եսայու տասնութ գարնան
Փունջն էր բուրում արդեն,
Գիտության կապ ու հնար
Բացվել են նրա առջեւ,
Դպրոցում սուրբ Գտիչի
Կոփվել էր հանճարաշուրթ,
Եվ ինչպես հմուտ գրիչ
Ծաղկել է գիրքը մեր սուրբ:
Ու հետո Ամարասուն
Կարգվել է նա վարդապետ,
Արցախի ամեն մասուն
Զրուցել այրերի հետ:
Յայոց հին պատմությունը
Տարերքն է դարձել նրա,
Անունը Խորենացու
Գրել է սրտի վիա:
Մեսրոպի գիրն է գովում,
Վարդանի թուրք հատու,
Գիտության ամիուն ծովուն

Դաշնում է մի լուսատու:
Վիճելիս, տեղը թե գա,
Յույն լեզվում չի ընկրկում,
Նրա դեմ փակ դուռ չկա
Պարսկական գիր ու գրքում:
Արաբի հոխորտանքը
Խեղդում է արաբերեն,
Չհոգնող մտքի ջանքը
Յամբավ է նրան բերել:
Սերտել է թրի լեզուն,
Գնդեր է վարում հոր հետ,
Զինվոր էր մի հայկազուն,
Դարձել է ռազմագետ:
Թե հայրը կռվի մեկնի,
Թիկունքին Եսայն է քաջ,
Յոր միտքը ինչ էլ երկնի,
Որդին է քննում առաջ:
Դատ լինի, թե դատաստան,
Վճիռը Եսայինն է,
Ճրագը Դիզակա տան
Ամենուր իր ծեռքին է:
Տեսնողը հարազատի
Սրտաբուխ սերն է մաղթում,
Տոն լինի, թե հարսանիք,
Եսայն է տեսադաշտում,
Խաղում է նա ջջախտի,
Գյուղացու մաշված շորով,
Երգում է լեռան թախտին
Ու վազում կիրճ ու ձորով:

Իշխանի մոտ իշխան է,
Մշակի մոտ՝ ռամիկ,
Ընկերոց խղճի ձայնն է,
Բոլորի համար՝ զարմիկ:
Մարտերի ոգին է կուռ,
Սարսափը հագարացոց,
Յուսուֆին հասել է լուր,-
Յրաշքի մասին հայոց,
Թե Արցախ աշխարհի մեջ,
Թե բարձր Տողասարուն
Գործերը քաջ Յովսեփի
Որդին է արդեն վարում,
Այն քաջը, որ հարկատու
Ահմադին սրահարեց,
Նամակը չար Յուսուֆի
Բոլորի առաջ վառեց...
Եվ ասաց. «Այսուհետեւ
Դիզակի տերը ես եմ,
Պատրաստ եմ ճնճղուկաթեւ
Յուսուֆի միջից կիսեն:
Թող ոչ մի հագարացի
Էլ դեպի Արցախ չգա,
Ու եթե մեկը փորձի,
Պատասխանն ինքս կտամ,
Յերիք է՝ աշխարհը մեր
Անպատիժ վառեք, գերեք,
Գնացեք երկիրը ձեր,
Զեր դատած հացը կերեք:

ԳԼՈՒԽ 3

ՅԱՐԿԱՅԱՎԱՔ

Յուսուֆը կանչեց հարկահավաքին,
Ասաց.- Աբդլլահ, Արցախը քոնն է,
Կհասմես այնտեղ բերքահավաքին,
Իրար կխանես ծեսեր ու տոներ,
Առաջին հերթին կչափես ոսկին
Եվ հետո կառնես առանց մի խոսքի.
Ամեն մի շնչից ուղիղ չորս դիրիեմ,
Ամեն երդիկից մի պարան, մի գորգ,
Մի ձիատոպրակ, ձեռնոցներ բրդե,
Մի ջորի, թեկուզ տերը լինի որբ:
Մետաքսի գործվածք, աղած համով ձուկ,
Դավերի տակից նոր վերցրած տաք ձու,
Չորթան, պղկաթան, շլորի լավաշ,
Այն ամենն, ինչից կստացվի լավ ճաշ,
Շնն, զկեռ, գարի, ցորեն ու հաճար,
Թող հայը սովից վնաստա անճար,
Իսկ թե հանդգնեն դիմադրել քեզ,
Դաստակողերի կաշին կքերթես:
Նախ հինգ բյուր գործով կմտնես Դիզակ,
Կանայք կբերես ինձ թխագիսակ,
Դե, հավատում եմ ուժիղ, Աբդլլահ,
Արցախում դու ես, վերեւում ալլահ:
Մաղով կմաղես անհավատներին,
Ինքդ կմտնես խորքը տների,
Գերիներ կառնես խալիֆի հաճար,
Մնում են այնտեղ գործերն անհամար,
Կգերես հազար ընտիր որմնադիր,

Յազար ոսկերիչ եւ հազար դարբին,
Յազար քարագործ եւ հյուսն հազար,
Վարապետներ չկան որանց հավասար:
Կիվես ոսկու փոշի եւ բրիչ,
Ընտիր մագաղաթ, հմտածեռ գրիչ,
Որ գան, մեր սրբի անունը կրեն,
Իրենցը թողած, մեր գիրը գրեն:
Քեզ բարի ճամփա, իմ խիզախ ընկեր,
Մուշում կսպասեմ քեզ մինչեւ ձմեռ,
Զնօանը, անշուշտ, կլինես կողքիս,
Մեկտեղ կհանենք մշեցու հոգին,
Աստվածը մերն է, մարգարեն՝ մերը,
Մենք ենք անցավոր աշխարհի տերը...
Ավարտեց խոսքը ոստիկանը նեռ
Ու վեր ձգելով պարանոցը կեռ,
Զեռքերը պարզեց իրենց ալլահին,
Որ խալիֆաթը միշտ կանգուն պահի,
Ուրիշից խլի, նվիրի իրենց,
Օգնի՝ աշխարհին հավիտյան տիրեն:

ԳԼՈՒԽ 4 ԶՈՐԱՉԱՎԱՔ

Աշնանն Արաքսը հանգիստ է ու ջինջ,
Ոլորաններում դաշնում է մի լիճ,
Իր հայելու մեջ առնում սարերը,
Մրգերի բերից կքած ծառերը,
Եղեգնուտները, արտերը հնձած,
Ակոսների մեջ՝ եզները լծած,
Ափերին եղած ամեն-ամեն ինչ,
Աշնանն Արաքսը հանդարտ է ու ջինջ...

Դիզակա դուռը՝ Արաքսի ափին,
Գետից է ծնվում Դիզակա արփին,
Նրա սահմանն է, երգերի գուռը,
Նրա մի թեւն է ու դալար կուռը,
Իսկ մյուս թեւը Իշխանագետն է,
Քիրսից է ծնվում, լեռների խենթն է,
Իրար նեցուկ են, դատողեր մի երկրի,
Թե մեկը լեզուն հանում է տապից,
Մյուսը փրփրում է իր ահեղ թափից,
Երգող շրթերից առու է հանում,
Քոջ փոխարեն ցողերն իր ցանում...
Այսպես, կանաչ է մնում Դիզակը,
Ղարպասն Արցախի, Արցախի ակը...

Բայց վրդովվել են քույրերը երկու,
Սուշից հասել է բոթը ահարկու,
Որ հինգ բյուր զորբով Աբդլահը նենգ,
Մահվան կրիմչով, գիշեր ու ցերեկ,
Կրակ ցանելով դաշտերում արձակ,
Սուրում է դեպի Դիզակ, դեպ Արցախ:
Ու վրդովվել է դիզակցու հոգին,
Քթոցը թողած թթենու գոգին,
Ցորենը կալում, խնձորը ծառին,
Աշնան նոր լոբին ձիգ քոլասարին,
Բացված բամբակը անծիր դաշտերում,
Քաղցր խաղողը մեծ-մեծ տաշտերում,
Եզները անլուծ, ճիպոտը մաճին,

Մեռոնված գինու գավաթը փարչին,
Թողած նոր խուզը ոչխարի հոտի,
Վերցրել է թուրը ու կապել գոտին...
Տունն ու գործերը հանձնելով կանանց,
Այրերն իջել են կիրճերը անանց...

Եվ սպասում են՝ տողեցի Զանին,
Իր ընկերներով քոչբեկցի Փանին,
Տունեցի Արամն իր գերդաստանով,
Թաղասեռ գյուղից՝ Արամն իր տնով,
Ազդիսցի դարրին Արշամն իր զորքով՝
Տղաների հետ, տասնմեկ հոգով,
Զրակուս գյուղից տանտեր Սարգիսը,-
Վեհապանծ, ինչպես հայրենի Քիրսը,
Մի մեծ զորագունդ բարձր Յարարից,
Մեկը՝ Էտիլից, մեկը Յարավից,
Ապավինած իր թրին ու խաչին,
Ակնաղբյուր գյուղից՝ փակիլեւան Խաչին,
Ցորից Պետրոսը իր հատուկ գնդով,
Յաղրութից՝ գուսան Յաթամը՝ խինդով,
Խսկ Մեծ Թաղերից՝ երգի սիրահար,
Չուռնաչի Չեթը, որպես փողահար:
Եկել են բոլոր գյուղ ու շեներից,
Տոհմերից բոլոր, բոլոր տներից,
Կազմել Դիզակի այրուծին անպարտ,
Յինգ հազար հոգով՝ կռվող ու հպարտ,
Եկել են, խմբվել Տողի մեծ կիրճում,
Թշնամու հանդեպ խրոխտ, անզիջում,
Երդվում են իրենց անվանք, հավատով,

Որ հագարացին ծիով, թե ոտով
Չպետք է երեք հասնի Գտիչին,
Չպետք է ձեռք տա նրա սուրբ խաչին...
Այրուձիու դեմ իշխանն է բարի,
Կողքին Եսայն է՝ որդին քաջարի,
Կարծես իրար մոտ Մռավն ու Քիրսն են,
Մայր Յայաստամի երկու Մասին են:
Դիզակիները թեւեր են առնում,
Շանթերը կտցող արժիվներ դառնում,
Երբ ալ նժույզը գավառապետի՝
Դունչը մեկնում է իշխանագետին,
Յայացքը ուղղում Եսայու ծիուն,
Ենիք-ճերմակ, ինչպես դեռ նոր իջած ձյուն,
Զանգի ղողանջով երկար խրխնջում,
Ասես Եսայու ծիուն է կանչում,
Որ թեւեր առնեն դեպի մայր Արաքս,
Որ համբերության թե բաժակ, թե թաս
Լցվել են արդեն, էլ հապաղելու
Տեղ չունեն, չկա ժամը պաղելու,
Որ պետք է ծեծել երկաթը տաք-տաք,
Դաժան ոսդիմ ամել ոտնատակ:
Արձագանքում են ծիերը բոլոր,
Եվ ճանապարհը՝ սարերով ոլոր,
Մերթ ծգված ծորում, մերթ սարի ուսին,
Նրանց տանում է ափը Արաքսի,
Դեպ ստորոտը Մյուս Յաբանդի,
Դեպի Յորադիզ, ուր արտ ու հանդին
Քաջածանոր է Արդլահը չար:
Դիզակա տերը գիտե՝ անպատճառ
Այնտեղից պիտի մտնի երկիրն իր

Յարկահավաքի զորքը դավադիր,
Պետք է սպասել թշնամուն այճտեղ,
Զարդել գնդերը նրա բազմացեղ,
Թրազարկ անել ոսկորը կողի,
Որ չնոտենա դռներին Տոռի,
Փրկել հայրենի օջախն էլ, հողն էլ,
Աբդլահից լոկ ականջը թողնել:

ԳԼՈՒԽ 5

ԶԱՐԴ

Դիզակի իշխան Յովսեփը ձայնեց զորականներին,
Զորք-զորագլուխ կանգնեցին ինչպես ամուր լեռնապար,
Դեմք Արաքսն էր՝ պատգամախոսը հայոց դարերի,
Մայր Յայաստանի մեծ զարկերակը, դուստրը լուսարար:
Յովսեփին այրուձին կուր բռունցքել էր, դարձրել մի հոգի
Եվ ամենուրեք պապերից լսած իր խոսքն էր բերում.
«Ամեն մի երկիր՝ իր մեջ բաժանված, միշտ էլ կչոքի,
Միասնությունն է կրիվների մեջ ոսխին գերում»:
Իր այրուձիուն քաջածանոթ էր, գիտեր բոլորին.
Ռամիկներին, ազատին, մեծին եւ ազատորդուն,
Գիտեր՝ մարտի մեջ թշնամու վիզը ով խիստ կոլորի,
Ով դիտակետը կարող է հսկել գիշերներն արթուն:
Երբ շամանդաղը ալիքվեց հեռվում եւ գետը շողաց,
Դետքը սրարշավ մոտեցավ հարգված գավառապետին,
Այլայլված էր նա, խոսքը կերկերաց, ծնոտը դողաց.
- Ամբողջ Արաբիան մեր դեմ է գալիս, վեհագույն իշխան,
Թիվ կա Արցախի անտառաց ծառին, թիվ չկա զորքին:
Յովսեփը ժայռաց եւ դիմեց. «Զինքդ հավաքիր, իշխան,
Անունդ բարձր է, բայց շաղած կաթ է կարծես քո հոգին:

Թվարկիր մեկ-մեկ, ի՞նչ ես նկատել եւ ո՞ւր են նրանք,
Որտե՞ղ են ձգել լաստերը իրենց, գետի ո՞ր մասով»:
- Յորադիզից դեն գետով անցնում է զորքը հազարաց,
Եվ ճանապարհը պետք է անց կենա մեր Ոսկեվազով:
- Շատ լավ- շշնջաց գավառապետը, նայեց ծախս եւ աջ,
Շուրջը հավաքեց Դիզակի փորձված քաջորդիներին,
Ասաց. «Միայն մեկ խնդիր է դրված բոլորիս առաջ,
Կամ պիտի մեռնենք, կամ կյանք պարգևենք մեր որդիներին»:

Ասաց եւ հետո հայրական գութով նայեց Եսայուն:
Եսայը ժպտաց... Նա կարդացել էր հոր սիրտը արդեն:
Դայրը՝ արծաթված ծանրաբեռ աշուն, իսկ որդին՝ գարուն,
Եթե մեկտեղ են, ամեն մի սառուց կարող են ջարդել:
Դովսեփը երեք մասի բաժանեց իր այրուձիուն.
Մեկ զորագունդը տվեց Արամին, Զանուն՝ օգնական,
Մեկն էլ՝ Արամին՝ կոփիված մարտերուն, օգնական՝ Փանուն.
Երրորդն ինքն առավ, իսկ օգնականը՝ Եսայն առնական,
«Մենք երեք կողմից պիտի հարձակվենք թշնամու վրա,
Դարվածենք թափով, որ հազարացիք մատնվեն խուճապի.
Նրանց փախուստը կդիմավորի Արաքսը վարար.
Նրանց դիերը թող անիծելով մայր գետը լափի»:
Ու երեք մասով այրուձին հառնեց թշնամու դինաց,
Զիերն ունեին պաշտպանող զարդեր ու զանգապաններ,
Այն ո՞վ չգիտեր հայ դարբիներին, հմուտ, բանինաց,
Զինագործներին, որ կռում էին թուր ու վահաններ:
Ամեն մի հեծյալ ունի մի վահան ու երկսայրի թուր,
Նժույգի կուրձքը պաշտպանող կապա, զանգազարդ շղթա:
Սակայն ամենից ահարկու գենքը նրանց սիրտն է հուր,
Եվ բազուկները երբեք չհոգնող, ուժը Դիզակա:
Եվ հսկում էին գետանցը լրին, եղեգնութիւ մեջ,

Եվ անցնում էին գմղերն արաբաց քնկոտ ու թացված,
Վահանավորներ, նիզակավորներ, աղեղնավորներ
Եվ զորապետներ գոռ ու բերանբաց:

Նրանց շարքերում կային փակլեան-ընբշանարտիկներ,
Դրոշներ բազում, անքանակ փողեր, թմբուկ անհանար,
Նիզակակիրներ, նետաձիգներ ու կապարճակիրներ,
Տապարակիրներ ու մեքենաներ՝ պարսպի համար,
Եվ հեծյալները զրահավորված՝ աչքերից բացի,
Ամեն մի ծիու կուրծքն ու գավակը վահանավորված,
Բոլոր ծիերի ճակատին կապած լուսնի մահիկներ,
Փորերի երկու կողմերը պահող տախտակներ փորած:
Ու երբ Արաքսի ջրերում լողաց արեւը աշնան,
Զենքերի փայլից երկինքն արծաթե ծիածան կապեց,
Իշխան Շովետիը թուրը հանելով տվեց հրաման,
Ու երեք կողմից հայոց այրուձին ճամփեքը փակեց,
Եվ առավոտի աչքերի առջեւ սկսվեց մի ջարդ,
Արաքսի ափին հագարաց զորքի արյունն էր հորդում,
Բայց Արդլահը հեծավ նժույգը ու գոչեց հպարտ.

«Կենդանի բռնել գավառապետին եւ նրա որդուն»:
Մարտը թեժացավ, սակայն նեղում էր զորքը Դիզակա,
Թշնամիների սաղավարտները օդն էին թռչուն,
Փշրվում էին բազաններ, վահան, եւ սուր, եւ նիզակ,
Նետերը մնում թունոտ կապարծում:
Ու չին օգնում արաք զորքերին լուսնափայլ գոտին,
Մեջքներին կապած ոսկե նախշերը, որպես թալիսման,
Կապանք էր դարձել հայերից խլված արծաթն ու ոսկին,
Բայց արթուն էին նրանց ուղեղում խալիֆ եւ իման:
Եվ թեժանում էր ճակատամարտը Արաքսի ափին,
Զենքերի շաշը առաքելական երկինքն էր առել,

Յայի ոտքի տակ առասպելաշումչ հողն էր իր պապի,
Խսկ հագարացու թմրած ուղեղում՝ ավար ու ավեր:
Յայը փրկում է օջախն իր արդար, պատիվն իր մաքուր,
Խսկ հագարացին կորցրել է ամոթ, կորցրել է պատիվ,
Յայն իր դաշտերում երազի ափով առաքում է ջուր,
Խսկ հագարացին կրակ է ցանում եւ գիշեր, եւ տիվ:
Յայը իր որդու կյանքն է պաշտպանում, ապրուստը նրա:
Խսկ հագարացին խլում է հացը անգամ փոքրերից,
Յայը իր միակ սերն է նկարել իր սրտի վրա,
Խսկ հագարացին կանայք է խլում անգամ զորքերից:
Յայի երազը Մասիս ու Մոավ, Քիրս ու Արագած,
Խսկ հագարացու խոհերում զնզոց խլված արծաթի,
Յայի սրտի մեջ խաղաղ ապրուստի տենչն է ճառագած,
Խսկ հագարացու հոգում ծփանքը ավարած լաթի:
Ու քանի՛ անգամ զրոյց է բացել Յովսեփի երեցը,
Որի արյան մեջ հյուլեն է եռում հզոր Առանի,
Քանի՛ անգամ են նրան ումկնդրել փոքրը եւ մեծը,
Դիզակից մինչեւ գյուղերն Արրանի:
Սղջիկ է առել գավառապետը միհրանյաններից,
Որ ձուլվել էին հայկազուն ազգին, մերվել, հայացել,
Միհրանյանները վաղոյց են թերվել զրադաշտներից,
Յիսուսի առջեւ իրենց մկրտված սրտերը բացել:
Յովսեփն ամենուր հայտնի էր որպես Դիզակի տերը,
Արրանի կեսն էլ իր աներձագն էր տվել, ոնց ընծա...
Յիմա Արաքսի ափին չոքել է կատաղած նեռը,
Խլել է ուզում Դիզակ աշխարհի արեւի ծնծղան:
Ու եռ է գալիս ուղեղն Յովսեփի, զարկո՞ւմ է, զարկո՞ւմ,
Նրա հարվածը իջնում է ների ուղիղ ճակատին,
Ազից Արամն է, ձախից՝ Արամը թեժ ու ահարկու,

Աքցանի մեջ է առնվում ոստիսը գետի ձախ ափին:
Մինչեւ մայրամուտ հողը ցնցվում է, երկինքը քրտնում,
Եսայը իր հոր աջ կուռն է դարձել, ոտը միշտ ոտին,
Նա հետեւում է նենգ Արդլահին ու ելք որոնում,
Որ թրի ծայրին նրա դավադիր սիրտը խոցուի:
Մարտի մեջ թրին մի զորապիգ է համբերությունը,
Սակայն Եսայը երիտասարդ է... եւ չհամբերեց,
Երբ Արդլահը նոր էր հավաքել իր զորությունը,
Նրան խոցելու անհուն ծարավը Եսայուն գերեց:
Իր ճերմակ ծիուն խթանեց, ճեղքեց ճակատը զորքի,
Ու մի հարվածով տապալեց ծիուց նենգ Արդլահին,
Ճարկահավաքի թիկնապահ գունդը՝ մոտ հազար հոգի,
Ճսկում էր նրան, ինչպես երկնքից իջած ալլահին:
Ծուապ շուրջկալի առան Եսայուն, որի ոտքի տակ
Ընկած էր արդեն արյունաշաղախ Արդլահի դին,
Ճութեփի հանկարծ նկատեց, գոռաց. «Զինվորներ, առաջ»,
Ճագարաց շարքում վտանգի մեջ էր մինուճար որդին:
Ասես կրակ էր նրա կարմիր ծին, հուլը էր, հրեղեն,
Ճեղքեց օղակը հագարաց զորքի, մոտեցավ որդուն,
Խուճապից խրտնած թշնամու գունդը նահանջեց մեկեն,
Եվ հաղթանակի երազած պահը մոտիկ էր արդեն:
Բայց նշանառու զինվորն հագարաց արձակեց նետը,
Ու քիչ էր մնում հասմեր Եսայուն ու սիրտը խոցեր,
Ճութեփի թափով նետի սուր ծայրին ուղղեց իր ծեռքը,
Նրա աչքերից կայծեր դուրս թռան, իսկ սրտից բռցեր:
Ճութեփի կրծքին տեղացին թունոտ նետերը անթիվ,
Ու նա հայացքը իր որդուն հառած տապալվեց գետնին,
Փրկված Եսայը ասես կայծակ էր, շանթ էր ահազին,
Ճոր զորագունդը տանում էր դեպի կեռմանը գետի:

Նա ցատկեց ծիուց եւ հորը առավ ձեռքերի վրա,
Շնուսեփին այլեւս չէր լսում որդուն, չէր տեսնում ոչինչ,
Միայն Արաքսը, որպես լացող մայր, սրտառուչ պահն այդ
Մեղմ օրորում էր ալիքներում ջինջ:
Վեժի հուրը բորբոքվեց ուժով, թափով ավելի,
Արաքսի ափը կարծես թե ներկվեց կարմիրով որդան,
Շագարաց զորքի վերջին գնդերին
Քշում էր դեպի վշտացած գետը զորքը Դիզակա...

Իրիկնամուտին արեւը անցավ թիկունքը Քիրսի,
Արաքսի ափին տիրեց լրություն մի սարսափահար,
Շագարաց զորքը ասես չէր եկել մարդկային որսի,
Լրիվ մարել էր շունչը ուրիշի հողում սրահար:
Դիզակա զորքը թրերը ձեռքին, ցավով անմարուն
Քուն մտավ հոգնած, որ առավոտը շոյի հաղթության,
Կրկին կռվի մեջ արյուն էր հեղվել հայոց աշխարհում,
Շեռու էր վաճնվել կրկին սարսափը ահեղ պարտության:
Ու մայր Արաքսի գոկից բարձրացավ արեւը նորից,
Ուսերի վրա զորքը տուն տարավ ընկած քաջերին,
Աղոթքն էր հնչում Դիզակա ամեն սարից ու ձորից,
Մորմորն էր միխում հարազատների լաց ու կանչերի:
Շնուսեփին բերին Գտիչի վաճնքը, հանձնեցին հողին,
Եսայն արցունքոտ հոր թուրը առավ՝ կոփված մարտերում,
Նրա երդումի ալիքների մեջ շափաղ կա շողի,
Շավատ կա անմեռ, վրեժ աններում:
Արձագանքուն էր նրա խոսքերին պատարագը մեծ,
Դիզակում Աստծո օրինանքն էր առնում կտուր ու տանիք,
Աստղերով լեցուն Շայոց մատյանում այդ օրը գրվեց.
«Շնուսեփը գնաց, եկավ Եսայը իր հորն արժանի»:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ 1 ՀԱՆԴԻՊՈՒՄ

Քիրսա սարի լանջերն ի վեր,
Լանջերն ի վար Քիրսա սարի,
Լիներ ձմեռ, աշուն լիներ,
Որսն էր եռում ամեն տարի:
Աշնանային անտառներում
Կապել էր մի կարմի՛ր-կանա՛չ,
Քաջ Եսայը կեռմաններով
Դուրս էր եկել վայրը ճանաչ:
Տումի գյուղի Որսասարում
Նա կխտարի հետքն էր բռնել,
Յայտնի Թթու ջուրն էր վարում,
Ջորս բոլորը խիտ անտառներ:
Քաջի նետից արյունլվա
Որսն էր հասել ջրափոսին,
Իսկ Եսայը հետքը առած
Միտեցել էր ընկած որսին...
Յանկարծ ջրի հայելու մեջ
Տեսավ պատկեր մի աղջկա,
Խորհեց, գուցե սա աղջիկ չէ,
Այլ հեքիաթի հուրն է, որ կա:
Չհավատաց իր աչքերին,
Խաչակնքեց, նորից նայեց,
Աչքը հառած ալիքներին,
Մեղմիվ ժպտաց ու հմայվեց:
Յետո նայեց մոտիկ ժայռին

Ու քիչ մնաց կապվի լեզուն,
Սա հրա՞շք է, թե՞ վիթ վայրի,
Թե՞ հեքիաթի փերին է լուս:
Նայե՞ց-ժպտաց, ժպտա՞ց-նայեց,
Ճետու հաղորեց.- Ո՞վ ես, աստղիկ:
Վառե՞ց-նայեց, , նայե՞ց-վառեց.
- Մեր սարերում բուսած ծաղիկ:
Իմ աչքերին ես հավատա՞ն,
Թե՞ տեսիլք ես, աղջիկ, ասա:
- Ես տեսիլք չեմ, աղջիկ եմ, կամ:
- Բայց դու ո՞ւմ հետ այստեղ հասար:
- Ճորս հետ եմ եկել ջրի:
- Ո՞ւմ աղջիկն ես, ասա, փերի:
- Գիտե՞ս տոհմը Աբրահամենց:
- Գիտեմ, փերի՞:
- Ես Աղամի աղջիկն եմ, ա՞յ,
Մոտիկ լանջին դարսում է փայտ:
- Տումեցի քաջ տանուտերի՞:
Անունդ ինձ բախչիր, փերի՞:
- Իմ անունը Շուշանիկ է:
- Չեն թաքցնուն, լեռան փերի,
Քեզ սիրողը երջանիկ է:
- Բոլորի՞ն ես
Դիմում այդպես,
Սիրահարվա՞ծ խենթի նման:
- Ո՛չ, աննմա՞ն,
Չգիտեի ինչ է սերը,
Քեզ ուղարկեց սակայն Տերը,
Քեզ ուղարկեց սիրո՞ տեսքով,
Սրտով սիրո՛, սիրո՞ հյուսքով:

- Գլխիս տերը ես չեմ, տղա,
Դե՛, հեռացի՛ր, հայրս կգա:
- Մի՛ վախեցիր դու, Շուշանիկ,
Չո՞ հայրը ինձ կհավաճի,
Հայրդ իմ հոր զինվորյալն էր,
Զինակիցն է այսօր էլ իմ:
...Շուշանիկի հոգում թեթեւ
Մի ծայն հնչեց մեղմ, մտերիմ.
- Մի՞՞թե դու ես քաջ Եսայը:
- Ես եմ, իմ սե՞ր:
...Եվ այդ պահին մոտիկ լանջից
Տանուտերի ձայնը հնչեց,
Շուշանիկը իր հոր կանչից
Զգաստացավ ու խո՞ր շնչեց.
- Այստե՞ղ եմ, հայր, աղբոյին մոտիկ:
- Աղջիկս, եկ, տուն ենք գնում:
Իսկ այդ պահին քիչ էր մնում,
Որ Եսայը գոչի հպարտ,
Թե՛ տանուտեր, աղջիկդ Վարդ
Գերել է ինձ, սիրտս վառել,
Իմ երազն ու հոգին դառել:
Սակայն զսպեց, աղեղն առավ,
Ծարավ ջրի, սիրո ծարավ,
Որսը թողած օգնականին,
Լուր մոտեցավ նա Աղամին,
Ողջագուրվեց որդու նման,
Իսկ Աղամը հոգեհմա,
Գրկեց նրան գորովանքով,
Ողջույնն առավ խոր հարգանքով,
Ասաց.- Մետդ չի վրիպում,

Երբ կխտարը ջուրն էր իջնում,
Սիրտս հուշեց անունը քո:
Որս եք անում հենց երկուսո՞վ:
- Երկուսով չենք,
Նաեւ թուրն ու նետն են ինձ հետ:
Տանուտերը ժպտաց նրան,
Ասաց.- Վերեւ, ժայռի վրա,
Խորովածն է սպասում մեզ,
Երկնայինն է ուղարկել քեզ:
Շուշանիկը կանգնել հոր մոտ,
Փայլվլում էր շուշանահոտ,
Աչքի տակով քաջին նայում,
Երազանքն էր իր փայփայում,
Ուզում էր, որ քաջը մնա,
Յոր հետ մեկտեղ քեֆի գնա:
Իսկ Եսայն էլ սիրուց հարբած,
Շուշանիկի միտքը կարդաց:
- Գնա՞նք,- ասաց,- քեռի՝ Աղամ,
Մենք էլ ունենք մի չաղ կխտար,
Խորովածը շատ լավ բան է:
Թաքուն ժպտաց Շուշանիկը...
Ու բարձրացան ուսը ժայռի,
Սարահարթը մեծ քարայրի,
Բաց արեցին սեղան-սինին,
Փարչից երգեց կարմիր գիճին,
Ցնծություն էր մինչ երեկո,
Զորն էր լցվել տաղ ու երգով:
Երբ արեւը թեքվեց սարին,
Խիտ ստվերը կորավ ժայռի,

Բաժանվեցին քաջերը մեր,
Մի խումբ ելավ անտառն ի վեր,
Դեպի Տումի հերոսածին,
Իսկ Եսայը հեծած իր ձին,
Յոգում վառած տենչեր հազար,
Գնաց դեպի սեզ Տողասար:
Յրաժեշտի ժամին, սակայն,
Յամբուրվեցին երկու հայացք,
Շուշանիկը ժպիտով մեղմ
Շափաղ տվեց Եսայու դեմ,
Արեւի պես սիրտը մտավ,
Իր երազած սերը գտավ,
- Եսայ, ո՞ւր էլ տանես, կգամ:
Իսկ Եսայը լուռ, վերացած,
Զերմ հայացքով նրան ասաց.
- Ես քեզ համար կյա՞նքս կտամ:

ԳԼՈՒԽ 2 ՆՇԱՆԴՐԵՔ

Յաճելի լուրը տարածվեց Տողում,
Որ քաջ իշխանը աղջիկ է ընտրել,
Գտիչը սարից օրինանք էր ցողում,
Զարմանում, թե նա ե՞ր է սեր փնտրել:
Զահել կաղնու պես իշխան Եսայը
Ավիշ էր հյուսում երակների մեջ:
Նմա՞ն էր, շա՞տ էր նման փեսայի,
Աչքերի հուրը փայլում էր անշեց:
Մայրը նշանի զարդերն էր դարսում,
Ընտրում էր մետաքս, ոսկե մատանի,

Ծիածանվել էր աշունը դրսում,
Երկինքն էր փայլում ոնց կապույտ տանիք:
Տունուց մինչեւ Տող թեւում էր լուրը,
Կամուրջ են հյուսում երկու գերդաստան,
Աղոթք էր դարձել եւ Թթու ջուրը,
Որպես զույգերի հանդիպման վկան:
Սուրբ Դիզափայտը ժպտում էր Քիրսին,
Որպես սրբազան՝ ձեռքին բուրվառը,
Աշնան երփներանգ գորգերը ուսին
Աչքալուսանք էր հղում Թարթառը:
Յոռեկա վանքը՝ զույգը Գտիչի,
Որպես դարավոր քույրը անձնվեր,
Ծաղկած փորձառու ձեռքով գրիչի,
Ավետարանն էր ուղարկել նվեր:
Ամբողջ Արցախը խնդության մեջ էր,
Ցնծում էր որդու նշանդրեքով,
Եսայու հորը այն ո՞վ չգիտեր,
Ո՞վ չէր հմայվել նրա շքերթով:
Յիմա Արցախի հարավակողմում,
Յաւնել է իր հոր արժանի որդին,
Նա էլ հոր նման հայրենի հողում
Չի թողնի երբեք սեւ ամպը չոքի:
Աչքալուսանքը թեւին է տալիս,
Երկնից աստղեր է խլում Եսայը,
Փեշերն Արցախի իրար են գալիս.
Ու փօռում ճամփին նորափեսայի:
Աշնան երեկոն իջնում է դանդաղ,
Եսայը խմբով գնում է Տունի,
Գյուղում ուրախ են մշակ ու հոտաղ,

Նշանդրեք չե, խնդություն է մի:
Աղամի տանն են... Շուշանիկը լուռ
Սպասում է հոր մտերմիկ կանչին,
Արցախ աշխարհում աղաթ կա հնուց,
Ինչքան էլ ջահել աղջիկն անաչի,
Պետք է խոստանա, որ դեմ չէ հորը,
Որ իր սրտովն է փեսացուն ընտրած,
Որ ինչքան ծանր անցնի իր օրը,
Յավատարիմ է մնալու նրան...
Եվ հարսնահայրը կանչեց աղջկան,
Շուշանը շիկնեց հոր դեմ ինչպես նուռ...
- Աղջիկս,- ասաց,- այս մարդիկ վկա,
Դու հավանո՞ւմ ես իշխան Եսայուն:
Շուշանը նայեց քաջի աչքերին,
Յայացքով մտավ սիրտը ու կարդաց...
- Ե՞րբ եմ դեմ եղել իմ հոր խոսքերին,
Յայրիկիս կամքը իմ կամքն է,- ասաց:
- Ապրե՞ս, աղջիկս,- շոյվեց Աղամը,-
Կրկնակի շոյվեց Եսայը արի:
Մինչեւ արշալույս Աղամի տանը
Մրցահանդես էր երգի ու պարի:
Մասնակցում էին նշանդրերին
Բարեկամները՝ բոլորն էլ ազատ,
Եսայու մայրը եւ Ավան քերին,
Յորեղբայր Սեթը, որդին պայազատ:
Արեւի քույրն է Շուշանիկն ասես,
Ծափաղ էր տալիս գարնան վարդի պես:
Եսայու մայրը մոտեցավ նրան,
Թաճկ նվերները մեծ սինու վրա:

Ընծայեց նախ մի ոսկե մատանի,
Ասաց. «Մայրիկը քո ցավը տանի,
Ոսկու պես լինես իմ որդու համար,
Ինձ էլ ընդունես ոնց հարազատ մայր»:
Ընծայեց արծաթ-ոսկենախշ գոտի,
Ասաց. «Թռող լինեք միշտ իրար կողքի»:
Բազուկին հագցրեց նուրբ ապարանջան,
Ասաց. «Իրարից լսեք միայն ջան»:
Նվիրեց մետաքս եւ ականջօղեր,
Ասաց. «Իմ որդուն պարզեւես շողե՞ր»:
Ընծայեց փայլուն մի ոսկե շղթա,
Ասաց. «Ի՞նչ ուզես, Վերի՞նը քեզ տա»:
Սիմիհց վերցրեց ոսկե զարդասեղ,
Ասաց. «Մաղթում եմ քեզ պատիկ ու սեր»:
Յետո նվիրեց ուլունքներ շողուն,
Ասաց. «Զեր կյանքը անցնի միշտ Տողում:
Այսուհետեւ ինձ ի՞նչ է հարկավոր,
Մի գեղեցիկ հարս, այն էլ հարգեւոր:
Քեզ շա՞տ է հավան Եսայս, Շուշան,
Միշտ ծաղկես, ինչպես բուրավետ շուշան,
Մեր մի օջախը թող տասը դառնա,
Դիզակը քեզնով միշտ հպարտանա»:
Բերկրանքի ծովն էր ծփում այդ ժամին,
Գովեստն էր թեւում՝ քաջին արժանի,
Մեր տվին իրար եւ առան թեւեր,
Զոհերին ոտքի վրա հիշեցին,
Խորհուրդների մեջ իմաստուն ու ջերմ,
Նաեւ հարսանքի օրը նշեցին:

ԳԼՈՒԽ 3

ԵՐԱԶ

Այս գիշեր երազ տեսա, իմ Եսայ,
Մի ծանր երազ...
Թեւածում էի Տողասարն ի վար,
Ներքեւում կիրճն էր ու ձորը խավար,
Անդունդը իր լայն երախը բացել,
Վիշապ էր դարձել,
Շուրջպար էր անուն,
Կրակներ հանուն:
Ես թռչում էի իմ հարսնաշորում,
Վիշապը կուլ էր տալիս ինձ ձորում,
Դու քո նժույգով սլացար վերից,
Կայծակ էր շողում քո ամեն թելից,
Թուրն առած իջար Տողասարն ի վար,
Ինձ քո արծվային թեւերին առար,
Ճասցրիր Գտիչի կամարների տակ,
Քրտինքն էր ցողում քո ճակատին տաք,
Ճետո կապեցիր քո արծաթ գոտին,
Ինձ նստեցրիր նժույգին, կողքիդ,
Նժույգդ, Եսայ, առել էր թեւեր,
Ղեպի երկինք էր թռչում, դեպի վեր:
Ճերմակ ամպերը մնացին ներքեւ,
Աշխարհն արեւի հրով էր ներկվել,
Մենք հասանք նրան՝ Վերին Միակին,
Մոտը Որդին էր,
Իսկ դեմք՝ Ճոգին...
Մեզ նստեցրին ամպին, իրենց քով,
Եվ ողջունեցին մեկտեղ՝ երեքով,

Յայրը ջրդեղեց թուրդ պողպատե,
իսկ որդին օծեց նորեփի մեռնոնվ,
իր հոգով Յոգին
Զինեց քո ոգին:
Միակը ձախից, իսկ Որդին աջից
Եկան, բիլազուկ հազցրին քո աջին,
Ասացին թուրդ կլինի հատու,
Խոսքդ արարող,
Յոգիդ լուսատու:
Եվ գանգուրներիդ
Յաղթության պսակ դրին ժպտադեմ,
Ասացին. «Երկիր ունես՝ մի եղեմ,
Կխուժեն ձախից, կխուժեն աջից,
Պարտություն երբեք չի լինի աջիդ,
Յետո սուրբ Որդին,
Բուրվառը ձեռքին,
Եկավ, երկուսիս մազերը շոյեց,
Սրտաբուխ ու ջերմ մեր սերը գովեց,
Քեզ դիմեց.- Տե՞՞ն ես:
- Տե՞՞ն ես,- ինձ հարցրեց:
- Տեր ենք,- ասացինք:
Նա մեզ սրբության ծիրանի հազցրեց
Ու մեղմ շշնչաց.
- Դուք դառնալու եք
Յարգված պապ ու տատ,
Օջախով ամուր
Ու պարսպապատ:
Արցախը ձեզնից դաս է առնելու,
Ձեր սերը մի սուրբ թաս է դառնալու,
Ու ձեր պատկերի առաջ փառավոր,

Խոնարհվելու են սերունդները նոր:
Ես հուզված ու լուր կանգնել թեւիդ տակ,
Քեզ ժպտում էի ինչպես հրեշտակ:
Մոտեցավ ժամը մեր հրաժեշտի,
Վայրէջքը այնպես թե՛ թեւ էր, հեշտի՞ն,
Զիուդ թեւերին հասանք Տողասար:
Այս ի՞նչ երազ է, իմ Եսա՞յ, ասա՞:
- Բարի երազ է, իմ լավ Շուշանիկ,
Աստված չարիքը թող հեռո՞ւ տանի:

ԳԼՈՒԽ 4 ՀԱՐՍԱՆԻՔ

Եվ աշնան մի օր հարսանիք արին,
Շիկնել էր հոգին Դիզակ աշխարհի,
Դիզափայտը մեղմ սաղմոս էր կարդում,
Քիրսը բերկրանքից աչքը չէր թարթում,
Արաքսից մինչեւ խենթ Իշխանագետ,
Օրինության լույսն էր փայլում հույսի հետ:

Նվազն էր հնչում աղջկա տանը,
Ոտքի վրա էր մեծ գերդաստանը,
Եկել էր գյուղը՝ թագավորանիստ,
Պատվասեր, հպարտ ու բարքերով խիստ:
Փեսայի տնից մակարներ մի խումբ,
Եկել են՝ հեծած ձիեր հրեղեն,
Հանաք չէ, նրանք դարձած մի մեծ գունդ,
Եսայու համար հարս պիտի տանեն,
Կրակ են կտրել, երգում են, պարում,

Յարս ու փեսային գովում են անվերջ,
Թամադան բեխի ծայրն է ոլորում,
Յարսանքում չկա ոչ կրիվ, ոչ վեճ:
Յրձվանքը մեկ է, հիացմունքը՝ մեկ,
Սրտերն իիրավի, գտել են իրար,
Մեկտեղ են հնչում գովասանք ու երգ,
Չի ճնշում Աղամն իր կամքի վրա:
Նա հայրն է համեստ իր Շուշանիկի,
Կդառնա նաեւ հայրը Եսայի,
Քաջն Յովսեփի զինակիցն էր նա,
Խորհրդատուն է հիմա փեսայի:
Ընկեր-բարեկամ թող լավ իմանան,
Որ Աղամը իր փեսայի հետ է,
Փորձն ու եռանդը երբ որ միանան,
Սարեր շուր կտան, կթեքեն գետե՞ր:
Երջանկությունն է եռում հարսանքում,
Խոսքն է թեւածում, հնչում են երգեր,
Մինչեւ լուս աստղուտ երկինքն է հարբում,
Տումին է պարում ոնց աղջկա տեր...
Երբ առավոտը մոր ննան ժպտաց,
Թամադան «Բարի ճամփան» իր ասաց,
Յարսանքատնից դուրս եկան մարդիկ,
Իսկ մակարները մի-մի քաջ մարտիկ,
Ղեռ ցնծում էին Աղամի բակում,
Ուղեկցողներին շուրջը հավաքում,
Քննարկում էին, թե որ գյուղերով,
Որ ճանապարհով ու որ հյուղերով,
Պար ու նվագով, երգով հուսատու,
Յարս ու փեսային պիտի հասցնեն տուն,
Ով պիտի նստի օժիտի վրա:

Այդպես խոսելով, լսելով իրար,
Նշեցին ճամփան եւ բակերը այն,
Ուր պիտի կանգնեն եւ ուրախանան:
Երբ փեսան հարսին տնից բակ տարավ,
Շուշանիկի մոր սիրտը ջուր դառավ,
Լացեց, համբուրեց թշերն աղջկա,
Յետո տանուտեր Ադամը եկավ,
Կնոջը շոյեց հաղթական ուսով,
Ասաց. «Աղջիկս, կապրես նամուսո՞վ,
Պարզերե՞ս կանես քո հոր օջախը,
Յամ էլ չի սազում տումեցուն վախը,
Ես հավատո՞ւմ եմ իմ Շուշանիկին,
Նա շա՞տ է ննան իր քաջ հայրիկին»:
Եվ ապա նանը մոտեցավ նրան,
Արցունքի շիթեր այտերի վրա,
Օրինեց իր թոռան ճանապարհը նոր,
Ասաց. «Կիսնդրեմ Աստծուց ամեն օր,
Որ թմփիկ ու ժիր մանկանց տեր դառնաք
Ու երկուսով մի բարձի ծերանաք»:
Եվ Ներսես քերին իր զուռնան զլեց,
Կարոտի մի երգ սարերում ծլեց.
«Վո՞ւ ամա՞ն, աղե՞ ջան, տանո՞ւմ են,
Յորի՞ց-մորի՞ց հանո՞ւմ են»:
Ուղեկցողների քարվանը շարժվեց,
Դեպի Սոխորենես ծգվեց մայրուղին,
Ու հետո ճամփան իջավ ու փարվեց
Տողի աջ թելին՝ Յակակու զյուղին:
Յակակու զյուղից ելավ Մեծ Թաղեր,
ճանապարհներին նվագ ու տաղ էր,
Յարազատները սովորությամբ իին,

Ընծաներ էին նվիրում գույգին.
Ակաթն ակերում
Արծաթե գոտի,
Մետաքս ու կերպաս՝
Արցախյան գորգին,
Գույնզգույն գուլպա,
Գոհար ու մարջան,
Ոսկեհուռ շղթա
Եվ ապարանջան:
Ով ինչ կարող էր, ում սիրտն ինչ ուզեր,
Ընծա էր բերում՝ հետը խինդ ու սեր:
Երգ ու նվազով Գտիչ բարձրացան,
Դարազատները իրարով անցան,
Այան փարվել էր նորընծա հարսին,
Մայրը նայում էր նրա թուխս վարսին
Եվ աստեղնալից աչքերում նրա
Կարդում, որ գույգը գտել են իրար,
Որ մեկմեկու միշտ կդառնան նեցուկ:
Փեսա եւ քավոր հարսին թեւանցուկ,
Քայլում են դեպի տունը Եսայու,
Ակսեն ձեռքին է տիրամայր այու,
Որ դնում է նոր հարսի ոտքի տակ,
Եվ փշրվում է ամանը ճաք-ճաք,
Որպես դարերից եկող մի նշան,
Բարության, սիրո խորհրդանշան:
Իսկ մայրը առաջ ընկույզ ու դրամ
Առատ ցանում է Գտիչի դռան,
Ասես աստղեր է ցանում նա վերից,
Արծաթ դրամն է փայլում արեւից,
Պատանիներն են հավաքում ուրախ,
Օրինանք ու ժայիտ շրթերի վրա:

Ու երբ թեւերը փոքց երեկոն,
Աստծո դռները երբ մուրն էր բակում,
Զուռնաշիների խումբը՝ երեքով,
Ազդարարեց հին Գտիչի բակում,
Որ հարսանեկան մեծ խրախճանը
Շարունակվում է տղայի տանը:

Դուդուկն էր հնչում մերթ բախտոտ, մերթ ժիր,
Յոգու ծփանք էր ու սրտի թրթիռ,
Մեծ Թաղեր գյուղից,
Չիթչանի հյուղից,
Եկել էր հայտնի խումբը գուսանի,
Տարեցը խոսքը տալիս է սանին,
Սանը առնում է փանդիռը իր նուրբ,
Խփում լարերին, երգում սրտաբուխ.
«Դառնա՞մ գովե՞մ քաջ Եսայու
Բազկի՛ ո՞ւժը, զա՞րկը թրի՛:
Ճանդում լինի, լինի սարում,
Գետի ափին, թե աղբյուրի,
Մանուկները խա՞ղ են խաղում,
Աղջիկները զիլ ծիծաղո՞ւմ,
Քաղիանում են արտը կանայք,
Այգի՞ ջրում, անում չանա՞ք,
Երգում ուրախ
Եվ հնայուն,
Ո՞ւմ շնորհիվ,
Մեր Եսայո՞ւ:
Ո՞վ Արաքսի շամբուտ ափին

Խոցեց կուրծքը Աբդլահի,
Չար թշնամին ջարդվեց, փախավ,
Փրկվեց հողը մեր Արցախսա:
Մեր քաղցրաբառ Յայաստանում,
Ում աճվամբ են հպարտանում:
Մեր Եսայու,
Քաջ Եսայու:
Նա մեզ թիկունք, նա մեզ սատա՞ր,
Նրա ուժին, կամքին մատաղ:
Այսօր երգ ենք երգում այստեղ,
Վաղը պիտի կռվենք մեկտեղ,
Արարի դեմ՝ արյան ծարավ,
Պարսիկի դեմ՝ չարին ծառա,
Մեկտեղ պիտի հողը փրկենք,
Թե հարկ լինի, մահը գրկենք,
Որ դարերում հավերժանա
Յայոց հողը մեր մանանա:
Աստված չարը հեռու տանի
ճանապարհից մեր իշխանի...
Նա մեզ թիկունք, նա մեզ սատա՞ր,
Նրա ուժին, կամքին մատաղ»:
Սանից խոսքն է անցնում մեծին՝
Գուսանների մեջ երեցին:
Նրա քնքուշ մատների տակ
Մեղեդին է հնչում հստակ,
Տաքացնում սիրս ու հոգի
Ու բաց անում երգի ոգին.
«Դառնա՞մ իիշեմ, ողորմի՞ տաճ
Ապ ու պապին Եսայու տաճ,
Մարտիրոսված հո՞րը նրա:

Աչքալուսանք՝ մո՞րը նրա,
Նրա տատի՛ն խանում-խաթում,
Որ օրինում է օջախ ու տուն:
Գերդաստանն այս առանշահիկ,
Թող բարձրյալ Աստված պահի:
Դայոց քաջեր, խմենք գինին:
Թող բոլորի սրտով լինի»:
Ու փրկորում է մաճառը թունդ
Կավից թրծած թասերի մեջ,
Դավատարիմ մի զորագունդ
Դյուրն է ընպում սիրով անշեց:
Ու կենացի վրա քաջի,
Ակնաղբյուրցի տանտեր Խաչին
Լուր է հայտնում մի հաճելի,
Որ զուռնաչի Ներսես քեռին
Դյուսել է մի պարեղանակ,
Դե՛հ, ուրեմն ուրախանանք,
Մեղեղի՛ չէ, հրա՛շք է մի,
Այն կոչվում է «Շուշանիկի՛»:
Փարված լուսե իր հույզերին,
Նվազում է Ներսես քեռին,
Նվագ չէ դա, սարի հո՛վ է,
Յարին փարվող գարնան զո՞վ է,
Ե՛վ կարո՞տ է, ե՛ւ տրտմությո՞ւն,
Յրե ե՞ռք է, ուրախությո՞ւն,
Սիրո կա՞նչ է, սիրո երա՞զ,
Նվիրո՞ւմ է, կարմիր մոլորա՞զ...
Ու նվագի տակ քնքշալուր,
Վեր է կենում քավորը լուռ,
Թամադային ժպտում բարի,

Յարս ու փեսին կանչում պարի:
Ու պարում են մե՞ղմ, թեւաբա՞ց,
Աչքով իրար համբուրելով,
Իրարից գոհ ու սրտաբաց,
Խոհերի մեջ գուրգուրելով:
Յեսո պարի մեջ են մտնում
Ընկերները սիրող զույգի,
Կարապներ են ասես երկնում՝
Նազանքի մեջ ու պսույտի:
Թեւ է առել Գտիչը սեզ,
Բերկրանքը մեկ ու խոսքը մեկ:

Ու պարում եին իշխան ու ռամիկ,
Սիրո մեծ տոն էր, ոչ թե հարսանիք:
Բայց տոն էր նաև զինավարժության,
Ալեկոծված էր սիրտը Յայոց տան,
Բուղան չոքել էր Վասպուրականում,
Արյուն էր ու մահ ողջ լեռնաստանում,
Լուրը հասել էր Արեւելաց կողմ,
Որ կատաղել է Բուղան ինչպես հողմ,
Վառելով անգամ անտառները մութ,
Յայոց երկիրն է ավերում անգութ,
Արցախը ծառս էր եղել ալեկոծ,
Բուղան գալիս էր ինչպես թունոտ օձ:
Դիզակն՝ Արցախի դարպասը ամուր,
Արցախը՝ Յայոց Աղվանքի կտուր,
Զայն էին տալիս մայր Յայաստանին.
- Մենք զավակնե՞րն ենք հայկան Առանի,
Զարամիտ Բուղան թող գա դեպի մեզ,

Մենք նրա միջից կանենք երկու կես:
...իշխան Եսայը գիտեր այդ նասին.
Երբ կենացն էին խմում միասին,
Բարձրացավ տեղից խորին հարգանքով,
Ողջույն ընծայեց պապական կարգով,
Ժպտաց ինքնարուխ եւ վստահելի,
Յարսանքում եղած ահել-ջահելին.
- Շնորհակալ եմ, իմ հարազատներ,
Արցախ աշխարհի քաջ պայազատներ,
Մեր այս լեռներում, ամպերից էլ վեր
Բարձրացնենք սիրով գավաթները մեր,
Խմենք կենացը արցախցիների,
Որոնք ոստիսին երբեք չեն ների,
Մեր ոտքերի տակ կչոքի Բուղան,
Ոնց փղի վրա հաջող շամ թուլան:
Եսայու խոսքից այս շանթակուտակ
Սկիզբ առավ մի ծաղրատոն կատակ,
Ահել ու ջահել, աղջիկ, պատանի՝,
Խոսքն էին կրկնում իրենց իշխանի.
«Մեր ոտքերի տակ կչոքի Բուղան,
Ոնց փղի վրա հաջող շամ թուլան»:
Շուշանը եւս միացավ նրանց,
Շիկնել էր ինչպես արեւը գարնան,
Բայց նրա սրտում մի տագնապ սողաց,
Յոր խոսքը հիշեց, տրտունջն իմաստուն.
- Մենք չենք ունեցել երբեք խաղաղ քուն,
Կովում փառք ու նահ մեկ են շառաչուն,
Թուրն իշխան-մշակ-սեր չի ճանաչուն:
Նա խորհում էր այս խոսքերի վրա,
Եվ հենց այդ պահին Եսայը Ելավ,

Բոնեց նուրբ ծեռքից մատներով իր տաք
Ու պարի կանչեց թեժ նվազի տակ:
Թվում էր, երգն էր իշխում աշխարհում,
Ոչ թե այս զույգը, Գտիչն էր պարում
Յոգում օրինանքը սրբազան խաչի,
Զեռքերում ուժը պսակվող քաջի...

ԳԼՈՒԽ 5 ՄԱՆԿԱՆ ՃԻՇՑ

Թեւին տվեց տարին, անցավ,
Կանաչեցին ժայռ ու անձավ,
Եսայու մոտ եկավ այան,
Ասաց... թոռս արդեն հեր ա,
Տղա՛ ունի գանգրագիսակ,
Ոտքերի տակ անպարտ Դիզակ:
Մայրն էլ ասաց.- Այ իմ որդի,
Թող լուս դաշնա հորդ հոգին,
Որ տղա թռ՛ն ունի արդեն:
Յայրդ մի օր գենքը կապեց,
Եկավ մոտս ու շշնչաց.
- Մի իղձ ունեմ... Թեւատարած
Թունիկս գար եւ ինձ փարվեր,
Ին պողպատե թուրը առներ,
Խաղացներ ոնց խաղալիք
Ու ծիծաղեր ալի՞ք-ալի՞ք,
Զայնը հասներ Արարստան,
Յաստատեր, որ կա՛ Յայաստան,
Որ ծնվում են Յայկ ու Վարդան,
Թե՛ Արցախում, թե՛ Սասնա տանն:

Որ չի մարել օջախը մեր,
Որ միշտ կապրի Արցախը մեր:
Շնորհավո՞ր, ա՞յ իմ որդի,
Թող լո՞ւս դառնա հորդ հոգին:
Ինանա, որ մենակ չես դու,
Որ գործի մեջ լինես, մարտում,
Թիկունք ունես, ունես թեւեր,
Որ կարող ես ազատ թեւել:
Եսայն ուրախ շոյեց մորը,
Յիշեց պապին, հիշեց հորը,
Յետո գրկեց տատին պառավ,
Գտիչ վաճքի ներսը տարավ,
Մոներ վառեց եւ աղոթեց,
Յետո սրբի առաջ չոքեց,
Յայացքը վեր, դեպի գմբեթ,
Կոպերի տակ երազ-շքերք,
Մեղմ շշնջաց ինքնավստահ,
Որ Վերինը ճանապարի տա
Միայն լավին, միայն բարուն,
Իր Յայաստան լեռնաշխարհում
Ավելացնի ուժը բազկի,
Անձրեւ մաղի խոտ ու հասկին,
Իր օջախը սիրի-շահի,
Որդուն առողջ ու քաջ պահի,
Յոգս չքերի պառավ նանին,
Վիշտը մորից հեռու տանի,
Յազարացոց ճանփան փակի,
Յոր պես նայի իր Դիզակին:
Շուշանիկն էլ ապրի երկար,

Զեռքին մետաքս ու ոսկեկար:
Աղոթելուց հետո ելավ,
Սրբազնն էլ խաչը բերավ,
Կրկին օրինեց քաջ Եսայուն,
Աստվածամոր տեսքով այուն,
Ասաց. «Տերը մեզ հետ է միշտ,
Նրա առաջ արդա՞ր ենք, ճիշտ,
Կպահպանի երկիրն Հայոց,
Եվ չենք տեսնի էլ ցավ ու կոծ»:
Սրբազնի օրինանքն առած,
Աստծո հույսը սրտում վառած,
Զեռքը նանի թեւատակին,
Նա դուրս եկավ Գտչավանքից,
Շրբի վրա ժպիտ բարի,
Ոնց արեւը՝ Տողասարին:
Հետո կանչեց քահանային,
Ասաց. «Տեր հայր, նորածինին
Պիտի կնքենք, կոչենք Մովսես,
Թող նա էլ ոնց Խորենացին
Մի անմարում աստղ դառնա
Մեր սարերում Երկնագնա»:
...Լուրն այդ հասավ խալիքաթին՝
Բույնը ճահվան ու չարիքի:
Արաբական սովորությանը
Եվ խալիքի կեղծ օրինությանը
Քաջ Եսայուն այդուհետեւ
Հագարացի, պարսիկ թե հայ
Անվանեցին ապու Մուսե,
Ասել է թե Մովսեսի հայր...

ԳԼՈՒԽ 6

ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ

Դիզակը մեծ, հոգսերը շատ,
Կարճ է աշունն արեւաշատ,
Այգեկութի եռուն ժամն է,
Մոտն էլ արդեն վար ու ցանն է,
Ալյուր է պետք ձմռան համար,
Սպասում է գործն անհամար,
Ածեցրել են բարիք ու բերք,
Մառանները լցնել է պետք:
Պիտի շրջել ողջ գավառում,
Տեսնել ոնց են գործը վարում,
Ով չի կալսել հնձած արտը,
Ով չի բերել ձմռան փայտը,
Ով չի հարկը իր վճարել,
Ում են ծեծել, ում չարչարել,
Ով է հանգիստ նստած տանը,
Անտեր թողած անդաստանը:
Տեսնել ինչքան հարսանիք կա,
Քանի ճիչ է լսվում մանկան,
Կյանք է մահվան-ծնունդի՝ երթ,
Տարին բոլոր հոգսը շերտ-շերտ...
Տողից ելել իր շքերթով,
Ողջ գյուղերն է շրջել հերթով,
Եղել է մոտ Դրախտիկում,
Ազոխում ու Մուշկերանքում,
ճամփան ձգել դեպի Ճարավ,
Շուքով մտել մոտիկ Ճարար,
Ճետո իշել իհն Զրարփի,

Շրջել Արաքս գետի ափին,
Յանզստացել Յորադիզում,
Որտեղ բամբակն էին դիզում՝
Յյուրընկալվել շեն Սահառում՝
Վերջին սահմանն իր գավառում,
Ամենուրեք հորճ են հիշել,
Որդիական վիշտը կիսել,
Յարցմունք արել, նստել, խոսել,
Նրանց վիշտն ու ցավը կիսել,
Յաց է կտրել շատերի հետ,
Կերել խնջոնց, ավլուկ, փիփերք,
ճաշակել է մի տեղ թանով,
Մի տեղ խաչի՝ չորաթանով,
Մի տեղ կուրկուտ ու լոբածաշ,
Մի տեղ փլավ ու կճեխաշ,
Մի այգու մեջ հոնի կաթուկ,
Մի օջախում՝ մոշաթթու,
Մի տեղ որսի թարմ խորոված,
Կանաչ լորի՝ լավ սխտորած,
Մի ավանում՝ ժանգյալով հաց,
Միշտ ժպտադեմ ու սրտաբաց:
Կարճ է խոսել, չի սիրել ճառ,
Խնճել է մի գավաթ մաճառ,
Խնդրել Աստծուն բարեհամբույր,
Որ չանտեսի սեր ու համբույր,
Դիզակին լավ աչքով նայի,
Բերք ու բարիք չխնայի...
Մտել է եւ վաճք, ժամատուն,
Ինչպես հայրը իր ինաստուն,

Նշել հոգսը ժամանակի,
Թե ոնց դաժան իր բանակին
Դեպի Տող է քշում Բուղան,
Որի առաջ պետք չէ սողալ,
Պետք է խմբվել, դառնալ բռունցք,
Եվ անել միշտ ոսոխի հունձք,
Որ հասկանա մեր թշնամին,
Որ մենք հողմ ենք, ոչ թե քամի:
Պիտի պատրաստ լինենք դրան,
Կատաղել է արդեն Բուղան,
Չի խնայում նա ոչ ոքի,
Դիվային է նրա հոգին,
Սատանա կա ամեն պոզին,
Պիտի ջարուենք մենք այդ բոզին...
Եվ ռամիկ, ազատանի
Խոսքն են լսել քաջ իշխանի,
Խոսքն են լսել ու ողջումել,
Որ իրենք գենք, զրահ ունեն,
Յենց որ լինի զորահավաք,
Պատրաստ կգան Գտիչավանք:
Եվ շրջելով ողջ գավառը,
Զահել իշխան-զորավարը
Յասել է իր նստատեղին՝
Զեռքը՝ թրին, մատը՝ բեղին:
Ջյունն էր նստել Քիրսա սարին,
Եղյամ իջել Տողասարին,
Օդն էր փայլում ոնց շողակաթ,
Սկսվել էր ձմեռն հեքիաթ...

ՍԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԳԼՈՒԽ 1
ԴԵՊԻ ՏՈԴ

«Ի՞նչ է Պարտավը, Պարտավը ի՞նչ է, մի խեղճ խաղալիք,
Գնդեր իմ անթիվ, ալեկոծվեցեք ալիք առ ալիք,
Պարտավն ավերեք, փշրեցեք թեւը Դայոց Աղվանքի,
Մոխիր դարձրեք քարե պատերը մատուր ու վանքի,
Զնջեցեք իսպառ հպարտ Ուտիքը՝ սիրտը Արրանի,
Անգամ անունը ջնջեցեք հիմքից Փայտակարանի:
Եվ հետո հերթը կգա Արցախին՝ այդ Վիշապահող,
Որի դարպասը Դիզակն է գոռոզ ու երկաթակող:
Ղե, իմ զինվորներ, դեպի Տող, դեպի Վանքը Եսայու,
Գարնանը պիտի տեսնենք արցունքը նրա խեղճ այու»:
Այդպես հոխորտաց մայիսյան մի օր արնախում Բուղան,
Եվ նրա ձայնից ոչ միայն զորքը, սարու անգամ դողաց,
Նրանց ոտքի տակ մոխրանում էին շեները մեկ-մեկ,
Ճարճատում էին գյուղերից ելնող կրակները շեկ,
Մի ճենճերահոտ երկինքն էր բռնել Ուտիքի հողում,
Արյունից հարբած նենգ ոստիկանի հոգին էր շողում:
Բյուր հազար զորքը ննան էր սոված գայի ոհնակի,
Ավար-ոսկու դեմ Բուղան աչքերն էր չոել զարմանքից,
Ում գերում էին, դարձնում էին բրերի հեսան,
Ով որ ուժեղ էր, սայլն էին լծուն փոխարեն եզան,
Ծերերին, մանկանց գլխատում էին, ծորերը նետում,
Իսկ դիմադրող վարդ աղջիկների մազերը փետտում:
Սպանդանոց էր ամբողջ Ուտիքը, երկրային դժոխք,
Ծուխն այնքան խիտ էր, որ ծածկվել էին արեգակ ու շողք,
Իր սեւ նժույգին Բուղան էր ծչում ինչպես լեշակեր.
«Դայոց երկիրը պետք է դարձնեմ անզոների կեր,

Սուշում հայերը սրախող արին մեր ոստիկանին,
Վերջին փետուրը հողմերին կտամ ես Յայատանի,
Սուշում նետահար Յուսուֆի հոգին թող լավ ինանա,
Որ իր զինակից Բուղայի թրին սուր չի դիմանա»:
Թափում էր թույնը, ծին սանձահարում Բուղան ինչպես դեւ,
Երազում, որ քաջ Եսայու մայրը շուտով հագնի սեւ:
Այդպես գազազած, ինչպես բորենի, սակայն սիրտը՝ դող,
Բուղայի գորքը Ուտիքը թողած, եկավ, հասավ Տող:

ԳԼՈՒԽ 2

ՅՈՒՍՈՐՏԱՍՔ

«Իմ ուժի դեմ ժայռն ի՞նչ է որ,
Սարը պիտի գլուխ թեքի,
Դեռ չի եղել Աստծո մի օր,
Որ իմ սուրը մարդ չըերթի:
Եսայուն է հերթը հասել,
Վայըս նրա ծնող մորը,
Գանգուրները պիտի պահեմ,
Լեշը նետեմ անտակ հորը»:
Այդպես դաժան, այդպես վայրի,
Զայնն է ինչում չար Բուղայի,
Գազանը չէր հանգստանում,
Գավառի մեջ ու ոստանում,
Մի տեղ քերթում, մի տեղ դիզում,
Մի տեղ չոքած ոտք էր լիզում,
Մի տեղ իշխող ու հալածող,
Մի տեղ շան պես վճաստացող,
Ուղեղի մեջ բութ, խելազար,
Խոճնվել էր մի ողջ աշխարհ,

Թուրը դեմ էր առել ժայռի,
Խաչվել սրին մի քաջ այրի,
Որին Տերն է շնորհ բերել,
Մեծ Առանի զարմից սերել,
Ասել. «Կաթդ արժան է քեզ,
Պիտի կռվես դու Դայկի պես,
Ծնկի բերես գոռ Բելերին,
Քեզ հես եմ ես՝ Տերըս վերին:
Ինչ էլ լինի, ցավդ ինձ ասա,
Իմ հողեղեն, իմ քաջ Եսայ»:
...Բուղային հ՝նչ, Բուղան ա՝հ է,
Բուղան՝ արյո՛ւն, Բուղան մա՝հ է,
Բուղան՝ ավա՛ր, Բուղան՝ ավե՛ր,
Չի՛ ճանաչում ոչ ուժ, ոչ Տեր:
Մեծ խալիֆն է Տերը նրա,
Որ մեղաշատ երկրի վրա
Արարել է օրենքը իր.
«Մորթիր, վառիր, միայն տիրիր,
Ուսկի չունես, ուրիշինն առ,
Մեկը քիչ է, յոթը կին առ,
Ցորեն, գարի խլիր ու բեր,
Դու ծառա չես, այլ իշխող տեր,
Պիտի կռվի հրով անցնես,
Անհավատին շղթա հազցնես,
Խլես ինչքը, խլես որդուն,
Կրակ դառնաս, հեղեղ հորդուն,
Ողջ աշխարհը իինքից վառես,
Չենթարկվողին թրահարես,
Զարդես, մետես մահվան դատին,
Որ վերջում գա քո հավատին»:

Այս արմահոտ մտքերի մեջ
Բուղան մահ էր գոչում անվերջ,
Մահ՝ փոքրերին, մեծերին՝ մահ,
Գերվածներին սարսափ ու ահ,
Իսկ բարձրաբերձ Տողա քերծում,
Դայ Եսայուն՝ մորթազերծում:

ԳԼՈՒ 3 ՃԱԿԱՏԱՄԱՐՏ

Դավերժական իր գահին Գտիչ վանքը Աստծոն հետ
Զրուցում է, աղոթում, շրթին սաղմոս եւ օրինանք,
Իսկ նրա սուրբ ոտքի տակ Տողասարը ինչպես թերդ,
Կանաչ շորեր է հագել՝ դարձած հավատ ու տքնանք:
Քաջ Եսայու զորքերը լեռան գագաթն են ելել,
Շանթ ու կայժակ է շողում նրանց թրի շառաչից,
Անպրոպներում Եսայը պողպատ սուրն է ջրդեղել,
Վրնջում է նժույզը այրուծիու առաջից:
Նրանք վարժվում են աշխույժ, մեկ-մեկու հետ մրցելով,
Ուժն են չափում իրարու, թափալվում են, ելնում վեր,
Շրջափակում են իրար, ծուղակի մեջ զցելով,
Նորից ճեղքում օղակը ու սլանում արծվաթեւ:
Ու թրերի զարկերից ծառս է լինում Քիրսը ծեր,
Իշխանագետն ամեիի ճերմակ մեջքն է ոլորում,
Դիզափայտը շոյում է զավակներին անձնվեր,
Արեւսարը հրճվանքից սեգ գլուխն է օրորում:
Իրար նեցուկ են դարձլ որդիները Դիզակի
Ու խմբվել են Եսայու ամպրոպակուր թրի տակ,
Պատրաստ են սուր իշեցնել չար Բուղայի կզակին,
Փշել ծեռքերը արմոտ եւ մռութը դժնդակ:
...իսկ ներքենում, գետի մոտ, Տողասարի ոտքի տակ,

Շարք են կանգնել Բուղայի զինվորները անքանակ,
Նրանք պիտի կածանով սարի գագաթ բարձրանան
Եվ ամպի պես Գտիչի խաչի վրա թանձրանան,
Յրանայել է Բուղան, որ առաջին հարվածով
Զարդեն խաչը Գտիչի՝ իր հավատը հալածող,
Գերեն գոռոզ Եսայուն, Շուշանիկին ավարեն,
Գերված քաջի գլխի շուրջ խալիֆի մոտ խենթ պարեն:
Ու կատաղած Բուղայի զորքն է Ելնում Տողասար,
Ու կածանի չորս բոլոր կտրտում են թուփ ու ծառ,
Դետիկոտն առջեւից, իսկ այրուձին հետեւից,
Բուղան էլ սեւ նժույգին սլանում է աջ թեւից:
Մորեխի պես փուլել է հագարացոց զորքը չար,
Ու Ելնում են սարն ի վեր՝ մերթ կատաղած, մերթ ամճար,
Բուղան զորքով անհամար շրջապատեց վանք ու լեռ,
Երկնագնա բարաններ կանգնեցրեց բերդն ի վեր,
Պատրաստություն տեսնելով երկարածիգ մի տարի,
Բուղան սարսափն է դարձել Դիզակա հանդ ու սարի:
Բայց տոկուն է Եսայը, ոսխմերին չի զիջում,
Իր ուժերն է բռունցքել ամեն ձորում ու կիրճում,
Կամքը ամուր մի ժայռ է, վրեժը թեժ մի այրում,
Աստծո կամթեղն է վառվում բերդի ամեն քարայրում:
Բազում անգամ ընդհարվեց ուժով թրի ու խաչի,
Մինչեւ Եկավ սասանող ճակատամարտն առաջին:
...Եվ Գտիչի աչքի դեմ արծիվները Դիզակի
Շուրջկալ արին թշնամուն հարվածներով շեշտակի,
Բուղան թռավ դեպի հետ ու գլորվեց սարն ի վար,
Զին պոկվել էր իր տակից ու ծառս եղել շանթահար,
Այրուժները Դիզակի, օրհասական այդ ժամին,
Այնպես թափով զարկեցին, որ կուչ Եկավ թշնամին:
Զայնն էր հնչում Եսայու. «Չինայել, արծիվներ,

Իր թեւերով է եկել հատուցումի ժամը մեր»:
Եվ սուրբ Գտչավանքի մոտ, Տողասարի լանջերին,
Երկինքն առավ սարսարող գույժն արաբաց կանչերի,
Բուղան ծնկի էր եկել ցածում՝ բլրի կատարին,
Պաղատում էր ալլահին, որ իր տենչը կատարի:
...Դանդաղ իջավ լեռներին աճառային երեկոն,
Անիծում էր չար Բուղան իր մեծերին՝ գլխիկոր,
Իսկ Գտիշի շուքի տակ, սրտում կրակ ու վրեժ,
Քաջերի հետ Եսայը քննարկում էր մարտը թեժ:
...Այն ժամանակ մոռացած անհուն ցավերը հայի,
Բագրատունի Սմբատը ծառայում էր Բուղային:
Նրա դիմաց փլվում էր Վասպուրական ու Սյունիք,
Վառվում Սասուն ու Տարոն, Այրարատ ու Բգնունիք:
Սպարապետն այդ արի՝ Բագրատունյաց մեծ տոհմից,
Խելքը տվել էր քամուն, գութ էր հայցում ոսոխից:
Նա իր Սուշեղ որդու հետ, թշնամական բանակում,
Գահի համար ապագա միավոր էր հավաքում:
Նա մոտեցավ Բուղային ու երկատվեց ու քծնեց,
Ճայ էր, անհուն իր խելքով պատահածը խոր զննեց
Ու վրանի տակ դիմեց զորավարին հագարաց,
Ինաստությանք սկիռիեց նրա սիրտը դառնացած.
«Արիության քո ոգին ի՞նչ ես տվել ոտնատակ,
Քաջությանդ չի սազում մտորումդ դժնդակ:

Մի թուլացրու քո ձեռքը, քեզ տիրության մի ճատնիր,
Ճույսդ արեւ դարձրու, ժամանակդ մի վատնիր,
Ողջ աշխարհը դողում է սարսափահար՝ քո առջեւ,
Եսայուց էլ առավել քաջերին ես դու հաղթել:

Քո բազուկը ինչո՞ւ ես տկար պահում այս պահին,
Պարտությունը կռվի մեջ, ախր, ո՞ւմ չի պատահի,
Ո՞վ չի կորցրել ավարը, ո՞ւմ զորքը չի վարանում,

Ում թալանած ոսկուն չի ախոյանը տիրանում:
Ուր թշնամանք ու կրակ, ուր պատերազմ կա ահեղ,
Այնտեղ կա եւ հաղթություն, եւ պարտություն կա այնտեղ:
Աշխարհացունց մարտերում ո՞վ չի խոցվել սրերից,
Դու այդ գիտես աշխարհի զրույցներից, գրերից:
Տասն օր է քո վրանում օվկիանի մեջ տրտմության,
Որոնում ու չես գտնում ուղիները փրկության:
Թե այս անգամ պարտվեցիր, մյուս անգամ կիաղթես,
Դեպի Գտիչ քո ճամփան նոր զրույթյանք կիարթես»:
Բուղան ժպտաց նենգաբար ու դուրս եկավ վրանից,
Թեկուզ սիրտը դրողում էր այն ահավոր օրվանից:
Իսկ Մուշեղը մոտեցավ ու շշնջաց իր հորը.
«Դայր իմ, ո՞նց ես հիշելու ամոթալի այս օրը»:
Սմբատն ասաց. «Իմ որդի, լսիր ինչ եմ ես խորհում,
Չես հասկանում մրցելու օրենքները աշխարհում:
Բագարատը մեր տոհմից՝ առյուծասիրտ մի հսկա,
Արծրուն տոհմից Աշոտի թեւ-թիկունքն էր հաղթական:
Չենց այդ տոհմից Վասակը՝ շնաբարո Արծրունին,
Կարասները ոսկով լի, գոհարները, ինչ ունի,
Ներքնահարկուն թաքցրեց մի քանի գազ խոր հորում:
Եվ որ չգա, չխի խալիֆարի հարկատուն,
Ելավ գնաց Սամառա, ամբաստանեց Աշոտին,
Բագարատին այպանեց, նարդկանց հանեց նա ոսի,
Խարեւությամբ այդ քաջին Արաբստան կանչեցին,
Զնդանի մեջ մթամած շղթաներով կապեցին,
Չալածեցին, հյուծեցին տանջանքների մտրակով,
Ավերեցին երկիրը անհանգչելի կրակով:
Չիմա բոլոր տոհմերը խոչընդոտ են ինձ համար՝
Մամիկոնյանք, Արծրունիք, Առանշահիկն այս համար:

Կամ այս երեք տոհմերը պիտի չքվեն իմ ճամփից,
Կամ ես պիտի հեռանամ թագ կրելու իմ ջանքից»:
Մտահոգվեց Մուշեղը, եւ կայծակեց խոսքը տաք.
«Առանց միաբանության չենք ունենա գահ ու թագ»:

ԳԼՈՒԽ 4 ԾՈՒՂԱԿ

Տումի գյուղից ազատատոհմ Դարեթնակը
Զինվորներով պիտի անցներ Տողի մոտով,
Թայց թշնամին առել ճամփի թեք կրնակը
Ու չէր թողնում, որ մարդ անցնի անգամ ոտով:
Թփերի տակ թաք էր կացել գունդն արաբաց,
Շովագի պես սպասում էր արյանք հարբած,
Դարեթնակի զամբիկը շեկ հանկարծ խրտնեց,
Թազը այնպես ծգեց սանձից, որ թունդ քրտնեց,
Թայց կանգ առավ խենք նժույգը Դարեթնակի,
Թեկուզ նրա ընկերները կրնատակին
Կանգնել էին շարվեշարան իրենց ձիով,
Զին ձիուց է խրտնում ահեղ իր խրխինջով:
Մինչեւ ելմեն կածանն ի վեր, դեպ Տողասար,
Իրենց ճամփին նկատեցին գերան ու ծառ,
Դագարները կտրել էին նրանց ուղին,
Շրջափակել ելման կետը բարձր ու ծիգ:
Դագար հոգով շուրջկալ արին յոթ հերոսին
Ու Բուլային տարան գերված իրենց որսին:
Բուղան տեսավ ու մօնչաց արյունատենչ,
Ու մի չար միտք պեծին տվեց ուղեղի մեջ.
«Ես այս յոթին թրով բերեմ իմ հավատին,
Որ Եսայու բազկի ուժն ու հույսը հատի:

Սրանք գիտեն կածանները Տողասարի,
Որ փնտրում եմ ու չեմ գտնում մի ողջ տարի:
Գիտեն ջրի ակունքը եւ ավազանը,
Առանց ջրի շունչը կտա հայ գազանը՝
Այդ Եսայը, որ ոսկոր է դարձել բկիս,
Ու զարկերից պակասում է թափը բազկիս»:
Յրամայեց Բուղան հպարտ Յաբեթնակին,
Որ ծնկի գա, աղաչանքով կուրծքը թակի,
Որ յոթ հոգուց կազմված նրա զորագունդը
Ընտրի իրենց Մուհամմեդի մտքի հունդը,
Լուսավորվի առատ լույսով սուրբ դորանի
Եվ չոփմի Քրիստոսի մութ խորանին,
Օգնի՛ բռնեն վաճքում թառած հովազին խենք,
Ու տիրանա անբավ ոսկու՝ մեծ փառքի հետ:
Բայց Բուղայի խոսքը ասես դիպավ ժայռի,
Ցնդեց, ինչպես աշնան ամպը՝ սեզ քարայրին:
Յաբեթնակը դիմեց. «Բուղա, խելքի չեկար,
Քեզ ժամանակ տվինք, որ դու խորհես երկար,
Սակայն իզուր... Քո մարգարեն թող քեզ մնա,
Քրիստոսացած մեր Արցախից անցիր-գնա,
Բարբաջում ես քո տեմչերով մութ ու աղոտ,
Քո հավատը թող քո հոգում դառնա աղոթք:
Մեր ճշմարիտ աստծուց ինչո՞ւ իրաժարվենք,
Մեր սրտերի մոմերը լույս ո՞ւն դեմ վառենք,
Զեր Տերը ձեզ, մեր Տերը՝ մեզ, գոռող Բուղա,
Կուզես ոռնա, կուզես ցուլի նման բղդա,
Մենք ապրում ենք մեր հավատի անմար հույսով,
Կապենք հավերժ ու կիաղթենք նրա լույսով:
Լսիր, Բուղա, պատգամները մեր սուրբ Տիրոջ.
«Ով ուրանա ինձ մարդկանց մեջ, ինձ ասի՝ ոչ,

Ես էլ նրան միշտ կուրանամ իմ հոր առջեւ
Ու կթողնեմ խավարի մեջ անհույս, անթեւ,
Ով ցանկանա իմ անունով պահի անձը,
Նա կգտնի հավերժության դուռն ու գանձը:
Օգուտ չկա, եթե քեզ տան աշխարհն անգամ,
Թե հավատը քո ուրանաս թույլ ու անկամ:
Մարդ ինչ փրկանք պիտի մուծի ուսանելի,
Երբ Յիսուսը ինքը փրկեց կորուսյալին:
Սանձահարված նժույգի պես Բուղան տեղում
Նոր մտքեր էր ծնում անվերջ բութ ուղեղում.
«Զեր հավատը արգելում է զենքը հատու,
Խեղճացնում թրի առջեւ, դարձնում կատու»:
Յարեթնակը ժխտեց. «Բուղա, արդ լավ լսիր
Փրկչի խոսքը. «Ով սրով օա, կընկնի սրից»:
Բուղան ապշեց, նայեց երկար եւ անզգա.
«Այս հայերը կատաղի են ու խելազար»:
Յետո կանչեց դահիճներին կարմիր հագած,
Առավոտի աչքի առջեւ նոր ճառագած
Գլխատեցին Յարեթնակին՝ արծաթ մազով,
Վարուժանին՝ բեխը ծլած ու երազող,
Վարդանիկին՝ մատները սուրբ գրքի վրա,
Եղիշեին՝ տաղերը նոր գրքում շարած,
Գրիգորիսին՝ հարսնացուի շորերն առած,
Բայց դահիճի թուրը ծովեց Սարգսի ուսին...
Եվ Սարգիսը ապավինած փրկչի հույսին,
Տեղից թռավ, խլեց սուրբ հագարացու
Ու գլխատեց ավազակին մի հարվածով:
Ու բռնկվեց մի հալածող իրարանցում,
Ու Սարգիսը բազեի պես գտավ անցում,
Վազեց, հեծավ դեմք կապած իր նժույգին

Ու սրարշավ մտավ ճամփան սուրբ Գտիչի:
Չորս կողմերից նետեր թօան նրա ետքից,
Բայց ազատվեց քաջ Սարգիսը ների ձեռքից,
Յասավ Գտիչ, լուրջ տարավ հայոց զորքին,
Եսայն անսաց, տակնուվրա եղավ հոգին,
Արցունքի ջինջ կաթիլները սեւսաթ բեղին,
Սրբազնին իրավիրեց զորատեղի,
Ասաց. «Զոհիված աննահները մեր քաջարի,
Վկաներն են մեր հավատի ու պայքարի:
Նրանց անմեռ հիշատակը երգերով նոր,
Ամեն տարի պիտի նշվի ոնց սուրբ մի տոն:
Իսկ Սարգսին՝ արիասիրտ մեր առյուծին,
Ոնց զորապետ, վստահում եմ իմ այրուծին»:

ԳԼՈՒԽ 5 ՅՈՐԴՈՐ

«Ինչ միջոցով էլ ուզում է լինի,
Եսայուն պիտի պարտության մատնեմ,
Թող ով կարող է գա եւ ինձ օգնի՝
Նրան վանդակում Սամառա տանեմ:
Ինչքան զինվոր է խլել ինձանից,
Այնքան կտոր էլ նա պիտի դառնա:
Նրա ուղեղը կհանեմ գանգից,
Որ նույնիսկ հոգին վեր չհամբառնա,
Դիզակը պիտի վառեմ, քամուն տամ,
Գտիչի զանգը բաժանեմ զորքիս,
Քարութանդ անեմ ազարակ, ոստան,
Որ հանգստանա կրակված հոգիս»:
Գոռում է Բուլղան ամբողջ ծայնով մեկ,
Խիղճը մարդկային ցավերի դեմ խուլ,

Նրա աչքերում մշուշ էր ու մեզ,
ինչպես էգերին որոնող մի ցուլ:
Իսկ շուրջը բոլոր քծնանք էր արթիո,
Զախօչախված «ես»-ի վերքն էին բուժում,
Կորցրած մարդկային հարգանք ու կշիռ,
Զար ոստիկանի սիրտն էին խուժում:
Օրորում էին կեղծիքի լաստով
Եվ գովում նրա ուժը անխորտակ,
Իբրև կարող է անգամ գրաստով
Գոռող Եսայուն անել ոտնատակ:
Իսկ Բագրատունին մարտակոփ խելքով,
Անքնությունն էր ցրուն Բուղայի,
Յորդորում, որ հենց Բուղան իր ձեռքով
Մի նամակ գրի այդ համառ հային:
Մի նամակ, գրված լեզվով սարսափի,
Արյունով գրված, ոճով չարագույժ,
Որ ընթերցելուց Եսայն սթափվի,
Զգա, որ ինքը տկար է, անուժ:
Ի՞նչ պիտի անի լեռան գագաթին,
Յացը՝ մի ջվալ, ջուրը մի գավ է,
Սովը մեկ շաբթում նրան կհաղթի,
Եսայու զորքը համ էլ սակավ է:
Յամոզում էին Բուղային անվերջ,
Եվ համոզվում էր այդ հոգեառը,
Սուտն ո՞վ կարող էր բացել խոսք ու վեճ,
Եվ ո՞վ կարող էր ընդհատել ճառը:
«Լավ, համաձայն եմ,- կրնչաց Բուղան,-
Եվ չարագուշակ նայեց Սմբատին,
Եթե Եսայը իմ դեմ չսողա,
Քեզ եմ խաչելու Գտիչի պատին»:

Թեկուզ սարսափած, ինչպես չար հողմից,
Վրա բերեցին այս ու այն կողմից.
«Սմբատն իմաստում քո ծառան է, տեր,
Քո զինակիցն է ու խորհրդատուն,
Նա է փարոսում ճանապարհը մեր,
Նրա խորհուրդը միշտ է հուսատու»:
«Նա հայ է, հայ է, խորամանկ մի հայ,
Որ չի մոռանում իր քրիստոսին,
Եթե պահը գա, ինչպես մի Եսայ,
Կնետի գիրկը մեզ տարտարոսի»:
Այսպես մռնչաց Բուղան հավակնոտ,
Շրթերի վրա նենգամիտ ժպիտ,
Դեստ Սմբատին մատով կանչեց մոտ,
Եվ շողոքորթեց մռութով հտպիտ.
«Մի թքվիր այդպես, կատակ էր, Սմբատ,
Խոսքը ինձ համար միշտ եղել է թանկ:
Դե, հիմա ընտիր մագաղաթը բեր,
Պետք է Եսայուն մի նամակ գրել»:
Խոսքն այդ Սմբատը ընպեց ոնց հաշիշ,
Բայց ոչինչ չասաց, փրկում էր կաշին:

ԳԼՈՒԽ 6 ՅՈՒՎԱՐՏԱԿ

Եվ պարտության կրծող վիշտը իր կրծքի տակ,
Բուղան մի օր քաջին հղեց հրովարտակ.
«Ահա քանի ամիս է քո հողն եմ վառում,
Գավառիդ մեզ ողջ գործերը ես եմ վարում,
Ելի զինքդ չես հավաքում, չես իջնում ցած,
Դիմադրում ես՝ ինքդ քեզնով միշտ հիացած,
Մեր առաջին մարտը հանիր հաշվեկշոից,

Մեր թրերը մի նժարի դու մի կշռիր,
Դա մի փորձ էր, որ բերդիդ տակ կատարեցի,
Բեզ քվլսմ է, թե խղճուկու ինձ հաղթեցիր:
Ժամանակը քեզ եմ բաշխում ես մեն մի օր,
Չհանգնես ինձ ներքաշել մարտի մեջ նոր,
Բուղան եմ ես, ցեղս՝ Շարար, ճորտն Արարի,
Յայի հոգին պիտի առնի թուրք Շարարին,
Խորիիր, Եսայ, Վաղը իջր բերդից Գորոզ,
Դու չփորձես խոսք գետնին նետել, գոռոզ:
Լսել ես իմ ուժի մասին, ծանոթ ես քաջ,
Թե իմ թուրք ինչ արեց մեկ տարի առաջ,
Խորտակել եմ Վասպուրականն ու Սասունը,
Մուշ ու Դվին տեսել են իմ խոր ցասումը,
Ժայռերից ժայռ տված իմ հաղթ ոտքերի տակ,
Ողջ Սյունիքը դարձրել եմ կարկտաթակ:
Կուռ կողերն եմ ջարդել գոված ձեր Թիֆլիսի,
Կառավարչին գետը նետել՝ քարը վզին,
Խլել նրա գեղեցկուիի կմոշն արեւ,
Ճետո եկել ողջ Գարդմանը թրահարել:
Թփրտում է Ուտիքն ինչպես զարկված կարապ,
Խաչեն բերդի տերն ինձ մոտ է շղթայակապ:
Գերել եմ այդ աշխարհների տղանարդկանց,
Իմ հարեմի զարդը դարձրել ընտիր կանանց,
Զրախեղդ եմ արել տկար մժեղներին,
Շուկաներում թանկ վաճառել ուժեղներին,
Դրժողներին բերել եմ իմ սուրբ հավատին,
Մերժողներին սրի քաշել ոնց կավատի,
Ճողվոր հայի հողն եմ խլել պապենական
Ու նվիրել մեծ ցեղերին արաբական,
Չորրորդ Յայքում Տիգրանակերտ քաղաքը իին

Բաքըր ցեղին տվի, կոչվեց Դիարբեքիր:
Ծառայում է մոտս Սմբատ Բագրատունին,
Զեռք չեմ տվել Շիրակի մեջ ինչ նա ունի,
Սմբատի հետ մոտս է նրա Մուշեղ որդին,
Բագրատունին օգնում է ինձ եւ իմ զորքին:
Դերթ հիմա քեզ է հասել, հնազանդվիր,
Իշիր բերդից եւ հանուն քեզ ինձ խոնարհվիր:
Երդվում եմ իմ մարգարեի թանկ անունով,
Որ ամեն ինչ պիտի գնա բարի հունով,
Սպասում է Սամառայում խալիֆը մեզ,
Ողորմած է, քեզ կընդունի եղբորն ինչպես,
Նա կիարցմի գործերից քո, քո հարկերից,
Դժգոհի չէ նա հարկանվեր քո բարերից
Խաղաղության դաշն է ուզում կնքել քեզ հետ,
Եթե մերժես, ուրեմն դու հիմար ես, խենք,
Ես չեմ ներում խենթին, Եսայ, դու լավ գիտես,
Համբերանքից ինձ մի հանիր տղայի պես:
Եթե մերժես... Եթե մերժես... աստված վկա,
Թե Դիզակի եւ քո գլխին ինչեր կգան.
Սուր նշտարով ծվաճները քո կիանեմ,
Եվ բոլորին ի տես Սամառ ես կտանեմ:
Քեզ նորբազերծ կանեմ, կանեմ արյունաքան,
Ոնց գորապետ ծեր Կասակին Շապուհ արքան,
Փետուրմերով կլցնեմ քո տիկը, Եսայ,
Եվ զոքանչիդ կնվիրեմ որպես փեսա:
Կկենակցեմ կնոջդ հետ տիկիդ դիմաց,
Եվ քո նորը կասեմ.- Խանուն, նայիր հիմա,
Տես խիզախը Եսա՞յն է քո, թե՞ Ես՝ Բուղաս,
Զգում եմ ես, այս խոսքերից պիտի դողաս,
Պիտի դողաս դեռ առավել, Եթե մերժես,

Քանզի, Եսայ, պատիժներում դաժան եմ ես:
Եթե մերժես, ողջ երկիրդ պիտի վառեմ,
Մեծ ու փոքրին կուրացնելով գերեվարեմ,
Թուր ու սրի հարվածներով մինչեւ Սամառ
Պարեցնեմ ու երգել տաճ ձմեռ-ամառ,
Շուշանիկիդ նստեցնեմ հենց քո ձիուն,
Ասեմ ես քո արեգակն եմ, հայի սիրուն,
Քո արծիվը ու սերը քո ես եմ հիմա,
Քո Եսայը մի ուրու էր ու մի հիմար,
Քո Եսայի հոգին արդեն թռավ-գնաց,
Յիշատակը գանգի կաշին միայն մնաց,
Քո Եսայը խարում է քեզ, որ արծիվ է,
Ես եմ արծիվ, նա իմ նետից ընկած ցին էր:
Բավ է, Եսայ, ուղարկում եմ վերջնագիրս,
Սպասում եմ պատասխանիդ, գրիր գիրը,
Եվ ուղարկիր նամակդ իմ սուրհանդակով,
Մեկ է, մի օր պիտի անցնես թրիս տակով»:

ԳԼՈՒԽ 7 ՊԱՏԱՍԽԱՆ

Յրովարտակը Եսայը կարդաց,
Եվ պատասխանեց սրամիտ ու բաց.
«Եթե դու, իրոք, աշխարհակալ ես,
Պիտի քեզ պահես ոնց խնամակալ,
Պիտի երկիրը չարից պաշտպանես,
Ոչ թե ավերես ավազակաբար:
Թե խաղաղության պատգամաբեր ես,
Պետք է շենություն պարգեւես ճամփիդ,
Ոչ թե նզովը ու խոռովը ամբարես,
Սահվան գերանդին չարագույժ ափիդ:

Թող հար հավիտյան հայտնի լինի քեզ,
Որ ինչքան ուժս բավականանա,
Այս հողի վրա ինչքան ապրեն ես,
Քեզ դիմադրող առյուծ կդառնամ:
Իմ ձիգ աղեղով ու կանքով իմ վառ,
Խաղաղությունը ինքս կլուն,
Ճեծյալ գնդերով իմ ռազմավար,
Քո զառանցանքը հավետ կցրեմ:
Եթե ուզում ես, Բուշա, կամոքդ
Իմ հարվածներից քեզ հեռու պահել,
Ապա իմ երկրից հավաքիր շողքդ,
Ճեռացիր ինչպես մարդուն է վայել:
Իսկ թե զայրույթով ու կատաղությամբ
Կշտապես թողնել գիրկը այս կյանքի,
Թող այդպես լինի... թող ցին ու զազան
Քրքրեն սիրտդ տրված քո կամքին:
Պատասխան չեմ տա քո արյան համար,
Քեզ կջախջախեմ ցասմանք տենդագին,
Ինչպես Մովսեսը Ամաղեկին չար,
Ճեսուն քանացոց, Սամուլ՝ Ագագին,
Ինչպես Գողիաթին Դավիթը հանճար,
Ոնց Խսրայելը՝ թշնամիներին:
Քո մահվան համար Աստված կների:
Շատախոսություն չեմ սիրել երբեք,
Միշտ էլ մերժել եմ սուտ ու խոզություն,
Քո ձեռքերում են, կապված են քեզ հետ
Եվ խաղաղություն, եւ խօսվություն:
Ասացի, եթե ինձնից հեռանաս,
Խաղաղությունը կթեւի հպարտ,
Իսկ թե խորհուրդը դու իմ մոռանաս,

Կլինի պատերազմ ու ճակատամարտ:
Եվ դու կլինես իմ դիմաց թիրախ,
իսկ քո հանդիման աղեղն իմ խոցող,
Դու ախոյանն ես, վիշապի երախ,
իմ զորքերը՝ քեզ հող-մոխիր դարձնող:
Պատերազմն, այո, քոնը կլինի,
իսկ հաղթանակը կլինի մերը,
Մարմինը՝ քոնը, նիզակը՝ իմը,
Քոնը՝ պարանոց, մերը՝ սուսերը:
Քոնը՝ ստացվածք, մենք՝ ժառանգորդներ,
Ավարը՝ քոնը, մենք՝ ավարն առնող:
Դու՝ գող, ավազակ, մենք՝ կողոպտողներ,
Դու՝ մի թույլ ծաղիկ, մենք՝ կրակ վառող:
Դու՝ ամռան չոր հարդ, մենք՝ քո դիմաց հողմ,
Մենք՝ ուժգին խորչակ, դու՝ թեքվող եղեգ,
Դու՝ արտ, սակայն մենք՝ կարկուտ ավերող,
Դու՝ շենք առանց հիմք, իսկ մենք՝ ջրհեղեղ:
Դու՝ լեշ, իմ զորքը՝ հոշոտող գազան,
Որ կծվատի սիրտ արնածոր,
Դու՝ մի խաղալիք, մենք՝ մանկտիք վազան,
Քո զորությունը ծանակով խոցող:
Դու՝ վայրի երե, մենք՝ քաջ որսորդներ,
Դու՝ թռչուն, իսկ մենք՝ երկնից վար բերող,
Դու՝ ծովավիշապ, իսկ մենք՝ կարթի տեր,
Մեր կուռ ցանցերով վիշապիդ՝ գերող:
Դու՝ մի եղջերու առանց եղջուրի,
Իսկ մենք արծիվներ՝ ամպերից էլ վեր,
Որ նետվելով ցած, առանց երկյուղի,
Լեշդ կտանենք մեր ծագերին կեր:

Որ էլ չտեսնես շողերն արեւի,
Դու որոգայք ես հյուսել մեզ համար,
Սակայն վտանգը լոկ քեզ կավերի:
Քանի ուշ չէ դեռ, իմ հողից գնա,
Եվ թող նամակն այս հիշատակ մնա»:

ԳԼՈՒԽ 8 ՀԱՂԹԱՆԱԿ

Երբ բռնավորը Եսայու հղած նամակը կարդաց,
Զգաց հարվածը սուր անարգանքի, խորապես ապշեց,
Տարակուսանքից վերուվար թռավ, փրփրեց, հոխորտաց,
Մեկ ակնթարթում վրանի շուրջը տասն անգամ չափեց:
Չեր տեսնում ելքը, ինչ հնար գտներ Եսայու հանդեպ,
Ցավ ու ամոթից նա կորակնել էր դիմացն իր զորքի,
Խորհուրդ տվեցին գրել ծանուցում ու վաղը եւեթ
Լրատարներով ուղարկել Սամառ, դաժան խալիֆին:
Պատգամավորը սամումի թեւով թռավ Դիզակից,
Իսկ շուրջանակի փակեցին կրկին Գտիչ ու անրոց,
Մինչեւ արքունուստ հրաման կգա հեռու Սամառից,
Թե ինչպես վարվեն անպարտ ու համառ զորքի հետ հայոց:
Իսկ քաջ Եսայը զինավառվել էր ամբողջ զորությամբ,
Իջնում էր սարից, առնում ավարը եւ վերադառնում,
Բանակատեղին շիկանում էր թեժ խանդավառությամբ,
Արցախա ուժը ծփում էր անվերջ, ծովի պես հառնում:
Բուղան սարսափած զորքի մի մասը հանձնեց Աբդիին
Եվ նստեցրեց հյուսիսի կողմում սեզ Տողասարի,
Իսկ ինքը զորքի բազմությամբ մնաց ժայռի կատարին,
Որ արեւելյան կողմերը պահի հարձակումներից:
Եվ լուրջ հասավ Արաքստանից. «Չտաղտկանալ
Եվ չվիատվել, անցնել հարձակման Տողասարն ի վեր,

Մինչեւ Եսայը իր կորուստներով չտկարանա
Եվ խալիքաթին չինազանդվի ստրկավայել»:
Եվ Բուղան կրկին հրաման տվեց խոլ պատերազմի,
Ելան գնդերը բյուր դրոշների ծփանքների տակ,
Սարի չորս բոլոր անվերջ հնչում էր շեփորն ռազմի
Յոխորտում էին զորապետները դաժան ու գիտակ:
Ճնշեցին փողեր, ինչպես խիտ անտառ սրեր մերկացան,
Ու քիչ էր մնալում հիմքից տապալվեր սարը երկնաքեր,
Արաբաց զորքը ահեղ դղիրդով լեռը բարձրացավ,
Կոնչում էին զինվորներն անթիվ ինչպես գիշակեր:
Բազմամբոյս զորքը շրջապատել էր Գտիշն անառիկ,
Գորոզա բերդը լցվել էր ասես մահագույժ ճիշով,
Նման արհավիրք երբեք չէր իջել Տողա անտառին,
Ոչ ոք չէր քայլել նման սարսափի եւ արյան միջով:
Զենքերի շաշուն, կայծակող որոտ, դրոշների եռք,
Նետերի տարափ, սրերի շառաչ, գուրզերի շոհնդ,
Այդպիսի կոփկ Դիզակա հողը չէր տեսել երբեք,
Երբեք չէր լսել այդքան անընդմեջ ձիերի խրիսինց:
Եվ զարդարվել էր պերճ զգեստներով զորքը Բուղայի,
Պարիսպների դեմ պատրաստվել էին գնդերը բոլոր,
Այդ զորքերի մեջ Սմբատն էր քայլում հետն իր տղայի,
Զարմացել էր նա, շուրջը նայում էր հայացքով մոլոր:
Արաբաց զորքի մարտաշարքերը ձգվեցին երկար,
Եվ հարդարեցին կռվի ճակատը միմյանց ձայնելով,
Եվ երբ գնդերի հարձակման պահը վերստին եկավ,
Ամբողջ երկինքը պարսպի վրա լցվեց ձայներով:
Փայլվլում էին սուր ու սաղավարտ պարսպի չորս կողմ,
Վրնջում էին ձիերը բազում խելահեղ ու խենթ,
Պարսպի ներսում Եսայու զորքն էր պտտվում ոնց հողմ,

Որ դարպասներից դուրս հորդի ուժգին՝ դարձած
ցասման եռք:

Եվ հազարացիք իրե կուպր էին նետում բերդն ի վար,
Ծծումբից, նավթից քամած հեղուկը լցնում սրվակներ,
Ու երբ նրանցում լեզուն էր հանում կրակը հուրիեր,
Շարտում էին պարիսապը պահող զորքերի վրա:
Այստեղ էլ հայը, ինչպես միշտ ճկուն ու հնարամիտ,
Գտել էր ելքը դիմակայելու լափող կրակին:
Բերդապահները պատրաստել էին բողյա մի զգեստ,
Որ ներծծում էր ջուրն սպունգի պես:
Կռվի մեջ նրանք մարտնչում էին զգեստն այդ հագին,
Պարիսապների տակ միշտ պաշտպանվելով ահեղ կրակից:

Եվ աննկուն էր Եսայը բերդում ընտրանի զորքով,
Աստվածահածո նա իր խոսքն ասաց բոլորի առաջ,
Բորբոքեց, կիզեց սրտեր ու հոգի իմաստուն խոսքով
Եվ թուրը հանած երդվեց պայքարել մինչեւ հաղթանակ:
Ասաց. «Մենք գիտենք ինչի համար ենք ելել պայքարի,
Մեր ոտքերի տակ հայրենի հողն է, օրրանը մեր թանկ,
Որ մեր օջախի անմար կրակը երբեք չմարի,
Պիտի ոսխին իրեն հասնելիք պատասխանը տանք»:
Ու երբ բացեցին կուռ դարպասները բարձրաբերձ բերդի,
Ճեղեղի նման դուրս եկավ զորքը քաջն Եսայու,
Բոլորից առաջ շողում էր թուրը գավառապետի,
Դիզակա զորքը քառաթեւ խաչ էր կազմել հմայուն:
Զինվորյալները մռնչում էին եւ պատառոտում,
Խոցոտում էին ոնց եղեգնուտի կատաղի վարագ,
Ամեն մի զինվոր իր ախոյանին գետնին էր նետում,
Եվ մի ուրիշին հալածում ուժգին իր թուրը պարզած:

Եվ բախվում էին նիզակները խիտ ու բազմակուտակ,
Պողպատ թրերի, սրերի շողից անտառն էր փայլում,
Զիգ աղենների սուլյերը կարծես գոչեր էին տաք,
Ու թվում էր, թե շանթ ու ամարոպից սեզ սարն էր հալվում:
Խսկ եկեղեցու ծառայողները եռանդուն ու ջերմ,
Խրենց պաղատող սիրտն էին բացել աստծո առաջ.
Ամեն քահանա մի ավետարան պահած գլխից վեր,
Ամեն ջահակիր՝ ջահի փոխարեն արծաթն մի խաչ:
Մրցահանդես էր երկու կողմների, ամպերի բախում,
Ամեն մի կողմը նման էր շարժվող երկաթե ժայռի,
Ջագարաց զորքը հայոց քաջերի թրի երախում
Նահանջեց դանդաղ, ինչպես նետահար գազանը վայրի:
Մարտաշարքերը նրանց ճեղքվեցին, ցրվեցին մեկեն,
Բուղայի զորքը արյունոտ նետվեց դեպի զառիվայր,
Ճնձած խոտի պես շարվեշար ընկան զինվորներ, զնդեր,
Խրենց հետեւում թողած բյուր գենքեր, զանձեր ու ավար:
Նահանջի հերթ հասել էր արդեն դաժան Բուղային,
Երբ տեսադաշտում ոտքերի վրա հառնել էր մի սար,
Սար չէր, Եսայու սպիտակ ծին էր ձյունի պես շողուն,
Որ խրխնջում էր՝ իր թռիչքի մեջ թիրսին հավասար:
Եվ թշնամու դեմ իր թուրք պարզած սլացավ քաջը
Ու մենամարտի կանչեց Բուղային՝ վիշապին այդ նենգ,
Եսայու դիմաց ասես կանգնել էր սեւագույն մի արջ,
Նայում էր ամպի նման սեւակնած, չարամիտ ու խենթ:
Ըստ ավանդական կարգ ու կանոնի մարտադաշտ բացին,
Իրարից հեռու կանգնեցին ասես երկու հզոր լեռ,
Մեկը մայր հողից բուսած մի բարձունք՝ Եսայն առնացի,
Մյուսը հեռվից գլորված բեկոր՝ Բուղան լեշակեր:
Եվ ահեղագոչ սլացան նրանք իրար հանդիման
Եվ մարտադաշտի ուղիղ կենտրոնում զարնվեցին ուժգին,

Խաչված թրերից շողացին շամթեր ու կայծեր ելան,
Թրազարկերից խրտնած ծունկ իջավ Բուղայի սեւ ծին:
Բայց ոստնեց նորից, տիրոջը թոքրեց դաշտի կենտրոնից,
Երմակ նժույգով Եսայն էլ հասավ սահմանված տողին,
Երկրորդ զարկի տակ թուրք դուրս թռավ Բուղայի ձեռքից
Եվ Տողասարից գնաց միսրճվեց Քիրս սարի կողին:
Աչբերում արյուն Բուղան մռնչաց. «Գուրզերո՞վ կռվենք»:
«Գուրզերո՞վ կռվենք», - լսվեց Եսայու ձայնը Վճռական,
Այս անգամ գուրզի զարկից Բուղայի նժույգը փռվեց
Ու տիրոջ ձայնից վեր թռավ կրկին ուժով խոլական:
Նորից հեռացան, նորից զարնվեցին կենտրոնում դաշտի,
Եսայու զարկից երկինքը ճեղքեց Բուղայի գուրզը,
Շաշելով թեւեց, կորագիծ ընկավ Թարթառի ափին,
Իսկ Բուղան արդեն շրթունքը կծած, բռնել էր ուսը:
«Նիզակո՞վ կռվենք», - մեջքից կորացած բղավեց Բուղան:
«Կռվենք նիզակո՞վ», - հնչեց Եսայու հաղթական ձայնը,
Եվ նրա զարկից Բուղայի բերնից հուր-կրակ տեղաց,
Դատու նիզակից ճեղքվել էր կուրծքը եւ որովայնը:
- Կեցցե՞ Եսայը, հաղթե՞ց վիշապին, երկիրն ազատե՞ց,-
Կանչն այս թեւածեց ու ծփանք տվեց լեռների վրա,
Սակայն Բուղայի օգնական Արդին օրենքը խախտեց
Ու դարան մտավ անտառի խորքում գնդերով իրա:
Դիզակա զորքը Գտիչի դիմաց ցնծում էր անվերջ,
Իսկ Դիզակայտը օրինում էր քաջի զարկը վճռորոշ,
Բայց չարը նաեւ նենգության թույնն է պահում փեշի մեջ,
Դադրողների դեմ խաբեությունը դարձրած ապարոշ:
Քրտնած Եսայը քրտնած նժույգով իջել էր գետը,
Որ իր ձեռքերով լվանա ծիու մեջքը տաքացած,
Թփերի միջից կատաղած Արդին ցցելով նետը
Թռավ ու կանգնեց անզեն Եսայու ուղիղ դեմ-դիմաց:

Սակայն Եսայը ցատկեց ու կանգնեց թշնամու կողքին,
Այրուծի ուժով նա ոլորում էր վիզը արարի,
Երբ ձորից ելան մնացորդները հագարաց զորքի
Եվ շղթայելով Եսայուն տարան խորքը անտառի:
Քաջի նժույգը խրխինջով հասցրեց տագնապը խորին,
Ճեղեղի նման Գտիչից իջան գնդերը նրա,
Բայց հագարացիք անց էին կացել կեռմանը ձորի,
Եվ ուշ էր արդեն... նստում էր մութը անտառի վրա:
Ամբողջ Դիզակը ոտքի էր ելել, կտրել ճամփեքը,
Գտիչը լուրս այդ ահազանգել էր հայոց վանքերին,
Կարոտի ցավով մնջում էր եւ ողջ Միջագետքը,
Եվ ափսոսանքի աման էր խտանում իզուր ջանքերին:
Չկար Եսայը, որտե՞ղ հեղեցին արյունը քաջի,
Որտե՞ղ է ննջում, ո՞ր կաղնու ներքո կամ ո՞ր ժայռի տակ,
Որտե՞ղ թաղեցին առանց սաղմոսի եւ առանց խաչի,
Ո՞ր հողին ձուլվեց, որտե՞ղ մոխրացավ նրա սիրտը տաք:

Երեկոն իջավ՝ սրտի մեջ արյուն, աչքերում արցունք.
Փառքով պսակվեց Դիզակա զորքը՝ ոտքի տակ

բարձունք,

Ահեղ մարտի մեջ արարաց թի հարվածներն առան,
Մարտիրոսսկելով՝ Արցախի համար ճրագներ դառան.
Քաջ Եսայը՝ Գտչավանքից,
Բրուտ Սայիմ Մուշկերանքից,
Դարբին Մոսիմ՝ Լուսագեղից,
Պայտառ Սիսը՝ Կալատեղից,
Ջակակուից՝ հովիվ խաչոն,
Քարտաշ Ջարիմ Ակնաղբյուրից,
Ջուսն Բագին Բանազուրից,

Ետիլեցի Յակոբջանը,
Պլեթանցի Աղաջանը,
Ծաղկող Դավոն՝ Յին Յարարից,
Գզիր Գավոն՝ նոր Յարավից,
Քյուրաթաղից՝ Առաքելը,
Սարինշենից՝ Մաղաքելը,
Յին Թաղերից՝ Մելիքսեթը,
Մեծ Թաղերից՝ գուսան Չեթը,
Գորոզ բերդից՝ Բաղդասարը,
Արփագետից՝ Սամասարը,
Ժամկոչ Արամն՝ Ուխտաձորից,
ճարտարապետ Արան՝ Ցորից,
Վարդաշատից՝ Եղիազարը,
Թաղասերից՝ Վարդազարը,
Վանքից՝ Գտիչ Անաստասը,
Տողից՝ պատմիչ Աթանասը...
Ամեն գյուղից, ամեն տոհմից այրեր հզոր,
Երեկ կային, անանց կարոտ դարձան այսօր,
Մեկը զոհվեց՝ մանուկներին թողած մենակ,
Մեկը՝ մի ողջ գերդաստանի հույս ու հենակ,
Մեկը սիրո խոսքերի մեջ դեռ ամոթխած,
Մեկի հացը հարսանիքի դեռ նոր թխած,
Մեկը՝ անթիվ երազի տեր...
Մեկը՝ ծաղկած, մեկը՝ ամսեր...
Նահատակի պսակ հազան Տողասարում,
Սրբազնը նրանց շիրմին խունկ է վառում...
Նրա կողքին սուգ է անում քաջի մայրը,
Եվ այդ սգից օրորվում է սրբավայրը:
Իսկ նրա մոտ որբեւայրու սեւաշորով
Քաջի կինն է... հետն էլ նրա փոքրիկ տղան

Թոթովախոս Մովսեսը, որ սրտագորով
Ստիպում է. «Պապիս թուրը տվեք խաղան»:

Սովորագույն ձիով թունդ անհծելով պարտությունը սեւ,
Օգնական Աբդին Մսրա խալիֆին հասավ հելիհեւ,
Իջավ ծնկաչոք, պաղատեց երկար, որ իրեն ների,
Որ նոր զորքերով հետ դառնա թողած ավարը բերի:
Սակայն խալիֆը ընդունեց նրան ծաղը ու ծանակով,
Եվ վլողվանքունքից հատեց քազբեկը ծեռքի դանակով,
Ասաց. «Այդ Բուղան չարժե փշրված մի ուզունք անգամ,
Նա շան թուլա էր, տեղին է ասել Եսայն ամրական:
Այսուհետեւ դու իմ գերված ծորտն ես, ոչ ազնվական,
Իսկապես քաջն էր ծեր դունչը ջարդող այն հայ սրիկան»:
Իսկ Գտշավանքում մեծ հաղթանակի շունչն էր թեւածում,
Երգասաները գովքն էին անուն արցախցիների,
Որ ութը հարյուր հիսուներեքին, սրերով հատու,
Յայց պատմության վերածննդի հիմքերը դրին:

ԳԼՈՒԽ 9

ՀՅՈՒՇ

Մարդաշատ է Ամարասը, հյուր են եկել ամեն տեղից,
Տանուտերեր, մեծամեծեր ամեն տոհմից, ամեն ցեղից,
Յյուր են եկել մեծ Արցախի
Տասներկու գավառներից.
Մյուս Յաբանդից, ասել է թե սեզ Դիզակից,
Վայկունիքից, Բերդաձորից,
Մեծ Կվյանքից եւ Յարծլանքից,
Մեծիրանքից եւ Պարծկանքից,

Փարիսոսից եւ Պրանքից,
Կողթից եւ Սխականի Կոտակից,
Ինչպես նաև մեծ Մոլխանքից...
Յյուր են եկել վարդապետներ, քահանաներ, եպիսկոպոսք,
Կամարների տակ հին վանքի թեւածում են զրույց ու խոսք:
Խոսք-զրույցի առանցքի մեջ Յայաստանի վիճակն է բարդ,
Օրինում էին կուռը նրա, ով Սասունի զորքը վարեց,
Ով թրատեց նենգ Յուսուֆին, ով Բուղային նետահարեց:
Օրինում էին միաբերան հայոց ազգի կուռը դալար,

Որ թշնամուն պիտի նետի ինչպես մարմնին բուսած պալար:
Անարասի ձորի վրա ամռան շունչն է խառնվել խոսքին,
Ու Եսայն է խոսքի թեման, քաջությունը նրա զորքի:
Սպասում են սրտատրով Արցախ երկրի հյուրին ազնիվ,
Սպասում են քանի օր է, որ ողջունեն ու տան պատիվ,
Վասպուրական երկրից է նա՝ պայծառամիտ, քաջակորով,
Պատմիչ Թովման, որ շրջել է Յայաստանը որդու սիրով:
Եկել է նա, հասել Արցախ, մտել ամեն քաղաք ու բերդ,
Անարաս է գալիս հիմա Դիզակի քաջ այրերի հետ:
Եվ երբ նրանք ոտք են դնում Անարասի կանաչ բակում,
Ողջույններից ահեղագոչ անգամ հողի սիրտն է զարկում:
- Փա՛ռք Եսայուն, կյանքի գնով նա Բուղայի սարը ջարդեց,
Յայոց երկրում խալիֆի դեմ հաղթանակի ուղին հարթեց:
- Ողջո՞ւն, ողջո՞ւն մեծ պատմիչին, որ եկել է Մուշ ու Վաճից,
Աղ ու հացով սպասում է նրան այստեղ շատ ընտանիք:
Թեւ են առել ողջույնները՝ ձուլված ամռան տաք շողերին,
Ու փարվում են գորովանքով թուր ու գրչի հաղթողներին:
Պար է բռնել Անարասը, օրորվում է Գմբեթն օդում.
Երանության խրախճանքով արցախարուխ սերն է հորդում,
Մեկը գառ է բերում ընծա, մեկը՝ երինջ, մեկը՝ աքլոր,
Մեկը կավե ամանի մեջ թուր է բերում, իսկ մեկը՝ լոր:

Նամփաները ննանվում են մեղուների գծած ծիրի,
Ամարասը մի փեթակ է՝ սրբատունը մեղուների:
Եկողն իր հետ սիրտն է բերում եւ հոգին է բերում իր հետ,
Ու միասին խոխոչում են ոնց Արցախա հավերժող գետ:
Ամարասը խունկ է վառել, ծիանք տվել քնքշանքներին,
Իր հայացքի տակ հավերժած հոդի, ջրի մշակներին:
Ու բացվում են դրսերը լայն Գրիգորաշունչ Ամարասի,
Ուր Վարդանի զորքն է մի օր մասունք առել սրբարանից,
Ուր գալիս են գրկախառնվում երազները արցախական՝
Մով Սեւանից մինչեւ Արաքս եւ Սյունիքից՝ Բաղասական:
Դայրապետի ձայնը կերկեր գմբեթի տակ թեւաբախում
Ու գալիս է ախորժալուր ներկաների կուրծքը բախում,
Մտնում սրտեր, շոյում նրանց հաղթանակի ծվաճքներով,
Ու վանքը իին բուրվառվում է ամենաջերմ հրճվանքներով:
Իսկ Եսայու անունը թամկ քաղցրանում է ոնց մանանա,
Որ Արցախի սարերի պես դարերի մեջ չի մահանա:
Դեստ խոսքի ծայրն է բացում հյուրընկալվող պատմիչ Թովման,
Մտքում թեւում դեպի Սասուն, դեպի Դվին ու դեպի Վան,
Զօծում մտքի ոսկեփոշով Տողասարի հաղթությունը,
Որ անունը քաջ Եսայու որդեգրի պատմությունը.
«Պիտի ապրի քաջ Եսայը զրույցներում հավերժաբառ,
Քաջերի հետ նա կմտնի մատյանիս մեջ մեսրոպատառ:
Արժանի է քաջ Եսայը, արժանի է մեր ասքերին,
Նրա թուրը նոր ուժ տվեց արցախական հրաշքներին:
Դարերի մեջ Արցախը սեգ արծիվներ է ծնել անթիվ,
Դիզակեցի իշխանին էլ անվանում ենք լեռան արծիվ»:
Երբ Արծրունի Թովման ասաց իր այդ խոսքը սրտապարաք,
Դայրապետը հպարտությամբ պատմագրի խոսքը առավ,
Թաթախեց իր սրտի հրում, Ամարասի մեռոնի մեջ,
Որ թեւածեց դարերն ի վեր որպես մի Ասք արցախատենչ...»

ՎԵՐՁԵՐԳ

Հավերժությունը դարերը անթիվ առնում է, գնում,
Եվ մինչեւ հիմա քաջի շիրմը անհայտ է մնում:
Բայց նրա ոգին թեւաբախում է Արցախի վրա,
Սեգ Տողասարին Գտիչն ու ոգին փարվում են իրար:
Սարը՝ պատվանդան, վաճը՝ սուրբ գիրը, իսկ ոգին՝ ճրագ,
Մեկը՝ թանկ օջախ, մեկը՝ մագաղաթ, իսկ մեկը՝ կրակ:
Սարը կանգում է, գիրը՝ հոլովվոր, կրակն անմարում,
Եվ այդ կրակով Եսայն ապրում է Հայոց աշխարհում:
Տեսել են նրան՝ դարերի անթեք ճամփեքը մտած,
Արցախա գրկում իր Վրնջացող նժոյզին նստած,
Նրան տեսել են սելջուկների դեմ թուրք հաղթ ձեռքին,
Մոնղոլների դեմ տեսել են նրան՝ սլացքով նետի...
Նրան տեսել են չար Լենկ-Թեմուրի սուրը ջարդելիս,
Տեսել են նրան՝ Սարդարապատի ուղին հարթելիս:
Առաջնորդներին մատը թափ տալիս տեսել են նրան,
Արցախի համար սրտաբուխ լալիս տեսել են նրան,
Նրան տեսել են հերս անհօելիս նենգ Բեղավորի,
Շեղաչ ճակատի դեմքին թքելիս՝ ոնց մեղավորի:
Հիմա տեսնում են Մօռվի, Քիրսի կանաչ լանջերին:
Նժոյզին հեծած, ականջն Արցախա արդար կանչերին:
Սուրը հանել է թուրք բուղաների սերմոդի հանդեպ,
Որ մեր Արցախը ապրի դարեդար, ինչպես հայոց բերդ,
Տեսել են նրան, նրան տեսնում են ու կտեսնեն դեռ,
Թուրմ ու խաչն առած որպես Արցախի հավերժական տեր:

05.01.1992 - 25.03.1992
Երեւան, սրտաբանական հիվանդանոց

ՆԱՐԱՏԱԿ ԼՈՒՍՈ

(Պոեմ)

ՄԱՍԻ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ 1
ԾՆՈՒՆԴ

Նա պիտի ծնվեր Սասմա լեռներում,
Վարագա վանքում մկրտվեր մի օր,
Մշո վարդերը ջահել ձեռքերում՝
Սիրո մեղեդի երգեր մեղմօրոր,
Նարեկա վանքում Նարեկը կարդար,
Սուլը Կարապետի օրինանքը լսեր,
Արբեր Անիի վեմերով ճարտար,
Աղթամարում իր հրճվանքը կիսեր...
Միերի դրան Միերին կանչեր,
Խնդրեր Դավթի ծին ու Թուր Կայծակին,
Թշնամուն ասեր. «Դեհ, ինձ ճանաչի՞ր»
Եվ շանթեր նրան ուժով կայծակի:
Բայց աշխարհի եկավ օվկիանից այն կողմ,
Կալիփոռնիայի Վիսելիա ավանուն,
Ուր պապն էր հասել փախած անողորմ
Թուրքական թրից, մահվան սահմանում:
Ծնվել էր աշնան երանգների մեջ
Ու կնքվել օտար Մոնթե անունով,
Ու նրա կյանքը պիտի խոխոչեր
Օտար հասցեով եւ օտար հունով:
Ու երբ լրացավ տասներկու տարին,
Ղեմը Եվրոպան լույսերով շողաց,

Երազանքները առած հոգու մեջ
Եվրոպա Եկավ՝ ծովափը թողած:
Ճետո նա եղավ քաղաքներում իհն՝
Արեւելքի եւ Աֆրիկյան հողում,
Փարվեց լուսերին նոր Երեւանի,
Որտեղ պապերի հույսերն են շողում:
Փարվեց եւ լսեց կանչը իր արյան,
Տեսավ հետքերը Յայկ նահապետի,
Դավթի թռիչքը տեսավ նորօրյա,
Գահավիժելը Յրազդան գետի:
Գեղարդը տեսավ ու տեսավ Գառնին,
Մեծն Տիգրանի տաճարում Եղավ,
Երեբունու մոտ, Բլուրում Կարմիր,
Արգիշտին Արծիվ նժույգը բերավ,
Ասաց. «Կհեծնես, ինչպես արծվածուտ,
Նժույգիս գույնը արյանդ գույնն է,
Արեւելք գնաս, գնաս արեւմուտք,
Յայաստանը քո պապերի բույնն է,
Նրա անունով կապրես աշխարհում,
Նրան կընծայես ուժերդ բոլոր,
Կկոփիվես նրա արեւի հրում,
Կչափես նրա անդունդները խոր,
Եվ այդ խորությամբ կպաշտես նրան,
Այդ խորությամբ էլ կբարձրանաս վեր,
Պատգամս գրիր քո սրտի վրա,
Ին սուրբ պատգամով միշտ կառնես թեւեր,
Կփարվես հողին քո քաջ պապերի,
Արեւդ նրա խորքում է քնած,
Նա քո մայրն է սուրբ, նա՝ քո պաշտելին,
Կիիշես խոսքս, որտեղ էլ գնաս:

ԳԼՈՒԽ 2 ՀԱՍԱԿ

Նորից ծովից այն կողմ,
Նորից Կալիֆոռնիա,
Ինչպես պտուտահողմ
Միտքն է եռում նրա,
Պարմանի է դարձել՝
Կրակն աչքերի մեջ,
Յոգում շիկացել են
Յազար երազ ու տենչ,
Ավարտել է քոլեջ,
Յիշողությանք ընտիր,
Սերտել ամեն մի էջ
Պատմության ու կյանքի,
Գիտե յոթը լեզու,
Գիտե վարժ ու խորքով,
Ու թե վեճի բռնվեց,
Նա կհաղթի խոսքով:
Յոթը լեզու գիտե,
Ուրեմն յոթ մարդ է,
Յոթ ուղի է հարթել,
Ամեն ուղի փառք է,
Յոթը ծաղկի բույրով
Նա կարող է մրցել,
Յոթը ծաղկի թույրով
Ծիածանն իր գծել...
Զարմանալու ոչինչ
Տաղանդի մեջ չկա,
Իր պապերի աննինջ

Արյան կանչը վկա,
Նա Մաշտոցի թուն է,
Թոռն է Շիրակացու,
Մագիստրոսի թուն է,
Թոռն է Նարեկացու,
Աճառյանի հանգույն
Մի նոր խնկածառ է,
Լեզուների ծովում
Միտքը միշտ պայծառ է,
Արմատները խորն են՝
Կապված հայ հողի հետ,
Յիշողության լույսը
Շափաղում է վետ-վետ:

Կալիֆոռնիայի համալսարանում
Պատմաբան դարձավ ու հնագետ,
Ինչ իհնգ տարում են մարդիկ ստանում,
Նա փնջեց արագ, տարում երեք,
Բըրքլիից պիտի Օքսֆորդ գնար՝
Ղոկտորականն իր ավարտելու,
Բայց խորհում էր նա՝ գտներ մի հնար,
Իր ժողովրդին օգուտ բերելու:
Նրա սրտի մեջ, փորորկված հոգում,
Գրվել էր արդեն Մայր Յայաստան,
Երդում էր տվել սիրով քաջ որդու
Նրան ծառայել հոգով հայկական,
Գաղտնի բանակի գինվորը դառնալ,
Մարտնչել ամեն ձեւ ու գնով,
Մինչեւ պապերի երկիրը հառնի
Ու սլանա իր նախկին հունով:

ԳԼՈՒԽ 3 ԵՐԱԶ

Մոնթեն երազում Սասունը տեսավ,
Սասնա լեռներում իր Մելքոն պապին,
Պապի հետ Սասնա ամրոցը հասավ,
Որ շողշողում էր ամառվա տապին,
Պապը խորհում էր, տխուր էր պապը,
Բայց հպարտ էր, որ թոռ ուներ հասուն,
Ուրեմն չի փլվել Սասնա տան պատը
Ու չի վերացել անունը՝ Սասուն:
Ու երբ բարձրացան կատարը լեռան,
Ողջ Յայաստանն էր ասես ափի մեջ,
Յեռվից գերում էր շքերթը լերանց,
Շքերթ, որ չուներ ոչ սկիզբ, ոչ վերջ:
Իր թոռան ուսին դմելով ձեռքը,
Պապը, որ ասես բուսել էր ժայռից,
Մի կերպ մեղմելով սրտի խոր վերքը,
Պատզամ հեքիաթը սկսեց ծայրից.
«Ինչ որ տեսնում ես, քոնն է, ին որդի՝
Յիշողությանդ թող ժանդ չչորի,
Չոնն է Տիգրիսը,
Եփրատը քոնն է,
Չոնն է Բիթլիսը,
Բյուրակը քոնն է,
Չոնն է Մասիսը,
Սիփանը, Սիսը,
Մշո արտերի ծփանքը քոնն է,
Սուլր Կարապետի սուլր վանքը քոնն է,
Վանա կապուտաչ լճակը քոնն է,
Չոնն է Ե՛ւ Ղարսը, Ե՛ւ Արդահանը,

Քոնն է եւ Անին, քոնն է եւ Վանը,
Յայց աշխարհի վանքերը բոլոր,
Սարսափից լռած զանգերը բոլոր,
Խաչքարերը պերճ, ամուր բերդերը,
Կապույտ աստղերին մոտիկ ծերպերը,
Նոր գերի դարձած Նախիջեւանը հին,
Բերրի Ուտիքը, Արցախը անգին,
Բոլոր դաշտերը, լանջերը քոնն են,
Քո նախմիների կանչերը քոնն են,
Նրանց հետ, որդիս, խոսիր հայերեն,
Նրանց սրտի մեջ հոսիր հայերեն,
Նրանց պատկերը առ հոգուդ խորքում,
Եվ առանց նրանց չառնես դադար-քուն:
Մինչեւ չփրկես Յայրենիքը քո,
Զասես, թե թոռդ են, իմ պապի Մելքոն:
Փոկես երկիրդ, դու կառնես համբավ,
Իմ Մոնթե որդի, քեզ բարի ճամփա»:

ԳԼՈՒԽ 4
ԽՈՅԵՐ

Ծլարձակեց նրա հոգուն
Մայր պատմության ամեն ակոս,
Սակայն ինչո՞ւ սրտի խորքում
Մի պարծանք է, հազար՝ ափսոս:
Ծիածանը հայց ազգի
Ո՞ւմ մեղքերով ցնդեց այսպես,
Ազգն էլ ապրի վտարանդի՞՝
Ծվեճ-ծվեճ ամպերի պես:
Պապը Սասնա սարերի ծուռ,

Թոռը օտար ափի ծաղիկ,
ճակատագիր, ինչո՞ւ ես ծուռ,
ինչո՞ւ տվիր աղցունքն աղի:
Տոհմածառի արմատը մեր
Ախր շա՞տ էր, շա՞տ էր ամուր,
Բայց մնացինք որբ ու անտեր՝
Մեր հոգում՝ լույս, սրտում՝ մրմուռ:
Արեւելքի դրների մոտ
Յառնել էին Երվանդունիք,
Առանց նրանց Դարեհը գոռ
Օտար հյուրեր չեր ընդունի,
Մեծ Արտաշես թագավորի
Յիմնած տունը ինչպե՞ս փլվեց,
Տիգրան Մեծը իր թեւավոր
Պատգամ-փառքը ո՞ւմ պահ տվեց:
Արշակունյաց գահը հզոր
Ո՞ւմ ավանդով անվերջ սնվեց,
Ինչո՞ւ, ինչո՞ւ մեր Պատմահոր
Յավերժական Ողբը ծնվեց,
Տոհմածառի արմատը մեր
Ախր շա՞տ էր, շա՞տ էր ամուր,
Նա ծառս ելավ խալիֆի դեմ,
Ու չմնաց ավեր, ամուլ:
Բագրատունիք ի մի բերին
Ծվեն-ծվեն հողերը մեր,
Մեր արծիվը տվեց թեւին,
Նոր շունչ առան ասքերը մեր...
Սակայն ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ
Արծրունիք դարձան գոռող...
Խօռվեցին Ղարս ու Սյունիք,

Չորագետը թեքվեց խօսով,
Սի մայր երկիր, հինգ թագավոր,
Բյուզանդիոնի, Սելջուկի դեմ,
Աշխ, Յայաստան, Վերքերդ խոր,
Եվ ավերված հողդ եղեմ,
Աջից եկան, եկան ձախից,
Ավերեցին, զարկին անվերջ,
Տերն էլ չանսաց մեր ախ-վախին,
Մեծ եղեռնի դժոխքի մեջ:
Մեզ Տեր-Զորի բաժին դարձրեց
Յաթաղանի հարվածը սուր,
Եվ քայլում ենք այդ օրվանից՝
Մեր սրտերում մի սեւ սարսուռ...
Մսորում էր Մոնթեն այսպես,
Մերթ Փարիզուն, Յունուն մերթ,
Կրակվում էր սրտի մեջ կեզ
Մեր պատմության ամեն մի թերթ:

ԳԼՈՒԽ 5
ԲԱՆՏ

Յոռնի աշունը իր երանգներով
Աշնան պատճենն է մեր երեւանի,
Այնտեղ էլ հրաշք իր երազներով
Յեքիաթ է պատմում գորշ եղրեւանին,
Պատմում է անցած փառքերի մասին,
Յեքիաթը մանում դաժան մարտերի,
Յուշում են լեզվով ականատեսի
Պատմությունները բազում դարերի:
Նա Տիգրան Մեծի անունն է տալիս,

Թե ոնց է ջարդել գոռ Լուկովլոսին,
Թե Տրդատ Մեծը հին Յօնմ գալիս
Ներոնը ոնց էր փոխվում փարոսի:
Պատմում էր աշնան մեղմիվ շշուկով
Գրքերի մասին խոհեմ Տիրանի,
Յայ արքաները ոնց էին շուրջով
Յոռմում հազմում իրենց Ծիրանին:
Այդպես թերթում է անցած-գնացած
Կռվի-հաշտության էջերը անթիվ,
Երանի տալիս փառքերով օծված
Յուշ ու հիշատակ օրերին անտի:
Բայց խորհում է եւ հին Եղբեամին
Յոռմաց կայսրերի սխալի մասին,
Ինչո՞ւ թույլ տվին, որ յաթաղանի
Զոհերը դառնան Պոլիսն ու Անին:
Յինա Յոռմում Թուրքիո դեսպանն է՝
Իր չքմեղության շղարշի ներքո,
Այնպես է գործում, ասես իր տանն է,
Ասես Յօնն է կերտել իր ձեռքով:
Յին Եղբեամու ուղիղ դեմ-դիմաց
Զրույց են բացել մի խումբ հայ քաջեր,
Յոգիների մեջ վրեժն արթնացած,
Պարանոցներին արծաթյա խաչեր՝
Նրանցից մեկը՝ ժիր, սիրունատես,
Ապրած մտքերը հոլովեց այսպես.
«Ոչինչ չի փոխվում աշխարհում անճար,
Թուրքը նետել է փափախն իր նորթե,
Բայց էլի նույնն է՝ նենգամիտ ու չար,
Կարծես ինքը չի ազգերին նորթել:
Նորից ավարի, ավերի տվին

Յայի եւ հույնի խանութները ճոխ,
Քսաներորդ դարի երկրորդ կեսում իին
Վայրենությունն է՝ հազած քեն ու ոյս:
Մահ դեսպաններին ավազակ թուրքի,
Մեր վրեժը թող նրանց սասանի,
Աշխարհն իմանա, որ երկնի ներքո
Մեր ցասումն այնքան պիտի ծածանվի,
Մինչեւ Օսմանի թոռներն արնախում
Չմեղանչեն բյուր մեղքերի մեջ հոծ,
Մինչ տեղի չտան մեր ցավի առաջ
Եվ չճանաչեն եղեռնը հայոց»:
«Ճիշտ է ասում մեր սիրելի Մոնթեն,
Թուրքիո անարդար դեսպաններին մահ,
Մեր ժողովրդին նրանք են մորթել,
Նրանք էլ պիտի պատասխանը տան», -
Վրա է բերում Մոնթեի մոտիկ
Դասընկերներից մի թուխ պատանի,
Մարտ նետվողի պես ձգում է գոտին
Եվ ցասումնալից սպասում ժամին:

Առավոտը բացեց աչքը,
Ճին Ճօռմը քնից ելավ,
Խտալական երգ-հրաշքը
Իր սրտառուչ հելքը բերավ,
Բերավ փունց այգիներում,
ճամփաներում ծիգ ու երկար,
Բերկրանք դարձավ հոգիներում
Ու սրտերում՝ հույսի նեկտար:

Բայց այդ հրաշք երգի ներքո
Անհանգիստ են երկու հոգի,
Նրանք, զինված ռումբ ու զենքով,
Քայլում են դեպ դեսպանատուն:
Իրենց ջահել ուժին վստահ
Մի վճիռ կա նրանց սրտուն.
«Թուրք դեսպանին արժանի մահ»:
Ու հատուցմանք ժամանակի,
Ու բորբոքված հրով ցասման,
Դղրդյունով ուժանակի
Շենքն է ճոճվում դեսպանատան:
Սպանվում է դեսպանը թուրք,
Լուրն է թռչում քաղաքով մեկ,
Ոնց հայկական վրեժի տուրք,
Թեւածուն է լուրն այդ բեկ-բեկ,
Լոնդոն հասնում, հասնում Բեռլին,
Նյու Յորք հասնում, ոնց կորակ-շանք,
Իսկ Փարիզում կալանում են
Յայ Մոնթեխն ու նետում բանտ:

Եվ Յայաստանի ազատագրման
Գաղտնի բանակը ելնում է ոտքի,
Չեն թողնի երբեք, որ բանտում մնա
Վրիժառուների անահանջ ոգին:
- Մոնթեն արդար է, անմեղ է Մոնթեն,-
Ազդարարում են ընկերները քաջ,
Ու դղրդում են մեն մի օրվա մեջ
Քսան ռումբի պայթյուն ու շառաչ...

Եվ նահանջում են ոստիկանները,
Եվ ազատում են Մոնթեխին բանտից,
Եվ այդ օրվանից Մոնթեն դառնում է
Ազատության խիղճ, բայց վտարանդի:

ԳԼՈՒԽ 6

ՎԵՐՈ

Մոնթեն պատմաբան, Մոնթեն հնագետ,
Կոհիս է տալիս իր խոհերի հետ,
Բազում հարցեր են իր դեմ ծառանում,
Պատասխան չկա ոչ մի դարանում:
Պատասխանը կա՝ շպարված, եղծված,
Դայոց խղճի դեմ շրջված ու կեղծված,
Եվ այդ հարցերի շրջապտույտում
Եվրոպան է միշտ անհվը պտտում,
Եվրոպան՝ դարձած դայակը չարի,
Նա մեղքերի դեմ պիտի վճարի:
Դայոց աշխարհը իր հոգու լույսով
Ապավինել է նրան ջերմ հույսով,
Բայց հուսախարվել բոլոր դարերում,
Մնացել մենակ իր սեգ սարերում...
Դազար ութ հարյուր քսանութ թվին
Թուրքերը մեզ մի նոր հարված տվին,
Մեզ ի՞նչ պարզեւեց Թուրքմենչայը, ի՞նչ,
Թուրքիո թիկունքում Եվրոպան էր միշտ:
Դազար ութ հարյուր յոթանասունութին
Լոնդոնը փարվեց Թուրքիո մռութին,
Բեռլինում հայոց հին հարցը շրջվեց,

Ու նորից հայի երազը ջնջվեց...
Հազար ութ հարյուր իննսուն հինգին
Եվրոպան ժպտաց Սուլթան Յամիդին,
Արյունով ներկվեց Վասպուրականը,
Ցնծում էր մահվան սեւ ուրվականը...
Հազար ինն հարյուր տասնեւչորսին
Վիլիելմ Երկրորդը ելավ նոր որսի,
Զեռք-ձեռքի տված կայսր-երիտրուրք,
Բնաջինջ արին մի ողջ ժողովուրդ:
Այժմ էլ... հիմա... այս նոր օրերում,
Թուրքիո նախագահն իր նոր շորերում
Հտախտ ստում է ամբողջ աշխարհին,
Որ հայերն իրենց բնաջինջ արին...
- Օ՛, ո՛չ, - վճռում է Մոնթեն արիական,
Քանի ավերված մեր երկիրը կա,
Քանի կա ցրված իմ ժողովուրդը,
Սուլր է պայքարի, գենքի խորհուրդը:
Թուրքիան ինչքան էլ մեր հարցը խաչի,
Մեծ եղեռնը նա պիտի ճանաչի:
Մեզ պիտի գրկեն Մուշը եւ Վանը,
Մեր Արցախը եւ մեր Նախիջեւանը,
Մեր Սասունը եւ մեր չքնաղ Բերկրին,
Պիտի տեր դառնանք մեր գերված երկրին...
Ու մտորում է, մտորում Մոնթեն,
Եվ ինչքան էլ որ նոր դավեր հորդեն,
Նա չի հեռանում իր ճանապարհից,
Նա չի սարսափում բանտից ու մահից,
Ոնց քաղաքական կամավոր մարտիկ

Իրեն նետել է սրբազան մարտի,
Թուրքիան, Եվրոպան սաստում են, դատում,
Ուզում են «խելքի բերել» սեւ բանտում,
Բայց համառ է նա, եւ ուղին որոշ,
Սիրտը դարձրել է եռագույն դրոշ...

ԳԼՈՒԽ 7

ԼՈՒՐԸ

Եվ փարիզյան բանտից հետո
ճամփան նրան Եմեն տարավ,
Կամչով արյան, սրտի հելքով,
Պայքարելու նոր ուժ առավ,
Խոհերի մեջ Հայաստանն էր,
Ժողովուրդն էր իր ցիր ու ցան,
Օտար ափում լիներ, տանը,
Երազում էր մի ծիածան,
Որ կամարվեր ծովերից-ծով՝
Երանգներով հայոց բախտի,
Իջներ Մասսի պարանոցով,
Փարվեր Արագածի թախտին,
Թեւերի տակ առներ փրկված
Պատառ-պատառ հողերը մեր
Ու դարերին տաներ գրկած
Մեսրոպատառ շողերը մեր:
Երազում էր, երբ լուրն առավ
Կռվի մասին սեգ Արցախի,
Ու որոշեց, որ իր սիրտը
Նրա գրկում թեւարախի:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ 1 ԱՐՑԱԽՈՒՄ

Յազար ինն հարյուր իննսունմեկ թիվ,
Սեպտեմբեր... աշուն... ճանապարհներ զոց...
Ազերին Մօռվ սարի լանջերից
Կրակ է թափում գյուղերին հայոց:
Օղակի մեջ է իին Գյուլիստանը՝
Արցախ աշխարհի մի թեւը անպարտ,
Յինա եկել է թոռը սելջուկյան
Ու մահ է սփռում ամեն ակնթաքք:
Խելքը կորցրել է Կրեմլը Կարմիր,
Եվ Գորբաչովն է ծչում թուրքամետ,
Եվ խորհրդային զորքերը ընտիր
Արցախն են վառում խուժանների հետ:
Եղծվել են, պղծվել սրբություն ու փառք,
Գյուղն են ավերել քաջ Բաղրամյանի,
Կյանքը դարձրել են տխեղծ առ ու ծախը,
Թեւերն են բացել անարժանիի:
Ազատությունը յոթ տասնյակ տարի
Կեղծիքի ծխից մաշվել է արդեն,
Յինա Արցախը ելել է արի
Եվ շղթաները ուզում է ջարդել:
- Իմ տեղն այնտեղ է,- Մոնթեն է ասում,-
Յեռու ափերից հասնում Գյուլիստան,
Զահել սրտի մեջ վրեժ ու ցասում,
Դառնում զինվորը սեգ Արցախա տան:
Թշնամու դեմ կրակ ու հուր,
Ընկերներին փրկարար ջուր,
Օր ու գիշեր ոսխներին

Կոտորում է ցասումով լուռ:
Ազերական մահերի դեմ
Բոռնցքվել է արեւաբաղձ,
Արցախվել է Արցախի պես,
Մարտնչում է արցախացած:
Մոռվ սարն է ժպտում նրան
Բարձունքներով իր երկնաքեր,
Ու Մոնթեի շրթի վրա
Թղթում է բառը «Օքեյ»:
Մերթ Մանաշիդ գյուղի դիրքում,
Մերթ Բուզլուխում, Էրքեջում մերթ,
Ֆիդայական կուռ շաղքերում
Աստղ է դառնում, դառնում է բերդ:
Մերթ նետվում է Կարաչինար,
Մերթ արծվանում Վերին Շենում,
Չի խնայում կամք ու հնար
Յայրենախոս կռվի բեմում:
Ու դառնում է նա աչքի լույս,
Վիզ ու սատար՝ ընկերներին,
Սրտերի մեջ վառում է հույս,
Սիրով անբիծ եւ անբերի:
«Սովորական զինվոր չէ նա,
Յրեշտակ է, կռվի ոգի»,
Լուրն է թեւում հոգեհմա՝
Ե՛վ ցանկալի, Ե՛ւ ամոքիչ:
Ու չորս ամիս մարտնչում է Գյուլիստանում,
Մարտերի մեջ ոչ մի ժամ չի հանգստանում,
Նա Եկել է արյան կանչով, կանչով սրտի,
Մարտնչում է ամռան տապին, ձնռան ցրտին:
Իննսուներկուսի Ամանորին թեժ,
Երբ պատերազմը հասնում է կատար,

Յին Վարանդայում արծվասիրտ Մոնթեն
Դաշնում է հաճուր իրամանատար:

ԳԼՈՒԽ 2
ԵՐԴՈՒՄ

Որդին չի երդվում մոր սիրո առաջ,
Թող բացառություն լինի այս անգամ,
Յավատա դու ինձ, վիրավոր Արցախ,
Յեռվից քո գիրկն են եկել ինքնական:
Ին երակները գետերն են քո խենթ,
Կարկառ ու Վարանդ, Խաչեն ու Թարթառ,
Ին բարձունքները սարերն են քո սեզ,
Արեւսար ու Քիրս, Դիզափայտ, Մոռվ:
Ին երազները թեւերն են հայոց,
Թեւերիս մեկը դու ես հաղթական,
Ինչ որ փրկվել է աշխարհում հայոց,
Իրենց գոյությամբ քեզ են պարտական:
Ով քեզ ընծայեց դաժան օտարին,
Ին թշնամին է նաեւ, մայր իմ սուրբ,
Որդուդ հայտնվելը գրկում քո բարի
Յամարիր սիրո, նվիրումի տուրի:
Քո ընդվզումն է գիրկդ բերել ինձ,
Եկել են ես իմ եղբայրների մոտ,
Քո բաղծանքները միշտ գերել են ինձ,
Ին մեջ եղել են ոնց կապույտ կարոտ:
Եկել եմ՝ փրկեն երազդ անմար,
Որ հար կամարվես Մայր Յայաստանին,
Կլինեմ քեզ հետ, կապրեմ քեզ համար,
Բախտն այս աշխարհում ինձ ուր էլ տանի:
Վրիժառու եմ, մայր իմ, իմացիր,
Երկու միլիոնի արյան սուրբ կանչով,

Մենք ինչքա՞ն ապրենք այսպես ցանուցիր,
Այսպես բզկտված ու խոր հառաջով:
Եկել եմ գիրկդ ափեղից օտար,
Դարձել զավակդ եմիշճանեցի,
Որդիդ՝ քեզ պաշտպան, մայրդ՝ ինձ սատար,
Ես այս օրվանից մածկալդ եմ գենքի:
Զինվորի երդում ես քեզ եմ տալիս
Ու պիտի անսամ քո հրամանին,
Երբ հրամանը մորից է գալիս,
Այնտեղ անելիք չունի թշնամին:
Մայրս հեռու է, մայրություն արա,
Մայրն է տառապում զավակի ցավով,
Ինձ նոր անուն ես տվել սիրառատ,
Ընդունում եմ, մայր, ինձ կոչիր Ավո:

ԳԼՈՒԽ 3 ԴԱԺԱՆՈՒԹՅՈՒՆ

Ամիրանլարը՝ գյուղն ազերական,
Չարիք է դարձել զենքերով առատ,
Գրադ, թնդանոթ, գնդացիր, ական,
Կրակ են մաղում Մարտունու վրա:
Տարիներ առաջ Մարտունու ծայրին
Վաչկան ազերի մի քանի հովիվ
Տանտեր են դարձել կրինչով վայրի
Ու կյանք չեն տալիս հային տնովի:
Կուրոպատկինոն՝ հայակերտ ավան,
Դարձրին թուրքական ավազակաբույն,
Ճայն իր օջախում սուրբ ու հնավանդ
Նրա երեսից չունի հանգիստ քուն:
Դիմացի ծորում Դարադաղլուն է
Սահեր որոճում մոլուցքով չարի,

Ամեն մի գյաղա զինվել իր հյուղում,
Վճռել է մի օր Սարտունին վարի:
- Ի՞նչ անենք, Ավո՞ւ, Ավո՞ւ, ո՞ւր գնանք,
Այս կրակի տակ մենք ինչպե՞ս մնանք,-
Դիմում են իրենց հրամանատարին
Կանայք ու ծերեր՝ վաստակած, բարի:
- Ո՞ւր պիտի գնանք,- ասում է Ավոն,-
Ո՞ւմ պիտի թողնենք մեր լավ շեները,
Յին ու նորօրյա երազով, ցավով,
Մենք Արցախինն ենք, Արցախը՝ մերը:
Պիտի բռունցքվենք ճակատ ու թիկունք,
Պիտի պաշտպանենք հենց ինքներս մեզ,
Արցախցին ե՞րբ է ցույց տվել թիկունք,
Դժվարությունն այս կանցնի ծխի պես:
Ներարկում է հույս ու հավատ,
Թեւեր տալիս, խրախուսում,
Անհանգիստ է հոգին սակայն,
Նոր բոթեր են անվերջ հոսում,
Այս անգամ էլ մի ֆիդայու
Օղակել են դիրք գնալիս,
Ավոյի մոտ մայրն է վայում,
Ու գերվածի կինն է լալիս:
- Մի լար, մայրիկ, քույրիկ, մի լար,-
Ավոն ասում, ճամփում է տուն,-
Թող իմանա գյուղն այս հիմար,
Թե ում հետ է հաշվի նստում:

Իջնում է մութ երեկոն,
Ավոն գնում է դիրքը,
Թշնամական զարկերից

Շիկանում է երկինքը,
Ամիրանլար գյուղի մոտ
Մի անսովոր խարույկ կա,
Այդ խարույկի կրակով
Խաղում է մի թուրք սպա:
Եվ կրահում է Ավոն,
Որ տաճում են ֆիդայուն,
Ու ձիգ ժայռաշղթայով
Իր քաջերին է տանում:
Յարյուր մետրի վրայից,
Ասես էկրանի վրա,
Տեսնում է թուրք սպային,
Լսում հարցերը նրա.

- Դավիթ ես, թե՝ Արմեն ես,
Յայ ես, դու մեր թշնամին,
Խելոք պատասխանիր մեզ,
Թե չէ, այստեղ, այս ժամին
Այս թեժացած խարույկում
Քեզ կվառեմ կենդանի:
- Ղարաբաղը ո՞ւմն է, ասա:
- Մերն է հայոց Ղարաբաղը:
- Դուք եկվոր եք, հայ ավազակ,
Թուրքերինս է Ղարաբաղը:
- Ոչ, ձերը չէ, սա մեր հողն է,
Սա օջախն է մեր պապերի,
Վկան հայոց տառն ու տողն է
Ամարասի հին պատերին:
Գանձասարն է, վանքն է Ղադի,
Գտչավանքն է մեր մեծ վկան:
- Ես լավ գիտեմ այդ հայ գյաղին,
Մուալլիմ է նա պատմության,-

Ասում է մի ձիգ ազերի
Եվ մոտենում հայ Ֆիդայուն.
- Աղա, Դավիթ, քեզ չեն ների,
Թեկուզ տղան Արամ դայու,
Ասա - ճերն է Ղարաբաղը,
Ճերն է, դուք էլ դեկավալեք,
Թող քո անգիր արած խաղը,
Խարույկի մեջ քեզ կվառեն:
- Ղարաբաղը մերն է եղել,
Մեր օջախն էլ պիտի մնա,
Ես էլ քեզ լավ գիտեմ, Մամեդ,
Դու էլ գողն ես մեր պատմության:
- Ղե՛հ, հերիք է, հայի գյաղա,
Կատաղում է սպան թուրքի,-
Պատմությունը կեղծում է դա,
Նետեք գիրկը թեժ խարույկի:
Մոռացել են Շուշվա դասը,
Բաքվի դասը, Սումգայիթի,
Մի վարանեք, իմ ասկյարներ,
Լավ դաս տվեք այդ «հգիթին»:
Ու իրելով հայ Ֆիդայուն,
Բզկտեցին շորերը նոր,
Կապկապեցին ծեռք ու ոտքեր,
Բորբոքեցին կրակը խոր...
Յենց այդ պահին Ավոն դիրքից
Գոչեց. «Տղե՛րք, առա՞ջ, վրե՛ժ»,
Ու նետվեցին ժայռերից ձիգ,
Օղակելով խարույկը թեժ:
Կրակեցին աջ ու ձախից,
Ազատեցին հայ Ֆիդայուն,
Քրտինքի մեջ Ավոն ասաց.

«Ապրեն, որդի Արամ դայու,
Ղարաբաղը, այո՛, մերն է,
Յավերժ մերն էլ պիտի մնա,
Բայց խարույկն այս մեզ դաս տվեց,
Ամիրանլարը պիտի գնա...»

ԳԼՈՒԽ 4

ԿԱՍՔ

Չարամիտ թշնամու դեմ
Ավոն հուր-կրակ դարձավ,
Կոփելով կամքն իր անթեք
Դժվարին ուղի անցավ:
Նա կարգ ու կանոնի մեջ
Դարձավ մի աստղ-աստված,
Բանակում բացեց նոր էջ՝
Սեփական վարքով հաստված:
Պինդ կողպեց գյուղերն իրենց
Լքող, թույլ մարդկանց առաջ,
Յաճելի մի երկյուղ էր,
Մտրակող խոսքի շառաչ:
Քաջերին ի մի փնջեց
Ու դարձրեց նա բախտակից,
Նահանջն ու վախը ջնջեց
Զինվորի դժվար կյանքից:
Գողին ու չարագործին
Սանձեց ու խելքի բերավ,
Զինքերը հավաքեցին
Մորթապաշտ ու բացբերան:
Բորբոքեց բոլորի մեջ
Մի ձգտում, մի դավանանք,
Ոնց պատգամ՝ խոսքն էր հնչում.

«Պետք է մի բռունցք դառնանք:
Մենք մի սուրբ օջախ ունենք,
Վտանգված մի հին երկիր,
Ոստիսը աղ է ցանում
Խորացող մեր մեծ վերքին:
Նա լույսն է ուզում մարել
Մեր անբիծ օջախների,
Սարսափը, նահանջը մեր
Մարտի մեջ մեզ չեն ների:
Արցախը մեր թանկ հողն է,
Պատիվը, դարպասը մեր,
Մեր հույսի անմար շողն է,
Դպրոցը ու դասը մեր,
Այս կրկում ազգը հայոց
Արցախը եթե գիշի,
Հայոցը դարձրած վայոց,
Կփակի էջն իր վերջին»:
Ու ելավ ողջ Մարտունին,
Դարձած մի սիրտ ու հոգի,
Եվ ասաց. «Քեզ հետ ենք մենք,
Մեր քաջ ու խելոք որդի»:

ԳԼՈՒԽ 5 ՈՒՐՅԱՆ ՍԱՐԸ

Թուրքերն առել Ուրյան սարը
Ու դարձրել են նահվան երախ,
Ղեմը Սոսն է ու ճարտարը,
Մարտունին է դարձած թիրախ:
Կրակում են թնդանոթից,
Ականներ են նետում անվերջ,
Ասես զենքի սեւ հնոցից

Դեմ է ոռնում զիլ, մահատենչ,
Դեւ չէ, ոչ էլ դաժան հրեշ,
Սոր Թալեաթն է, ենվերն է չար,
Որ անունով էլչիբեյի
Կոնչում է մտագալար,
Կոնչում է, որ ավերեմ,
Որ ավարեն Արցախը ողջ,
Մորթեն, լլկեն գոռ հայերին
Ու կրակը նետեն ողջ-ողջ:
Կուտակել են գենքեր բազում,
Ոուսիո գենքեր, գենքեր Թուրքիո,
Ու գենքերն այդ մահ են հազում
Արցախի դեմ նախատինքով:
Ու զոհվում են ծեր ու մանուկ,
Իսկ աշխարհը խիղճն է ծախում,
Թվում է, թե ծամփով բանուկ
Մահն է շրջում հայ Արցախում.
«Պետք է, պետք է հենց այս գիշեր
Վերցնել բարձունքն այդ Ուրյանի»,
Ավոն՝ հոգում անթիվ հուշեր,
Դարձած Նժդեհ եւ Անդրանիկ,
Որոշումն է հայտնում խստիվ
Զինվորներին իր փոքրաթիվ:
Իր վճիռն է հայտնում Ավոն՝
Սասնա թլոր Դավիթն ինչպես,
- Ով ուզում է, իր իսկ կամքով
Թող գա ինձ հետ, պատրաստ եմ ես:
Ե՛վ միակամ, ե՛ւ ինքնակամ
Մոտենում են աջ ու ձախից.
Քաջ Արթուրը, Արմենը քաջ,
Քաջ Վրեժը, Բարմենը քաջ,

Արարատը եւ Վարդգեսը,
Հովհաննեսն ու Արտաշեսը:
Ու խմբվում են Ավոյի շուրջ,
Ավոյի պես անվախ ու լուրջ,
Սրտերի մեջ լույսը փառքի.
- Միշտ քեզ հետ ենք,
Տար մեզ մարտի:
Ավոն լսում, առնում է թեւ,
Ու շնչում է հպարտ, թեթեւ.
«Թվով շատ է մեր թշնամին,
Բայց կցնդի ինչպես քամի,
Մեկս տասի դեմ կկռվենք,
Հաղթանակը մեր կկռենք,
Նրանք սարի գլխին թառել,
Մեր գյուղերն են նշան առել,
Ունեն եւ տանկ, եւ թնդանոթ,
Ականանետ,
Նռնականետ,
Բայց կլինենք խեղճ ու մոլոր,
Թե չխենք գենքերն այդ նոր:
Ու գրպանից թուղթը հանում,
Իր պլանն է նա վերծանում,
Խորհուրդ տալիս, խրախուսում,
Իր խելամիտ խոսքը ասում,
Վճռում, որ վաղ արշալույսին
Պիտի լինեն սարի ուսին:

Դեռ չբացված այգն Արցախի,
Օղակվում է սարը Ուրյան,
Յրե կամքով, առանց վախի,
Սրտերի մեջ վճիռն արյան,

Արծիվները հայ քաջազուն
Ելնում են վեր ու հարվածում,
Բոլորն էլ թեժ, վրիժառու,
Մարտում դարձած նշանառու,
Չեն վրիպում, չեն վարանում,
Յեղեղի ախս հա՝ վարարում,
Կրակելով վեհ ու հպարտ,
Սլանում են դեպի գագաթ:
Բայց բառել է սարի վրա
Զարագուշակ գունդն ազերի,
Որ աչքերը բացում հանկարծ
Ու կրակ է թափում վերից,
Գնդակները մահ են գուժում,
Դղրդում են արկ ու ական,
Կողմերն իրար չեն հանդուրժում,
Յողն է վառվում արցախական:
Յորդորում է Ավին անվերջ
Իր քաջերին ռադիոկապով.
- Որ թշնամին ուշքի չգա,
Արագ ելեք, ելեք թափով:
Ու ելնում են չորս կողմերից
Եվ օձիքն են սեղմում սարի,
Յալածում են չար հողմերին
Մարտիկները մեր քաջարի,
Ու ելնում են դեպի գագաթ,
Ուր թառել է ոսոխը նենգ,
Եվ Ավոյի ծայնը հպարտ
Սիրտն է շոյում ինչպես օրիներգ.
«Մեր հարվածը պիտի զգան
Զավթիչները սարի վրա...
Որ բարձունքում ուշքի չգան,

Թափո՞վ ելեք, ելեք արա՞գ»:
Ու ելնում են, ելնում թափով,
Ոտքերի տակ հող հայրենին,
Իսկ ոսկիք մօնչում է
Օրհասական ու վայրենի:
Արցախի հայն իր կրծքի տակ
Ուժն է առել սուրբ օջախի,
Պաշտպանում է արյանք իր տաք
Յազարամյա տունն իր պապի,
Նրա դիմաց սուրբ Եղիշեն,
Ամարասն են ավանդական,
Որ աղոթում օր ու գիշեր
Ու մաղթում են ժամն հաղթական:
Արցախսցին լույս է տանում
Իր հայրենի բարձունքն ի վեր,
Իր օջախի հույսն է ցանում՝
Նրանից էլ առած թեւեր:
Իսկ ագերին խարված, մոլոր,
Ինչպես զավթիչ՝ թառել սարին,
Կրակում է չար ու խոլոր,
Ողջ Արցախն է ուզում վարի:
Նա պատմության բութ գեղջարար
Բունիաթռովի զոհն է դարձել,
Քաղաքական նենգ այրերի
Յրամանով կրակ բացել...
Եվ ասում է. «Մերն է տուն-տեղ,
Գաղթակա՞ն է հայը այստեղ,
Այս վանքերը թուրքն է կերտել,
Եկեղեցուն թուրքն է երգել,
Որ Սովուս ու Դավթակ թուրք են,
Թուրք են Գոշն ու Արեւելցին,

Որ Ալավկա Որդին թուրք է,
Թուրք է նաեւ Գանձակեցին,
Որ թուրքինն են խաչքարերը,
Կամուրջները կամարակուռ,
Որ թուրքինն են եւ դարերը
Եվ դարավոր վանք ու մատուռ:
Ախր ինչպե՞ս չծիծաղի
Արցախեցին այս կարդալով,
Ախր հոգին ինչպե՞ս ծախի,
Յերյուրանքին տեղի տալով,
Ինչպե՞ս չասի, տո՞՝ շան որդի,
Ցնորվա՞ծ ես, թե՞ խելագար,
Ստին շորեր հագցրել դորբի,
Զարմացնում ես մի ողջ աշխարհ...
Արցախեցին ինչպե՞ս չասի,
Պապիս տունն ու տեղը հայ է,
Շիրիմը հայ, խաչքարը հայ,
Սրբավայրն ու մատուռը հայ,
Աղբրի ակը եւ գուռը հայ,
Պատի հիմքում պատզամը հայ,
Կալի եւ թին, եւ կամը հայ,
Ամեն տեղ էլ խոսքը արդար՝
Եվ հայերեն, եւ հայատառ...
Ամարասի պատերը կուռ
Յայերեն են խոսում դարեր,
Յայերեն են աղոթք կարդում
Գտչավանքի վեճ ու քարեր,
Յայերեն են միշտ զրուցում
Գանձասարի պատերը սեզ,
Յայերենն է իր մատուցում
Դադիվանքը ինչպես մի բերդ:

Մոգոնում ես դու, շան որդի,
Ծռում ես քո կեղտոտ հոգին,
Պատմությունն ես մեր փափախում,
Անցյալ չունեք դուք Արցախում,
Վերցրու բրիչ, բահ եւ ուրազ,
Վեր կաց մի օր, գնա Թուրան,
Փնտրիր պապին Արփ-Արսլանի,
Որ ավերեց Ղարսն ու Անին,
Լենկ-Թեմուրին փնտրիր այնտեղ,
Որ ծնվել էր ոնց մկնդեղ,
Ե՛վ ավերել, եւ ավարել,
Վարպետներին քշել-տարել,
Ղարձած անգղ, դարձած հովազ,
Իրար խառնել հունդ ու ավազ:
Գնա, Միջին Ասիա գնա,
Այնտեղ հարցրու քո անցյալից,
Ի՞նչ ես ուզում մեր մանանա,
Մեր սրբատուն լեռնաշխարհից:
Մեկ եք արել խոսքերը ձեր,
Թե՛ պատմաբան, թե՛ բանաստեղծ,
Թե՛ նորաթուխ պրեզիդենտ,
Թե՛ գեներալ վախկոտ ու կեղծ,
Զեր նենգածին խոսքը ծփաց
Աքաթուրքից մինչեւ Լենին,
Զեզ բեղավոր Սոսոն ժպտաց
Ու նվիրեց Արցախը իին,
Զեզ նվիրեց Նախիջեւանը,
Հայոց երգի ծովը Գողթան,
Զեր ոտքի տակ տրորվեցին
Հաղթ սյուները մեր հայոց տան:
Զանգեզուրն էլ պիտի փլվեր՝

Ողնաշարը Յայոց երկրի,
Թե Նժդեհը չառներ թեւեր
Իր հանճարով ջահակիրի,
Երիս փառք Նժդեհին մեծ,
Նրա մտքին, ուժին բազկի,
Արյան գնով նա հալածեց
Բոլշեւիկին՝ թուրք, հայազգի,
Չքողեց, որ փեշքեց դառնան
Սյունիքը մեր հրեշտակաթեւ,
Արեւածին մտքի տաճար
Եվ Գլածոր, եւ սուրբ Տաքեւ,
Ինչպե՞ս ների Արցախեցին,
Արցախական հողից ծնված,
Ինչպե՞ս մերվի տիղմ ու ցեխին,
Ապրի վիզ ու հոգի ծռած,
Եվ հատուցման այս խիստ ժամին
Յողն է փրկում իր պապերի,
Նա իր պրկված մկաններում
Ուժն է զգում սեզ սարերի,
Նա դարերի ձայնն է լսում
Եվ կանչերը մոր ու որդու,
Ապագան է անվերջ խոսում
Սերունդների սիրով հորդուն...
Ու ելնում է Ուրյան սարի
Լանջերն ի վեր, մահվան միջով,
Յաղթանակի դուռ ու դարպաս
Պիտի բացի նա ճիխնչով...
Ժամանակի զարկերակին
Արծվացել է նա եռակի,
Մոտն է Մոնթեն-խելոք Ավոն,
Քաջն Ավոն, առյուծ Ավոն,

Եվ Արցախա սիրով անբիծ,
Յրամանն է լսում նրա,
Ու տառապայալ այգաբացին
Այն տառապած սարի վրա
Ծփում է մի ողջագուրանք
Եվ դրոշը հաղթանակի.
Ինչպես քաղցր մի գուրգուրանք,
Ինչպես նվեր մի թանկագին,
Խոսքն է հնչում ինչպես օրիներգ.
«Լա՞վ էր, լա՞վ էր, օքե՞յ, տղե՞րք»:
Ու մեկ առ մեկ մոտենալով,
Քրտինքի մեջ մեղմ ժպտալով,
Կրկնում է Ավոն. «Լա՞վ է»,
Սակայն սրտում անգութ ցավն է
Խրվել, ինչպես արնոտ թուրը,
Որ զոհվել է քաջ Արթուրը...

ԳԼՈՒԽ 6 ՄԱՃԿԱԼԱՇԵՆ

Ասֆալտի վրա, Մարտունուց հարավ,
Սեւ ամագ է դարձել քաղաք Ֆիզուլին,
Ուժն է հավաքել արար ու վարար,
Բորենու նման աչքերն արնով լի,
Անառ է... տոր է... հասել է թութը,
Արտերն են դեղնել Անարաս ծորում,
Սակայն թշնամին չար ու անգութ է,
Վառում է արտը, այգին տրորում:
Սովը դարձնում է գնդակի ձեռքը,
Եվ խոցում սիրտը Արցախա հողի.
Ուզում է ջարդել ամրակուր մեջքը

Յողն այդ պահողի եւ մշակողի:
Ֆիզուլու մուտքին կա մի հողաթումբ,
Ասես մեղքերի ցավից չորացած,
Երբ սելջուկները խուժել են խումբ-խումբ,
Եկեղեցին են թաղել չարացած,
Որ իսպառ ջնջեն տառերը հայի,
Յայերեն երգող բառերը հայի,
Սակայն չեն մեռել անգամ հողի տակ,
Շնչել են, ապրել դարերը հայի:
Այսօր հայաշունչ այդ բլրի վրա
Յրթիոն է սարել թոռը սելջուկի,
Մոռացած, որ հենց իր ոտքերի տակ
Յայերեն խոսող սրբատունն է հին,
Որ տեսիլը դարձած, պարզած թեւերը,
Շղթին անունը իր արարողի,
Պաղատում է, որ Որդին ու Տերը
Օգնեն Արցախս հողը փրկողին...
Բայց անողոք է սելջուկի թոռը,
Երիտթուրք է նա՝ նենգ ու համառուն,
Արցախի հարցի լուծնան հորդորը
Արցախահայի մահն է համարում:
Ու որոշել է ամառվա մի օր
Առնել մայրուղին Կարմիր շուկայի,
Որ հայությունը եղենը իր նոր
Ստեփանակերտի մահվամբ վկայի:
Որոշել են Յաջին, Ալին՝
Գնդապետներն այդ նորովի,
Բայց գիտեն, որ ճանապարհին
Պատմեշվել է զորքն Ավոյի:
Սակայն սիրտ են տալիս իրենց.
Ավոն ունի միայն մի տանկ,

Մի թնդանոթ, մի ԲԵՏԵՇ,
Թե դաշնա էլ կայծակ ու շանթ,
Տեղովը մեկ դաշնա վառող,
Ոչինչ անել նա չի կարող:
Շղթայակապ ու լրիվ մերկ
Կհասցմեն Ստեփանակերտ,
Որ արյան մեջ վերջին հայի
Խելագարի նման պարի:
Ու շարժվեցին Յաջին, Ալին,
Ֆիզուլիից Կարմիր շուկա,
Շարասյունին դղրդալից
Ասես սկիզբ ու վերջ չկա:
Էլ ԲԵՏԵՇ, էլ հրասայլ,
Էլ թնդանոթ, ականանետ,
Էլ «Գրադի» նոր տիա ու սարք,
Գնդացիր ու նռնականետ,
Մեքենաներ տեսակ-տեսակ,
Եվ բոլորն էլ նորահասակ:
Ու երբ արեւը հասավ գենիթին,
Սուրբ Ամարասը տնքաց խոր ցավից,
Յարվածն իջել էր թուրքի մռութին,
Սակայն ճեղքվել էր ճամփան հարավից:
Մաճկալաշենի դարպասների մոտ
Մի խրախնան էր բացել թշնամին,
Արյան խրախնան՝ սեւ ու մահահոտ,
Որտեղ հնձվում են ջահելներ քանի:
Տղերքն Ավոյի տոկուն են ու խենք,
Մեկը կրվում է հարյուրի դիմաց,
Ավոն դարձել է ոգեղեն մի եռք
Եվ հորդորում է թեժ ու բանիմաց:
Մեկ աջ է թռչում, մեկ թռչում է ձախ,

Մեկ երեւում է թիկունքում մարտի,
Մեկ դրոշի պես ծփուն առջեւից,
Ինչպես զորավար եւ ինչպես մարտիկ:
- Դիպուկ խփեցեք հրասայլերին,
Ամեն կերպ առեք առջեւը նրանց,-
Յրամայում է եւ նոնակմերի
Արկղերը բերում իր քաջ զինվորաց:
Ու բորբոքվում է գոտենարտը թեժ,
Երկարի հուրը երկինքն է առնում,
Ամարաս ձորն է կորչում ծխի մեջ,
Զահել սրտերն են երկինք համբառնում:
Արցախը կրկին հրաշք է դարձել,
Դարձել է ոգի, անսպառ կորով,
Ոստիսի դիմաց անդունդ է բացել
Եվ կուլ է տալիս նրան անխռով:
Նա մեր պապերի խիղճն է մշտաշող,
Որ եղել է քուր եւ կալի եղան,
Յիմա դարձել է կյանքը հաստատող
Գիտակցված մահվան մի զոհասեղան:
Զոհասեղանի խորհրդով լուսե
Օրինում է ոգին Մածկալաշենի,
Նրան մաղթում է հաղթանակ ու սեր,
Յայացքն՝ արեւին, ականջը՝ ձենի...
Արեւը դանդաղ իջնում է սարին,
Լոել են արդեն դղիրդ ու որոտ,
Կանգնած զոհյալի արմոտ սնարին,
Եղբոր կարոտով թախծում է Ավոն.
Մոտը կանգնել են տղերքը արծիվ,
Ու թախծի միջից նայում են շուրջը,
Վառված տանկերը, գենքերը անթիվ
Յուշում են կռվի ահավոր շունչը,

Յուշում են, թե ոնց իրենց համբավն է
Երգ դարձել գալիք նոր մաճկալ շենը,
Այնտեղ վարդամված քաջն Ավոն է
Եվ ավարայրված Մաճկալաշենը:

Զ Ր Ա Բ Ե Ր Դ Ո Ւ Մ

«Կռվում չամիչ չեն բաժանում,
Կռվում գնդակներ են պարում,
Մահը կռվում քեֆ է անում,
Չի կշտանում, չի ալարում:
Պիտի կռվեք առանց զոհի,
Ամեն մեկդ սյուն է մի տան,
Ամեն մեկդ թեժ գրոհի
Ոգին եք եւ հույսի ճամփան»:
Այս խորհուրդն է տալիս Ավոն
Մարտիկներին՝ միշտ սրտաբաց,
Ու քայլում է, ինչպես կերոն,
Գնդի առջեւ, ճակատը բաց:
Նրա համար սովորական
Մի տարածք չէ հող հայրենին,
Պատմություն է բիբլիական,
Շունչն ու լեզուն մեր մայրենի:
Նա օգում է սիրտը հողի
Ու գրուցում կառոտանքով.
Ամեն մի թիզ հողի համար
Երազում է անրջանքով:
Նա նետվում է ահեղ մարտի
Յողի կոչով ու հորդորով,
Նրա հանդին, դաշտ ու արտին
Սիրտն է բացում որդու սիրով:
Փոթորկվում է նրա հոգին,

Թրթռում է սիրտն անդադար,
Զրաբերդը պարտված չոքի,
Ավոն առնի քուն ու դադա՞ր:
Ու գնում է գունդն իր առած,
Գերազույնի նոր պլանով,
Գնում է նա փրկիչ դառած
Յաղթանակի հրանանով:
Զրաբերդի սարերը սեզ,
Անտառները՝ հեքիաթաշուրթ,
Աղբյուրները, գետերը խենթ,
Զորերը խոր, երկինքը լուրթ,
Ավերակված գյուղ ու ավան
Ու վանքերը՝ հույսով հորդուն,
Ցավի միջից ճշում մոր պես
Ու փարվում են Ավո որդուն:
Ավոն իր հաղթ ձեռքն է մեկնում
Ձոկատներին Մարտակերտի,
Որ հրաշքներ էին գործում
Ափերն ի վեր՝ Թարթառ գետի:
Ավոն՝ նրանց թեւ ու թիկունք,
Ավոն՝ նրանց վիզ ու սատար,
Ավոն զինվոր ու հետախույզ,
Ավոն հմուտ հրանատար:
Ու մաքրում են Զրաբերդը,
Անտառներն են խշշում ազատ,
Ու հասնում է արդեն հերթը
Քելբաջարին՝ երդմնազանց,
Ու խոհերի գիրկը ընկած,
Ու զինվորի վճիռով թեժ,
Ու պատմության հուշը գրկած,
Ու կրծքի տակ անհուն վրեժ,

Յոգում Արցախը քաղցրանուն,
Ավոն սարերն է բարձրանուն:
Քելբաջարը՝ իհն Քարվաճառ,
Դարձել է մեր ոստիսը չար,
Յիմա որւնքն ու թուրը ձեռքին
Օր չի տալիս Մարտակերտին,
Թալանուն է ու ավերուն,
Ե՛վ անխնա, ե՛ւ աններուն:
Գազագել է սիրտն Ավոյի,
Ափսոսանքով, ցավով խորին,
Մոտենուն է Դադիվանքին,
Քիչ է մնուն սիրտը պայթի,
Վշտից հոգին խոր ակոսվուն,
Խաչքարերի հետ է խոսուն,
Ասես վերքին աղ են ցանուն,
Խենթանուն է ու զարմանուն՝
Այս ինչպե՞ս են սեպը խոել
Յայոց հողի ու սրտի մեջ,
Գավառները ձեռքից խլել,
Յանգցրել հայի ջահերն անշեջ,
Դարձած դաժան մի կեղեքիչ,
Գրպանել են գիր ու մատյան,
Զարդել վանք ու եկեղեցի,
Ոչ դատ գիտեն, ոչ էլ ատյան...
Ու կոչուն է Ավոն. «Տղե՞ր,
Այստեղ տանջված հողն է հայի,
Մի վարանեք, ուժգին խվեք,
Յանուն հայոց ապագայի:
Ուր նայուն ես՝ հայոց մատուք,
Յայոց գրեր ու հայոց վանք,
Յողի խորքուն՝ կարաս ու թուր,

Յայոց երազ եւ անրջանք:
Այս քրդերին թուրքը խաբել
Եվ զիմել է հայեղի դեմ,
Վաղը քրդի տունն ու տեղն է
Նա դարձնելու մահվան մի քեմ:
Այն քուրդը, որ գենք չի առել,
Թող հեռանա կրակակետից,
Իսկ ով մեր դեմ զենք է առել,
Նա չի փրկվի հայկյան նետից»:
Խոսքն Ավոյի առած թեւեր,
Թափանցում է սրտերը քաջ,
Ու ելնում է սարերն ի վեր,
Որ հայինն էր դարեր առաջ,
Զարմանում է արեւն անգամ,
Յայի ուժից ու հարվածից,
Ասկյարներն են չոքում կարկամ,
Գութ են հայցում աջ ու ձախից:
Շիկանում են սարերը սեզ,
Ու դղրդում ձորերը խոր,
Փուլ են գալիս ժայռերը թեք,
Ծնկի գալիս մտանոլոր:
Խաղաղվում են օդ ու երկինք,
Թրթռում է հողը ցավով,
Անհուն սիրով Ձրաբերդի,
Նոր եռանդ է առնում Ավոն,
Ասում. «Ապրի՞ր, իմ Մարտակերտ,
Սիրտս քոնն է, քեզ բարի երթ,
Զավակներիդ եղբայրն են, կամ,
Դժվար պահին կանչիր, կզամ,
Կզամ հոգիս դմեմ ափիդ,
Կզամ՝ ոտքիդ փուշը հանեմ,

Արցախն առանց քեզ ի՞նչ կանի,
Ելիր ոտքի, ցավդ տանեմ,
Յաղթանակին ասա. «Այո»,
Այդ է տենչում որդիդ՝ Ավոն:

ԳԼՈՒԽ 7 ՀԱՍԴԻՊՈՒՄ

Մոնթեն սիրեց մի հայուհու,
Սեղա անունով,
Ինչպես Արան իր թագուհուն,
Պաշտում էր հոգով:
Նրանց ամեն մի համդիպում
Երգի տոն էր մի,
Վարդ-ստխակի երգը նրանց
Կրերեն հիմի...

ՄՈՆԹԵ

Այնպե՞ս լիներ, լիներ այնպե՞ս,
Որ խոնարհվեր հոգիս քո դեմ,
Սիրտս քեզ հետ մտներ եղեմ
Ու մատաղվեր գառնուկի պես:

ՍԵԴԱ

Այնպե՞ս լիներ, լիներ այնպե՞ս,
Որ բուրվառվեր հոգիս քո դեմ,
Որ լուր վառվեր հոգիս քո դեմ,
Ու խնկարկվեր իմ սիրո պես:

ՄՈՆԹԵ

Այնպե՞ս լիներ, լիներ այնպե՞ս,
Որ արեւեր տենչս ճամփիդ,

Թեւեր առներ սիրտս ափիդ
Չո երազած թռչունի պես:

ՍԵԴԱ

Այնպե՞ս լիներ, լիներ այնպե՞ս,
Որ հուր դառնար սիրտս ափիդ,
Որ ջուր դառնար կյանքս ճամփիդ,
Չո երազած աղբյուրի պես:

ՄՈՆԹԵ

Այնպե՞ս լիներ, լիներ այնպե՞ս,
Որ դառնայի երազը քո,
Որ դառնայի մուրազը քո,
Մեր թագավոր Արայի պես:

ՍԵԴԱ

Այնպե՞ս լիներ, լիներ այնպե՞ս,
Յեքիաթվեի քո սրտի մեջ,
Միշտ ծաղկեի քո գրկի մեջ,
Մեր թագուհի Նվարդի պես:

ՄՈՆԹԵ

Այնպե՞ս լիներ, լիներ այնպե՞ս,
Գիրկդ գայի դարձած Մասիս,
Դարձած Մօռվ ու դարձած Քիրս,
Բոլոր գերված սարերի պես:

ՍԵԴԱ

Այնպե՞ս լիներ, լիներ այնպե՞ս,
Որ դառնայի ուժը բազկիդ,

Մատյաններում հուշը փառքիդ,
Դյուցազնածին խանդութի պես:

ՄՈՆԹԵ

Այնպէ՞ս լիներ, լիներ այնպէ՞ս,
Որ ձուլվեհնք հայոց շողին,
Որ ձուլվեհնք հայոց հողին
Սրբանվեր զոհերի պես:

ՍԵՐԱ

Քոնն եմ, դու իմ Աղբյուր Սերոք,
Իմ զորապետ, իմ Արեւ-Սեր...

ՄՈՆԹԵ

Արցախի մեջ դարձած Ավո,
Ես էլ քոնն եմ, դու իմ Սոսե:

ԳԼՈՒԽ 8 ԱՂԴԱՄ

Աղդամն Արցախի հայոց մի էջն էր,
Ծոեմարանն էր Աղդամը բերքի,
Բայց դելինք ցեղը ասաց. «Քո վերջն է,
Ինչպես եւ վերջն է Պարտավ քաղաքի»:
Հազար տարի էր անցել այն օրից,
Երբ Քրիստոսը եկել էր աշխարհ,
Ուտիք ու Արցախ խավարի ձորից
Ելել, լույսն էին ըմբոշխնել Վարար:
Լույսն այդ բերել էր Լուսավորիչը՝
Գրիգորը Սեծ - Հայրապետը սուրբ,
Հիմնադրել էր վանքն Ամարասի,
Ասել. «Ին լույսից դուք առեք հագուրդ»:

Յետո եկել էր թռոնիկը նրա՝
Գրիգորիսը Աստծո պատկերով,
Պապի օրինանքը շրթերի վրա,
Պապի սրբացած հոգու պատվերով:
Եկել է, ինքն էլ դարձել նահատակ
Յեթամոսմերի արյունոտ ձեռքով,
Յիմա ննջում է Արցախ հողի տակ,
Ամարասի սեզ գմբեթի ներքո:
Յետո Մաշտոցն է եկել սրտաբուխ,
Եկել է, բացել դպրոցն առաջին,
Փարվել են իրար հավատ ու լեզու,
Միշտ ապավինած թրին ու խաչին:
Ծնվել են հետո թռոներն Առանի,-
Քրիստոսացած Վաչե, Վաչագան,
Այբուբենի եւ թրի գումարում
Տեսել Արցախի միակ ապագան:
Քարավանվել են դարերն Արցախի,
Պարտավ ու Աղդամ այդ քարավանում,
Մինչեւ եկել է սելջուկն արնածին,
Արցախն օղակել իր խառնարանում:
Եվ Քրիստոսի երկրորդ հազարը
Երբ ոտք է դրել աշխարհի շեմին,
Պարտավ ու Աղդամ՝ այդ երկու սարը,
Խեղդվել են ահով ուժից թշնամի:
Այսօրվա Աղդամ քաղաքի մեջտեղ
Կա Փանահ խանի սեւ գերեզմանը,
Գերեզմանի մոտ, պատերով շքեղ,
Դեռ աղոթում է կիսավեր վանքը՝
Քիվեր ու վեմեր հայկական ոճով,
ճերմակ մարմարի թույրով հավերժուն,

Ասես հիմա էլ շշնջում եմ՝ ո՞չ,
Եվ Փանահ խանի աճյունը մերժում:
Թուրք դելիմք ցեղի ավազակները
Զարդել են վանքը, արել արնաքամ,
Այդ ճերմակաթույր վանքի անվանք էլ
Յայոց ավանը անվանել Աղդամ:
Եվ դարպասի մոտ բարձր Արցախի
Աղդամն է չոքել, ինչպես մի հրեշ,
Չար աչքը տմկած նրա օջախին,
Բազում աղետ ու չարիք է բերել:
Ու կատաղել է, փրփրել Աղդամը,
Երբ ծառս է եղել Արցախը հպարտ,
Զգտել է հային խեղդել իր տանը,
Կարծելով իրեն հզոր ու անպարտ:
Ու նրան անվերջ զինել է Բաքուն,
Թնդանոթներով, տանկերով անթիվ,
Զինել է ազատ, զինել է թաքուն,
Որ ծմկի բերեն Արցախին արծիվ:
Փրփուրը՝ բերնին, մահն՝ աչքերի մեջ,
Կրակ է մաղել Աղդամն ամեն օր,
Թեկուզ արցախցուց ջարդվել անընդմեջ,
Բայց բռնկվել է ատելությամբ նոր,
Յեռահար, անթիվ թնդանոթներից,
Ինքնաթիռներից, «Գրադից» դաժան,
Անգամ բենզինի լի անոթներից
Կրակ էր մաղում Արցախի վրա:
Ստեփանակերտը դարձրել էր թիրախ,
Որ գա ոռնոցով ավարի, քանդի,
Դարձնի ավերակ, դարձնի սեւ վիրապ
Եվ այդ վիրապը կոչի Խանքենդի:

Բայց ե՞րբ է ծնկի եկել արցախցին
Աղդամցու առաջ, նենգ թուրքի առաջ,
Ելել է, ինչպես սարերի արծիվ,
Վրեժով, ցասմամբ իր բազմաշառաչ,
Որ աղդամնեցու երախը փակի,
Որ ծնկի բերի այդ ելուզակին՝
Թե շարունակի գործն իր դժմդակ,
Աղդամն էլ փոփի իր ոտքերի տակ...

Եկա՞ն, եկա՞ն, եկա՞ն անվերջ,
Որոճելով կեղտոտ մի տենչ,
Եկա՞ն հայոց տունը վառեն
Ու տան տեղը սխտոր վարեն:
Բաղիրով փաշան - հրացաններով,
Վեզիրով փաշան - ավտոմատներով,
Մոլթալիրով փաշան - գնդացիրներով,
Էլչիբեյ փաշան - ինքնաթիռներով,
Ալիեւ փաշան - նոր հրթիռներով,
Եվ ամեն մեկը երազ ուներ մի,
Որ Խանքենդիում մախմար թեյ խմի...
Յոթ միլիոնի ամունից գոռոզ-բացբերան,
Դագանակով, մտրակով քշեցին բերան.
Յազա՞ր-հազա՞ր ազերի՝ քեխը նոր ծլած,
Յազա՞ր-հազա՞ր ազերի՝ քունքերը չլած,
Յազա՞ր-հազա՞ր ազերի՝ չչոշուխմների տեր,
Յազա՞ր-հազա՞ր ազերի՝ օջախը անտեր,
Յազա՞ր-հազա՞ր ազերի՝ արտը նոր վարած,
Յազա՞ր-հազա՞ր ազերի՝ հովիվ, գառնարած...
Ազգությունը շուր տված հազա՞ր-հազա՞ր քուրդ,

Իբր Ազարբայջանի մեծության խորհուրդ,
Քուրդը քիչ էր, քշեցին լեզգի եւ թալիշ,
Որ նոր էին աչք բացում եւ ուշքի գալիս,
Անցան իրան ու Թօրիան եւ օրենքով իին
Գնեցին ու քշեցին անթիվ մոշեհիդ,
Որ ազերու հետդարձի ճամփան պատմեշեն,
Գնդակի տակ փախչողին գնդակով պատժեն,
Յետո առան ու բերին գանձերով ինչուն
Յազա՞ր-հազա՞ր շիկահեր, փորձված օդաչու,
Գեներալներ օսմանյան, ինգլիզ եւ ռուս,
Այդ ամենը տեսնում էր աշխարհին աննամուս....

Ու ելա՞ն, ելա՞ն ու ելա՞ն անվերջ,
Արցախցիները՝ սրտերում մի տենչ,
Ելա՞ն, ելա՞ն, ելա՞ն ցասմամբ,
Մի վճիռով, դարձած մի կամք.
Նժդեհի թոռ քաջ Սամվելը,
Թեժ Բեկորը, հաղթ Մանվելը,
Գրադ ժորան, Գնդակ Վաչոն,
Արեւ Արան, Յրթիռ Խաչոն,
Ծուռ Սիերը, Արծիվ Բենոն,
Բազե Սոսը, Աստղ Յենոն,
Յույս Մուրադը, Յմուտ Վիտոն,
Լույս Վիգենը, Սարսափ Պետոն,
Միրուք Սեթը, Թուխս Կարմենը,
Կրակ Յուրին, Խենթ Արմենը,
Յրաշք Կարոն, Կաղնի Դավոն,
Իմաստուն ու կտրիճ Ավոն,
Ելա՞ն, ելա՞ն թշնամու դեմ,
Որ Արցախա հողը փրկեն...

ԽԻԶԱԽՈՒՄ

Յարավից եկող ասֆալտե ճամփան
Աղդամ է մտնում Մարզիլու գյուղով,
Թշնամին այնտեղ կրվում է համառ,
Թեկուզ երերուն, թեկուզ երկյուղով:
Բաքուն տանկերի մի շարասյուն է
Նվիրել գյուղին, որի շուրջ բոլոր՝
Ավազակաբույն Գիյանաթլուն է,
Յայտնի Նովրուզլում՝ գողերի օրոց:
Աղդամի ուժեղ կրակակետերը
Պետք է լրեին, դառնային մոխիր,
Որտեղ ազերի ելուզակները
Թթվածինն անգամ փոխել են ոխի:
Ավոն Մարտունուց հարվածում էր միշտ,
Այդ օրը վերջին դասը պիտի տար,
Յարավից Ավոն, իսկ արեւմուտքից
Ասկերանի կուռ գունդը պիտի գար:
Իննսուներեքի ամառը արդեն
Սի սերմնացան էր դաշտ ու սարերում,
Շողեր էր ցանում, ցանում էր վարդեր,
Ինչպես եղել է բազում դարերուն:
Բայց այդ ամառը շիկնել էր, վառվել
Նաեւ զենքերի կրակոցներից,
Ազերին վերջին հույսին էր փարվել
Մահահոտ ու խիտ թաքստոցներից:
- Տղամեր.- ասաց Ավոն ջոկատին.-
Յետախույզները բերել են լուրը,
Պետք է Մարզիլու գյուղի ճակատին
Առաջինն իջնի մեր հատու թուրը:
Նրա տանկերը պիտ շարքից հանենք,

Յետո շուրջկալենք հետեւակներին,
Բնակիչ չկա, կրակ կցանենք
Գլուխմերին չար ավազակների:
Խոսքը ավարտեց իր «օքե՞յ» բառով,
Ղրոշի նման ծփաց առջեւից,
Գումող Ավոյի ետքից գնալով
Թշնամուն ճեղքեց ուղիղ աջ թեւից:
Չէին Վրիպուն արծիվները իր,
Երկինք էր թռչում տաճկ ու հրանոթ,
Բայց համառուն էր ոսդիմ զագիր,
Ոտքի տակ տալով ե՛ւ խիղճ, ե՛ւ ամոք:
Ավոն ճշում էր ուրախությունից,
Երբ վառվող տանկն էր տեսնում թշնամու.
- Կրակել այդպե՞ս, թող այրվի՞ հիմքից
Բույնն այս չարադես եւ տրվի քամուն:
Բայց եղավ այնպես, որ մի ջոկատը
Յեռացավ գնդից, միսրճվեց խորքուն,
Թեժացել էին ջահել տղերքը
Եվ դարձել էին հեղեղ մի հորդուն,
Մոռացել էին խորհուրդն Ավոյի,
Որ քաջության հետ պիտ լինել զգոն,
Յինա թշնամուց շրջափակվելով,
Բորն են հաղորդում ռադիոկապով.
- Օգնություն է պետք, հապաղել պետք չէ,-
Յաղորդուն են եւ մարտնչում համառ,
Յրեղեն Ավոն ուզում է թռչել,
Յոգին եռում է, ինչպես տաք ամառ:
Յրամայում է նա տղաներին.
- Չթուլացնել թափը սահմանում:
Իսկ ինքը դարձած հույսը փրկության,
Իր մեքենայով խորքն է սլանում:

...Յունիս ...12 ...աշխ, ինչո՞ւ եկար,
ինչո՞ւ լարեցիր քակարդը չարի,
թշնամու արկը այդ ինչպե՞ս դիպավ
Ավոյի ննան մարտիկին արի:
Նա ազատել էր օղակված ջոկին,
Աշխուժություն էր մարտնչող գնդուն,
Ավոն Մարտունու գնդերի ոգին,
Յիմա փակել է աչքերը ժպտուն...

Կրակակետերը մոխիր են դարձել,
թշնամին պոչը քաշել է շան պես,
Դեպ Աղդամ տանող ճամփան է բացվել,
Յողն է կակաչվել Ծիր-Կաթինն ինչպես:
Բայց չկա Ավոն՝ Աստվածը մարտի,
Քնել է խաղաղ, հավիտյան քնով,
Ծիածանվել է ասես շրթերին.
«Արցախ իմ, քայլիր հաղթության հունով,
Ծառայել եմ քեզ որդիական սիրով,
Անհունի մեջ էլ որդիդ կմնամ,
Յոգիս վառել եմ քո հոգու հրով,
Կովող հոգուդ մեջ մարտի կգնամ,
Կգնամ մարտի ցավով աններում,
Մինչեւ չհասնես քո հաղթանակին:
Երջանիկ եմ ես, մայր իմ, որ հեռվում
Չայնդ լսեցի ծիշտ ժամանակին,
Եկա, մի հյուլեն դարձա հույս-շողիդ,
Եկա, ծուլվեցի սրբազան հողիդ,
Չակնկալեցի ոչ փառք, ոչ համբավ,
Իմ վերջին խոսքն է. «Քեզ բարի՝ ճամփա»:

1994 թ., Ստեփանակերտ

Մ Ր Ե Ր

(Վավերագրական պոեմ)

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Մայրը երազում տեսավ իր որդուն,
Զոհված իր որդուն, որդուն քաջարի...
Կարոտի հրով, սիրով փոթորկուն՝
Որդին գիրկն առավ իր մորը բարի,
Ասաց. «Վաղուց է, որ տուն չեմ գալիս,
Դիրքս չեմ կարող ես թողնել թափուր,
Գիտեմ, որ ինձ ես հիշում ու լալիս,
Ինձ ես որոնում տղերանց շաքում:
Խոստումս, մայրիկ, երբեք չեմ դրժել,
Կռվում չեն խարում երկրին ու մորը,
Կռվողին հողը կրակի տակ թեժ
Ճուշում է անվերջ մոր սուրբ օրորը:
Օրորդ, մայրիկ, հնչում էր մեղմիկ
Իմ հոգու խորքում եւ իմ կրծքի տակ,
Ես զգում էի քո շունչը ջերմին
Եվ ցուրտ օրերին, եւ օրերին տաք:
Ճիմա եկել եմ, շուտ էլ կզնամ,
Ինձ սպասում են Թարթառի ափին,
Մայրիկ ջան, մոտըդ այնքան կմնամ,
Սիմչեւ Սռովից բարձրանա արփին:
Կոհվը, մայր իմ, դեռ չի ավարտվել,
Դեռ կրակում է մեր չար թշնամին,
Իր պարտության հետ նա դեռ չի հաշտվել,
Դավեր է նյութում ամեն մի ժամի»:
Մայրն ասաց. «Որդիս, ինչո՞ւ ես գնում,

Տունս սյուն չունի քեզանից բացի,
Յայրդ էլ անդադար ճամփիդ է մնում,
Մեր բախտի փակված դռները բացիր:
Սիրած աղջիկդ սպասում է քեզ,
Նա քո ջերմ սիրով կրակված սիրտ է,
Բուրում է գարնան բացված վարդի պես,
Ախ, ինչո՞ւ այսքան աշխարհը բիրտ է:
Միեր, մի գնա,
Սորդ մոտ մնա»:
Սակայն Միերը մոր դեմ ծունկ իջավ
Ու երկրպագեց, ինչպես Աստծուն,
Զեռքը համբուրեց, ասաց. «Մայրիկ ջան,
Քո սերն ու հոգիս մեկ են թեւածուն:
Ես արշալույսին պիտի հետ դառնամ,
Ինձ սպասում են Թարթառի ափին,
Մայր հողը, մայրիկ, դժոխք կդառնա,
Եթե երբեւ մեզանից խարվի»:
Կարոտից մայրը մոմի պես հալվեց,
Յալվեց ու դարձավ մի զուլալ աղբյուր,
Աղբյուրի մեջ էլ նա ցավից ծալվեց
Ու ցողվեց, ինչպես մայրական համբույր:
Դեռ խոնարիված էր որդին մոր առջեւ,
Չուր խմեց, Սասմա Միերը դարձավ,
Ասաց. «Մայրիկ ջան, ես գալու եմ դեռ»,
Ասաց ու կրկին մարտի սլացավ...
Միերի մայրը պատմեց երազն այս,
Եվ այդ տեսիլքով իմ հոգին սնվեց,
Եվ որպես մարմին առած մի երազ,
Իմ երախտիքի պոեմը ծնվեց:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Արեւի հետ ելնում տնից,
Արեւն իր հետ տուն էր տանում,
Հագենում էր հացից, քնից,
Խաղից երբեք չէր կշտանում:
Պատշզամբից մայրը կանչում,
Որոտում էր բակը մեկեն.
«Ինչո՞ւ ես քեզ սոված տանջում,
Արի ճաշիր, գնա մեկ էլ»:
Հենց ծագում էր այգաբացը,
Խաղն էր նորից հաղթանակում,
Մոր նվիրած պանրահացը
ճաշակում էր ոտքի, բակում:
Խոսքին, քայլին լուրջ տեսք տալով,
«Պատերազմ» էր խաղում անվերջ,
Իր ինքնաշեն իրասայլով
Չէր նահանջում «մարտերի» մեջ:
Արեւադեմ պարմանի էր,
Ինչպես առասպելի Արան,
Սակայն էլի խաղի մեջ էր
Գտնում հանգիստն իր առօրյա,
Իրենց բակում փոքր թե մեծ
Տանկիստ էին կոչում նրան,
Ավարտել էր դպրոցն արդեն,
Բայց տենչում էր զինվոր դառնալ:

Երազը հոգում
Նա մեկնեց բանակ,
Ծառայություն էր,

Խաղ չէր ու հանաք:
Նա տանկիստ դարձավ,
Երազը շոյեց,
Ով ծանոթացավ,
Յարգեց ու գովեց:
Առյուծասիրտ էր,
Յոգին էր վաշտի,
Յմուտ տանկիստն էր
«Ռազմադաշտի»:
Առաջարկեցին Միերին մի օր
Որ խորհրդային բանակում մնա,
Բայց նա լսել էր լուրջ ահավոր,
Արցախն է կանչում, ինչպե՞ս չգնա...
Սեւ ամպ է իջել մանկութ վայրերին,
Թշնամին նրան խաչել է ուզում...
Երբ Վտանգված է հողը հայրենի,
Ոչ մի աստիճան որդում չի հուզում:
Գեներալի դեմ կանզմեց վճռական.
- Ծնորհակալ եմ,- ասաց,- Զեզանից,
Թե սիրտս էլ ուզեք, կհանեմ, կտամ,
Սակայն Արցախս ճշում է ցավից:
Ես որոշել եմ ու չեմ երերա,
Մորս շրթերով օջախս է կանչում,
Արցախը մորս մայրն է, գեներալ,
Նրա խոր ցավն է իմ սիրտը տանջում,-
Ավարտեց խոսքը Միերն առնացի,
Եվ լուր սպասեց հրամանատարին,
- Յամառ ու քաջ է եղել արցախցին
Եվ այդպես էլ կա, բարին կատարվի:
Եվ մի հաճելի սփոփանք հոգում,

Յայ գեներալը փաղաքշանքով խոր,
Ասաց.- Քո պարտօք կատարել ես դու,
Եվ կամքն է քոնց, եւ խոսքը, զինվոր:

Իննսունմեկի աշունն էր շնչում,
Արցախ աշխարհն էր ծփում բազմերանգ,
Բայց այդ ծփանքում ոսիխն էր շրջում,
Դարձած դժոխքի մարդակուլ երախ:
Վանքը խոցվում էր, ջարդվում խաչքարը,
Գյուղերում անսանձ մահն էր քրքջում,
Թուղթը բացել էր իր հին խաչբառը,
Վերծանել կրկին. «Յայերի ջնջում»:
Նրան լծվել էր զինվորը կարմիր,
Յայի վաճառք էր, արյան խրախճան,
Չարության տենդը եռում էր նամիր,
Ու թվում էր, թե ել չունի վախճան:
Քիրս սարից մինչեւ նահապետ Մռով
Յայոց խռովքը եռում էր աննինջ,
Արցախցին ձեռքը իր խղճին դրած,
Օտար լծի դեմ ընդվզում էր խիստ:
Սիերը հեռվից տուն վերադարձավ,
Ուժեղ էր, ափով քարն էլ կջարդեր,
Գրի մեջ առած մայրն ուրախացավ,
Սինուճար որդին իր մոտ է արդեն:
Սիեր է կնքել անունը նրա,
Որ առյուծ լինի քաջ Սիերի պես,
Սիերի նման սրտով հուրիրան,
Սիերի նման արիական ու թեժ:
Յասակ է առել, դարձել առնական,

Անգամ փոխվել են գանգուրները խիտ,
Զայնը հնչում է թավ ու հաղթական,
Մեջքը՝ ամրակուռ, մկանները՝ պիրկ:
Մի փարզանա է դարձել մայրը նուրբ,
Շուրջը քույրերն են վարդի պես բուրում,
Իսկ հայրը ասես քրմապետ է սուրբ,
Շոյում է որդուն, ճակատն համբուրուն:
Շքապատել են քույր ու բարեկամ,
Յարեւանները ողջունում են ջերմ,
Իսկ ընկերները կատակուն են սուր,
Բոլորն էլ ինչպես Սասնա սրբած թուր...
- Թե չկանչեն էլ, հարսանքիդ կգամ,
- Իսկ ես մինչեւ լույս կպարեմ, կերգեմ:
- Միեր, քո սիրած աղջկան տեսա,
- Միեր, դարձել ես իսկական փեսա...
Եվ ամբողջ գիշեր, մինչեւ արշալույս
Ֆիդայական ջերմ երգեր են հնչուն,
Այդ երգերի մեջ՝ ինչպես վառվող հույս,
Վրեժից ծնված վճիռն է շնչուն:

Դիզակն Արցախի հարավա դուռը,
Յարավա թեւը Արցախ աշխարհի,
Քիրսը Դիզակի հաղթական կուռը,
Իսկ Գտչավանքը՝ համբավը բարի:
Եվ Գտչավանքի հայացքի ներքո
Յինավուրց Տողն է թեւել դարեդար,
Բայց Փանահ խանի չարագույժ կամքով
Այդտեղ չոքել է քոչվորը օտար:
Շուշվա բերդի մեջ բույն դրած օձը

Ճտահանել է Տողի լանջերին,
Գործի դնելով հայակեր փորձը,
Խլել է հայի հողերը բերրի:
Ու երբ Արցախը ելել է ոտքի,
Երբ Սումգայիթից խոցվել է խորին,
Տողում ազերին ծռել է հոգին
Ու ձգտել նրա ձեռքը ոլորի:
Տողը հուզել է նաեւ Միերին,
Բանակում գյուղից ընկեր ուներ նա,
Նա սոխներին երթեք չի ների
Եվ որոշել է, որ Յադրութ գնա:

Ու Միերի ճամփան ձգվեց,
Տողի միջով Յադրութ հասավ,
Ֆիդայական ջոկատի մեջ
Ընկերներին թիկունք դարձավ,
Ասաց.- Տղերք, ամուր մնանք,
Երբ մեկտեղ ենք, մեզ ահ չկա,
Մեկտեղ մահվան դրւոն էլ բանանք,
Միասին ենք, մեզ մահ չկա:
Ազատություն չեն տալու մեզ,
Ոչ Կրեմլից, ոչ էլ Բաքվից,
Պիտի կռվենք Նժդեհի պես,
Իրար լինենք միշտ աջակից:
Այս պայքարի ճամփան մերն է,
«Ազատություն կամ մահ» գոչենք,
Մենք Արցախի միակ Տերն ենք,
Տղաներին ի գեն կոչենք:

Ու կոչեցին ի զեն, ու ջոկատներ ելան
Դիզափայտից մինչեւ Մռովա սար,
Գյուղ ու քաղաքներից ֆիդայիներ եկան,
Ամեն մեկը մի քիրս, մի պրեսար:
Ու դեռ վխտում էին անտառներում մեր խիտ,
Օմօնն ազերական, զինվորները կարմիր,
Ժամանակը դաժան, տիրողները անսիրտ,
Իսկ Արցախը մենակ - ցավերում իր:
Եվ ցավերից այդ ծով հնչեց ճիշը ցասման,
Ու ցասումը դարձավ վառող կրակ,
Ու վրեմբ անհուն ճեղքեց ամեն սահման,
Ու ծնվեցին քանի՛ քաջեր հրակ:
Եվ այդ քաջերի մեջ սիրվեց Միերը քաջ,
Կանգնեց ջոկատներից մեկի առջեւ,
Մերը Յաղորութ էր գնում ու մերը Վարանդա՝
Ընկերներից առաջ ոգի ու թեւ:
Զենքեր էին բերում գաղտնի ճամփաներով,
Զենքեր էին սարքում նոր-ինքնաշեն,
Որ օնօնից սելջուկ եւ զինվորից կարմիր
Փրկեն արցախական ավան ու շեն:
Բաղիրովի միտքը Գորբաշովն էր կարդում,
Մահն էր դրոշ պարզել կրինչներով վայրի,
Բաքվից մինչեւ Շուշի ՊԱԿ-ն էր ուղի հարթում,
Որ Արցախը ապրի առանց հայի:
- Սենք եղել ենք ու կանք, արդար պահանջը մեր
Պետք է ողջ աշխարհի խղճին հասնի,
Մեր երազը պիտի ծիածանվի հավերժ
Մռավ սարից մինչեւ Յայոց Մասիս:

Բաժանել են մի օր մեզ Յայաստան մորից
Եվ ստրուկի շղթան հագցրել մեր ոտքերին,
Արցախ ու Յայաստան պիտ միանան մորից,
Սա վճիռն է Յայոց որդիների...
Այս պահանջն էր հնչում ամեն մի ջոկատում,
Ամեն մի ֆիդայու շրթի վրա,
Կենաց աստղ էր դարձել քաջ Մհերի սրտում
Այդ պահանջը արդար եւ հուրիրան:

Երազը կմնա երազ,
Թե սիրտդ չընծայես նրան,
Արցախը Մհերին մուրազ,
Արցախը՝ իր սրտի վրա:
Արցախը՝ նոր նման անգին,
Արցախը՝ օջախ լուսավոր,
Արցախը՝ օդանը իր հին,
Արցախը՝ պատգամը իր նոր:
Վառվում է Արցախի սիրով
Մհերը՝ Արցախի զավակ,
Արցախը կապտաշինց մի ծով,
Իր սիրտը՝ այդ ծովում նավակ:
Արցախը՝ դալար կաղնի ծառ,
Ինքը շիվ այդ կաղնու ճյուղին,
Արցախը՝ իր սերը պայծառ,
Արցախը՝ իր կյանքի ուղին:
Առաջին Սերը Մհերին
Երեւաց Արցախի տեսքով,
Իր Սերը առավ թեւերին

Ու շոյեց Արցախի ձեռքով,
Շշնջաց... Սիրում եմ ես քեզ,
Չեմ գնա քեզանից հեռու,
Ով Սերը չի պաշտում խենթի պես,
Արցախը նրան չի ներում:
Սիրում եմ, սիրում եմ քեզ, իմ Սեր,
Դու իմ Սեր, իմ արեւ անճար,
Պետք լինի, ես կառնեմ սուսեր,
Արցախի, Քո պատվի համար»:
Միերը խոստումն է հիշում
Իր բանակ մեկնելուց առաջ,
Միերը խոստումը չի դրժում,
Խոստումը պահել է կանաչ:
Ու կանաչ շոյանքով իր Սիրուն՝
Անուշին քաղցր ու մրահոն,
Կրկնում է. «Դանուն քո սիրո
Չեմ ների երբեք թշնամուն»:
Անուշը ժպտում է անուշիկ,
Շոյանքից դարձել է սարսուռ,
Շշունջը թառում է շրթին.
«Պետք լինի, ես ել կառնեմ սուր»:
- Իմ Աշխեն,- ասում է Միերը:
- Իմ Սանվել,- Անուշն է նազում...
Եվ հայոց աստղալից դարերը
Դնչում են հայոց Արցախում:
Նահապետ Առանի պատգամը
Դնչում է սրտում Միերի.
«Թշնամուն մի հանձնիր օրրանդ,
Օրրանը քեզ սեր կբերի»:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Ավետարանոց - Արցախական հող,
Վարանդա երկրի Մելիքների զառ,
Դու եւ ծնել ես Մելիքներ հզոր,
Դու եւ ծնել ես կավատ Շահնազար:
Եվ Շահնազարը նենգ ու դավաճան,
Սելջուկ Փանահին նվիրեց Շուշին,
Եվ հայի կերտած պարհսպը մի ջահ,
Իր գահին կրեց թագը ուրիշի...
Փանահից անթիվ նեռեր ծնվեցին
Ու սերմանեցին որոմն Արցախում,
Արցախու մտքով, հացով սնվեցին
Եվ հոգեառջ դարձան արնախում,
Խեղդեցին մի օր իր իսկ արյան մեջ
քաղաքը կերտող շինարար հային,
Եվ թուրքավարի բացեցին մի վեճ.
«Շուշի քաղաքում հայեր չկային»:
Այսօր էլ նորից իրի են մատնում
քաղաքները եւ շեներն Արցախի,
Թուրքի մոլուցքը երբեք չի հատնում,
Եվ հագուրդ չկա նորա երախին:
Եվ ընդվզում է Արցախա ոգին,
Մարած զանգերն են հնչում վանքերի,
Միերն էլ՝ Արցախ աշխարհի որդին,
Ավետարանոց գյուղի ջանքերին
Իր ուժն է բերել, փորձն իր զինվորի,
Նվիրել հողին իր արեւանիստ,
Որ թուրքն Արցախից պոչն իր ոլորի,
Ճեռանա, թողնի հայերին հանգիստ...
Սակայն Շուշիից կրակ են թափում
Անգութ թուները դիվուտ Փանահի,

Կրակն արցախյան գյուղերն է լափում,
Շոյելով սիրտը կռվի ալլահի:

- Սուրբ է կրիվը,- ասաց Միերը,-
Եռանդով սանձեց զրահամեքենան,
Եվ Ասկերանի արթուն դիրքերը
Յրասայլի հետ ասես ծառս ելան,
Ծառս ելան, որ քաջ Միերի հանգույն
Պատմեշեն ճամփան ավազակների,
Որ մայր Արցախս միշտ մնա կանգուն,
Մնա օջախը իր զավակների:
Զրահամեքենան կռվի մեջ ասես
Վրնջում էր ոնց քուռկիկ Զալալին,
Միերն էլ Առյուծ Միերը ինչպես
Ոստիսի քարը չէր թողնում քարին:
Մեկ չէ, երկու չէ, խփուն է անվերջ
Թուրքի սուրացող մեքենաներին,
Կրակ կա նետած իր կրակի մեջ,
Դաժան թշնամուն նա ինչպե՞ս ների:
Միերի կողքին Գառնիկն է արի,
Կարծես թե լինեն քիրսն ու Մռովը.
- Թող հողը թուրքի ոտքի տակ վառվի,-
Գոչում են նրանք ու վարում նավը:
Մարտի սկիզբն էր իննսուներկուսի,
Ղեռ ձյունն էր նստած սարում ու հանդում,
Ազերիները երազում էին
Նովորուզ բարյամը նշել «Խանքենդում»:
Բայց արյունալի երազը նրանց
Այդ օրը հազար սեւագույն սքեմ,
Յայ քաջերի հետ Միերն անձնուրաց
Աղդամը դարձեց հատուցման սեւ թեմ:

Մոտենում էր Ապրիլը՝ օրը հայց եղեռնի,
Շուշի-Լազին խճուղուն մառախուղն էր իջել մառ,
Այդ երակով ամեն օր, ինչպես թույնը գեհենի,
Բերում էին բենզին, գենք ու վարձկաններ անհամար:
Մի հատվածը այդ ճամփի հեռվից պիտի հսկել լավ,
Այն վստահվեց Մհերին ու Գառնիկին զորավոր,
Նշանառու տղերքը առած պատիվ ու համբավ,
Չքողեցին, որ Շուշի մտնի ցիստեռն կամ զինվոր:
Անդողախոր ձորերը գերեզմանոց դարձրին,
Կրակի մեջ հալվում էր թե մեքենա, թե ոսոխ,
Շուշին հայցի խլորի մորը սեւ շոր հագցրին,
Մեր դարավոր վլեժք դարձրած ական ու դրոշ:
Մհերին ու Գառնիկին ընկերացավ Ալբերտը,
Որը դարձավ սրտամոտ ու վեհանձն դեկավար,
Մեկտեղ նրանք կազմեցին անպարտելի այն բերդը,
Որից ոսոխն էր սարսում ու ճողովրում դողահար:
Յերքը հասավ Սարտունուն,
Օգնության ձեռք պիտ մեկնեն,
Ոչ ոք հանգիստ չէր քնում,
Ու վճիռն էլ մեկ էր...
Խազազ սարի բարձունքում
Հայց դիրքերն են ամուր,
Կոիվ է... եւ կռվի մեջ
Չեն հրամցնում թանապուր:
Այդ լավ գիտեր Մհերը,
Տանկիստ էր, ո՞նց չիմանար,
Նա վեր քշտեց թեւերը.
«Դեհ, թուրքը թող դիմանա»:
Երեք ընկեր... Երեք սիրտ...

Նշանառու անվոեա,
Թող համոզվի թուրքը բիրտ,
Յեշտ չէ վիճել հայի հետ...
Նրանք շարքից հանեցին
Թշնամու մեկ հրասայլ,
Մեկ հրամոթ վառեցին,
Դիրքերն առան ծայրից-ծայր,
Յոգիներում ցասումը,
Խլեցին եւ մի հրթիռ,
Մինչ երեկո խփեցին
Նաեւ երկու ուղղաթիռ:
Յետեւակի հետ մեկտեղ
Ամուր պատմեց կապեցին
Եվ Ֆիզուլու գնդերի
ճանապարհը փակեցին:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Մաճկալաշե՞ն... Մաճկալաշե՞ն...
Դու Արցախի նոր Ավարայր,
Մաճկալ՝ առած զրահ ու զենք,
Դու Արցախա նոր սրբավայր:
Քանի՞-քանի՞ ճակատանարտ
Եղավ հայոց սեգ լեռներում,
Մարտի ամեն մի ակնթարթ
Ոսխներին՝ մահ աններում:
Քաջ Առանից մինչեւ Ավո
Պատմությունն է մեր կամարվում,
Եվ ապրում է Արցախն Յայոց
Յերոսությամբ իր անմարում:
Այդ պատմության ոսկե էջն ես,

Մաճկալաշե՞ն... Մաճկալաշե՞ն...
Մեր սրտերի ելեւէջն ես,
Որ կվոչի հավերժ «ի զե՞ն»,
Քանզի Աստված հեռվից բերավ
Մեր չարամիտ հարեւանին,
Որ մեր սիրտն ու հոգին կերավ,
Խլեց Արցախս-եղորեւանին:
Արցախցին էլ միշտ արծվասիրտ,
Մաճի հետ եւ զենքը առավ,
Ոնց շինարար, ոնց զինակիր,
Յողն իր փրկող աստված դառավ:
Վերջին անգամ թուրքը փորձեց,
Որ Արցախը հիմքից ջնջի,
Թուրքավարի խարեց, գործեց,
Երազի մեջ մահվան կռիմչ:
Բայց Արցախը ելավ խրոխտ,
Մոտը հառնեց Մասիսը սեզ,
Նոր Նժդիեներ եկան ըմբռոստ,
Անեն մեկը մի սար, մի բերդ:
Եկավ Ավոն իմաստնացած
Ու զորացած մարտերում թեժ,
Ասաց. «Զենքը չենք դնի ցած,
Մեր վճիռը մեկն է վրեժ»:
Ավոյի հետ Մհերն էր քաջ,
Գառնիկի եւ Ալբերտի հետ,
Ավոն եկավ մարտից առաջ,
Տղաներին ասաց. «Օքե՞յ»,
Նա Մհերի ձեռքը սեղմեց
Եվ համբուրեց ճակատը լայն,
«Լավ որսորդ եք,- ասաց,- տղերք,-

Տուն չեք դաշնա ձեռքով ունայն:
Այս բարձունքից ափի մեջ են
Թուրքի անթիվ գենք ու զրահ,
Թե տանկերը մեզ չզիշեն,
Պարզեւեցեք նրանց սեւ մահ:
Եվ Արցախի աչքի առաջ,
Եվ գրկի մեջ մայր Արցախի,
Սկիզբ առավ մարտը ահեղ,
Կրակեցին աջ ու ձախից»,
Թուրքն ուզում է առնել ճամփան,
Որ տանում է քաղաքանայր,
Երազում էր իրեն համբավ,
Իսկ հայերին մահ ու ավար:
Բայց Ավոյի շունչն էր մարտում՝
Անդրանիկված ու Նժդեհված,
Ամարասված կյանքի արտում
Հայի կամքն էր կուռ, ջրդեղված,
Ավոյի մոտ քաջ Ավոներ՝
Առասպելված Ավոյի պես,
Ամեն մեկը մարտանվեր,
Շոգին արեւ ու սիրտը կեզ...
Եվ Միերն այդ քաջերի մեջ,
Մարտում հեծած երկաթն ծին,
Ընկերներով ազատատենչ
Իջել է դաշտ՝ թուրքահնձի:
Եվ իր տանկով, ինքնամոռաց,
Գոյատեւնան հունձն է անուն,
Խիղճը մաքուր, ճակատը բաց,
Մայր հողից է իր ուժն առնում:
Նա պատմության դասը գիտե,

Եվ պայքարը իմաստ ունի,
Եվ վաղուց է դասն այս սերտել.
«Թուրքն Արցախում ոչինչ չունի»:
Գիտե, որ սուրբ Ամարասը,
Գանձասարը հայն է կերտել,
Մեր հոգեւոր ջինջ ալճասը՝
Դադիվանքը, հայն է կերտել,
Յայն է կերտել եւ ավանդել
Սերունդներին ու դարերին,
Թուրքն ուզում է հավերժ բանտել
Եվ հագուրդ տալ իր դավերին:
Մարտն այս սուրբ է, անապական,
Զի լինելու էլ ուրիշ մարտ,
Այս կռվից է մեր ապագան
Սկիզբ առնում խաղաղ, հաստատ:
Ու խփում է Մհերը խենթ,
Ընկերներով ավոյացած,
Անգամ կրծքից առած խոր վերք,
Ոչ ոք զենքը չի դնում ցած:
Եվ Արցախա արեւը բորբ,
Երբ իջնում է Քիրսի ուսին,
Երբ արյան մեջ ծաղիկ ու խոտ
Փայլում են ոնց ցողը հույսի,
Երբ վառողի ծուխը շնչում,
Խաղաղվում են գյուղ ու դաշտեր,
Մհերի հաղթ ձայնն է հնչում.
«Փրկված ես դու, Մածկալաշե՞ն»:
Եվ այդ պահին Ավոն գալիս,
Զեռքն է սեղմում, խրախուսում,
Յիշում մեկ-մեկ զոհվածներին,

Ափսոսանքի խոսքը ասում:
Գովում է նա քաջ Սիերին,
Որ նստած էր տաճկի վրա,
«Օքե՞յ» ասում տղաներին
Եվ թվարկում որսը նրանց.
«Դուք խսիել եք հինգ հրամոք,
Մեկ տրակտոր՝ հրթիռակիր,
Մեկ վերամբարձ կռունկ դեռ նոր,
Զարուել գումոզ հետեւակի,
Չի մոռանա Արցախը ձեզ,
Քեզ, իմ փոքրիկ, եղբայր Սիեր,
Ով տղաներ ունի քեզ պես,
Նա չի մնա կյանքում անտեր»:
Քիրսի վրա, հենց այդ պահին,
Արեգակն է հոր պես նստում,
Ասել է թե Սիերներն են
Քեզ փրկելու, Արցախա տուն:

Ու կարդալով հողի լեզուն,
Պաշտպանելով ինչպես մորք,
Թեւ է առնում հույսով լեցուն
Քաջ Սիերի ամեն օրը:
Ուր վտանգ կար, նա այնտեղ էր,
Դարձած անպարտ թեւ ու թիկունք,
Որտեղ մարտը թեժ, ահեղ էր,
Առաջինն էր ելնում բարձունք:
Լաշին-Գորիս ճանապարհին
Սխրանքների նոր շարք բացեց,
Դրոշի տեղ նա իր արի,
Յրաբորբոք սիրտը պարզեց:

Միսրճվում էր նա անողոք
Գնդերի մեջ վարձկանների,
Որ ծնկաչոք, աղիողորմ
Խնդրում էին իրենց ների:
Չեր վրիպում սլացքի մեջ,
Մարտնչում էր կտրուկ, թափով,
Դրասայլը նա վարում էր
Անգամ քարե զարիթափով:
Լաշինի մոտ քանի անգամ
Ոսխների ուղին գոցեց,
Բայց թշնամու գնդակը չար
Լայն ճակատը նրա խոցեց:
Բժիշկները գիշեր ու զօր
Կյանքի ավիշ ներարկեցին,
Սակայն չանցած մի քանի օր,
Նորից հեծավ երկաթե ձին...
Լաշին-Գորիս կյանքի ուղին
Միերին էլ որդեգրեց,
Իսկ Արցախը, մայր Արցախը
Իր քաջ որդուն կրծքին դրեց:

ԳԼՈՒԽ ԶՈՐՈՈՐԴ

Մայրը մի օր Միերին մեղմիկ ասաց.
«Վիրավոր ես, գնա պառկիր հոսպիտալում,
Լավ կազդուրվիր, առողջացիր, որ դիմանաս,
Մենակ դո՞ւ չես հո թշնամու հախից գալու»:
Որդին լսեց, թեթեւ ժպտաց ու շշնջաց.
«Մայր իմ անուշ, այո, ես քո մինութարն եմ,
Գիտեմ, սիրտդ իմ վերքերից ոնց մղկտաց,

Մի մոռացիր, որ թշնամին նենգ ու չար է:
Կփաթաթես վերքս, մայրիկ, ծեռքդ նուրբ է,
Ու քո շունչը կրառնա ինձ դեղ-քալասան,
Մեր Արցախը, որ մեզ համար մոր պես սուրբ է,
Բզկտվում է ոստիներից ապերասան:
Դապաղումը մեզ չի ների, չի բերի բախտ,
Մեզ կանչում է Մօռվ սարը, Թարթառը մեր,
Ախր առանց Սարտակերտի հ՞նչ Ղարաբաղ,
Սարտակերտը մեր հորովելն ու թառն է մեր:
Դրասայլի անձնակազմը պատրաստ է արդ,
Սպասում են եւ Ալբերտը, եւ Գառնիկը,
Դանգիստ մնա եւ գլուխսդ պահիր հպարտ,
Ով քեզ նման մայրիկ ունի, անառիկ է»:
Մայրը լսեց, որդուն փարվեց արտասվալից.
«Կանքդ լինի, որդիս,- ասաց,- բարի ճամփա,
Թող Վերինը բարի աչքը վրադ պահի,
Մենք արդար ենք, թող մեր հանդեպ լինի արդար»:
Ու հրաժեշտ տվեց մորը՝ Ամալյային,
Գրկեց հորը՝ Միքայելին քաջակորով.
«Դանգիստ եղեք, չմտածեք, հայրիկ, մայրիկ,
Շուտով կգամ, գնում եմ մի քանի օրով»:
Ու Միերը հրասայլի դեկին նստած,
Ընկերներով հավատարիմ նետվեց մարտի,
Մոավ սարը, շղթայակապ, աչքերը թաց,
Քիչ էր մնում գերության մեջ իրեն ջարդի:
Ու մայիսյան հեղեղի պես արցախական,
Ելան հերոս զավակները մեր մայր հողի,
Ու կանչեցին. «Մեր սեզ Մօռվ, մեր մայր Թարթառ,
Ոստիների ոտքերի տակ ծեզ չենք թողնի»:
Եվ սկսվեց արյունահեղ մի գոտեմարտ,

Յողն էր վառվում Զլդրանից մինչեւ Յաթերք,
Դարերի մեջ մեր Մռովա սարը հպարտ
Դեռ չեր տեսել նման կորիվ ու ռազմաերթ:
Վրնջում էր Միերի ձին լանջերն ի վեր,
Այն քուրկիկն էր ասես թեւով հրեշտակի,
Անձնակազմն էլ կոչի բովում առած թեւեր,
Կրակում էր միշտ անվրեա ու շեշտակի:
Դրմբոնի լանջերն ի վար գլորեցին
Թշնամական գենքով լեցուն բեռնատարը,
Զագլիկի մոտ դեպի ձորը ոլորեցին
Թուրքիո երկրից նվեր թերած հրասայլը:
Յաթերքի տակ շուրջկալ արին ու խլեցին
Յինգ զինակիր մեքենաներ նոր ու հզոր,
Վաղուհասում հերոսաբար խարխլեցին
Ազերական «Գրադ»-ները ճահասարսուա:
Երբ դեռ նոր էր փետրվարը աչքը բացել,
Ազատեցին Մարտակերտի անտառուղին,
Բայց Մռովի սիրտը խոռվ, ամպամած էր,
Որ թշնամին իշխում էր դեռ դաշտ ու հողին:
Ու Միերը միշտ առջեւից, միշտ ոգեշունչ,
Յրասայլը թռչկան դարձրած սուլում էր խենթ,
Վառված-փրկված գյուղերի մոտ չոքում էր լուռ
Եվ գրուցուն որդիաբար մայր հողի հետ.
«Զրաբերդված ու Թարթառված իմ Մարտակերտ,
Իմ Դրմբոն, իմ Յոռաթաղ, իմ Կոճողոտ,
Իմ Գետավան, իմ Զարդախսաչ եւ իմ Յաթերք,
Մատաղ լինեմ ձեր սրտերի վերքին հողոտ:
Դուք նվացող իմ խոր վերքի սպեղանի,
Իմ դարավոր, իմ փառավոր պատիվ ու փառք,
Օրպես մի զոհ իմ գլուխն է ձեր սեղանին,

Չեմ խնայի ես ձեզ համար ոչ սիրտ, ոչ կյանք»:
Զրուցում էր նա մեր Սասնա Մհերի պես,
Զրուցում էր, առնում նոր ուժ ու նոր ոգի,
Իր զավակի կյանքով փրկված հողն էլ ասես
Շշնջում էր. «Կաթս հալալ լինի, որդի»:

Իննասումերեքի մարտն էր հեռանում,
Գարնան զարթոնքը ծլում էր օդում,
Սակայն ազերին բուքը բերանում
Չէր հրաժարվում կրվից անօգուտ:
Կրակում էր նա մահվան զենքերից,
Կրակում էր նա մոլուցքով չնչին,
Կիսաջարդ եղած, փախչող ազերին
Դեռ փայփայում էր իր հույսը վերջին:
Բայց հայի հույսը կապել էր կամար,
Գոտեպնդվել էր զինվորն Արցախի,
Նա գարնանաբույր հաղթության համար
Յարկ լինի մահվան դուռն էլ կրախի:
Ու բախում է նա, ինքնակամ, խիզախ,
Քանզի լավ գիտե օրենքը կյանքի,
Ով մահվան աչքին նայում է անվախ,
Երբեք չի զրկվում հողից ու փառքից:
Յեռուստացույցի աշտարակի մոտ
Գարնան բույրի հետ վառողն էր մխում,
Կոխսկրտվում էին ծիլերը արնոտ,
Բարձունքի վրա ոսխն էր վխտում:
- Ժամն է հատուցման,- վճռեց Մհերը...
Ու բարձունքն ի վեր տանկը դղրդաց,
Թեւ էին տալիս քաջ ընկերները՝

Յոգիները ջերմ, ճակատները բաց:
Կրակում էին, խփում անվրեա,
Յրասայլերի բախում էր դաժան,
Միերի տանկը ինչպես շարժվող բերդ,
Յուս էր շափաղում պահին տարածամ:
Վրեժի ժամն էր, ոստին էր ջարդված,
Եվ նահանջում էր իր խրամատից...
Միերի տանկը բռնկվեց հանկած
Թշնամու նետած «Ֆագոտի» զարկից:
Միերը մի պահ սրբեց աչքերը
Ու ձեռքը տարավ դեպի կուրծքը հաղթ,
Արնոտվել էին նրա մատները...
Ա՞յս, չլինեիր դու, սեւ ակնթարք:
Գառնիկը ելավ, գրկեց Միերին,
Ալբերտը թողեց նստատեղը կից,
Քաջ ընկերները իրենց թեւերին
Նրան հանեցին տանկի խցիկից:
Միերը նայեց բացվող երկնքին
Ու մեղմ շշնջաց. «Ափսո՞ս, շատ ափսո՞ս»,
Գառնիկը ափը դրել էր վերքին,
Գլուխն էր գրկել Ալբերտը անխոս:
Մարտն ավարտվել էր, մերն էր բարձունքը,
Եվ հաղթանակն էր ժպտում բախսորոշ,
Միերի արյամբ ներկված բլուզը
Փայլում էր ինչպես հաղթության դրոշ:
Մոռվն էր սգում ձեռքերը կրծքին,
Սուլը Գանձասարը երգում էր սաղմոս,
Աղոթքն էր թառել թարթառի շրթին,
«Ափսո՞ս Միերիս, ափսո՞ս, շատ ափսո՞ս»:

Մոռվն Արցախի նահապետ պապը,
Մոռվն անսասան մեջքը Առանի,
Առանի կուռը, կորովն ու թափը,
Տեսել է մարտեր ու երթեր քանի,
Ազգեր է տեսել, ցեղեր անհամար
Եվ հայկյան մեջքը չի ծռել երթեք,
Մոռվն արցախցու հույսի վառ կամար,
Մոռվն ուղենիշ, Մոռվն անպարտ բերդ:
Մոռվի չորս կողմ դիրքեր են հիմա,
Թուրքի դեմ եկվոր, քոչվոր թուրքի դեմ,
Որ թունոտ տենչին դրած նոր հինա,
Որոճում է իր երազը անդեմ:
«Ի՞ն է,- ասում է,- սարն այս երկնամուխ՝
Իր հավերժախոս ու խենթ Թարթառով,
Այստեղ ծնվել են հայից էլ կանուխ,
Ճայը սնվել է ին երգ ու բառով:
Ճայրենիք չունի Արցախում հայը,
Ճայը աշխարհում չունի հայրենիք,
Ճիմա բերել են ես նրա մահը,
Ես թուրք եմ, ունեմ գորշ գայլի ժանիք»:
Եվ գորշ գայլի դեմ ելել է հայը,
Ելել է թոռը իր Առան պապի.
«Եթե բերել ես ին սուզն ու վայը,
Դուրս արի մեյդան եւ ուժդ չափիր»:
Ու բախվում են թեժ, բախվում են իրար
Յոթը ցուրտ ձմեռ ու յոթը զարուն,
Յոթ միլիոն թուրքի յոլուցքը վարար
Ունում է ոնց հողմ եւ չի դադարում:

Եվ հարյուր իշխուն հազար արցախցի
Ծնկի է բերում յոթը միլիոնին,
Իր Առան պապի նման առնացի,
Յավատարիմ իր օջախ ու հողին:

ՎԵՐՁԵՐԳ

- Այս ի՞նչ գաղտնիք է,- հարցրի ես մի օր
Մերի ընկեր քաջն Գառնիկին,-
Թուրքը գնդեր է բերում նորանոր,
Բայց ջարդվում է մեր ուժից փոքրաթիվ:
Յոգու մեջ առած մեր ջինջ երկինքը,
Գառնիկը նայեց խոհուն Ալբերտին.
«Դրամանատար, պատմիր տեսիլքը,
Ո՞րն է ուժը մեր անառիկ բերոի»:
Յայացքը հառած մեր սեզ սարերին,
Ալբերտը պատմեց երազ-հրաշքը,
Կարուտն էր թառել սրտի լարերին,
Խորին հուզմունքից չէր թարթում աչքը:
«Իննսուներեքի ապրիլն էր շնչում,
Բողբոքվել էին կոփիվները թեժ,
Ամենուր մահվան ստվերն էր շրջում,
Եվ ինչում էին «առաջ» ու «վրեժ»:
Գրավել էինք դիրքը թշնամու,
Մեր ոտքերի տակ սարն էր հայրենի,
Այդ օրվա ահեղ ճակատամարտուն
Զարդ էինք տվել քուրքին վայրենի:
Գիշերն իշել էր՝ փեշերը արնոտ,
Մեզ իր գրկի մեջ առել հոգնատանջ,
Թե ինչպես եղավ, քուն մտանք մենք խոր,

Փափուկ բարձ էին քար ու լեռնալանց:
Քաղցր քնիս մեջ, Թարթարի ափով,
Միերն, ինչպես միշտ, մոտեցավ ժատում,
Զեռքն ուսիս դրավ ու հրեց քափով.
«Վեր կացեք,- ասաց,- ի՞նչ եք մտել քուն:
Ազերիները հեղեղի նման
Եկել, հասել են սարի ուսերին,
Շրջապատել են բարձունքը ելման,
Դիրքը թողել եք այս ո՞ւմ հույսերին»:
Ու ես վեր թռա, կանչեցի. «Տղերք,
Տագնաապ է, ելեք կրակ բացելու»,
Դիրքերի ճոտ էր արդեն աղետը,
Պահն էր՝ կրակով մեր խոսքն ասելու:
Եվ դղրդացին հրասայլերը,
Ավտոմատները ճարճատեցին թեժ,
Ասես Մռովա բարձր ժայռերը
Կոչում էին մեզ. «Տղանե՛ր, Վրե՛ժ»:
Մարտը վերջացավ, մեր վաշտը փրկվեց,
Ու մեզ մնացին բարձունքները վես,
Կարոտից սիրտս մի պահ ընկրկեց
Ու ես լաց եղա խենթացածի պես:
Արտասվում էի ես հոնգուր-հոնգուր,
Տեսիլքի փոխված Միերն էր իմ դեմ՝
ճակատը լուսե, մազերը գանգուր,
Առաջվա նման վեհ ու ժպտադեմ:
Մեր պայքարի մեջ կամքով իր համառ
Միերն ապրում է, քայլում մեր կողքին...
Արցախ աշխարհի փրկության համար
Մարտնչում է եւ զոհվածի հոգին:

1995 թ., Ստեփանակերտ

ԱՐՑԱԽՈՒՅԻՆ

(Պոեմ)

Պոեմի հիմքում ընկած են ԼՂՅ Պաշտպանության բանակի Կենտրոնական պաշտպանական շրջանի հերոսական ուղին եւ նրա համապատկերի վրա Արցախի խիզախն դուստրերի (դրանցից է առաջին կիմ գնդապետ ԷԼՄԻՐՍ ԱՎԱՅԱԾ) անձնուրաց պայքարը հանուն հարազատ երկրի ազատության:

ՆԱԽԵՐԳ

Զրույցս այս գիշերի աստղերի հետ էր,
Արեւի հետ էր եւ տիեզերքի,
Յուլյս լեռնային խենթացած գետ էր,
Վարդի ծփանք էր ծնունդն իմ երգի:

Քեզ հետ ես հասա խորքը դարերի,
Յոգիդ կանթեղ էր դարձել իմ ճանփին,
Կիրճերում լիներ, թե սեգ սարերին,
Սիրտդ շողում էր ոնց գարնան արփի:

Քո լույսով հասանք հսկա Մասիսին,
Նա խոսեց լեզվով Յայկ Նահապետի,
Քո ձեռքից բռնած ես նրան ասի.
- Սա ջրահարսն է մեր Թարթառ գետի:

Այս աղջիկն,- ասի,- արծվի սիրտ ունի,
Ունի եւ Նոյան աղավնու քնքշանք,
Խոսքը խորհուրդ է, խոհ՝ իմաստունի,
Գործը Արցախին ընծայած բերկրանք:

Նա ժպտաց իոր պես, սիրով ողջունեց
Եվ հրավիրեց իր Յայկանուշին...

Աղջիկը եկավ՝ մազերդ շոյեց,
Գովեց քո ճամփան՝ փարված իր հուշին:

Իմ Արցախուիի, դու Աստղ ես ծնվել,
Քույրդ Արեւն է, մայրդ՝ Արցախը,
Դու Անահիտի լուսով ես սնվել,
Աստղիկի սերն է հոգուդ շաղախը:

ճակատագիրը ծնված օրը քո
Ասել է խոսքն այս՝ ոնց իմաստուն երգ.
«Թող ժողովուրդը ընդունի հոգով,
Առյուծն առյուծ է՝ թե արու, թե էգ»:

Երազդ եմ օրինում, օրինում եմ ճամփաղ,
Որ քեզ բարձունքից բարձունք է տանում,
Քեզ ընծայված է դժվարին մի բախտ
Եվ այդ բախտից էլ ծնված լույս անուն:

Դարերի միջով քայլիր, աղջիկս,
Դու կիանդիպես դուստրերին Յայոց,
Որոնք վտանգված բոլոր պահերին
Սրտերն են պարզել ոնց կրակ ու բոց:

Ու ձգվեց ճամփաղ դարերի միջով,
ճամփաղ՝ քարքարոտ, ճամփաղ՝ արեւկա,
Ընդունում էին քեզ ուրախ ճիշով,
Ես դարձել էի ուղեկից-վկա:

Քեզ դիմավորեց Նվարդն Արայի,
Քեզ գիրկը առավ նուրբ Տիգրանուիին,
ճակատդ համբուրեց որպես սիրող մայր
Փառանձեմը մեծ՝ Յայոց թագուիին:

Այծեմնիկը քեզ թուրն իր ընծայեց,
Իսկ Ռուզանը՝ խաչն իր ոսկեկուռ,
Գայանեն թուր ու խաչդ համբուրեց
Ու գովքի խոսքեր ցանեց լիաբուռ:

Դարերի միջով Թարթառին հասանք,
Մոռվի շրթին երգն էր սրտակեզ,
Ճայ ժողովուրդը երջանիկ է հար,
Որ դուստրեր ունի Արցախուիու պես:

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ ՓԱՌՔԻ ճԱՆԱՊԱՐՅ

- Ճայ ժողովուրդը երջանիկ է հար,
Որ դուստր ունի Արցախուիու պես...
Մոռվի խոսքը՝ սրտաբուխ ու վառ,
Ին Արցախուիի, խոսքս է հրակեզ...

Եվ քո ճամփան է այսօր ինձ հուզում,
Մի ճամփա, որ մեր լեռներում անցավ,
ճամփա՝ զարդարված գործերով բազում,
Մանուշակաբույր, աստղոտ, հրացայտ:

Մտքիս աչքերով տեսնում են ճամփադ,
Կարդում քո սիրտը ու ջերմին հոգիու,
Այստեղ հրածին, վառվող աստղեր կան,
Այստեղ՝ Արցախա թեւաբաց ոգի:

Ուղիդ հեշտ չեղավ, եղավ դժվարին,
Ոմանց թվում է՝ լոկ երգ է կյանքըդ,
Տեսնում են միայն ժպիտդ բարի,
Չեն տեսնում աստղեր ցած բերող ջանքըդ:

Տեսնում են միայն շողերդ անշեց,
Չեն տեսնում նրանք առուն քո թախծի,
Չգիտեն, որ քո ժայիտների մեջ
Նաեւ ծփում են կարոտներ անծիր:

Արցախա դատեր սրտուն աստղալից
Մայրական սերն է բորբոքվուն անմար,
Բայց դու չդարձած դեռ պարմանուիի,
Մայրիկի երազ դարձավ թեզ համար:

Կրտսեր եղբորդ հիվանի դարձար,
Զավակի արեւ տեսար նրա մեջ,
Ասուափի նման նա էլ շուտ անցավ,
Կիսատ թողնելով թե՛ երազ, թե՛ տենչ:

Դու կորցրիր նաեւ Սերդ քաջարի,
Առաջինն էր նա Մռովի լանջին,
Նրա ջոկատում զինվորներ արի,
Որ ընծայվեցին երկորի նոր կամչին:

Բայց դու դիմացար կորուստներին քո,
Թեզ չսասանեց չարագույժ քամին,
Աշխատանքի մեջ ամրացար հոգով,
Դարձած վառ աստղը Զեր գերդաստանի:

Զեր գերդաստանի սերը կրծքիդ տակ
Ասացիր. «Երբեք չեմ զնա հեռու,
Արցախն իմ մայրն է սիրառատ, շիտակ
Նրա մեծ սերն է սրտիս մեջ եռում»:

Յայկ Նահապետի աղջկա նման
Գործի մեջ առար միշտ նետ ու աղեղ,

Որպես Արայի Նվարդն աննման
Դարձար քնքշության անսպառ հեղեղ:

Դու Ռուզանի ժառանգը դարձար,
Նրա պես խիզախն եւ հույսի աղբյուր,
Գայանեի պես քո ուղին անցար,
Երկրիդ ծաղիկը դարձրած քեզ համբույր:

Ղժվարությունն էր նահանջում քո դեմ,
Եվ թեւածում էր հաջողությունը,
Ավազուտն անգամ դառնում էր եղեն
Ու կանաչում էր քո ցանկությունը:

Այդպես անունդ ոնց հեքիաթի գորգ,
Թեւեց Արցախս բարձր լեռներում,
Պարզեցիր սիրտը քո արեւաբորբ,
Քեզ ճանաչեցին եւ հեռուներում:

- Ճրաշք աղջիկ է,- ասացին մարդիկ,-
Արծվի սիրտ ունի, աղավնու քնքշանք,
Եթե պահը գա, կդառնա մարտիկ
Այս բուրող վարդը՝ ոտքից գլուխ կյանք...

ՊԱՅՔԱՐ

Ու եկավ պահը...
Ելավ Արցախը խենթ ու վճռական,
Ելավ՝ սրտի մեջ լուսավոր մի տենչ՝
Ապրել հավիտյան գրկում մայրական...
Ելան որդիքը կրակված հոգով,
Դարձած մի բռունցք,
Անկոտրում մի կամք,
Ցասունով ելան, ելան հավատով,

Արդարությունը դարձրած պատգամ:
Ճնշեցին կոչեր
Լեռնեղում մեր ջինջ.
«Մեր մորն ենք ուզում,
Ել ուրիշ ոչինչ:
Մեզ խվել են մեր հարազատ մորից,
Տվել դրացի չար հարեւանին,
Արցախը հայ է իր ծնված օրից,
Թող ապավինենք մեր Երեւանին:
Մենք հնուց անտի
Ճայկի թռոներն ենք,
Վկա են անթիվ
Կոթողները մեր,
Մեր սեզ սարերում՝ Արաքսից-Սեւան,
Մեր լուս պապերի երազն է փայլում,
Մեր տենչերի մեջ, մեզ հետ հավիտյան,
Մեր մեծ Նահապետ Առանն է քայլում:
Մեր ամեն սարի վանք կա ու մատուց,
Մեր ամեն մի ժայռ՝ ոգու մի կոթող,
Մեր աղբյուրները ոնց հույսերի գուռ
Խաչքարերի հետ խոսում են շենշող:
Մեր Ամարասը՝ աղոթք Աստծոն,
Մեր Գանձասարը՝ իրական իրաշք,
Թարթառը՝ մեր հիմն երգը մեղրածոր,
Մեր սրտերի մեջ կանչ են եւ օրինանք:
Վկա է Նոյը, տապանը նրա,
Մի մոր զավակ են Մոռվ ու Մասիս,

Մի տենչ է գրված մեր սրտի վրա՝
Որ դարերի մեջ ապրենք միասին:
Մեր լեզուն մեկ է,

Մեր մուրազը՝ մեկ,
Աշխարհին պարզած
Մեր երազը՝ մեկ:
Մեկն է մեր խինդի, թախծի գավաթը,
Մեր հորովելը ու մեր հավատը:
Բայց կատաղել էր ազերի-բուրքը,
Դարձել նենզ Թալեաթ, կատաղի Ենվեր,
Դրոշ էր դարձրել կենջիքն ու սուտը
Եվ սեւ ուժերին դարձրել թեւեր:
Յայի կառուցած Սումգայիթում շեն,
Ազերին հայի արյունով հարթեց,
Յայի կառուցած Բարվում հնամյա
Յայի արյունով խրախճանք սարքեց:
Արցախը դարձավ խաչված մահապարտ,
Թուրքը որոճեց վախճանը նրա,
Արցախցիները բայց ելան հպարտ,
Փրկության երգը շրբների վրա:
Ասացին. «Այս, արցախցի ենք մենք,
Պիտի միանանք մայր Յայաստանին,
Մեր Յայոց երգով մենք պիտի հարթենք,
Եվ ոչ մի չար ուժ մեզ չի սասանի»:
Եվ սեգ Արցախի զավակների հետ
Արցախուիհն էլ ելավ արծվասիրտ,
Ասաց. «Եկել է պահն ազատաբեր,
Պետք է մարտնչենք թշնամու դեմ բիրտ»:
Ու ելան անվախ կտրիճների հետ
Դուստրերն Արցախի՝ թխաչ, թխահեր.
Վարդուիի, Աստղիկ, Անահիտ, Նվարդ,
Մարգարիտ, Արեւ, Կարինե, Ալվարդ,
Երազիկ, Նազիկ, Թնարիկ, Նանար,
Ելան՝ Արցախի փրկության համար»:

ՍՐՏԻ ԿԱՆՉՈՎ

Մայր Արցախի կոչ ու կանչով,
Արցախուիհին զինվոր դարձավ,
Նա, ով վարդ էր մի հոգեթով,
Կրակմերի միջով անցավ:
Եվ նա ավագ լեյտենանտ էր՝
Քայլքը հղկված ու երազուն,
Թվուն էր, թե իին սպա էր,
Զգեստն այնքան լավ էր սազուն:
Դրամանատարը Սարոն էր քաջ,
Կատակուն էր հաճախ այսպես.
«Քո պատրաստած բորշն ուտելով
Կուժեղանանք դյուցազնի պես:
Քո շերեփն էլ հզոր զենք է,
Կուրկուտը եւ լորին համեղ,
Դու մեր վաշտի հզոր ձեռքն ես,
Մեր թիկունքն ես դու ամեն տեղ»:
Արցախուիհին ժպտում էր նուրբ,
Ասել է թե՝ այդպես էլ կա.
«Մեր կոհիվը արդար է, սուրբ,
Ուր էլ գնանք, ձեզ հետ կգամ:
Ես չեմ քնի գիշեր-ցերեկ,
Խրամատ էլ կրերեմ հաց,
Սարոն, միշտ էլ վստահ եղեք,
Որ ձեզ հետ եմ՝ ճակատս բաց:
Թե պետք լինի՝ զենք էլ կառնեմ,
Կալանամ ձեզ հետ մարտի,
Վիրավորի մոտ կհառնեմ,
Ոնց փրկիչը նրա կյանքի:

Չեմ վարանի, կկրակեմ
Թշնամու դեմ ավարառու,
Չի վրհի իմ գնդակը,
Ես զինվոր եմ նշանառու»:
Ծիծաղում էր Սարոն սրտանց,
Նա լավ գիտեր Արցախուիուն,
Գիտեր, որ նա սիրով անանց

Կյանքն էլ կտա զինվորյալին:
Վաշտը դարձավ կուր գումարտակ,
Սարոն դարձյալ նրա ոգին,
Իսկ արձվասիրտ Արցախուիին
Կանգնած էր միշտ նրա կողքին:
Ինչքան էլ թեժ լիներ մարտը,
Միշտ պատրաստ էր հացն ու ջուրը,
Նա դարձել էր գումարտակի
Շոգեպարար մայրն ու քույրը:
Խորհում էր նա միշտ մայրաբար.
- Ժամանակին զինվորին հաց,
Նա կրվում է հերոսաբար,
Լուսաբացից մինչ լուսաբաց:
Մեր զինվորին կոշիկ է պետք,
Տաք շոր է պետք ձմռան ցրտին,
Նա կրվի մեջ դառնում է եռք,
Երկրի բախտն է նրա ձեռքին:
Զինվորին խիստ օրենք պետք է,
Ու պետք է խիստ հրամանատար,
Բայց զինվորի սիրտը երգ է,
Պետք է լինել միշտ հոգատար:
Այսպես էր նա խորհում, գործում,
Խստապահանջ ու հոգատար,

Կյանքն ամեն տեղ նրան փորձում
Եվ ասում էր՝ քո բեօք տար:
Ու տքնում էր գումարտակում,
Դարձած նրան թիկունք ու թեւ,
Լինում էր եւ խրամատում,
Ղույս էր տալիս, տալիս՝ թեւեր:
Նա ջերմ հարգանք, սեր վաստակեց՝
Խիզախությանք ու բարությանք,
Նա իր փորձը կրկնապատկեց
Զինվորյալի արիությանք:
Տենչում էին ամենուրեք՝
Գումարտակ, գունդ թե ուղեկալ,
Որ թիկունքում միշտ ունենան
Արցախուիհու պես տեղակալ...

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ՄԻ ԲԱՆԱԿ, ՄԻ ՏԵՆՉ

Շտարում Սասուն Բարունցի
Քունը չէր տանում,
Մահիւ-կենաց կռիվ էր
Մայր Լեռնաստանում:
Ֆիդայական խմբերից
Գոհ էր ամենուր,
Սակայն մի միտք էր նրան
Ղուզում ամեն օր.
Պատերազմի ընթացքը
Ղուշում էր անվերջ.
- ժամանակն է ունենալ
Մի բանակ - մի տենչ.
Ղայրենական մի բանակ՝

Կարգ ու կանոնվ,
Ղեկավարող մի շտաբ՝
Իր հուժկու ձայնով:
Մեր սարերում թեւ առավ
Բաղձանքը նրա.
Դաղթանակող լույս դառավ
Սրտերի վրա...

Եվ ժողովրդի ցավից ու վերքից
Ծնվեց բանակը Դայոց Արցախի,
Ծնվեց, որ կապույտ երկնի զմբերից
Իր ազատության զանգակը կախի,
Որ հնչեցնի ի լուր աշխարհի՝
Վճիռն իր վերջին, երազը ոսկե,
Որ իրեն ոչ ոք էլ չի խանգարի,
Դանակն է հասել արդեն ոսկորին:
Դա մի բանակ է, որ ծնվեց ինչպես
Արցախյան ժայռից աղբյուրն է բխում,
Ծնվեց մայիսյան իրեն շանթի պես,

Որ Աստծո փակ դրմերն է բախում,
Բախում է գարնան անձրեւի համար,
Լեռնալանջերին բուրող ծաղկունքի,
Բախում է, որ գա ոսկեվոր ամառ՝
Լույսն ու ժամանակի ազգական աշխարհին.
Որ լինի աշնան առատ այգեկութ,
Արցախա բերքն իր մառանում մնա,
Որ էլ չլինեն հեղեղներ անգութ,
Որ մեր լեռներից սեւ ամպը գնա:
Դա մի բանակ է, որի շարքերում

Կանգնեցին հպարտ փոքրից մինչեւ մեծ,
Կանգնեցին ուստրեր, դուստրեր նրբազեղ,
Գյուղացի, բանվոր, երգիչ, բանաստեղծ:
Եվ ամեն մեկը մի Դավիթ դարձավ,
Մի խանդութ խաթուն դարձավ հրասիրտ,
Ու վկա եղավ աշխարհը անծայր,
Թե ոնց է ջարդվում բռնակալը բիրտ,
Թե ոնց է ցավից հրդեհը ծնվում,
Դառնում փրկության աններում վրեժ:
Թե ոնց է սիրտը երազից սնվում
Եվ արծիվ դառնում կրակներում թեժ:
Եվ այդպես ծնվեց բանակն Արցախի՝
Իր պաշտպանական շրջաններով կուռ,
Ծնվեց, որ թուրքի արնոտ երախից
Փոլի երկիրն իր՝ այգին վարդարույր:
Եվ Կենտրոնական շրջանը ծնվեց,
Ոնց գրանիտե սյունը Հայոց տան,
Սարոյի գունդը հրաշքներ գործեց,
Իսկ Արցախուիհին դարձավ կապիտան:

Արցախն աշխարհի դրախտն է որ կա,
Անտառները խիտ, սարերը հսկա,
Գետերը զնգուն, աղբյուրները ջինջ,
Երկինքը կապույտ, իսկ օդը դյութիչ:
Արցախցին հողից ծնված մշակ է՝
Սնված աստղերի լուսաշող կարով,
Լեռներում բուրող մի մանուշակ է,

Կապված իր հողին, ջրին հոգեթով:
Նա խաղաղ ժամին աղավնաթեւ է,

Վտանգի պահիմ՝ թեւաբաց արծիվ,
Թշնամու հանդեպ խիզախս Անթեյ է,
Ոչ ոք չի կարող կողըովն իր անցնի:
Արցախցու ուժը հողից է գալիս,
Յողն այդ ոգին ու թռիչքն է նրա,
Արցախցին հողին պատիվ է տալիս,
Անունը գրում իր սրտի վրա:
Անցիր Արաքսից մինչեւ սեզ Մռով,
Ամեն ժայռի մեջ մի վանք կա շքեղ,
Անցիր Խաչենը, Թարթառը Վարար,
Նրանց նմանը չկա ոչ մի տեղ:
Արցախս բախտի թեժ ճանապարհին
Դուստրը ուստրի հետ ելնում է մարտի,
Եվ հայտնի է դա ամբողջ աշխարհին,
Եվ հայտնի են մեր դուստրերը անթիվ:
Նոր վկան՝ արդար պատերազմն է մեր
Եվ հաղթանակը մեր ազատակոչ,
Արցախուիին է, որ առած թեւեր,
Բանակին տվեց երազն իր ամբողջ:
Եվ նա ամենուր զինվորի հետ էր,
Որպես քաջ մարտիկ եւ որպես սպա,
Վիրավորների քույրական ձեռքն էր,
Թե արյուն էր պետք, արյունն իր կտար:
Յացը հասցնում էր խրամատը ձիգ,
Որտեղ զինվորն էր՝ կրակների տակ,
Գոռում-գոյցունով ոչ մի թուրք հրձիգ
Չեր կարող ճմլել նրա սիրտը տաք:
Զեռքին շերեփը, ավտոմատն ուսին՝
Ղարձավ իր գնդի սնողն ու ոգին,
Ցերեկն արեւ էր, գիշերը՝ լուսին,
Ուր վիրավոր կար, նա միշտ կար կողքին:

Եվ զինվորների մայրերը բոլոր
Նախ Արցախուհու խոսքն էին լսում,
Մոտն էին գալիս քողջ մեղմ սիրով,
Նրա հետ սրտի ցավերը կիսում:

ՅՈՐԱՌԻԶՈՒՄ

Արաքսի մոտ՝ Յորադիզում,
Թեժացել էր մարտը դաժան,
Յուրը երկնի փեշն էր լիզում,
Իսկ հրի հետ՝ մահն անբաժան:
Յայ քաջերի ընտիր վաշտը
Խորացել էր ռազմի գծից,
Վառվում էին արտն ու դաշտը,
Մրոտվել էր օդը ծխից:
Կորել էին գորշ ծխի մեջ
Ծառ ու այգի, թուփ ու ճանփա,
Զենքերն էին ոռնում անվերջ,
Ղողում էին հավքերն անզան,
Խարճվել էին հող ու երկինք,
Փոշին ծխի թեւն էր դարձել,
Սեւ թեւերին արյուն, քրտինք՝
Ղժիխքն ասես գիրկն էր բացել:
Անզիջում էր պայքարը թեժ,
Եվ ով զիշեր, մահն էր գրկում,
Յայ զինվորը հաստատ գիտեր,
Որ իր Արցախ հողն է փրկում:
Թուրքն էլ հաստատ գիտեր մի բան՝
Զրկվում էր իր խլած հողից,
Որդիները Յայոց մեջ տան
Զեն հանդուրժի նրան նորից:

Ու կատաղած թուրքերը բյուր
Օղակեցին վաշտին մեր քաջ,
Ծուրջը ծուխն էր, դիմացը՝ հուր,
Պետք էր այդտեղ զգույշ նահանջ:
Եվ այդ պահին ռադիոկապով
Հնչեց ձայնը հրամանատարի.
- Վիրավորներին վերցրեք շուտով
Եվ հեռացեք ճանապարհից:
Չքողնեք եւ խոհանոցը,
Մթերքներն էլ առեք ձեզ հետ...
Ու Սասունի հրե խոսքը
Թեւ է տալիս Արցախուհուն.

- Լսեցի քեզ, քեզ լսեցի,
Կատարում ենք հրամանը...
Ամառային օրվա կեսին
ճարճատում էր կայարանը:
Եվ Սարոյի խիզախությամբ,
Պատրաստվելով նոր գրոհի,
Վաշտը ճեղքեց մահ ու վտանգ
Ու դուրս եկավ առանց զոհի:
Ու երբ նորից հանդիպեցին
Զինվորները հայոց գմոնի,
Երբ երգեցին «Աղբյուր Սերոբ»,
Ծանրությունը փոխվեց խինդի:
Ասես երգ չեր, հայ ոգին էր,
Որ կրակե շնչով խոսեց,
Սասունն ասաց. «Ապեք, տղերք,
Ապրի եւ մեր գմոնի Սոսեն»:

Արցախուիին Սոսե անունը լսեց,
Ասաց. «Սենք ինչպե՞ս կհասնենք նրան,
Յանուն իր երկրի նա սիրտն է կիզել,
Անունն իր գրել սրտերի վրա:
Երբ Արցախ երկրից թշնամուն վանենք
Եվ ազատ ապրենք մեր սեզ լեռներում,
Երբ մեր հաղթության աստղերը ցանենք
Մեր փրկված հողի բոլոր կողմերում,
Երբ որ ծնկի գա մեր չար թշնամին,
Այժմամ Սոսեին կլինենք արժամի»:
Ժպտացին սրտանց սպա եւ զինվոր,
Արցախուիին խոսքն իր ասաց նորեն,
Բայց, ավա՞ղ, մարտուն ծանր ու ահավոր
Լինում են նաեւ սրբազան զոհեր:
Մարտուն զոհվել էր Գեւորգը արի,
Զոհվել էր նաեւ Յուրին գանգրահեր,
Արցախուիին մոր քնքշանքով բարի
Խոնարհվել էր լուր նրանց գլխից վեր:
Սարոն՝ թախծալից չոքեց նրանց մոտ,
Մոտեցան բոլոր զինվորները քաջ

Ու սրտերի մեջ ցասում ու կարոտ,
Երդվեցին մեկտեղ կռվել աննահանջ:
Նրանց երդումին Արաքսն էր վկա,
Վկա էր Քիրսը՝ Եղբայրն Արաքսի,
Որ մայր Արաքսը եղել է ու կա,
Քանզի զավակներ ունի քաջասիրտ:
Քանզի ունի նոր Անդրանիկ, Նժեհ,

Ունի նոր Սերոբ, ունի նոր Սոսե,
Եվ նրանց մասին շրթերով իրե
Գալիք դարերը հավերժ կխոսեն:

ՎՐԵԺ

Յեռվից մի թուրք նշանառու
Խփեց ջահել մի զինվորի,
Եվ արյունը դարձավ առու,
Դարձավ թախիծ ու վիշտ խորին:
Մերոնք կռվում էին զգույշ,
Կռվում էին առանց զոհի,
Ամեն մի զոհ՝ մի ցավ է, փուշ,
Եւ մայրերին, եւ մայր հողին:
Այս ո՞նց եղավ, ո՞վ շտապեց,
Վռնդել ենք թուրքին հեռու,
Մեր հարվածից ինչպե՞ս փրկվեց
Թուրքի դաժան նշանառուն:
Ամեն մի հայ զինվոր ասես
Յարց էր տալիս ինքն իրեն,
Արցախուիհին բազեի պես
Բարձրանում էր լերկ ժայռն ի վեր,
Նա բարձունքին բռնեց դիրքն իր,
Ոնց անվիեպ նշանառու,
Այդժամ թուրքը նենգ, դավադիր,
Մի նոր անմեղ զոհ էր փնտրում...
Արցախուիհին, դարձած ցասում,
Նշան առավ թեժ, անխնա,
Յեռվից լսվեց մի վայնասուն.
«Վայ, ես մեռա, ազիզ անա»:

ՀԱՐՍԱՆԻՔ

Ստեփանակերտ, մեր լեռների
Ծոցից ծնված հրաշք քաղաք,
Վարարակնա ջրի պես ջինջ,
Ապրուն էիր հաշտ ու խաղաղ:
Բայց թշնամին ձգտեց անվերջ,
Որ մոռանաս քո հայ լեզուն,
Որ չգրես էլ ոչ մի էջ՝
Յերսությամբ, փառքով լեցուն:
Բայց դու ելար ցասումով լի,
Ոնց Միերը՝ քարանձավից,
Որդիներդ ելան անթիվ,
Առյուծ դառած անհուն ցավից:
Նրանք դարձան մի հալք բռունքը,
Պաշտպանական մի կուռ կենտրոն,
Ամեն մեկի ազնիվ սրտուն
Յաղթանակի մի վառ կերոն...
Գունդն այդ եղավ ամենուրեք,
Այդ գնդի հետ Արցախուիհին,
Եվ իին զինվոր, զինվոր նորեկ,
Ցրում էին ամայ ու միրաժ...
Պատերազմը շատ էր դաժան,
Թշնամին՝ նենջ, զրիերը՝ շատ,
Մահը մարդուց միշտ անբաժան,
Լացի, վշտի օրերը շատ:
Այդ օրերին ի՞նչ հարսանիք,
Սերը՝ տագնապ, համբույրը՝ թեժ,
Թուրքը դարձած մահվան ժանիք,
Յայը դարձած արդար վրեժ:

Այդ օրերին մի քաջ զինվոր
Արցախուհուն մոտեցավ լուրջ,
Պատիվ տվեց.- Ընկեր մայոր,
Թույլ տուր խոսեմ մի հարցի շուրջ...
- Լուս եմ քեզ, խնդրեմ, ասա,-
Պատիվ տվեց Արցախուհին:
- Ինձ օգնեցեք,- զինվորն ասաց,-

Մի շատ համեստ քեֆի համար:
- Այդ ի՞նչ քեֆ է այս թեժ պահին,
Ճարմար ժա՞մ ես գտել, տղաս:
- Ընկեր մայոր, որոշել եմ
Այս երեկո ամուսնանալ:
Արցախուհին լսեց նրան,
Մի պահ խորհեց, ուրախ ճշաց,
Այտերն առան գույնը նռան,
Ասես զանձ էր գտել կորցրած:
- Կօգնեմ, տղաս, կօգնեմ անշուշտ,
Մի զինվոր էլ դիմեց երեկ,
Նա էլ քեզ պես որոշել է
Ամուսնանալ այս երեկո:
Ես կխնդրեմ իրամանատարին,
Մթերքները կնվիրենք,
Թող որ գունդը մեր քաջարի
Հնչեցնի նվագ ու երգ:
Եվ մենք երկու հարսանիքն էլ
Կկատարենք մի երեկո,
Արդարացի կրիվը մեր
Թող զարդարվի հարսնաերգով:
Զինվորն ասես թեւեր առավ,

Ասաց. - Գիտեմ այդ տղային,
Մենք մեկտեղ ենք գենքեր առել,
Երբ եղել ենք դեռ ֆիդայի:
Նա Վարդանն է մեր հարեւան,
Իմ անունն էլ Արարատ է,
Վարդիթերն է Սերը նրա,
Իսկ ին Սերը Արեւիատն է:

Պաշտպանական կենտրոնում
Եղավ երկու հարսանիք,
Ամբողջ գունդը դարձել էր
Մի հարազատ զնտանիք:
Սեղանի շուրջ, վերեւում,
Երկու զույգեր են նստել,

Նրանց ջահել սրտերում
Ե՛ւ երազ կա, ե՛ւ վառ սեր:
Արարատն ու Վարդանը
Զինվորներ են անվանի,
Աղջիկներն էլ վարդեր են,
Նրանց սիրուն արժանի:
Արցախուիին թեւ առած
Յարսանիքի ոգին էր,
Ասես որդիքն են նրա,
Պասկվում են այդ գիշեր:
Գնդի զոհված քաջերի
Մայրերին էլ են կանչել,
Արցունքի ցողն աչքներին,
Սրտներում հույս ու կանչեր:

Եվ թամադան՝ լրագրող,
Ծնորհավորեց զույգերին,
Սրտերի մեջ սիրո շող,
Ոտքի ելան չորս հոգի:
Բաժակները զնգացին,
Ծենքը խինդից օրորվեց,
Ուռաները թնդացին,
Յարսանաերգը շորորվեց:
Պարը մտավ հունի մեջ,
Զինվորները թեժացան,
Իրար ծուլված երգ ու տենչ,
Ուրախ շրփից-շուրթ անցան,
Երեք տարվա ընթացքում
Յարսանիքն էր առաջին:
Արցախուիին շշնջաց,
- Պիտի վերջ տանք հառաչին,
Մեր քաղաքը այսուիետ
Յարսանքատուն պիտ դառնա,
Տիրությունը թող անհետ
Մեր սրտերից հեռանա:
Նա մոտեցավ զույգերին
Եվ համբուրեց մեկ առ մեկ,
Մատանիներ նվիրեց,

Յետո պարեց նրանց հետ,
Երգը նորից շիկացավ,
Սրտեր շոյեց բերկրանքից,
Բախտի աստղեր իջան ցած
Արցախս ջինջ երկնքից:

Լեռնակուտակ վշտերից
Ծնվում էր հույսն առաջին,
Սիրո վարդը փշերից
Ելնում էր, որ կանաչի,
Որ կոկոններ տա կյանքին
Եվ Արցախը զարդարի,
Որ Եռագույնն իր ձեռքին
Հարսանիքում միշտ պարի:

Հարսանիքի երկողոդ կենացի վրա
Սեղանապետի խոսքը խորացավ,
Նորից վիշտ ու վերք խառնվեցին իրար,
Եվ բողբոքվեցին կարոտներ ու ցավ:
Թաճադան հիշեց նահատակներին,
Կրծքի տակ կրակ, աչքերում արցունք,
Ասաց.- Նրանք են դժվար պահերին
Արցախը տարել բարձունքից բարձունք:
Նրանք քայլում են միշտ մեր առջեւից,
Նրանց սրտերը փարոսներ են վառ,
Նրանց անունով սերունդներ կգան,
Կշոյեն իրենց բախտը հրավարս:
Նրանց սրբազն կենացի վրա
Թող բաժակները քաղցր զրնգան,
Թող ավանդույթն այս ծփա հուրիրան,
Եվ այն վառ պահի ամեն գերդաստան.
Ու տեղից ելան բոլորը մեկեն,
Ու բաժակները զիլ զրնգացին,
Նահատակները կարծես թե եկել

Իրենց խոսքն էին ասում առնացի.
«Ապրեք, տղաներ՝ Վարդան, Արարատ,
Թող ուրախ անցնի հարսանիքը ձեր,
Թող սերերը ձեր լինեն անարատ,
Մենք ձեզ մաղթում ենք միայն խինդ ու սեր»:
Սեղանապետից ջերմ խոսքը առավ
Թխավարս, թխաչ մի մայր զոհվածի,
Հարսանքատունը սուրբ տաճար դառավ
Ու լսեց նրա խոսքը հուզալի.
«Առաջարկում եմ ես կենացը ձեր,
Հարազատներս՝ Վարդան, Արարատ,
Գրիգորիս հետ մեր տանը եղել
Ու մեր տնից եք գնացել մարտի:
Իմ մինուճարի անունից այսօր
Շնորհավորում եմ ձեր հարսանիքը,
Թող մանուկներով երջանիկ ու ժիր
Միշտ լիքը տեսնենք բոլորիդ գիրկը,
Թող ամեն մեկդ յոթ որդի սնի,
Զեր կյանքը հոսի բերկրանքի հունով,
Ում տանն առաջին տղան որ ծնվի,
Թող կոչի զոհված որդուս անունով»:
Եվ հարսանքատան առաստաղը թաց,
Լուս երախստիքով նրան գուրգուրեց,
Խսկ Արցախուիին սիրով թեւաբաց
Գրկեց զոհյալի մորը, համբուրեց,
Ու հրավիրեց, որ հետը պարի,
Եվ սրտապարար երգը ոլորվեց,
Եվ զոհյալի մոր պարով հնայիչ
Հարսանքատունը հուզված օրորվեց:

ՕՄԱՐ ՍԱՐՈՒՄ

Պաշտպանական կենտրոնը
Լարված էր այդ օր,
Զինվորների մի մեծ խումբ
Խնդիր ուներ նոր...
Թշնամական զորքերը
Ելել են Օմար,
Եվ կորցրած հանգիստ, քուն,
Կռվում են համառ,

Քյալքաջարի լանջերին,
Առատ ձյունի մեջ,
Կառչած հույսի կանչերին,
Ունում են անվերջ:
Տրորվում է գագաթը
Զյունափառ սարի,
Նորից ճոճվում է օդուն
Բռունցքը չարի:
Ու գնդապետ Սարոն քաջ
Նեղ ճամփան հարթել,
Օմար սարի փեշերը
Առել էր արդեն:
Սակայն սարի գագաթին
Բազմել էր թուրքը,
Չէր կամենում հեռանալ՝
Յագած տաք քուրքը:
Կրակում էր անդադար՝
ճիգերը լարած,
Մոռացել էր երեկվա

Դասերն իր առած:
Սարոյի գունդն ընտիր
Պիտի շրջանցեր,
Ստորոտից ցածրադիր
Թիկունքն անցներ,
Սարի զագաթ բարձրանար
Ու մտներ մարտի...
Ու նամակ էր գրել նա
Այդ վճռի առթիվ.
«Սպիտակ զգեստ ուղարկել,
Դա պահանջ է նոր,
Պետք է զորքը քողարկել
Ենք-ճերմակ շորով,
Որ լեռները բարձրանանք
Աննկատ, անտես,
Արցախուիհի, մեր հույսն ես,
Սպասում ենք քեզ»:

Արցախուիհու ոտքի տակ
Կրակ էր վառվում,
Երազներով իր շիտակ
Նա միտքն էր լարում.
Ինչպե՞ս լուծել խնդիրը
Եվ ի՞նչ հնարքով,
Ու նա գտավ ելքը իր
Ղժվարին ջանքով.
Մեկ գիշերվա ընթացքում
Մեկ տասնյակ դերձակ
Կենտրոն բերեց, որ կարեն
Կոստյումներ ճերմակ:

Նրանք մոմեր վառեցին
Մինչեւ այգաբաց,
Վաթսուն կոստյում կարեցին
Արագ, սրտաբաց:
Ու դեռ լույսը չբացված,
Դասնում են Օմար,
Զյունը խիտ ու հերարձակ
Կապել էր կամար:
Վարորդի հետ Արցախուհին
Խաչմերուկ հասավ,
Բայց բարձունքից թշնամին
Մերենան տեսավ,
Կրակահերթն իր բացեց
Գագաթից սարի,
Վարորդը քիչ կարկամեց,
Թեկուզ քաջարի:
- Ինչպե՞ս վարվենք,- ասաց նա,-
Քաշեց խոր հառաց,
Ինչպե՞ս գտնենք մի հնար,
Որ շարժվենք առաջ:
Կայծակնացայտ հնարը
Արցախուհին գտավ,
Ավտոմատը իր առաջ
Կեռնանը մտավ:

Ասաց. - Տղաս, շուտ արա,
Ու շարժվիր թափով,
Ես թշնամուն կշեղեմ
Կրակահերթով:
Դեմի լեռան թիկունքին՝
Բարձր ժայռի քով,

Կանգնեցրու մեքենան,
Ես կզամ ոտքով...
Վարորդն ազատ շունչ քաշեց...
Բեռը փրկված էր,
Իր հերթական կրակից
Թուրքը զրկված էր:
Արցախուհին խոր ձորով
Կեռմանը հասավ,
Որդիական ջերմ սիրով,
Վարորդը ասաց.
«Ես շատ էի լսել քո
Քաջության մասին,
Սակայն տեսա ին աչքով,
Որ դու, արծվասիրտ,
Ե՛կ շարքային զինվոր ես,
Ե՛կ սպա՝ վարպետ,
Իզուր չէ, որ դարձել ես
Դու փախզնդապետ»:
Իսկ երբ հասան Սարոյին,
Նա բերկրանք ապրեց,
Ասաց. «Վստահ էի ես,
Արցախուհի, ապրես...
ճերմակ հազուստն այս ժամին
Մեզ օգուտ կտա,
Մեր կատաղած թշնամին
Նոր ծնկի կգա,
Նա վերջ կտա անօգուտ
Իր ել ու մուտին,
Կգրավենք բարձունքը
Իրիկնամուտին»:

Լուրջ հոսեց իրաթեւ,
Ոնց զուլալ առու,
Որ թշնամին ջարդվել է
Օմարի սարում,
Որ Սարոյի գունդը նոր
Ճրաշը է գործել,
Օղակել է բարձունքը
Եվ գնդակոծել,
Եվ չի փրկվել ոչ մի թուրք
Բարձունքի ուսին.
Վերջ է տվել թշնամու
Մահագույժ հույսին:
Քարվաճառը այսուհետ
Էլ քելբաջար չի,
Ճայի լեզվով հայի հետ
Պիտի անրջի,
Պիտի բացի գաղտնիքը
Բազում դարերի,
Պիտի կարդա մեծ գիրքը
Ճայոց բառերի,
Որ գրված են վանքերի
Խոսող այտերին.
Մատուռների սրբացած,
Տուֆե պատերին,
Աղբյուրների ճակատին՝
Խաչմերուկներում,
Որպես հայոց հավատի
Լույսը լեռներում:
Լուրն էր նաեւ տարածվել
Այն նոր սխրանքի,
Որ գործել էր Արցախուիհն
Գնով իր կյանքի...

ԿՈՓՈՒՄ

Իննառւնչորսի մայիսի սկիզբ...
Դեռ ծուխն էր մխում մեր սարերն ի վեր,
Բայց համոզվել էր թշնամին նանիր,
Որ պատերազմը տանուլ է տվել:
Ու նա խորանանկ, հոգու մեջ դավեր,
Խորհրդի կանչեց հային, ռուսին,
Որ կրիվ չանեն, գյուղեր չվառեն,
Որ վառեն միայն ճրագը հույսի,
Որ մահ չսկրեն ամեն ակնթարթ,
Որ խաղաղությանք լուծեն հարցը բարդ:
Բայց պատմությունը՝ դարերի վկան,
Դարձել է դասը հայ ժողովրդի,
Գիտե՝ նորաթուխ թալեաթներ կգան,
Որ հարցը լուծեն ըստ Աթաթուղրի:
Ուստի ամեն հայ խորքում իր հոգու,
Ունկնդիր ձայնին բազում փորձանքի,
Ապավինում է իր ուժին, ոգուն,
Իր կամքով կոփված հայոց բանակին:
Այդ բանակի մի երակն առնական
Սարոյի գունդն է՝ Կենտրոնի ուժը,
Ուր միշտ հնչում է երգը մարտական,
Ուր չի մոռացվում կրվի մշուշը:
Ճենված պայքարի անսպառ փորձին,
Կոփվում է անվերջ գունդը քաջարի,
Ուր Արցախուիհն ընծայված գործին,
Ազ թեւն է դարձել հրամանատարի:
Կարգ ու կանոնի հմուտ սպա է,
Մաքրության քույր է, մայր է զինվորի,
Նրա եռանդը միշտ անսպառ է,
Եվ քնքշանքով է օգնում բոլորին:

«Մեր գունդն,- ասում է,- պսակվեց փառքով,
Դարձավ «Սարտական դրոշի» ասպետ,
Նա պետք է քայլի իր փառքի ճամփով
Ու մեր պարձանքը մնա այսուհետ»:

Այդպես է խորհում ու գործում այդպես
Արցախի դուստրը՝ քաջասիրտ սպան,
Նա բանակին է տվել սիրտը կեզ,
Եվ այնտեղ գտել իր փառքի ճամփան:


ՎԵՐՁԵՐԳ

Գարունն է ժպտում... Ինն է մայիսի՝
Շուշիի առան ցնծալից մի օր,
Արցախի փառքի, պատվի եւ հույսի
Բանակի ստեղծման տարելիցը նոր:
Վերածնության հրապարակում
Զորահանդես է, շքերթ է հպարտ,
Յաղթության տոն է հայոց բանակում,
Բերկրանք է ապրում ամեն մի հայ մայր:
Պատիվ են առնում գեներալները,
Բոլորը ջահել, ժողովրդածին,
Թեւեր են առել հայոց դարերը,
Վարդանն է խոսում, Նժդեհն առնացի:
Նրանց բռները, Սարոներն արի,
Գայանեները՝ դուստրերը հայոց,
Եվ այդ շարքի մեջ մեր Արցախուիին՝
Սիրտն ազատության բորբոքուն հնոց:
Յրապարակը ցնծում է մեկեն,
Երբ քայլ են քայլում գնդերը զորքի,
Ժողովուրդն է այդ գնդերը երկնել,
Վստահել նրանց պատիվն ու հոգին:

Յիմա տոնում են հաղթանակը մեր,
Աչքերում հուրը զոհված սրտերի,
Յապատ են ինչպես Մոռվ սարը ծեր,
Ինչպես Արաքսը՝ փրկված ցրտերից:
Ամեն մի շրջան իր գունդն է բերել,
Ամեն մի զինվոր՝ իր սիրտն ու հոգին,
Սարդարապատված Արցախով շքեղ
Վերածնվել է Տիգրանի ոգին:
Յոնյունները հրասայերի,
Թնդանոթների շարասյունը խիտ,

Շափաղումները նոր հրթիռների
Նոր դաս են տալիս ոստիններին բիրտ,
Որ էլ չփորձեն սեզ Արցախի դեմ
Խուժիուժ ցեղերի խմբերը հանել,
Ու թե մոլուցքով կրկին հանդգնեն,
Յիշեն, որ ցաման մեր հուրն ենք ցանել:
Յիշեն, որ արծիվ մեր ուստրերի հետ
Ինչպես են ելել դուստրերը հայոց,
Արյունը դարձած ազատության եռք,
Բացել մեր բախտի դարպասները գոց:
Քաջն ուստրերի եւ դուստրերի հետ
Յապատ քայլում է եւ Արցախուիին,
Դաշնաշունչ կրվի օրերն է հիշում,
Արաքսից-Օմար՝ մարտերն ամեհի...
Յուշերի միջից մի ծայն է լսում,
Քնքշալից մի ծայն, ոնց մայրական երգ.-
Ազատ Արցախն է, իր խոսքն է ասում.
- Կաթս քեզ հալալ, դուստր իմ գնդապետ:

1997-2008թթ., Ստեփանակերտ



Սուրբ Մաշտոցից ծնվեց դպիրն Ամարասի,
Պատմագիրը ծնվեց, երգիչը մեծ,
Հայոց երգերը հին' նման մեղվապարսի,
Ծովզպարի մեջ առան բարձունք ու քերծ:
Ու շրերթը ձգվեց մեսրոպանուն մանկանց,
Մեսրոպացան օշախ, սեր ու հարգանք,
Աճամ բողբոջներին ու թերթերին ծաղկանց,
Հովք պար էր բռնում նրա անվամբ:
Եվ նա եկավ Արցախ՝ լուսը հոգու վրա,
Եվ դարերում դարձավ նրան սատար,
Նրա աղոթքներով, օրինանքներով նրա,
Ողջ Արցախը դարձավ մեսրոպատառ:

ԱՍԴԵՐԻ ՀՅՈՒՌԸ*

Չափածոն դրամա մեկ գործողությամբ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԱՐԵՎ	Տիեզերքի որդին - 3 միլիարդ տարեկան
ՍԻՐԻՈՒՍ	Արենի նաժիշտը - 2 միլիարդ տարեկան
ԼՈՒՍԻՆ	Մոլորակների քույրը - 3 միլիարդ տարեկան
ՅՈՒՐԻ	
ԳԱԳԱՐԻՆ	Սովետական քաղաքացի Տիեզերքի հերոս - 27 տարեկան
Ա. ԱՍՏՂ	Տիեզերքի երկվորյակ դատրերը
Բ. ԱՍՏՂ	

*) Ժամանակին դրաման բնմադրվել է Արցակվ և Աղոքեցանի հայաշատ բնակավայրերի դպրոցներում

Դնալու տեղի է ունենում Տիեզերքում

ԱՐԵՎ

(դիմում է նաժիշտին)

- Քանի՞ դար է նս հոր նմ պարզնում արար աշխարհին,
Մարդուն ու հողին նս կյանք նմ տալիս,
Ու քանի՞ դար է աչքս երկրացու մնօ ճանապարհին,
Սակայն ոչ ոք ինձ այցի չի գալիս:

ՍԻՐԻՈՒՍ

Օ՛, չքնաղ Արեն, դժվա՛ր է, դժվա՛ր,
Իսկ մարդու միտքը դեռնուս տկար...

ԴՐԱՄԱՑԻԿԱԿԱՆ ԵՐԿԵՐ

ԱՐԵՎ

Իմ ծնված օրից, գիտես, Սիրիոս,
Աջակցել եմ, որ մարդն էլ ծնվի,
Իմ շունչն ու հոգին տվել եմ նրան,
Որ իմ շողերից ջերմանա, սնվի,
Գիտե՞ս, թե երբ է մարդը մարդ դարձել,
Մինչեւ իհմա նա չի՝ հասունացել:

ԼՈՒՍԻՆ

(Պիմում է Արեւին)

Ճիշտ է, դու հուր ես պարզենել մարդուն,
Բայց մոռացել ես արդարությունը:
Քո շողերի տակ
Ուժնոր թույլի արյունն է թափել,
Պիղծը արդարին ճգմել է, խաքել:
Երբ մարդու միտքն է ճնշվել դարենդար,
Ասա, նա ինչպե՞ս, ինչպե՞ս քեզ մոտ գար:

ԱՐԵՎ

Իսկ դու որտեղի՞ց իմացար, Լուսին,
Երկրացու մասին:

ԼՈՒՍԻՆ

Մի տարի առաջ
Ես հողագնդից նվեր ստացա,
Մեջը նամակ կար,
Երբ այն կարդացի, անչափ իհացա:
Նույնիսկ եկել են նու ինձ նկարել,

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

Որպես հիշատակ իրենց մոտ տարել:
Ուղարկել են ինձ ողջույն ու համբույր,
Նշել, որ շուտով պիտի գան մեզ կյուր:

ԱՐԵՎ

Ո՞վ է գրողը, ո՞ր երկիրն է նա:

ԼՈՒՍԻՆ

Հզոր երկիրն է նա սովորական:

ԱՐԵՎ

Քանի՞ տարեկան կլինի, զիտե՞ք:

ԼՈՒՍԻՆ

Քառասուներեք:

ԱՐԵՎ

Քառասուներեք, զարմանալի՞ է,
Այդքան ջահե՞ է, այդքան իմաստո՞ւն:

ԼՈՒՍԻՆ

Իմաստուն է նա, արեւ հարազատ,
Քանի որ այնտեղ մարդն է ազատ:

ԱՐԵՎ

Դու ասում էիր ազատ միտք չկար,
Երկիրն այդ, ասա,
Արդարությունը որտեղի՞ց գտավ:

ԼՈՒՍԻՆ

Բանվորն է քնքել իր ժողովրդին,
Հողի մշակին դաշինքով համառ,
Եվ ժողովուրդը դրոշի վրա,
Միշտ քանդակում է նկարը նրանց
Նրանց դաշինքը փարոս է դարձել,
Ազատ ճախրելու ուղիներ բացել:

ԱՐԵՎ

Որտե՞ղ ես տեսել դրոշի այդ, Լուսին:

ԼՈՒՍԻՆ

Ինձ ուղարկել են դրոշն այդ կարմիր:

ԱՐԵՎ

Հիանալի է, պատմիր, օ՛, պատմի՛ր,
(Լուսինը ցանկանում է նկարագրել սովորական դրոշը,
հանկարծ հնչում է Սիրիոսի ձայնը):

ՍԻՐԻՈՒ

(Նայելով աջ, զարմացած)

Այն ի՞նչ նոր Աստղ է աստղերի գրկում:

Ա.ԱՍՏՂ

Արբանյակ նա՛վ է:

Բ.ԱՍՏՂ

Մարդ էլ կա նստած նավի խցիկում:

ԴՐԱՆՑ ՏՐԿԱԿԱՆ ԵՐԿՐՈ

ԱՐԵՎ

(Q̄l̄npp̄ p̄ařad̄p̄ařq̄n̄k̄l̄n̄)

Ո՞վ ես դու, ո՞վ մարդ, անունդ ի՞նչ է,
Ո՞ւմ որդին ես դու եւ ո՞ր աշխարհից:

ՅՈՒՐԻ ԳԱԳԱՐԻՆ

Ես Սովորական երի երկրից եմ, Արեն, Մեր ժողովրդի օդաչուն
Մեր ժողովրդի ողջույնն եմ քերել
Ողջ տիեզերքին:

ԱՐԵՎ

Արի ճակատող համբուրեն, որդիս:

(Գագարինը պարզելով խաղաղության դրոշը, մոտենում է Արենին: Վերջինս համբուրում է Գագարինի ճակատը և նայելով դրոշին հարցնում)

Ո՞ւմ նկարն է այս դրոշի վրա:

ՅՈՒՐԻ ԳԱԳԱՐԻՆ

Միասնության, ով հզոր:

ԱՐԵՎ

Ես խոնարհվում եմ ձեր կամքի առաջ:

ԱՐԵՎ

Դարեք շարունակ ես սպասել եմ ամեն առավիտ,
Դու առաջինն ես, որ թենիք առել, թռել ես մեզ մոտ:
Հավերժության մեջ, տիկնորդի մեջ դու դարձար
փարոս,
Ես բեզ օծում եմ ոնց տիկնորդի Առաջին հերոս:

ԴՐԱՄԱՑԻԿԱԿԱՆ ԵՐԿԵՐ

(Բոլոր աստղերը ծափահարելով շուրջպար են քննում):

ՅՈՒՐԻ ԳԱԳԱՐԻՆ

(Բարի ժպուալով)

Ծնորհակալ եմ:

ԱՐԵՎ

Դեմ, արի՛, որդիս,
Ու մի քանի օր հյուր մնա մեզ մոտ:

ՅՈՒՐԻ ԳԱԳԱՐԻՆ

Ծնորհակալ եմ, արդ սրտատրովի
Մեր ժողովուրդն է սպասում ճամփիս:
Մենք դեռ հյուր կգանք բոլոր աստղերին
Եվ բոլոր-բոլոր մոլորակներին:

(Գագարինը ավելի բարձրացնելով Սովորական Միության դրոշը, ուղղվում է դեպի Երկիր):

ԱՐԵՎ

Ո՞վ հերոս, քաջ մարդ, դու բարով գնաս,
Մեր ողջույնը տար ձեր ժողովրդին,
Եվ իմ անունից աշխարհին ասա,
Արեւից հզոր են
Արարող մարդու միտքը եւ ոգին...

1962 թ., Բարու

ԱՄԱՐԱՍԻ ԿԱՆԹԵՂՋ*

Պատմական դրամա

(Վ. Հակոբյանի «Մեսրոպ Մաշտոցն Ամարատում»
պոեմի մոտիվներով)

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՄԵՍՐՈՊ ՄԱՃՏՈՅ	44 տարեկան
ԿՈՒՅՈՒՆ	Մաշտոցի աշակերտը, 20 տարեկան
ԱՆԱՆԻԱ	Ամարատի վանահայրը, 60 տարեկան
ԱՌԱՆ ԻՇԽԱՆ	Արգամի զորագիտ, 40 տարեկան
ՀՈՎՍԵՓ	Առանի որդին, աշակերտ, 16 տարեկան
ՀՈՒՓՄԻՄԵ	աշակերտուիի, 14 տարեկան
ԳՐԻԳՈՐ	Պամիկ, Առանի թիկնապահը, 40 տարեկան
ՄԻՒԱՍ	Գրիգորի որդին, աշակերտ, 16 տարեկան
ԳԱՅԱՆԵ	աշակերտուիի, 14 տարեկան
ՍՈՒՐԱՆԴԱԿ	25 տարեկան
ԱՎՈ (Մոնքն Մելքոնյան)	զորագիտ
ԲԵԿՈՐ (Աշոտ Ղուլյան)	զորագիտ
ՀՈՒՐԻ	գնդշկուիի, 40 տարեկան
ՆԱԽՕՒՆ	գնդշկուիի, 60 տարեկան
ՀԱՅՈՒՔ	26 տարեկան

*) Բնմադրվել է Ստեփանակերտի վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնում, ներկայացվել Ամարատում՝ հայոց գրերի գյուտի 1600-ամյակի առթիվ։ Բնմադրիչ՝ թատրոնի գլխավոր ռեժիսոր Լեռնիդ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ։

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

S ե u ի l ա n ա զ h ն

Բնմը ներկայացնում է Ամարաս վանքի բակը: Գարուն է, բակում թթենիներ են՝ փարթամ տերեններով: Թթենու սովորում, բարեն նստարաններին նստած են աշակերտներ: Առաջին պլանի վրա Հռվենին ու Սինասն են, երկրորդ շարքում՝ Հմիվսիմեն ու Գայանեն: Նրանց ձեռքներին պնակիտներ են՝ գրելու տախտակե հարմարանքներ: Վանահայր Անանիան վարում է դասը:

ԱՆԱՆԻԱ - (Մագաղաթյա Աստվածաշնչից 2 օրինակ դրված են քարեն սեղանին: Վերցնում է դրանցից մեկը եւ դիմում Հռվենինին): Հռվենի, անզի՞՞ն ես արել Տերունականը:
ՀՈՎՍԵՓ - (Կանգնում է): Այո, սուրբ հայր, անզիր եմ արել ատորական լեզվով:

ԱՆԱՆԻԱ - Ապրեն՝ ս, զավակս, ապա աղոթիր...

ՀՈՎՍԵՓ - (Արդուում է ատորերնեն: Հնկերները լսում են ուշադիր):
Սլութա

Ավն դ բշմայա նթկադաշ շմախ թենթեն
մալքյութախս. կադիշ կադիշ կադիշաթ ավն
դքշմայա. դամլիխ շմայա ու առ ա
ռաբութ շուխս այռն ու նաշա
կային լախս: կադիշ կադիշ կադիշաթ.
Ավն դ բշմայա նթկադաշ շմախ
թենթեն մալքյութախս նհվեն սվանախ:
այքանա դ բշմայա ափ բառա.
հավլան լախսմա դսունկանան
յավմանա: ու շուկ լան խավենն:

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

այքանա դ ափի խնան շվական
լսայավեն. ու լա թայլան (լնայունա)
լնայունա: ըլա փասան մն
բիշա: մտուլ դ դիլախ ի
մալքութա ու խնլա ու թշրուխթա:
լալամ ալմին ամին.

ԱՆԱՆԻԱ -Ապրեն, Հռվենի, զոհ նմ, քո առաջադիմու-
թյան մասին կհաղորդեմ հորդ: Նստիր, զա-
վակս: (*Դիմում է Մինասին*): Մինաս, հիմա էլ դու
ադորդիր հունարեն, թող Աստված լսի մեր պա-
դատանքը հունական դասական լեզվով, որ բա-
րի աչքով նայի մեզ:

ՄԻՆԱՍ -(*Տեղունականը աղոթում է հունարեն: Աղոթելիս կար-
կամում է:*

Պատեր իմո՞ն, օ էն տիս ուրա՞նիս,
այտաթի՞տո տո օ՞նամատու,
էլլթե՞տո ի վասիլի՞ա սու,
յենիթի՞տո թո թե՞լիմա՞ սու,
ու էն ուրանո՞ կէ էպի տիս յի՞ս:
Տոն ա՛րտոն իմո՞ն տոն էպի՞ուսիոն
դոս իմի՞ն փի՞մերոն
կէ ա՛ֆես իմի՞ն տա օֆիլիմա՞տա իմո՞ն,
ու կէ իմիս աֆիթե՞մեն տի՞ս
օֆիլե՞տոս իմո՞ն
կէ մի իսենե՞գիս իմա՞ս իս պիրասմո՞ն
ալա բի՞սէ իմա՞ս ապո տո պոնիրու՛:

Ամե՞ն:

Հռվենիր վաղեկացնում է, ծիծաղում: *Մինասը ջղայնանում է:*

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

Արա, Հովսենի, երբ դու կրնչում էիր, ես քեզ խանգարո՞ւմ էի:

ՀՈՎՍԵՓ - (Չայնացած վեր է թռչում տեղից եւ դիմում վանահոռը): Սուրբ հայր, լսնցի՞ք՝ ինչ ասաց Մինասը: Նա վիրավորնց ինձ, նա արհամարհում է ասորերենը: Ո՞նց թե կրնչում եմ (դիմում է Մինասին), դու սուրբ զրոց լնզու ասորերենը կրնչո՞ց ես համարում: (Չեղքը մեկնում է, որ խլի Մինասի ձեռքի պնակիտը: Ակսում է իրարանցում: Տղաները բռնում են միմյանց օձիքից: Աղջկեները կատաղի միջամտում են):

ՀՈՒՓՍԻՄԵ - Զինքդ հավաքիր, Գայանե, ինչո՞ւ ես միջամտում, երեկ դու չէի՞ր ասում. «Չեմ սիրում այդ ծուռտիկ-մուռտիկ ասորերենը», հը՞, պատասխանիր, դու չէի՞ր ասում:

ԳԱՅԱՆԵ - Իսկ դու՞՝ դու՞՝, դու չէի՞ր ասում. «Հետո ի՞նչ՝ Հովսեռուր հանճարենդ է, ինչո՞ւ պիտի հունարենը փոխարինի մեր լեզվին, մեր զրաբարը ինչո՞վ է պակաս հունարենից»: (Գայանեն եւ Հոփսիմեն արյուրանում են).

ՀՈՒՓՍԻՄԵ-Գիտենմ՝ ինչու ես պաշտպանում ասորերենը: Դու անտարբեն չես Հովսենի հանդենա: Հա, համակրում ես Հովսենիին եւ դարձնել ես ասորաւնը:

ԳԱՅԱՆԵ - Իսկ դու էլ թաշկինակդ ես նվիրենլ Մինասին, անունն էլ ձեռագործենլ ես հունարենն: (Բուռն վիճում են, Հովսենիը պաշտպանում է Հոփսիմեին, Մինասը՝ Գայանեին):

ԴՐԱՄԱՑԻԿԱԿԱՆ ԵՐԿԵՐ

ԱՆԱՆԻԱ-Հանգստացեք, զավակներս, հանգստացեք: Ես իիմա կպատժեմ բոլորիդ (վերցնում է ձողափայտը, որ խիի Մինասին ու Հռվենիին: Տղաները խուսափում են: Աղջիկները հուզված են: Բնմում իրարանցում է: Այդ պահին վաճքի բակ են մտնում Առանը և թիկնապահ Գրիգորը՝ զիսվորական զգնատներով):

ԱՌԱՆ-(Զարմացած): Այս ի՞նչ է կատարվում: Սուրբ հայր, այս ի՞նչ իրարանցում է: Երեխաները ինչո՞ւ են հուզված: (Մոտենում է Հռվենիին): Այս ի՞նչ վիճակ է, տղաս, ինչո՞ւ ես գունատվել: (Դիմում է Մինասին): Մինաս, պատասխանիր: Ինչո՞ւ եք վիճում:

ՄԻՆԱՍ -(Այլայլված է): Քենի Առան, ես մեղք չունեմ, մեղավորը Հռվենիին է:

ՀՈՎՍԵՓ - Ստում է, հայրիկ, մեղավորն ինքն է, նա ծաղրեց ինձ են ի՞մ... են ի՞մ...

ԱՌԱՆ - Ձո՞ւ ի՞նչը, որդիս, քո ի՞նչը ծաղրեց...

ՀՈՎՍԵՓ - Իմ ընտրած ասորնենը: Նա ասորնենը համարեց կրնչյուն: Կրնչում է ինքը՝ խրթին հունարենով:

ԱՌԱՆ-(Հարգանքով): Սուրբ հայր, ի՞նչ է կատարվում այստեղ, չեմ հասկանում, երեխաները ինչո՞ւ հաշտ չեն, ի՞նչն է պատճառը:

ԱՆԱՆԻԱ-(Միրուքը շոյելով): Զորապետ, չարացել են երեխաները, վիճում են անդադար, միմյանց չեն հավանում: Հապա տեսե՞ք, թե ինչպիսի թանկարժեք նվերներ ենք ստացել Եջմիածնից (վերցնում է «Սուրբ գրքի» օրինակները և ցույց տալիս): Սա

հունարեն օրինակն է, իսկ այս մեկը՝ ասորենքն: Սրբոց լեզուներով մեր հավատի գրքերն են, զորապետ, մեր երեխաների ապագան այս լեզուների հետ է կապված, բայց նրանք չեն հասկանում դա:

ԳՈՒԳՈՐ - (Կարգանքով): Թույլ տվեր չհամաձայնվել Ձեզ հետ, սուրբ հայր: Ես համոզվել եմ, որ մեր երեխաների ապագան ոչ հունարենն է, ոչ ասորենքնը եւ ոչ էլ պարսկերենը, այլ մեր լեզուն է, սուրբ հայր, մեր մայրենին է, որ մեզ է հասել մեր մայրենի քաղցրահամ կաթի հետ...

ԱՆԱՆԻԱ - (Չարմացած): Լսիր, ռամիկ, լեզուդ տեղը պահիր, մի քարկոծիր Աստծուն, մի արհամարհիր մեր սրբոց լեզուները: (*Խաչակնքում է եւ հայցքն ուղղում վեր*): Ներիր մեզ, Աստված, ներիր այս մոլորյալին (*մատնացույց է անում Գրիգորին*), ներիր նրա մեղքերը:

ԳՈՒԳՈՐ - Ո՞րն է մեղքս, Սուրբ հայր: Հարցրու մեր զորապետից, թե՞ն ի՞նչ տեղի ունեցավ Հայոց սահմանների վրա: Ովքե՞՞ր խախտնցին հաշտության մեր դաշինքը, մե՞նք, թե՞ն բյուզանդացիներն ու պարսիկները: Ովքե՞՞ր են մրցում իրար հետ՝ մեր զավակներին մեզնից խելու նպատակով, ովքե՞՞ր, մե՞նք, թե՞ն պարսիկներն ու բյուզանդացիները:

ԱՆԱՆԻԱ - Լսիր, Գրիգոր, մի քարկոծիր Աստծուն, վախնցիր Վերինից, մի անտեսիր մեր սրբոց լեզուները:

ԱՌԱՆ-(Մոտենում է Անանիային, հարգանքով առնում ձեռքը, համբուրում, ապա հանգիստ տոնով բացատրում): Սուրբ

հայր, մեր Արցախի զորագունդը՝ մեր այրուձին, մասնակցենց Վարանդայի ճակատամարտին, օգնության հասավ Զիրավում և Նախիջենանում պարսիկների դեմ մղվող կրիվներին, եղանք Եփրատի ափերին, բյուզանդացիների դեմ մղվող ահեղ մարտերին մասնակցեցինք: Ինչո՞ւ չեք հարցնում, թենի քանի զոհ տվինք:

ԱՆԱՆԻԱ - (Հարգանքով): Զավակս, չեմ հարցնում, քանզի իմ զրոյցը Աստծոն հետ է, ապաշխարանքս ուղղված է Վերինին, բայց դու լավ գիտես, որ պատահանքս մեր ժողովրդին օգնելու մասին է: Դա է Աստծոն ծառայի զործը, զորապետ:

ԱՌԱՆ - Բայց ո՞ր լեզվով եք դիմում Տիրոջը (հայացքն ուղղում է վեր), Սուրբ հայր, խնդրում եմ, ճշմարիտն ասեք, հային օգնելու համար ո՞ր լեզվով եք դիմում Աստծուն:

ԱՆԱՆԻԱ - Ճշմարիտն ասեմ, զավակս, մոռացե՞լ եք, որ առ Աստված, մեր աղոյթքները պետք է բարբառենք սրբոց լեզուներով:

ԱՌԱՆ - Չեմ մոռացեն, սուրբ հայր: Ինչպե՞ս վարվենք հարեւան պարսիկների և բյուզանդացիների հետ, եթք մեր երկիրը բզկտելուց հետո էլ չեն հանգստանում: Քառատեղ են Աշխարհն Հայոց: Եփրատի ջուրը վայելում են հույները, մայր Արաքսինը՝ պարսիկները, Արածանիի ոսկեփրփուր ջրերում լողանում են վայրենի ցեղերը, իհմա էլ մեր հրաշք Արցախն ու Ուտիքն են կցում բուն Աղվանքին: Հայոց սահման քուտ գետի ջրե-

բում պիտի վլստան վայրենաբարո խազարները:
Ծիծաղնի է, Հայոց անառիկ Արցախն են կցում
բուն Աղվանքին: Վախենում են Հայոց զորու-
թյունից, սուրբ հայր, բաժանում են Տիգրան Մե-
ծի երկիրը, որ տիրեն: Հարցրեք, սուրբ հայր, թե
քանի զոհ տվինք Եփրատի, Քուի եւ Արաքսի ա-
փերին, հարցրեք, հարցրեք:

ԱՆԱՆԻԱ -Այդ ամենը հայտնի է ինձ, զավակս: Իմ
զործն աղոթելուն է: Ապաշխարում եմ Աստծուն,
որ զորավիզ լինի մեր ժողովրդին, մեր զինվո-
րյալներին, Զեզ: Աղաչում եմ Վերինին, որ օգնի
ձեզ՝ պարտության մատնելու թշնամիներին:

ԱՌԱՆ-ԻԱԿ ովքե՞ր են մեր թշնամիները, սուրբ հայր:
ԳՐԻԳՈՐ-(Չղային): Բյուզանդական նենզ կայսրը եւ
պարսկական խորամանկ արքան: (Գլխարկը հա-
նում է եւ ճմրում՝ ի նշան վրիժառության):

ԱՆԱՆԻԱ- Հանգստացիր, Գրիգոր, մեր իշխանի, մեր
զորապետի մոտ համեստ պահիր քնզ, մի մոռա-
ցիր խոնարհությունը, դա քո զործը չէ:

ԳՐԻԳՈՐ- Իմ զործն է, սուրբ հայր, ռամիկներիս զործն է:
ԱՆԱՆԻԱ -(Օրորում է գլուխը): Ներիր, Աստված, ներիր
մոլորյալ ռամիկներին, քավիր նրանց մեղքերը:

ԱՌԱՆ- (Հարգանքով): Սուրբ հայր, ռամիկները մոլորված
չեն եւ մեղք չեն զործում: Նրանք ատում են այն,
ինչ կյանքն է թելապրում: Սուրբ հայր, մեր Առա-
ջին կաթողիկոս Գրիգոր Լուսավորիչը եւ հզոր
թագավոր Տրդատ Մեծը բացեցին դպրոցներ
հունարեն եւ ասորերեն: Հարյուր տարուց ավելի
է, ինչ հայ երեխաները սովորում են այդ լեզունե-
րով: Ճի՞շտ է, սուրբ հայր:

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

ԱՆԱՆԻԱ - Ճիշտ է, զավակս, ճիշտ է (լսաչակնքում է):
ԱՌԱՆ- Սուրբ հայր, Դուք չե՞ք նկատում, որ պարսկական արքունիքը ասորի քարողիչներով լցրել է Արեւելյան Հայաստանի ազարակներն ու շենքը, քաղաքներն ու գորակայանները, իսկ Արեւատյան Հայաստանում մեկ հային երկու հույն քառղիչ է հասնում: Ի՞նչ ասել է սա:

ԳՐԻԳՈՐ- (Կրկին ջղայնացած): Այո, սուրբ հայր, ի՞նչ ասել է սա, ի՞նչ է սպասում մեզ:

ԱՌԱՆ-(Խանդադատանքով): Հանգստացիր, Գրիգոր, հանգստացիր:

ԱՆԱՆԻԱ- (Խաչակնքելով հայացքն ուղղում է դեպի վեր): Ո՞վ Ամենակարող եւ Ամենատնա, խնլիքի քեր քո մոլոյալ հավատացյալներին, խոնարհություն պարզեցիր, հորդորիր նրանց, որ կատարեն պատվիրաններդ բոլոր:

ԳՐԻԳՈՐ- (Քիչ մեղմացած): Սուրբ հայր, Աստծո պատվիրանները միայն հայ քրիստոնյաների համար են: Սուրբ հայր, ամեն անգամ աղոթքից առաջ ասում եմ. «Երեսս ոտքիդ տակ, Աստված, օգնական եղիր հայերիս, մեղք ենք, անմեղ ենք: Ամեն անգամ իմ Մինասին քեզ մոտ ճամփելիս պատվիրում եմ, որ խոնարհ լինի եւ լավ սերտի Ավետարանը՝ թե՛ ասորերեն եւ յե՛ հունարեն:

ԱՆԱՆԻԱ- (Արդեն մեղմացած): Ճիշտ ես ասում, որդյակս, այդպես էլ կա, լավ են սովորում եւ՝ Մինասը, եւ՝ Հովսեփիր: Բայց...

ԱՌԱՆ -Սուրբ հայր, Գրիգորի լեզվով ժողովորդն է խո-

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

սում, նա են՝ իմաստուն է, են՝ խիզախ: Լսենք նրան: **ԱՆԱՆԻԱ - (Հոժար):** Գրիգոր, շարունակիր...

ԳՐԻԳՈՐ - Սուրբ հայր, այստեղ Մինասս հոգին կոփում է հունարեն, իսկ այնտեղ՝ Եփրատի ափին քյուզանդացի զինվորները թալանում են հայ շինականներին, կրիվներ սարքում: Այնտեղ զոհվեցին զինակիցներս՝ Անաստասը, Բաղդասարը, Խաչառուրը: Սուրբ հայր, Պարսկական Հազկերս Առաջին արքան մի կողմից մեր շենքու լցնում է ատորի երես առած քարոզիչներով, մյուս կողմից խրախուսում է պարսկի զորականներին, որ թալանեն հայոց շենքու: Այստեղ էլ զոհվեցին իմ ընկերները՝ Աղասին, Մուշեղը, Ասողիկը: (Գրիգոր քավից մղկտում է, արցունքները սրբում զլխարկու):

ԱՌԱՆ - Հանգստացիր, Գրիգոր, հանգստացիր:

ԱՆԱՆԻԱ - Հանգստացիր, Գրիգոր, հանգստացիր:
Աստված կպատժի են՝ Թենողորոս կայսրին, են՝ Հազկերտին:

ԱՌԱՆ-ՍՈՒՐԲ հայր, զավոք, Աստված չի պատժում թշնամուն: Թշնամուն պատժողը մենք պետք է լինենք, հայ ուսմիկը պիտի պատժի չար հարեւանին, դաժան թշնամուն:

ԱՆԱՆԻԱ - (Խաչակնքում է): Փրկյա մեզ, Աստված, փրկյա են ողորմյա, քո արարածներն ենք, ներիր ու փրկյա:

ԳՐԻԳՈՐ - Աստծո օրհնանքով մենք պիտի մեզ փրկենք, սուրբ հայր, չպետք է հավատանք հարեւան թշնամուն: Ներիր, սուրբ հայր, խոնարհում եմ քո սուրբ գործի հանդեպ, բայց վաղվանից Մինասս չի հաճախելու դպրոց: Ես չեմ թողնի, որ թշնա-

ԴՐԱՄԱՑԻԿԱԿԱՆ ԵՐԿԵՐ

մին այսօր իմ որդուն սպանի լեզվով ու հոգով,
իսկ վաղը ոչնչացնի մարմնապես: Ո՛չ, չեմ թող-
նի: (Մինար հուզված քչփում է ընկերների հետ):

ԱՌԱՆ - (Ձեռքը դնում է Գրիգորի ուսին): Վաղվանից դպրոց
չի հաճախելու նաև Հովսենիքը: Դպրոց չեն հա-
ճախելու նաև այս աղավնիները, մեր աղջիկնե-
րը: (Հովսենիքը հուզված սեղմում է Մինարի ձեռքը, աղջիկ-
ները համաձայն են, փարփում են միմյանց):

ԱՆԱՆԻԱ - (Աջը կարկառներով վեր): Փրկյա մեզ, Տեր, փր-
կյա մոլորդյաներիս:

Վարագույր

S ե u ի l ե p կ p n p դ

Ամարաս վանքի բակը: Նոյն տեսարանն է: Վանահայրը
ալետարանը ձեռքին քայլում է աջ ու ձախ, շշնջում է «Տե-
րունականք»-ասորերեն, ապա՝ հունարեն: Հանկարծակի,
տագնապով բակ է մտնում Գրիգորի:

ԳՐԻԳՈՐ-Սուրբ հայր, հրամայիր հնչեցնել տագնապի
զանգերը: Պարսկական զորագնդերի օգնու-
թյամբ Քուն գնտն անցել են խազարները եւ ար-
շավում են դնափի Ամարաս: Նրանց ընդառաջում
են նաև բյուզանդական զինյալ գնդերը:

ԱՆԱՆԻԱ - (Մտնում է վանք եւ դուրս գալիս: Անմիջապես դո-
ղանջում են տագնապի զանգերը: Աղոյթում է)... Օգնիր,
հնտիս, Աստված, փրկյա մեզ, անմեղ է ժողո-
վուրդս հայոց, օգնիր սուրբ Էջմիածնին, իմաս-
տուն Վռամշապուհ թագավորին, Ամենայն Հա-
յոց կաթողիկոս Սահակ Պարթենին: Մի թող, որ
օտարները տիրեն հողին մեր Արցախս, փրկիր

Ամարաս, սուրբ մատոնքները սուրբ Գրիգորիսի: Ով Ամենազոր, սատար նղիր հավատացյալ Արցախսի: (Շարունակում է աղոթել, ղողանջում են վանքի զանգերը: *Տագնապալից զանգերի կանչով վանքի բակ են մտնում Առանդ, Մինասը, Հովսեփը և էլի զինվորներ:* Նկատելով նրանց, վանահայրը ավելի բարձրածայն է աղոթում են դիմում Առանձին): Զորապետ, ժողովիր զինվորյալներիդ, արհավիրք է նորից, փրկիր Քրիստոսի զավակներին (*Խաչակնքում է Առանձին*):

ԱՌԱՆ - Աստված մեզ հետ է, սուրբ հայր, մեզ հետ է զորությունը թրի են խաչի, արդար է ժողովուրդն Արցախա:

ԳՐԻԳՈՐ- (Դիմում է Մինասին): Մինաս, զավակս, զնա են կապիր զենքք ու զրահի, մնաս քարով ասա մայրիկիդ, չլացես, ամուր նղիր:

ՄԻՆԱՍ - Ամուր եմ, հայրիկ, մի կասկածիր, մեզ հետ է ոգին Հայկ Նահապետի:

ՀՈՎՍԵՓ - Նան ոգին Արտաշենս թագավորի:

ՄԻՆԱՍ - Ոգին են կամքը Տիգրան Մեծի:

ԱՌԱՆ- (Ասուենում է երկուային, առնում աջ ու ձախ թեւերի տակ, թեւավորված ասում): Մեզ հետ է ոգին մեր Առան Նահապետի ու մեր քաջ պապների, ինձ հետ եք, դուք, արծիվներ Արցախի, երբ մենք միասին ենք, ոչ մի թշնամի մեզ չի հաղթի: Դեհ, ուրեմն, ի զեն՝ հանուն հող հայրենիի, հանուն մեր սերունդների:

ԳՐԻԳՈՐ - Հրամայիր, զորապետ, լսում ենք Ձեզ: Ինչպես միշտ, պատրաստ է Արցախի անպարտ այրուձին:

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

ԱՌԱՆ -Գիտեմ, Գրիգոր, իմ հավատարիմ զինակից:
Բայց պետք է պատերազմի բոլոր հասցնել Կա-
պան: Սյունիքում է հայոց սպարապետ Մուշեղ
Մամիկոնյանը: Պետք է իմաց տալ, որ օգնու-
թյան հասնեն մեզ:

ԳՐԻԳՈՐ -Զորապետ, այդ գործը կիհանձնարարեմ Բա-
կուրին, թռչկան ձի ունի, ինչպես ինքն է թռչկան:
(Գնում է):

ԱՌԱՆ -Դնի, ուրեմն, շտապել է պետք (դիմում է որդուն):
Հովսենի, զավակս, նրենկ դարբին Առաքելը ջրդե-
ղել է մի նոր թուր, կախված է պատից: Խոփիր, կա-
պիր գոտիդ, վերցրու թուրդ, հրաժեշտ տուր մե-
րոնց: Հրաժեշտ տուր Նախշուն տատիկիդ եւ
Հռիփսիմենին՝ քո սիրած աղջկան:

ՀՈՎՍԵՓ - (Ուրախ): Ի՞նչ իմացաք, հայրիկ, որ սիրում եմ
Հռիփսիմենին:

ԱՌԱՆ -Հայրիկդ իմաստուն է, զավակս, գլսի է լնկել,
որ առյուծ որդու կրծքի տակ արդեն բռնկվել է
խարույկը սիրո: Հորդ ես քաշել, զավակս: Դն, ու-
րեմն շտապիր:

ՀՈՎՍԵՓ -Լսում եմ, հայրիկ, մինչեւ աչքդ ճպես, կվնրա-
դանամ (Դուրս է գալիս: Բնմում մնում են Առանն ու
Անանիան):

ԱՌԱՆ-Սուրբ հայր, թշնամին մեզ հանգիստ չի թող-
նում: Պարսից Ծապուհ արքան եւ Բյուզանդիայի
Տնրենտիոս կայսրը միացան եւ կիսեցին երկիրը
մեր Հայոց: Մղկուում է սիրտս, սուրբ հայր: Քա-
նի՛-քանի՛ զոհեր տվինք: Հիմա էլ մեր զավակնե-
րը կրթվում են օտար լեզուներով, խորթանում

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

մեր արմատներին: Մեր ուկին ու արծաթն օտարների գանձարանն են հարստացնում: Ի՞նչ է սպասում մեզ, սուրբ հայր, կարո՞ղ են կռահել:

ԱՆԱՆԻԱ - Աստված մեծ է, զավակս, եւ մեզ հետ է:
Նա գայլերին չի հանձնի Քրիստոսի հոտը, դիմանանք, ապաշխարենք Տիրոջը՝ մեր պապերի հավատով (դիմում է Վերինին). Ո՞վ ամենազոր, փրկյա ազգս հայոց, պահպանիր օջախն Արքախս:
(Բնմի հետեւից ներս են մտնում Գրիգորը, Հովսեփը, Միասը եւ էլի զինվորներ: Մոտենում են Առանին):

ԳՐԻԳՈՐ - Զորապետ, այլուծին պատրաստ է: Հրամայիր:
ԱՌԱՆ - (Հրամայում է): Հայոց քաջեր, շարքի: (Զինվորները շարք են կանգնում):

ԱՆԱՆԻԱ - (Մոտենում է շարքին): Զավակներս, մինչեւ իհմա կովի մեկնելուց առաջ մարտիկները համբուրում էին հոգնուր առաջնորդի ձեռքը, օրինանք առնում են նետվում մարտի: Այսօր, ես՝ ինքս եմ համբուրում ձեր ձեռքը, այն ձեռքը, որ պիտի թուր բարձրացնի չար թշնամու դեմ: (Մոտենում է, մեկ առ մեկ խաչակնքում են համբուրում ձեռքները):

ԱՌԱՆ - Ծնորհակալ եմ, սուրբ հայր, Ձեր օրինանքը ոգի կտա մեզ: (Դիմում է զինվորներին): Ի մարտ, քաջեր, մեզ հետ են ժողովուրդն ու Աստվածը:

(Զինվորները մարտական քայլերով Առանի առաջնորդությամբ դուրս են գնում: Բնմի հետեւից լսկում են զենքերի շաշ ու շառաչ, կռվողների բարձրագույն կանչեր: Բնմահարթակ են մտնում Գրիգորը եւ մի թշնամի ռազմիկ՝ մենամարտնլով թրենով: Գրիգորին հաջողվում է զարկը: Խշնա-

ԴՐԱՄԱԿԱՆ ԾՐՎԵՐ

մին թափալվում է եւ անշնչանում: Գրիգորը մոտենում է, որ ոտքը դնի նրա կրծքին, բայց թշնամին անսպասելի վեր է թռչում եւ թրով խոցում Գրիգորի սիրտը: Գրիգորը տապալվում է գնտնին: Բնմի հետեւից ներս են մտնում Առանը, Հռվենիքը, Մինասը: Մինասի հարվածից տապալվում է թշնամին: Գրիգորը մի կերպ թիկն է տալիս գնտնին եւ դիմում որդուն:

ԳՐԻԳՈՐ -Ապրենս, զավակս, շնորհակալ եմ: (Դիմում է Առանին): Զորապետ, քեզ եմ հանձնում զավակիս, թող նա փոխարինի ինձ:

ԱՌԱՆ -(Թերվում է, որ բարձրացնի Գրիգորին, չի ստացվում: Հոգվում է): Գրիգոր, 20 տարուց ավելի է, ինչ իմ զինակից-թիկնապահն ես: Կազդուրվիր, վստահ ենիր, որ Մինասը շարունակելու է քո ուղին, ինձ հետ միասին:

ԳՐԻԳՈՐ- (Դժվարությամբ): Որդիս՝ Մինաս, եւ դու՝ Հռվենիք, լսնք ուշադիր: Օգնեցնք միմյանց, եղնք միասնական, թիկունք դարձնք մեր զորապետին: Եվ... զավակներս, Աստծո հետ զրուցնք միայն մայրենի լեզվով, մեր քաղցր հայերենով, նահապետ Հայկի մեզ կտակած բարբառով: Մեր միասնության ու մեր լեզվի մեջ է մեր փրկությունը: Զմոռանաք պատգամս:

(Թուլացած ընկնում է: Առանը քնքշորեն փակում է Գրիգորի կոպերը):

ՄԻՆԱՍ -(Լացակումած): Հայրիկ, հայրիկ...

ՎԱՐԱԳՈՒՐ

ԳՈՐԾՈՂՈԽՅՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

S ես ի լ ա ռ ա զ ի ն

Տեսարանը նույնն է՝ Ամարաս վանքի բակը։ Անանիան գրուցում է զինվորական զգեստով իր սաների՝ Մինասի, Հովսեփի, Հոհիսիմելի, Գայանեի հետ։

ՀՈՒՓՍԻՄԵ- (Դիմում է Անանիային)։ Սուրբ հայր, պատերազմի պատճառով ընդհատվեցին մեր պարապմոնքները։ 400 թվականն է։ Պատերազմից հետո անցել է ուղիղ մեկ տարի։ Ե՞րբ ենք սկսելու պարապմոնքները։

ԱՆԱՆԻԱ - Շուտով, զավակս, շուտով։

ՀՈՒՓՍԻՄԵ- Սուրբ հայր, մի՞թե ասորեննը չէ մեր զիտության նու արվեստի ապագան։ Մի՞թե մենք կարող ենք մոռանալ, որ Արտաշես թագավորը նույնիսկ սահմանաքարերի վրա գրել է տվել իին ասորեննը լեզվով, կարո՞ղ ենք ժխտել ասորի փիլիսոփանների նու աստվածաքանների կատարած գործը, մոռանալ Մար Աքաս Կատինայի ծառայությունը Հայոց Վաղարշ թագավորին։

ԱՆԱՆԻԱ - (Հոհիսիմեին)։ Ճիշտ նու, դուստրս։ Իսկ ո՞վ է ժխտում քո այդ կարծիքը։

ՀՈՒՓՍԻՄԵ- Գայանեն, սուրբ հայր, Գայանեն, նաև Մինասը։

ԳԱՅԱՆԵ- (Տաքացած)։ Սուրբ հայր, ասացեք, խնդրեմ, «Սուրբ զիրքը» նբրանենից առաջինը հունա-

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

բե՞ն չի թարգմանվել, ամենաճիշտը եւ ստուգվածը հունարեն թարգմանությու՞նը չէ:

ԱՆԱՆԻԱ - (Ճիշխամեխին եւ Գայանեխին): Նստեցեք, դուստրերս, երկուսդ էլ ճիշտ եք: Դրա վկայությունն էլ հենց երկու լեզուներով գործող մեր սրբոց լեզուներն են, որոնք արժանացել են Գրիգոր Լուսավորչի եւ Տրդատ Մեծի հավանությանը:

ՄԻՒԱՍ- Սուրբ հայր, մեր այն տաք վեճից հետո Ավել եմ մտորել՝ «Սուրբ գիրքը» հնարավոր չէ՝ թարգմանել մեր լեզվով, ինչու՝ մենք դպրոցներում հայերեն չսովորենք:

ԱՆԱՆԻԱ - (Խաչակնքելով): Զավակներս, մի՞թե մենք ավելի խնդրոք ենք, քան Սուրբ Գրիգորն ու Տրդատ Մեծը: Սուրբ է նաև նրանց պատվիրանը: (Այդ պահին բակ է մտնում սուրհանդակը՝ ժպտադեմ, հետալով: Բոլորը լարում են իրենց ուշադրությունը՝ սպասողական դրությամբ):

ՍՈՒՐՃԱՆԴԱԿ- (Կարգալից մոտենում է վանահորը, առնում ձենքը, համբուրում, ծոցից հանում մազաղաջյա մի փաթեթ եւ մեկնում նրան): Սուրբ հայր, մեր թագավորն ու կաթողիկոսը նամակ են հղել Ձեզ: Բայց չգիտեմ, թե ինչի մասին է:

ԱՆԱՆԻԱ - (Լուր ու լարված կարդում է եւ ոգետրված հայտարարում): Նամակը կնքել է Վռամշապուի թագավորը:

ՀՈՎՍԵՓ - Ի՞նչ են գրում, Սուրբ հայր:

ՄԻՒԱՍ- Սուրբ հայր, ինչի՞ մասին է նամակը:

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

ԱՆԱՆԻԱ- (*Ոգետրված*): Զավակներս, հայոց թագավորն ու կաթողիկոսը պահանջում են, որ երկու աշքաբաց տղաների ուղարկենք Վաղարշապատ, որպեսզի ներկայանան քարոզիչ Մաշտոցին: Մեր թագավորն ու կաթողիկոսը քարոզիչ Մաշտոցին հանձնարարնել են մի խումբ աշակերտների հետ գնալ արտասահման՝ հայոց գրեթե ստեղծելու նպատակով:

ՀՈՒՓՍԻՄԵ- (*Ոգետրված է*): Ի՞նչ լավ լուր է: Սուրբ հայր, Հովսեփին ուղարկեք Մաշտոցի մոտ:

ԳԱՅԱՆԵ- (*Վեր է թռչում տեղից*): Սուրբ հայր, ուղարկեք նաև Մինասին:

ԱՆԱՆԻԱ- Համաձայն նմ, դուստրերս, այդպես էլ կվարվենք: (*Դիմում է տղաներին*): Մինաս, Հովսեփ, գնացեք, պատրաստվեք, ես կգրեմ նամակի պատասխանը: (*Դիմում է սուրբանդակին*): Սուրբանդակ, հետեւիր ինձ, հոգնած ես, հանգստացիր, առավիտյան վաղ լնտիր ձիերով կճանապարհենս Վաղարշապատ:

S ե u ի l ե p կ p n p դ

Տեսարանը նույնն է: Աշուն է: Բակի դիմացի պատի տակ դրված են զյուղատնտեսական գործիքներ՝ կամեր, զերանդիներ, պատից կախված են զորենի հասկերից հյուսած փնջեր, խաղողի ողկույզներ, նուռ, խնձոր, աշնանային մրգեր: Արցախյան գույնզգույն գորգն ու կարպետը կախված են բակի նկատվող պատին: Վանահայրը կարդում է Ավետարանը՝ մերթ ասորերնն, մերթ հունարեն: Խաչակնքում է, հայացը հառում վեր, աղոթում:

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

ԱՆԱՆԻԱ- Տեսնես ի՞նչ է անում քարոզիչ Մաշտոցը, ինչպե՞ս են Մինասն ու Հռվենիիր: Հաջողվո՞ւմ է այդ դժվարին գործը, թե՞ ոչ: Հինգ տարին էլ անցավ, սակայն լուր չունենք: Ո՞վ ամենազոր եւ ամենատեսն, օգնիր քարոզիչ Մաշտոցին իր ծանր գործի մեջ: (Այս մտորումներով քայլում է աջ ու ձախ: Հանկարծ բացփում է Ամարասի բակի դարպասը, հետալով եւ ուրախ-ուրախ մոտենում է սուրհանդակը):

ՍՈՒՐՃԱՆԴԱԿ- Սուրբ հայր, ավետիհ՝ ս, ավետիհ՝ ս, Ամարասի ճանապարհին է Մաշտոցը՝ իր խմբով: Մինասը եւ Հռվենիին էլ են խմբի մեջ: Սուրբ հայր, Մաշտոցն ստեղծել է հայոց գրերը, պատկերացնո՞ւմ եք, հայոց գրերը: (Ուրախությամբ կրկին համբուրում է վաճահոր ձեռքը):

ԱՆԱՆԻԱ - Օրինյալ լինես, զավակս, բարի լուր ես բերել: Դեհ, պատրաստվենք դիմավորելու Մաշտոցին եւ տղաներին: (Գիմում է սուրհանդակին): Տղաս, գնա, իշխան Առանին իմաց տուր, որ Ամարաս է հասնում Մաշտոցը, թող շուտ նախապատրաստվեն դիմավորելու: Ասա, թող երավիրի երաժիշտների խմբին, շնչիորահարին:

ՍՈՒՐՃԱՆԴԱԿ- Սուրբ հայր, մինչեւ աչք ճպելը լուրը կհասցնեմ Առան իշխանին: (Գնում է: Անանիան կարգի է բերում զյուղատնտեսական գործիքները, ուղղում գորգն ու կարպետը, խաչակնքում): Փառք շատ լինի, Աստված, լույսդ հասցրիր Արքակ՝ Մաշտոցի մտքով ու սրտով: (Որոշ ժամանակ անց բակ են մտնում Առան իշխանը, Նախշուն այան, Հուտին, երաժիշտները):

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

ԱՌԱՆ-(Ողջունում է վաճահորը): Աչք լոյս, սուրբ հայր,
Աստծո լոյսը ճառագեց Հայոց աշխարհի վրա:
Այդ լոյսը հասավ նաև Արցախ: Աչք լոյս:
Փրկված է Հայոց աշխարհը: Մեր թրին միացավ
նաև մեր գիրը, գրին՝ թուրը: (Ոգետրված): Աչք
լոյս, փրկված է ժողովուրդը Հայոց:

(Այդ խոսքի վրա ծեծում են բակի դարպասը: Սուրհանդա-
կը վազելով բացում է դրները: Ներս են մտնում Մաշտոցը,
Հովսեփիը, Մինասը, Կորյունը: Հնչում է շեփորը, նվազում է
երաժիշտների խումբը: Նրանց ընդառաջ է գնում վաճա-
հայրը: Դիմավորողների հետ են Հովսեփիմեն եւ Գայանեն:
Ողջագորփում են: Վաճահայրը հրավիրում է՝ նստելու:
Տեղափորփում են: Կենտրոնում Մաշտոցն է: Անանիան
դիմում է Մաշտոցին): Մաշտոց, ճիշտն ասած, ես
Ձեր մասին լսել էի սրանից 10 տարի առաջ, երբ
Դուք Գողթն զավառում ուսուցչություն էիք ա-
նում: Բայց խոստովանեմ, որ հայերն զրերը ինձ
համար երազ էին թվում: Հիմա դժվար է արտա-
հայտել իմ ուրախությունը Ձեր աստվածային
զյուտի համար: Այժմ խնդրում եմ, Մաշտոց, որ-
պես մեր Առաջին ուսուցիչ, մեզ երջանկացրեք
Ձեր այբուբենի լոյսով:

ՄԱԾՏՈՅ - (Համեստ եւ փառահեղ): Խնդրեմ, սուրբ հայր,
հենց այդ նպատակով էլ այցելել ենք Արցախ:
(Տեղից բարձրանում են եւ՝ Մաշտոցը, եւ՝ վաճահայրը:
Մաշտոցը ձեռքը դնում է Անանիայի ուսին եւ շերմորեն ա-
սուս). - Սուրբ հայր, Արցախը Մեծ Հայքի լուսա-
ռաք կուտն է, նրա դուռն ու դարպասն է, մեր ժո-

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

ղոփրդի իմաստության կարկաչուն աղբյուրներից մեկը: Դեռևս Եղեսիայում, երբ Աստծո օգնությամբ պատկերեցի մեր առաջին տաղը, Մինասն ու Հովսենիքը ուրախությունից գլուխկոնձի տվին, ապա վեր կացան ու պարեցին: Ես նրանց խոստացա, որ Վաղարշապատից անմիջապես հետո պիտի դպրոց բանանք Ամարասում, այն սրբավայրում, որ խորիրդանշում է Սուրբ Գրիգորի անունը, որտեղ հանգչում են սուրբ Գրիգորիսի մասունքները:

ԱՆԱՆԻԱ - Ծնորհակալ եմ, Մաշտոց, շնորհակալություն եմ հայտնում ամբողջ Արցախի անունից: Ժողովուրդը գոյության լույսի էր կարոտ, եւ Դուք բացել եք այդ լույսի աղբյուրը: (Դիմում է Մինասին եւ Հովսենիին). - Ապրեք, զավակներս, որ գոհացըն եք Մաշտոցին: (Տղաները խոնարհվում են, ուրախ են, հուզված):

ՄԱՇՏՈՅ (Դիմում է վանահորը): Սուրբ հայր, խնդրենք Հովսենին եւ Մինասին, բացեն մազաղաթյա փաթեթը եւ կարդան այբուբենը: (Դիմում է Կորյունին): Կորյուն, զավակս, գրոց փաթեթը տուր տղաներին, թող Արցախում իրենք բացեն ու կարդան:

ՄԻՆԱՍ (Մոտենում է Կորյունին, վերցնում փաթեթը, սեղմում կրծքին): Հովսենիք, արի միասին բացենք: (Մոտենում է Հովսենիքը, միասին բացում են փաթեթը: Ոգենորված են: Կարդում են):

ԴՐԱՄԱՑԻԿԱԿԱՆ ԵՐԿԵՐ

ՄԻՆԱՍ -	ԱՇՔ
ՀՈՎՍԵՓ -	ԲԵՇ
ՄԻՆԱՍ -	ԳԻՄ
ՀՈՎՍԵՓ -	ԴԱՇ
ՄԻՆԱՍ -	ԵՇ
ՀՈՎՍԵՓ -	ԶԱՇ
ՄԻՆԱՍ -	ԷՇ
ՀՈՎՍԵՓ -	ԸՇԹ
ՄԻՆԱՍ -	ԹԵՇ
ՀՈՎՍԵՓ -	ԺԵՇ
ՄԻՆԱՍ -	ԻՇՆ
ՀՈՎՍԵՓ -	ԼԻՇՆ
ՄԻՆԱՍ -	ԽԵՇ
ՀՈՎՍԵՓ -	ԾԱՇ
ՄԻՆԱՍ -	ԿԵՇՆ
ՀՈՎՍԵՓ -	ՀԵՇ
ՄԻՆԱՍ -	ԶԱՇ
ՀՈՎՍԵՓ -	ՂԱՇՄ

(Հովսիմեն ու Գայանեն անհամբեր վեր են կենում եւ
աճապարում Մինասի եւ Հովսեփի մոտ):

ՀՈՒՓՍԻՄԵ - Ես էլ եմ ուզում կարդալ:

ԳԱՅԱՆԵ - Ես էլ, ես էլ...

ՀՈՎՍԵՓ-Աղջիկներ, ախր դուք դեռ չեք ճանաչում
տառերը...

ՄԻՆԱՍ - Ինչո՞ւ եք շտապում, աղջիկներ, համբերնցեք:

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

ՄԱԾՏՈՅ - (Դիմում է տղաներին): Հովսեփ, Մինաս, զավակներս, աղջիկները նևս պիտի կարդան, այբուբենը բոլորի համար է: Հայ աղջիկները պետք է դպրոց հաճախեն նևս մայրենի բարբառով սնեն իրենց որդիներին: Մայրենի լեզուն պետք է մանուկներին հաղորդել օրորոցում, մոր կաթի հետ: Լեզուն ժողովրդի ոգին է, միսն ու արյունը: Մազանաթը տվեր աղջիկներին, դուք կարդացներ տառերը, թող իրենք կրկնեն:

(Հոհիկասիմեն կանգնում է Հովսեփի մոտ, Գայանեն՝ Մինասի):

ՄԻՆԱՍ- Ճե՛-

ԳԱՅԱՆԵ- Ճե՛ (դիմում է Մաշտոցին): Թոյլ տվեր բառեր տառենք այս տառերով:

ՄԱԾՏՈՅ - Խնդրեմ:

ԳԱՅԱՆԵ- Ճ-ճնմարան

ՀՈՎՍԵՓ - Մե՛ն

ՀՈՒՖՈՒՄԵ -Մե՛ն, մ-մտա՞ց

ՄԻՆԱՍ - Յի՞-

ԳԱՅԱՆԵ - Յի՞, հ-հսու՞ն

ՀՈՎՍԵՓ - Նո՞-

ՀՈՒՖՈՒՄԵ -Նո՞, ն-նազովինցի՞-

ՄԻՆԱՍ - Շա՞-

ԳԱՅԱՆԵ - Շա՞-, շ-շնո՞րհ

ՀՈՎՍԵՓ - Ո՞-

ՀՈՒՖՈՒՄԵ -Ո՞, ո-ոգնշու՞նչ

ԴՐԱՄԱՑԻԿԱԿԱՆ ԵՐԿԵՐ

- ՄԻՆԱՍ - Զա~
ԳԱՅԱՆԵ - Զա~, չ-չարեա~ց
ՀՈՎՍԵՓ - Պէ~
ՀՈՒՓՍԻՄԵ -Պէ~, պ- պատաղի~չ
ՄԻՆԱՍ - Ձէ~
ԳԱՅԱՆԵ - Ձէ~, զ-զանադի~ր
ՀՈՎՍԵՓ - Ուա~
ՀՈՒՓՍԻՄԵ-Ուա~, ո-ուաբի~՛
ՄԻՆԱՍ - Սէ~
ԳԱՅԱՆԵ - Սէ~, ս-սբո~ց
ՀՈՎՍԵՓ - Վէ~
ՀՈՒՓՍԻՄԵ -Վէ~*ւ*, վ-վկայարա~ն
ՄԻՆԱՍ - Տի~ն
ԳԱՅԱՆԵ - Տի~ն, տ-տե~ր
ՀՈՎՍԵՓ - Ու~
ՀՈՒՓՍԻՄԵ -Ու~, թ-մե~ր
ՄԻՆԱՍ - Ցո~
ԳԱՅԱՆԵ - Ցո~, ց-ցանկալի~
ՀՈՎՍԵՓ - Իւ~ն
ՀՈՒՓՍԻՄԵ -Իւ~ն, ու
ՄԻՆԱՍ - Փի~ր
ԳԱՅԱՆԵ - Փի~ր, փ-փա~ռք
ՀՈՎՍԵՓ - Ձէ~
ՀՈՒՓՍԻՄԵ -Քէ~, Ք-Քրիստոսի~ն

(Մաշտոցն ու վանահայրը հիացած են)

ՄԱԾՏՈՅ -Ապրենք, դուստրենքս, դուր իմաստուն հրեշ-
տակներ եք, դուր պարզապես կռահեցիք իմ խո-

ԴԻԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

հերը նու չսխալվեցիք: (*Դիմում է վանահորը*): Սուրբ հայր, նման դուստրնք նու ուստրենք ունեցող ազգը չի անհետանա երբեք: Խօսիր չեի երազում, որ հայոց առաջին դպրոցներից մեկը պետք է բացեմ Ամարասում՝ Արցախի սրտում, Հայոց Արեւելից կողմանց անառիկ բերդում:

ԱՆԱՆԻԱ - Փառք շատ լինի, Աստված: (*Դիմում է Մաշտոցին, բոլորը մոտենում են, շրջապատում Մաշտոցին, շոյում ձեռքերը, գլուխը, մաքրում են ուսերի փոշին: Աղջիկները համբուրում են ձեռքը, փեշը:*)

ՄԱԾՏՈՅ - Ապրեք, զավակներս: Հաճելի է տեսնել ձեր զնծությունը: Հանգստացեք նու ուշադիր լսեք: (*Դիմում է Կորյունին*): Կորյուն, զավակս, հիմա էլ բեր «Աստվածաշունչը»:

ԿՈՐՅՈՒՆ - (*Պայտակից հանում է «Աստվածաշունչը» եւ հանձնում Մաշտոցին*):

ՄԱԾՏՈՅ - Սուրբ հայր, ահա նու Սուրբ Գիրքը մեր լեզվով: Այսուհետեւ մեր աղոթքները թող հնչեն մեր մայրենի լեզվով: (*Բոլորն ուրախանում են: Յնծություն է*): Ապա լսեք՝ կարդամ առաջին խոսքը, որի թարգմանությունը կատարել ենք Սողոմոնի առակներից: (*Կարդում է*). «Ճանաչել զիմաստություն նու զլարատ, իմանալ զբանս հանճարոյ»: (*Բոլորը կրկնում են*): (*Մթնոլորտը ավելի է ջերմանում*):

ԱՆԱՆԻԱ - (*Խոնարհվելով վերցնում է Սուրբ գիրքը, սեղմում կրծքին, ճակատին, համբուրում: Ապա մեկ առ մեկ մոտենում են բոլորը եւ համբուրում*): Մաշտոց, երեխան ծնվում ու սնվում է մոր կաթով: Զեր նվիրած Աստվածա-

շունչը մայրենի լեզվով դառնալու է մեր ազգի հոգնուր սնունդը, նրա գոյատեսման աղբյուրը, Զեր ստեղծած այս 36 տառերը մեր ազգի ճանապարհին ավելի զորնող են լինելու, քան հոռմեական 36 լեզնոնները, քան պարսկական 36 մատյան գնդերը: (*Կրկին առնում է Մաշտոցի ձեռքը եւ հայրական գորովանքով համբուրում*): Մաշտոց, զավակս, սովորաբար վանահայրն է ձեռքը դնում վանականների գլխին եւ օրհնում նրանց: Ես որպես Ամարաս վանքի վանահայր, ծնկի եմ զալիս քո հանճարի առջեն, լսնդրում եմ՝ արարիչ աջդ դիք ճերմակած գլխիս եւ օրհնիր ինձ, կաքիր եւ ինձ էլ համարիք քո աշակերտը:

ՄԱՇՏՈՅ-ԸՆԱՆԴԱՂԱՍՏԱՆՔՈՎ: Պետք չէ ծնկի գալ, սուրբ հայր: Ուտքի ելեք: (*Հարձրացնում է*): Ես Աջս դնում եմ քո ձյունած գլխին, եւ լսնդրում՝ կառավարիր Ամարասի հայոց տառաջին դպրոցը, իսկ Հովսեփին ու Մինասին նշանակում եմ վնրակացուներ: Այժմ լսեք բոլորդ: Զավակներս, լսեք ուշադիր: Այս այբուբենը ինձ համար չեմ ստեղծել: Այն ստեղծել եմ մեր ժողովրդի համար: Այն հանձնում եմ ժողովրդին եւ պատվիրում նրա մեջ տեսնել իր ուժն ու հարատեսումը: Իմաստուն եւ քաջ է ազգը մեր, նա իր լեզվով պիտի խոսի եւ՝ Աստծո, եւ՝ զալիքի հետ, իր լեզվով պիտի կարդա Տիեզերքի լեզուն, իր լեզվով պիտի երգի, իր լեզվով պիտի փակի բոլոր թշնամիների ճամփանները: (*Բոլորը հիացած են*):

ԱՆԱՍԻԱ - (Խոնարհվում է): Շնորհակալ ենք բոլորս, ուսուցիչ:

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

ՄԱԾՏՅ- Լսնք, ուշադիր, զավակներս: Կրկնում եմ, այս գրերը մեր ժողովրդի հարատենելու աղբյուրն են:

ՄԻՆԱՍ - Ոգին են:

ՀՈՎՍԵՓ - Թրերն են:

ԿՈՐՅՈՒՆ- Հաղթանակներն են:

ԳԱՅԱՆԵ - Լյանքն ու թեներն են:

ՀՈՒՓՍԻՄԵ- Երազն ու սերն են:

ՄԱԾՏՅ- (Ուրախ է): Այս, հարազատներս: Այս գրերը ստեղծվեցին մեր ժողովրդի ճակատագրի թելադրանքով: (*Դիմում է վանահորը*): Սուրբ հայր, քանի քանի դար մեր ժողովուրդը հնթանոս էր եւ շատ ժամանակ ապավինել է Պարսից հզոր գահին, բնդունել նոյնիսկ զրադաշտական մի շարք սովորություններ: Ի՞նչ պարզվեց, սուրբ հայր, ի՞նչ:

ԱՆԱՆԻԱ - Պարզվեց, որ նրանք ձգտում են ձուլել մեր ժողովրդին: Ահավոր է այդ ուժացումը, ուսուցիչ, անհնտանում է ժողովուրդը:

ՄԱԾՏՅ - Ճշմարիտ նք, սուրբ հայր: Ահավոր է ուժացումը: Դրա՞ն չեն ձգտում նաև քյուզանդացիները: Մեր քրիստոնյա ազգը սկսեց ապավինել նոյնադավան հզոր Բյուզանդիայի կայսրությանը: Ի՞նչ պարզվեց:

ԱՆԱՆԻԱ - Բյուզանդացիները ավելի շուտ շղթայնցին մեզ իրենց լեզվով, գահընկեց արին Խոսրով Արշակունուն եւ ձգտեցին արմատավայիլ անել մեր լեզուն: Ահավոր է ուժացումը, ուսուցիչ, ահավոր է, եւ դա ավելի շուտ զգացին մեր զավակները:

ՄԱԾՏՅ - Սուրբ հայր, մեր մեծերը՝ Տրդատ Մեծն ու Գրիգոր Լուսավորիչը բացեցին դպրոցներ՝ հունարեն եւ ասորենեն: Ի՞նչ պարզվեց, սուրբ հայր:

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

ԱՆԱՆԻԱ-Ուսուցիչ, հարյուր տարվա ընթացքում մեր սնրունդները խորթացան հայոց արմատներից, դարձան ատրասերներ եւ հունասերներ, բաժանվեցին երկու բանակի՝ անհաշտ ու չներռող: Ահավոր է, ուսուցիչ, զավակներիդ տեսնել օտարամոլության ճիրաններում: Կորչում է ժողովուրդը, ուսուցիչ, անհետանում է:

ՄԱԾՏՈՅ - Սուրբ հայր, այսօրվանից մեր գրենի միջոցով գտնված է փրկության ելքը:

ՄԻՒԱՍ - (Ոգենորված) Ուսուցիչ, Ձեր ստեղծած գրերով մենք Աստծոն եւ ժողովրդի հնտ խոսնլու ենք մեր հայոց լեզվով:

ԳԱՅԱՆԵ - Մեր զավակների հնտ խոսնլու ենք մայրենի լեզվով: Ամեն մի տառը ստվորեցնելիս Ձեր անունն ենք տալու, սիրելի Ուսուցիչ:

ՀՈՎՍԵՓ - Թշնամու դեմ մարտի ենք նետվելու հայերեն՝ ի զե՞ն կոչելով: Մեր թրենի վրա Ձեր հորինած տառերով ենք փորագրելու մեր անունները:

ՀՈՒՓՍԻՄԵ - Մեր թաշկինակների վրա Ձեր ստեղծած տառերով ենք գրելու մեր սիրած տղաների անունները եւ նվիրենք նրանց: Մարտի զնալուց առաջ մեր լեզվով ենք ասելու՝ բարի ճանապարհ, բարի վերադարձ:

ԳԱՅԱՆԵ - Ուսուցիչ, մեր հացի եւ տաշտի ծհանների վրա Ձեր ստեղծած տառերով գրելու ենք Ձեր սուրբ անունը, որ մեր ճաշակած հացի հնտ զգանք նաև Ձեր կատարած գործի համն ու բույրը:

ԿՈՐՅՈՒՆ - Ձեր սիրանքը, ուսուցիչ, հայերեն ենք կտակներու սնրունդներին, մեր երազի առուները կարկաչներու են հայերեն:

ՄԱԾՏՈՅ - Ապրեք, զավակներս, իմացեք, որ մեր այրութենք մեր ժողովրդի ոգին է: Այսօրվանից այն ձեզ եմ հանձնում որպես Սրբոց զիր ու Սրբոց զիրք: Հենց այսօր Ամարատում բացում ենք Հայոց Արցախի առաջին դպրոցը: Գալիքում Արցախ կլսութեն Հարավից, Հյուսիսից, Արեւելքից, Արեւմուտքից: Ձեր դրոշներին այս տառերով կգրեք՝ ակն ընդ ական, ատամն ընդ ատաման, կգրեք՝ մեր երկիր սրով մտնողը սրով է կընկնի: Թող մեր գրերով ճառագի Քրիստոսի լույսը, ամրանա մեր հավատն առ Աստված, Սուրբ Երրորդության օրինանքով հարատենի ազգը մեր հայոց: (Յնծություն է, հնչում է Ամարասի դպրոցական առաջին զանգը: Բոլորը հուզված են: Բնմ են մտնում Նախշունն ու Հուշին՝ ձեռքերին սինհիներ: Մտենում են Մաշտոցին, խոնարփու են պատրաստվում ընծայելու իրենց նվերները):

ՆԱԽՇՈՒՆ- Մաշտոց, զավակս, իմ ավագ որդին զոհվել է Զիրավում: Նրա աղջիկը Գայանեն է: (Յուց է տալիս թոռանք: Ապա սինուց վերցնում է տաշտի ծհանը եւ խնդրում): Տղայիս անունը Բաղդասար է: Այս ծհանին քո ձեռքով գրիր ե՛ քո, ե՛ որդուս անունը, գրիր քո ստեղծած տառերով: Թող իմ հունցած խմորի, թևած հազի մեջ զգամ մեր տառերի լույսը եւ որդուս բույրը: (Մաշտոցը վերցնում է, ծհանի տափակ մասի վրա գրում. «Բաղդասար» եւ սոսրագրում: Նախշունը համբուրում է Մաշտոցի ձեռքը, ապա որդու անունը: Գայանեն հուզված է, փարփում է մորը, ծհանը վերցնում եւ սեղմում կրծքին):

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

ԳԱՅԱՆԵ- Այս տաշտի ծհանը նրկու սուրբ անուններով
կիմաստափորի իմ կյանքը: Ծնորհակալ նմ, ու-
սուցիչ: (*Ծոյում է ծհանը*):

ՀՈՒՇԻ- (*Մոտենում է Մաշտոցին, սինիից վերցնում է մի քսակ՝
լիքը խաչիւացուով*): Ուսուցիչ, սա աղանձած ցորե-
նից է, խաչիւ նփնլու համար է: (*Յուց է տալիս մի
փոքրիկ քսակ*): Սա էլ չորաթան է, հարում են ջրով,
թանը լցնում խաչիլի վրա: Համով կնրակուր է:
(*Մեկնում է Մաշտոցին: Անանիան վերցնում է եւ դնում
սեղանին*):

ՄԱԾԾՈՅ- Ծնորհակալ նմ, քույրիկ: Ես հազեկաց զյուղից
նմ, մեզ մոտ եւս հարգի է խաչիլը: Մայրիկս
միշտ նփում էր: Ծնորհակալ նմ:

ՆԱԽԾՈՒՆ- Մատաղ լինեմ քո մորը, որ քեզ նման որդի
է ծնել քոլոր հայերի համար: (*Մաշտոցը ուրախ է,
ժպտում է*):

ՀՈՒՇԻ- (*Սինիից վերցնում է ժանգալով հաց*): Ուսուցիչ, սա էլ
ժանգալով հաց է, նոր նմ թխել, շատ համով է,
կուտես: Մեր Արցախի կանաչեղենի համն ու հո-
տը ոչ մի տեղ չկա, հացն էլ շատ համով է:

ՄԱԾԾՈՅ - Ծնորհակալ նմ, քույրիկ, շնորհակալ նմ:

ՀՈՒՇԻ- (*Սինիից վերցնում է տախտակն մի փոքրիկ խոնչա, տա-
լիս Մաշտոցին*): Ուսուցիչ, այս խոնչան պատրաս-
տել է ամուսինս՝ Անաստասը: Զոհվել է խազար-
ների դեմ մղված կրվում: Խնդրում նմ խոնչայի
վրա գրես Անաստասի եւ քո անունը (*հուզված է*):

ՄԱԾԾՈՅ-Հաճույքով, քույրիկ: (*Վերցնում է խոնչան, գրում եւ
հանձնում Հուսուն*):

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

ՄԱԽԾՈՒՆ- (Սինիից վերցնում է մի փայթելթ): Մաշտոց ջան, այս բրդե գուլպաները կհազնես, որ ոտքերդ չմրսեն, այս ձեռնոցներն ել կհազնես, որ մատներդ չմրսեն, մատաղ լինեմ քո իմաստուն մատներին:
ՄԱՃՏՅ- (Վերցնում է): Ընորհակալ նմ, շատ նմ շնորհակալ: (Բոլորը ցնծում են):

Վարագույր

S ī u h l ī p p n p t

Ամարաս վանքի բակը: Ջրունում են Մաշտոցն ու Անանիան: Հոգով հանգիստ են, հպարտ:

ԱՆԱՆԻԱ - Ուսուցիչ, այս քանի օրը գիշեր ու գերեկ կարդացի Սուրբ գիրքը մեր աստվածային ու հարազատ գրաբարով: Այն թարգմանել եք հմտորեն: Եվ ճիշտ եք վարվել, որ «Բիբլիայի» փոխարեն գրել եք «Աստվածաշունչ»:

ՄԱՃՏՅ-Երկար ենք խորհել այդ մասին, Սուրբ հայր: Գիշերները չեր քնում մեր հայրապետ Սահակ Պարթենը: Նա առաջարկեց «Բիբլիան» անվանել «Աստվածաշունչ», քանզի աստվածային շնորհով ներշնչված իմաստունները միայն կարող են գրել նման գիրք:

ԱՆԱՆԻԱ - Ուսուցիչ, մեկ-մեկ փակում եմ աչքերս եւ ասես մտքիս աչքերով տեսնում եմ այն հրաշքները, որ տնդի են ունենալու մեր հայոց երկրում, մեր Արցախս հողում: Եվ ամեն անզամ Աստծո ձայնը հասնում է ունկնդիս: Եվ գիտե՞ք, չզարմա-

նաք, Աստծո խոսքը ինձ է հասնում հայերեն: Ի՞նչ մեծ խիզախություն կատարեցիք, ուսուցիչ, Ձեր այբուբենը մեր սերունդներին տանելու է ինքնահաստատման նև ինքնաբացահայտման ուղիղվ:

ՄԱԾՏՅ-Սուրբ հայր, այդ համոզմունքն էլ հենց մեզ մղել է այբուբենի գյուտին: Թվով փոքր ենք, բայց մեր երկիրը ոչ թե ուկու կտոր է, այլ ադամանդ է: Մեր ժողովուրդը անտիկյան է, Սուրբ հայր, նա փորձությունների մեջ հատունացել է, իմաստնացել: Մեզ պետք էին մեր սեփական գրերը, դրանք ոչ միայն հոգեւոր ուժ են, այլ նաև արժանապատվության, հպարտության ավուն: Լեզուն, սուրբ հայր, մոր կանչ է, ապրելու կոչ, ժողովրդի հորդոր է, հայրենի հողի հրաման, հարատենելու քանալի: **ԱՆԱՆԻԱ -Ճշմարիտ եք,** ուսուցիչ: Մոլորվել էինք, մեր հզոր հարեւանները մեր սիրտը քաշել էին իրենց լեզուների շամփուրներին նև խորովում էին՝ կուլ տալու համար:

ՄԱԾՏՅ-Սուրբ հայր, կարող եք հանգիստ շունչ քաշել նև համոզված լինել, որ մեր հայրենի հողը, մեր ճշմարիտ հավատն ու հայկական լեզուն մի այնպիսի նրբորդություն են, ինչպիսին Հոք, Որդու նև Սուրբ Հոգու նրբորդությունն է:

ԱՆԱՆԻԱ - Ուսուցիչ, իմաստուն օրինակ քերեցիք, հրաշալի է, ուղղակի դաս է՝ հայրենիք-լեզու-հավատ: Ուսուցիչ, լինում է, որ գիշերները չեմ կարողանում քննի, թվում է, թե քայլում եմ դարերի միջով, մասնակիցը դառնում այն փորձություննե-

րին, իրադարձություններին, որոնք տեղի են ունենալու մեր երկրում: Ամենուրեք Ձեզ եմ տեսնում: (Ծարունակում են գրունել, բեմի մի ծայրում նստում են թթենու տակ: Տեսիլքներ են հաջորդում միմյանց: Ժամանակները հաջորդում են միմյանց: Բեմի մի կողմից ներս է մտնում կորյունը՝ Վարդան Մամիկոնյանի հետ):

ԿՈՐՅՈՒՆ- Վարդան, սիրելի սպարապետ, արդեն 10 տարի է անցել Մեսրոպ Մաշտոցի մահից: Պատրաստ է իմ «Վարք Մաշտոցի» գիրքը: Ապացուցում եմ, որ Մաշտոցը թենկուզ կյանքից հեռացել է իր բնական մահով, բայց նրան պեսք է դասել սրբնրի շարքը: Նա իր կյանքը նվիրել է մեր հավատի, մեր լեզվի, մեր ժողովրդի հարատեսմանը:

ՎԱՐԴԱՆ-Արդար գործ են կատարել, կորյուն: Մաշտոցը մեր հարատեսման ջահակիրն է: (Անցում են բեմի հետեւ: Թիշ անց բեմի հետեւից լսում են կոչեր՝ «Առաջ, հայ քաջեր, մի վախենցեք Հազկերտի անքանակ զորագնդերից՝ հանուն մեր լեզվի եւ հավատի զարկեցեք թշնամուն: Մեզ հետ է Մաշտոցի ողին»: Ապա մենամարտելով բեմ են մտնում Վարդանը եւ Նյուսալավուրտը՝ ազգային զինզանատներով: Ծարունակվում է մենամարտը):

ՆՅՈՒՍԱԼԱՎՈՒՐՏ - Վարդան, դեն նետիր թուրդ եւ հանձնվիր: Հազկերտը կների քեզ, եթեն ընդունես մեր հավատը: Զարդուշտի օգնությամբ կփրկվես եւ՝ դու, եւ ազգդ: (Նյուսալավուրտը եւ՝ մենամարտում է, եւ՝ խոսում): Վարդան, ալսր դու շատ ես նման պարսիկի:

ՎԱՐԴԱՆ - (Ուժգին մենամարտում է): Նյուսալավուրտ, ես նման եմ միայն հայի, եւ զարկս էլ հայավարի է:

Հիմա նս քո հաշիվը կմաքրենմ, հոգիդ թող Հազ-
կնրտին հասկացնի. Պարսիկը թող իր հավատով
տարի իր հողի վրա, հայն էլ՝ իր: (*Մենամարտը շա-
րունակվում է, Վարդաճի զարկից տապալվում է Նյուսա-
լավորտը: Վարդաճը նրա դին քարշ է տալիս բնմի հետեւ:*
*Ապա բնմ են մտնում Եսայի ապու Մուսեն եւ Բուղան: Մե-
նամարտում են:*)

ԵՍԱՅ3 - Բուղա, դու թուրքի ծնունդ, Միջին Ասիայի ավա-
գուտներից գնացիր Բաղդադ, դարձար խալիֆի
զորապետը: Ի՞նչ նս կորցըն Հայատանում,
Հայոց Արցախում: Գտիչ վանքի՞ն նս սպառնում:
Առ, Բուղա, նս մաշտոցյան այբուբենով քնզ այ-
պանեցի իմ նամակում, հիմա էլ առ թրիս ուժը:
(Խփում է): Առ, թուրքի զյադա, առ, սա Արցախի
պատասխանն է քնզ: (*Թրով տապալում է Բուղային:*
*Եսայը նրա դին քարշ է տալիս բնմի հետեւ: Քիչ անց բնմ է
մտնում Գրիգոր Նարեկացին՝ մի աբնդայի հետ:*)

ՆԱՐԵԿԱՅԻ-Լսիր, Հովհաննես, այսօր 1003 թվականն է:
Այս գիշեր ավարտնեցի «Ողբերգություն մատյա-
նը»: Այս գիրքը հորինեցի Մաշտոցի գրենով:
Կկարդաս, Հովհաննես, կարտագրենս եւ Նարեկա
վանքից նվեր կուղարկենս Էջմիածին: Զմռանաս
նանց քո ծննդավայր Արցախը, սուրբ Ամարասը:
Աստծոն եւ սերունդների հետ մայրենի լճակով զրո-
ցնելու համար պարտական ենք Մաշտոցին, նա
մեր Առաջին եւ հավերժախսու ուսուցիչն է:

ՀՈՎՀԱՆՆԵՍ- (Վերցնում է Մատյանը եւ համբուրում): Վար-
պետ, նս կբազմացնեմ Մատյանդ հանճարեղ,

բոլոր տողերի սկզբնատառերը կզարդարեն այն-
պես, ինչպես նրազնի է Մաշտոց Սուրբը:

ՆԱՐԵԿԱՑԻ-Ապրես, Հովհաննես, թող Աստված Մաշ-
տոցի ուժն ու համբերությունը պարզենի քննիք: Գոհ
նև, անչափ գրի նմ: (Գնում են): (Բնմի հետեւից ձայ-
ներ են լսվում, թուրքի կրնչոցներ են). Էյ, գյավուրներ,
Զոհրապ, Կոմիտաս, Վարուժան, Սիամանթոն, նու
էլի ուրիշ գյավուրներ, այսօր 1915-ի ապրիլի 24-
ն է, ձեր բոլորի վերջին օրը, ձեզ զհանդամը կնե-
տենք, ձեզ հետ նաև ձեր լեզուն, ձեր Տիգրանին,
ձեր Մաշտոցին: Համաձա՞յն եք ընդունել մեր
հավատն ու մեր լեզուն: Դնի, պատասխանեք:
(Լսվում է մի ձայն). «ՈՇ, Էնվեր փաշա, դու եւ քո
գորշ գայլերի ոհմակը մեզ սպանելով, չեք կարող
ոչնչացնել Տիգրանի նու Մաշտոցի ազգը, ոչ, չեք
կարող, գալու է հատուցման ժամը, դուք դեռ պա-
տասխան պիտի տաք: (Լսվում են իրացանի կրակա-
հերթեր: Այդ պահին բնմի հետեւից հետալով ներս է մտնում
մի հայուիի, երեխսայի ծեռքից քոնած, ծանր պայուսակը
շալակին: Մտնելուն պես մայրը պայուսակից հանում է
ճամփանտիրը, բացում, համբուրում):

ՀԱՅՈՒՔԻ- Ուժիդ մատաղ...: (Դառնում է երեխսային). Դա-
վիթ ջան, առ այս մի կտոր հազը, կեն, որ հետո
գլնիլը սովորենցնեմ: (Երեխսան եւ՝ հացի կտորը ծամում
է, եւ՝ լսում մորը: Մայրը ափով հարթեցնում է ավագեն գե-
տինը եւ գրում տառերը): Դավիթ ջան, սա Ա-ն է, սա
էլ Բ-ն, սա էլ Գ-ն: Դն նայիր ու զրիր: Սա մեր այ-

բութենն է, Մաշտոցի ստեղծածը, սովորիր, բալիկս, սա մեր փրկությունն է: (*Երեխան եւ՝ գրում է, եւ՝ արտասանում*). Ա՛, Բ՛, Գ՛, Դ՛, Ե՛... (*Լսելով որդուն, մայրը նորից գիրքը դնում է պայուսակի մեջ, շալակում, որդու ծեռքից բռնած, ասում*). - Գնանք, բալիկս, Էջմիածինը մոտ չէ, բայց մեզ հետ է: Գնանք, Սիրիայի սահմանը մոտ է մեզ: Աստված կօգնի մեզ, զնանք: (*Դուրս են զալիս*): (*Մթնում է բնմը: Կրակոցներ են: Պատերազմ է: Որոշակի անդորր է իշնում: Լսվում են խոսակցության ձայններ*):

ԱՎՈ- «Բնեկոր, վաղը պիտի ազերիներին վինդենք Ամարասի սահմանից: Դա մեր պապենական սրբավայրն է, Բնեկոր»:

ԲԵԿՈՐ- «Տարիներ առաջ ես եղել եմ Վարանդայում, Ավո: Ամեն մի գյուղի մոտ խաչքարեր են, վանքեր ու եկեղեցիներ են՝ մնարույան տառերով զարդարված: Մաշտոցի ոգին է խոսում այդտեղ, փրկել է պետք:

ԱՎՈ - «Եվ կփրկենք, Բնեկոր»: (*Հնչում են պատերազմի շաշն ու շառաչը: Լսվում են բացականչություններ*). «Կեցցե՞ ազատագրված Արցախը, Հայոց Արցախը»: (*Այդ պահին բնմ են մտնում մի խումբ երիտասարդներ՝ տղաներ եւ աղջիկներ: Նրանց զիսավերենում ծածանվում է Արցախի դրոշը: Մի կարճ զգնատ (մինի) հազած աղջկա ձեռքին ցուցանակ է՝ գրված. «Արցախի պետական համալսարան»: Մի ուրիշ ուսանող ներս է մտնում Մաշտոցի նկարը բարձր բռնած: Մի ուրիշ ուսանողուիի կանգնում է Մաշտոցի նկարի ուղղությամբ եւ արտասանում:*

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

Եվ նա եկավ Արցախ, Ամարաս եկավ,
Այբուբենի լույսով հոգին լեզուն,
Եկավ որդու նման, Աստծո նման եկավ,
Որ Արցախին բաշխի Գրոց լեզուն:
Ու թրթռաց սիրտը արցախական հողի
Ու ճառագնց հոգին արցախական,
Ծրջեց ավան ու շեն քայլով արարողի
Ու մնողնով օծեց անապական:
Եվ Արցախը դարձավ անմար լուսու խորան,
Հավատը կար, չկար սաղմոսն հայոց,
Բացվում էին խոսքից, խորհուրդներից նրա
Բազում հոգիների դրսերը գոյց:
Նրա շնչից ծնվեց դպիրն Ամարասի,
Պատմագիրը ծնվեց, երգիչը մեծ,
Հայոց երգերը իհն՝ նման մեղվապարսի,
Շուրջպարի մեջ առան բարձունք ու քնրծ:
Ու շներթը ձգվեց մեսրոպանուն մանկանց,
Մեսրոպացան օջախ, սեր ու հարգանք,
Անգամ բռղբջներին ու թնբթերին ծաղկանց,
Հովի պար էր բռնում նրա անվամբ:
Եվ նա եկավ Արցախ՝ լույսը հոգու վրա,
Եվ դարերում դարձավ նրան սատար,
Նրա աղոթքներով, օրինանքներով նրա,
Ողջ Արցախը դարձավ մեսրոպատառ:

Բոլորը կրկնում են՝

Դպրոցն Ամարասի այն կանթենդն է վառ,
Որ Արցախը դարձրեց մեսրոպատառ...

Վարագույր

ՎԵՐԶ

2005 թ., Ստեփանակերտ

ՔԱՐԱՆԶԱՎԻ ԶԱՅՆԸ

(Դրամա երկու գործողությամբ)

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՀԱՅԿ	դպրոցական (12 տարեկան)
ՀԱՅԿԱՆՈՒԾ	դպրոցական (10 տարեկան, Հայկի քոյրը)
ԳՈՒՐԳԵՆ	ինժեներ (45 տարեկան) Հայկի և Հայկանուշի ծնողները
ԻՍԿՈՒՀԻ	ուսուցչուհի (43 տարեկան)
ԲԱՂԴԱՍԱՐ ՆԱԽՈՒՆ	քարանձավի ամուսիններ, Հայկի և Հայկանուշի նախնիները

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

S ես առան առաջին

Ժամանակակից քաղաքատիազ բնակարասն: Գրասեղան: Գրադարակ՝ գրքերով: Դպրոցականների համար աշխատասենյակ: Հայկն ու Հայկանուշը գրասեղանի շուրջ դասեն սովորում:

ՀԱՅԿԱՆՈՒԾ – Հայկ, դասս չեմ կարողանում սովորել: Արի օգնիր:

ՀԱՅԿ – Իսկ ինձ ո՞վ պետք է օգնի: Թվաբանությունից այսօր Էլ եմ «2» ստացել:

ՀԱՅԿԱՆՈՒԾ – Կանչենք՝ մայրիկը գա օգնի: (Հայկը նետփում է խոհանոց, որ մայրը կերակուր է պատրաստում):

ՀԱՅԿ - Մամ - մամ, թվաբանությունից խնդիրը դժվար է, չեմ կարողանում լուծել, արի օգնիր:

ԻՍԿՈՒԾԻ - Հայկ, մի խանգարիր, չես տեսնո՞ւմ՝ կերակուր եմ պատրաստում, ժամանակ չունեմ: Պիտի հասցնեմ, որ դասից չուշանամ: Երեկ դպրոցի ուսմասվարն հանդիմաննեց՝ եւ Հայկն է ուշանում դասից, եւ դու: Ասաց՝ ե՞րբ եր վերջ տալու այդ ուշացումներին: (Այդ պահին կերակուրը նուպուց թափվում է կաթսայից: Իսկուսին ճիզ է գործադրում, որ կերակուրը չթափվի): Այս, տեսնո՞ւմ ես, Հայկ, ինչպես ես խանգարում մամայիդ: Համ էլ դիմեցեք ձեր հորը, թող մի անգամ էլ նա օգնի ձեզ: (Հայկը խորված գալիս է Հայկանուշի մոտ):

ՀԱՅԿ - Հայկանուշ,

ԴՐԱՄԱՑԻԿԱՆԱՆ ԵՐԿԵՐ

մաման զբաղված է, չի կարող օգնել, ասում է՝
դիմեցնք ձեր հորը:

ՀԱՅԿԱՆՈՒԾ - Հայկ, ես զնամ պապային արթնացնեմ,
որ մեզ օգնի:

ՀԱՅԿ - Գնա, Հայկանուշ, պապան քեզ շատ է սիրում,
կօգնի: (Հայկանուշը տեսորը վերցրած նետվում է ննջա-
սենյակ, որը քնած է հայրը):

ՀԱՅԿԱՆՈՒԾ - Պա՛պ, պապա՞ : (Հայրը խոր քնած է):
Պա՛պ, պապա՞ : (Հայկանուշը ձեռքը դնում է հոր ճա-
կատին եև շոյելով գոռում): Պա՛պ, հե՞ պապա:

ԳՈՒՐԳԵՆ - (Հանկարծակի վեր է թռչում, տեսնելով աղջկան,
քղայնացած ասում է). Ի՞նչ է, շան աղջիկ, ինչո՞ւ չես
թողնում քննեմ, ամբողջ զիշեր աչքս չեմ կպցրել:

ՀԱՅԿԱՆՈՒԾ - Վա՛, բա՛ քննի՛ր, հա՛ զինի ես խմում քե-
նի Արտաշեսի հետ, խմո՞ւմ ես, խմո՞ւմ, խմո՞ւմ,
քիչ է մնում հարքենս, բա էլ ն՞ոք քննես, հը՝, ասա՛:

ԳՈՒՐԳԵՆ - Ծատ ես ռեկսիդ տալո՞ւ, շան աղջիկ, բա ա-
սում ես՝ պապա՞ , քեզ շատ եմ սիրում, դա՞ է քո
շատ սիրելը, ինչո՞ւ չես թողնում, որ սիրելի պա-
պադ հանգիստ քնի: Ծան աղջիկ:

ՀԱՅԿԱՆՈՒԾ - Պապ, ալսր դասս դժվար է, չեմ կարողա-
նում մենակ սովորեն, վեր կաց, օգնիր, պա՛պ:

ԳՈՒՐԳԵՆ - (Քնայթայթախ): Գնա, թող մամադ օգնի, ես
ինժեներ եմ, մամադ՝ ուսուցուիի, թող նա սովո-
րեցնի: (Քերանքսիվայր խոմփացնելով քնում է):

ՀԱՅԿԱՆՈՒԾ - (Խոռված): Դե որ այդպես է, թող «2» ստա-
նամ, տեսնեմ ո՞վ է ծնողական ժողովում կարմ-

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

բելու, ե՞ս, թե՝ դու: (Հայկանուշը խռոված դուրս է զալիս հոր ննջասենյակից եւ զալիս Հայկի մոտ): Հայկ, պապան էլ չի օգնում, բա ի՞նչ անենք:

ՀԱՅԿ - Ի՞նչ պիտի անենք, մենք էլ դպրոց կգնանք անպատճաստ:

ՀԱՅԿԱՆՈՒԾ - Հա՝, թող մաման էլ, պապան էլ կարմրեն մեր փոխարեն, ծնողական ժողովում ո՞ւմ են ամաշենցնում, աշակերտների՞ն, թե՝ ծնողներին:

ՀԱՅԿ - Ճիշտ են ատում, Հայկանուշ: Դասագրքերդ ծալիր, դիր պայուսակում: (Դասագրքերն ու տեսրերը դուս են պայուսակներում եւ միասին կրկնում բարձրածայն). Տեսնենք ծնողական ժողովում ովքե՞ր են կարմրելու, մե՞նք, թե՝ իրենք:

S ե u ա r ա n ե p կ p n p դ

Դպրոցից վերադարձել են Հայկն ու Հայկանուշը: Բացում են օրագրերը եւ թախծալից զննում:

ՀԱՅԿԱՆՈՒԾ - Այսօր էլ «2» ստացանք: Ընկեր Աշխենն ասաց՝ հորդ ես քաշել՝ քնկոտ ու ծույլ: Նա էլ էր միշտ թվաբանությունից «2» ստանում: Թե ո՞նց ինժեներ դարձավ, զարմանալի է:

ՀԱՅԿ - Հայկանուշ, ընկեր Սաթենիկն էլ ասաց՝ մայրդ էլ մի բան չի: Չի էլ ամաշում, դասերդ չի սովորեցնում, միայն գլուխ է տանում, հա՝ կրկնելով. «Ես էլ եմ ուսուցչուիի, դու՝ էլ, բա օգուտս ո՞րն է, ինչո՞ւ պիտի երեխայիս «2» նշանակնս, հետո՞ւ»

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

ինչ, թե դասը չի սովորում, բա ինչո՞ւ եմ քո ծոյլիկ նրեխային «10» նշանակում: Այսուհետ կտևաննս, թե ով ում կհաղթի»:

ՀԱՅԿԱՆՈՒԾ - Հայկ, սա արդեն իմ չորրորդ «2»-ն է, բա ո՞նց կլինի, հը՝, Հայկ:

ՀԱՅԿ - Թող մաման ու պապան մտածեն, սկի էլ մի տանջվիր, ծնողական ժողովում իրենք են քրտնելու, ոչ թե՝ մենք:

ՀԱՅԿԱՆՈՒԾ - Հա՞յ, Հայկ, ճիշտ ես ասում, թող պապան ու մաման ամաչեն, մի տես ինչքա՞ն են ծոյլ, չեն ուզում մեզ օգնել:

ՀԱՅԿ - Հայկանուշ, մի մտածիր, մազնիտոփոնը միացրու՝ Թաթային լսենք: (Հայկանուշը միացնում է մազնիտոփոնը, «Անապատի արեն» երգի տակ սկսում են պարել: Այդ պահին ներս են մտնում Գուրգենն ու Իսկուհին):

ԳՈՒՐԳԵՆ- (Ծոյում է Հայկանուշին): Ի՞նչ ես ստացել, սիրուն բալիկս: Իսկ դո՞ւ, Հայկ, դո՞ւ ինչ ես ստացել: (Երեխաները դադարեցնում են երաժշտությունը եւ լուս ու մունջ կանգնում մի կողմ): Ինչո՞ւ չեք խոսում, ի՞նչ եք ստացել:

ՀԱՅԿ - (Բներում է օրատեսրը եւ մեկնում հորը): Վերցրու, նայիր. ի՞նչ պիտի ստանամ, երբ չես օգնում:

ԳՈՒՐԳԵՆ- (Վերցնում է տեսրը եւ կարդում). Թվաբանություն - «2», մայրենի լեզու - «2», լնդենրցանություն - «2», տուսաց լեզու - «2», ֆիզկուլտուրա - «2», երգեցողություն - «10»: Շան լակոտ, այսքան «2»-ներ են ստանում, դեռ երգո՞ւմ էլ ե՞ս:

ԻՍԿՈՒՇԻ- (Հայկանուշի օրատեսրը առած, փրփրում է): Էս ի՞նչ է, հը՝, նորից «2»-ներ են շարել, չեն էլ ամաչում, բա էլ ինչո՞ւ եմ դպրոցում այնքան աշխատում, հը՝, բա չեն ամաչո՞ւմ իմ ուսուցիչ ընկերները, ես էլ վաղը իրենց լակոտներին եմ «2»-ներ նշանակելու, թող իմանան Ավետարանի խորհուրդը՝ «Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման»։ Ինձ Իսկուշի կասեն, հա՞...

ԳՈՒՐԳԵՆ - Էհ, ա՞յ կնիկ, բախտի բան է, մեր հացում աղ չկա, ափսո՞ւ: Թող էդ ընկեր Աշխենին եւ ընկեր Սաթենիկին հանդիպեմ, խայտառակելու եմ, մի տեսնեմ ի՞նչ են մտածում, որ ինժեներ Գուրգենի եւ ուսուցչուի Իսկուշու նրեխաններին «2»-ներ են շարում։ ԿՐՏՔՅԱ ոպջուրՉՈՂԱՊ...

ԻՍԿՈՒՇԻ- (Վրդովկած վերցնում է ցուցափայտը եւ հարձակվում երեխանների վրա: Հայկն ու Հայկանուշը մի անկյունից մյուս անկյունն են վազում): Շան լակոտներ, ինչո՞ւ նք մեզ խայտառակում, ի՞նչ նք դարձնալու, ինչո՞ւ չնք սովորում։ (Շարունակում է հետապնդել երեխաններին):

ՀԱՅԿ - Բա ինչո՞ւ մեզ չնք օգնում։ Դպրոցում չեն օգնում, լավ չեն սովորեցնում, դուք էլ հալածում եք մեզ։ Դե որ այդպես է, էլ մեզ չնք տեսնի այս տանը։ (Սոտենում է Հայկանուշին, բռնում ծնորից ու գոչում)։ Գնա՞նք, Հայկանուշ։ (Դուրս են վազում տնից)։ Գնա՞նք անտառ, թաքնվենք, պապան ու մաման տեսնենք ոնց են գտնում մեզ։

ԳՈՐԾՈՂՈԽԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

S եւարտնանագին

Անտառ: Խավար: Հայկն ու Հայկանուշը մոլորված, չզիտեն, թէ
ուր զնան:

ՀԱՅԿԱՆՈՒԾ - Հայկ, վախենում եմ: (Այդ պահին կրնչում է
զիշերային բուն): Վա՞յ, Հայկ, այն ի՞նչ է: (Փարվում է
նորորը):

ՀԱՅԿ - (Անվախ, հպարտ): Մի վախեցիր, Հայկանուշ, թո-
շուն է, բու է, մի վախեցիր (քրոջը շոյում է):

ՀԱՅԿԱՆՈՒԾ - Ձե՞ն, Հայկ, բու չի, սատանա է, ա՞յ, տես,
ես նրա պլող-պլող աչքները տեսա: Նայիր, կեն
քիթն էլ կարծեն ընկեր Պոլոզյանի քիթը լինի:
(Այդ պահին նորից է կրնչում բուն: Հայկանուշը վախից
վեր է թռչում են ընկնում):

ՀԱՅԿ - (Չի կորցնում իրեն, քրոջը բարձրացնում է): Ա՞յ, տես,
ես էլ եմ բուի պես կրնչում, մի վախեցիր (Են բուի
պես մի քանի անգամ կրնչում է, Հայկանուշը սիրտ առած
ծիծաղում է եւ ընդօրինակում նորորը, սկսում են իրար ար-
ձագանքել՝ բուի պես կրնչալով):

ՀԱՅԿԱՆՈՒԾ - (Նայելով հետոն): Վա՞յ, Հայկ, հեռվում
լույս կա, նայիր, ճրագ է, նայիր (Ցոյց է տալիս հե-
տոն):

ՀԱՅԿ - (Նայում է լարված): Հա՞ , էլի, Հայկանուշ, ճրագ է,
գնանք, գնանք, երեսի մարդ կա այնտենդ, գուցեն
անտառապահն է (Գնում են ճրագի ուղղությամբ: Տեղ
են հասնում: Քարանձավ է՝ անտաշ քարե դրնով: Ճեղից

ԴՐԱՄԱՑԻԿԱԿԱՆ ԵՐԿԵՐ

ճրագի աղոստ լոյս է երեւում):

ՀԱՅԿԱՆՈՒԾ - (Նայում է ճնշքից): Հայկ, ծնրունիննը են, տես, մի ծնրունի է են մի պառավ կին:

ՀԱՅԿ - (Նայում է ճնշքից): Հե՞յ, ո՞վ կա այդտեղ, օգնեցնք: (Քիչ անց ներսից թափով քաշում են քարը, քացվում է քարանձավի դուռը: Երեւում են զգզգված մազերով, կնծուապատ դեմքով, քարանձավի մարդիկ - երկու պառավներ):

ՆԱԽՇՈՒԾ - (Քարի ժպտալով, ճնշքերը տարածում է են մոտենում հայկանուշին: Հայկանուշը վախվորած անցնում է հայկի հետեւ): Վա՞յ, քոռանամ ես, խոխան վախում ա: Ախչիզը՞ս, թա՞ տղա: Մազերդ հալա փիսալ չը՞ն, խեյա՞ էսքան կարճ:

ՀԱՅԿԱՆՈՒԾ - (Վախից կմկնում է): Բո՞ւ - բո՞ւ - բուել են, կը - կը - կը, կտրել եմ, կարճացրել, հի՞ - հի՞ - հիմա մոդա յա:

ՆԱԽՇՈՒԾ - Մոդան հինչ ա՞, օտո՞ւմ ըն:

ՀԱՅԿԱՆՈՒԾ - (Դարձյալ վախվորած): Չե՞, ձեն է, հիմա այսպես են սանրում մազերը: Հիմա ամեն ինչ մինի՞ յա:

ՆԱԽՇՈՒԾ - (Քնքորեն շոյում է հայկանուշի գլուխը): Մինին հինչ ա՞, օտո՞ւմ ըն:

ՀԱՅԿԱՆՈՒԾ - Մինին կարճն է, այա, կարճը:

ԲԱՂԴԱՍԱՐ - (Քնքոյց կոպտությամբ դիմում է հայկին): Ա խոլա, տղայը՞ս, թա՞ ախչիզ, խեն վախո՞ւմ ըս, հինչա՞, մարդ չը՞ս տեսալ, հինչը՞ս ըլքստրակու նման ունջուկնետ խլշալ: Քիզեւեն ա՞րջ ըմ, խեն վախո՞ւմս: Եկնք, նի մտեք տոն, ցորտ ա, վախիլ մեք: (Բարեժման ներս է իրավիրում: Բոլորը ներս են մտնում քա-

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

բանձավ: Քարե սեղան է, քարե աթոռներ: Տեղավորվում են):

ՆԱԽՇՈՒՆ - (Պատավական ծամածությամբ): Դե միենագ ը-
սնցեք տեսնամ հուվը՝ք, հինչը՝ք, ես քիշնրվա կն-
սին հի՞նչ զք անում ստեղ:

ՀԱՅԿԱՆՈՒԾ - Հայրիկից խռովնել եմ:

ՀԱՅԿ - Ես էլ մայրիկից եմ խռովնել: Տնից փախնել ենք:

ԲԱՂԴԱՍԱՐ - Յա՛, խե՞ զք խռավալ, պա խռխան ուրան
հորան-մորան կխռավի՞: (Դիմում է Հայկին): Անր-
մըս հինչա՞, բալաս:

ՀԱՅԿ - Հայկ է, պապի: Քույրիկիս անունն էլ Հայկա-
նուշ է:

ՆԱԽՇՈՒՆ - Ես ծեր ընըմներին մատադ, հա՛, քաշվիլ
մեք, ես ծեր ընըմներեն մատադ: Բաղդասա՞ր,
թող խռսին, տեսնանք հի՞նչա պտահալ:

ՀԱՅԿ - Պապան ծոյլ է, մաման էլ ժամանակ չունի, որ
մեր դասերը սովորեցնի:

ՀԱՅԿԱՆՈՒԾ - Յա՛, մամայի գործերը շատ են, պապան
էլ քնկոտ է, մեր դասերը չեն սովորեցնում:

ԲԱՂԴԱՍԱՐ - Հի՞նչ բիդի սրվորցնին, արջ փոնի՞լը,
թա կյուլ սպանի՞լը:

ՀԱՅԿ - Զե՞, պապի, պատմության դասն է դժվար:

ՆԱԽՇՈՒՆ - Էտ պատմությունը օտո՞ւմ ըն:

ԲԱՂԴԱՍԱՐ - (Նախշունին): Ալսչի, տեն չը՞ս կընական,
խազյ-խազյ խռսելո՞ւ ըս: (Հայկին) – Պա պապան
հըմանչը՞մ չի:

ՀԱՅԿԱՆՈՒԾ - Մաման էլ մայրենի լեզուն չի սովորեց-
նում:

ՆԱԽՇՈՒՆ- Բալա, էտ մայրենի լուզուն հոմ ը՞ն օտում:

ԴՐԱՄԱՑԻԿԱՆ ԵՐԿԵՐ

ԲԱՂԴԱՍԱՐ - Ալսի, ա շաշ, հինչա՞, տեռալըս Զանգի-
զրանգին, հինչ կա, գյուղումը թա ուտելի ա:

ՆԱԽՇՈՒՆ - Դե թող խոխան կլխու քըցի, տեսնանք էտ
պատմությունը հինչ ա:

ՀԱՅԿԱՆՈՒԾ - Տատի...

ՆԱԽՇՈՒՆ - (Հիացած) Զա՞ն, համա ես տատի չըմ է՞,
այա՞ յըմ, այա՞ :

ՀԱՅԿ - Հա, այա, պատմությունը դպրոցում ենք անց
կենում: Էդ պատմությունը մեր ժողովրդի մասին
է, մեր երկրի, նրա անցած ճանապարհների
մասին է:

ՀԱՅԿԱՆՈՒԾ - Դժվար առարկա է, այա, շատ է դժվար:
Դպրոցում ուսուցչուին է գլխից ուադ անում,
տանն էլ պապան ու մաման չեն սովորեցնում:

ԲԱՂԴԱՍԱՐ - Եկ ստեղ, էտ պատմությունից հինչն ա՞,
վեր կլխու չըս ընգնում:

ՀԱՅԿ - Ուսուցիչը հարցնում է, թե Արցախը քանի՞
գավառներ է ունեցել, ինչո՞ւ է կոչվում քարե դար,
ի՞նչ են օգտագործել մեր նախնիները քարե
դարում:

ԲԱՂԴԱՍԱՐ - Վա՞, այ քնզ մատադ, պա մեր տանը
հինչ կա, քարեյա, սպասիր, քինամ-պիրիմ:
(Քաղդասարը զնում է եւ քիչ անց բերում քարե կացին,
դանակ, մուրճ, բրիչ եւ այլն): Ա՞յ, տես, ջանիկս, տես,
ամեն ինչ քարեյա: Ա՞յ, տես, էս քարե կացինը
Արցախի Մյուս Հաբանդ գավառից ըմ պերալ, էս
տենակը՝ Վայկունիքից, էս մուրճը պերալ ըմ
Բնրդաձորից, էս մեծ մուրճը՝ Մեծ Կվանքից, էս

բրիչը պերալ ըմ Հարձլանքից, էս հատիչը՝ Մեծիրանքից, էս կուճոր ասեղը պերալ ըմ Պարզվանքից, էս մեծն էլ՝ Փառհսոսից, Պիանքից պերալ ըմ էս մուրճը, Կողյթից՝ էս գուրզը, Փառնեսից մի կերպ պերալ ըմ մի սանդ, իսկ Մոլսանքից մի մեծ ճիրքամիշ: Բալիկս, միենազ կարո՞ղ ըս ուրուր հետա մեր գավառների ընըմնեն տաս:

ՀԱՅԿ - Հա՛, պապի, (թվարկում է): Սյուս Հաբանդ, Վայկունիք, Ըերդաձոր, Մեծ Կվյանք, Հարձլանք, Մեծիրանք, Պարզվանք, Փառհսոս, Պիանք, Կողյթ, Փառնես, Մոլսանք:

ԲԱՂԴԱՍԱՐ - Ապրենս, բալիկս: Վեչ մին անգամ չմոռանաս, որ Արցախը Առան մեծ պապի աշխարհն է նողի: Առան պապին Հայկ նահապետի որդին է, նս Առան պապի, իսկ դու իմ ծոռա՞ն-ծոռա՞ն-ծոռա՞ն ծո՞ռն նս, Արցախի տերը, իսկ Արցախը Մեծ Հայքի 10-րդ նահանգն է: Իմ քաղցր ծոռնիկ, մեր Արցախի Հարավային սահմանը Արաքս գետն ա, Հյուսիսային սահմանը Սևանա լճին ա հասնում, Արեւելյան սահմանը Արաքս նև Քուռ գետերի միացման կետն ա, իսկ Արեւելյանը՝ Սյունիքին ա հասնում:

ՀԱՅԿ - Ի՞նչ լավ է, որ հանդիպեցինք, պապի: Քո խսքը չեմ մոռանա:

ԲԱՂԴԱՍԱՐ - Հա, բալաս, ժողովուրդը մի տոհմածառ ա, որ իր տկոտտենքն ու ճնճերն օնն: Ճյուղն արմատով ա առողջ, արմատը ճյուղով: Ես արմատն եմ, դու ճյուղը: Քաջ ու խնլոք նողիր, որ մեր

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

տոհմածառը միշտ կանգուն մնա եւ երգի դարելութար:

ՆԱԽԾՈՒՆ - Բաղդասար, բոլա, խոխնքը հոգնալ ըն:

(Վազելով գնում է եւ բերում քարե սանդ եւ թակիչ): Եշի, մատադ ինմիմ, հասե՞ պրանավ էլ կուրկուտ ընք թակում:

ՀԱՅԿԱՆՈՒԾ - Այա, դասերին այդպիսի բաներ ենք անց կենում, ոչ մաման է սովորեցնում, ոչ էլ պապան, ուսուցիչն էլ զիսից ռադ է անում:

ԲԱՂԴԱՍԱՐ - Վախիլ մեք, ա խոխնք, էսա ծեզ նհետ կյամ, ծեր պապուն ա մամուն մին լավ տաս տամ, վեր ծեզ օգնին: Համ էլ ըսնցնք տնսնամ հուր ցնդա՞յլը, ծեր մեծ պապի անըմը հինչ ա՞:

ՀԱՅԿ - Պապի, մեր ազգանունը Բաղդասարյան է, որովհետեւ մեր մեծ պապի՝, նրա պապի՝, պապի՝ պապի՝, մեկ էլ պապի՝ պապի՝ անունը Բաղդասար է եղել:

ՆԱԽԾՈՒՆ - (Դիմում է ամուսնուն): Վա՞յ, Բաղդասա՞ր, էս հայ խոխնքը մեր ծոռներն ըն: Վա՞յ, քուտանամ ես (սկսում է շոյել մերթ հայկին, մերթ հայկանուշին):

ԲԱՂԴԱՍԱՐ -(Հայկին): ԱՌ խոխա, իմ անըմը Բաղդասար ա՞, ես ըմ պահ տվալ, վեր մեր ցնդի տղամարդկանց լոխեն անըմը տինին Բաղդասար, մեր ցնդին էլ ասին՝ Բաղդասարա՞նք...

ՀԱՅԿ - Վա՞յ, պապի, ուրեմն դու մեր մեծ պապն ես (ուրախ է):

ՀԱՅԿԱՆՈՒԾ - Պապի, ի՞նչ լավ է, որ դու իմ մեծ պապն ես (թռչկոտում է, ուրախ է) ի՞նչ լավ է:

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

ՆԱԽԾՈՒՆ - (Ուրախ) Մեծ պապին էլ ծեզ մատադ, այսն էլ, այ իմ խոխենք: (Դիմում է ամուսնուն) Բաղդասար՝, խոխենքը տուգանըն, քյնամ մին պեն պիրիմ, օտիխն:

ԲԱՂԴԱՍԱՐ - Պեր, Նախշուն, էն արջը արդեն խրաված կինի: Ես քյնամ արջը պիրիմ, տու էլ քյնա՝ ածեացը պեր (Պապն ու տատը գնում են ուտելիք բերելու):

ՀԱՅԿԱՆՈՒԾ - Հայկ, խորոված արջի միսը ուտո՞ւմ են: Ածեացը ի՞նչ է, Հայկ:

ՀԱՅԿ - Պապան պատմել է, որ մի անգամ արջի միս է կներնել, թթվաշ է, համա օգտակար է: Իսկ ածեացը թե ի՞նչ է, չգիտեմ: (Քիչ անց Բաղդասարը արջի կեար գրկած բերում է, դնում քարե սեղանին, իսկ Նախշունը կավե մեծ գավաթում ածիկն է բերում):

ԲԱՂԴԱՍԱՐ - Հա, եկենք, մուտացենք, կերենք, տուգն ըք: (Արջի բդի կեսը ձեռքով պատռում է եւ տալիս Հայկին: Իսկ Նախշունն էլ ածիկի ամանն է դնում Հայկանուշի առջեն: Ինքը մատով լիզում է եւ Հայկանուշին էլ սպորեցնում):

ՆԱԽԾՈՒՆ - Մաննավ կեր, մատադ ինիմ քեզ, կեր, հրմանչիլ մեր: (Երեկսաները սկսում են ճաշել):

ԲԱՂԴԱՍԱՐ - Ա խոխենք, մունք ճաշենիս միշտ երգ ընք ատում, պար ընք կյամ: Տուք երգիլը, պարիը զյուդո՞ւմ ըք:

ՀԱՅԿԱՆՈՒԾ - Հա՛, պապի, գիտենք, ես էլ, Հայկն էլ:

ՀԱՅԿ - Հա, պապի, այա, գիտենք: Հայկանուշը իիմա կերգի, ես կպարեն (դիմում է Հայկանուշին): Ալսի, երգիր, համ էլ պարենք:

ՀԱՅԿԱՆՈՒԾ - (Երգում է).

Նախշուն աքեր, Նախշուն աքեր,
 Թղթերը կարմիր, Նախշուն աքեր,
 Ունքերը կամար, Նախշուն աքեր,
 Նախշուն աքեր, Նախշուն աքեր:
 Օջախի արեն, Նախշուն աքեր,
 Մնծ պապուն սիրտը, Նախշուն աքեր,
 Մոռների զիրկը, Նախշուն աքեր,
 Նախշուն աքեր, Նախշուն աքեր:

ՆԱԽՇՈՒՆ - (Ուրախացած) Բաղդասար, սա քո հնարած
 նրգն ա, վեր ինձ հետեւ նրգալըս, եր կազ, խոնցը
 նինտ պայր կյանք: (Բաղդասարը պարում է բոլորի
 հետ: Պարից հետո ուրախացած շարունակում են ճաշել):

ՀԱՅԿ - (Նայում է շուրջը): Պապի, Էս ի՞նչ քարանձա՞վ է,
 հիմա մենք որտե՞ղ ենք:

ԲԱՂԴԱՍԱՐ- Բալիկս, Էս Ազոխի քարանձավն ա,
 Քիրսա սարի լանջին ընք, վեչ մինը տեղը
 զյուղում չի, առաջինը տուր ըք եկալ մեր կոյսքը:
 Ստի մին քարանձավ էլ Զագեճորում կա,
 շատերը Զանգենզու ըն ասում: Քու էս այուն
 ընդեղանը պերալ: Մին քարանձավ էլ Արաքս
 կյետեն կողքեն ա, Խորենան շենին կողքեն, ընդեղ
 շատը իլալ, խոզու վընքս ըմ ըրալ... համ էլ
 թռղալ չըմ, վեր թշնամին անցնի մեր վեղը:

ՀԱՅԿ - Պապի, Ազոխը հիմա մեր զյուղերից է... Բայց
 Խորենա զյուղը թուրքերը գրավել են, անունը դբել
 Խորադիզ: Պապան է ասել:

ԲԱՂԴԱՍԱՐ - Թորքե՞րը (զայրանում է), արա, թորքը
 հի՞նչ ա անըմ մեր վընդումը, արա թորքը հո՞ւվա,
 վեր մեր վընդըմը ծոտըմ ա, ա ես թորքեն... (ուզում
 է շարունակել):

ԴՐԱՄԱՑԻԿԱՆ ԵՐԿԵՐ

ՆԱԽԾՈՒՆ - (Զգուշացնում է): Արա, խոնցը կողքեն ուշունց չտաս:

ԲԱՂԴԱՍԱՐ - Ա, ես թորքեն... թյո՛ւ (թքում է)...

ՆԱԽԾՈՒՆ - Արա, հանգստացա՞ր...

ԲԱՂԴԱՍԱՐ - Ախչի, հունց հանգստանամ, հուվա՞ տեսալ թորքը մեր վեղըմը, իը՞, թորքը հինչա՞, վեր կյա մեր աշկեն կուկուն կտրի: Պա զյիդա՞մ վնչ էտ հուվա՞ թորալ, վեր թորքը վրեննը տինի մեր հանդավարումը:

ՀԱՅԿ - Պապի, մեր պատմության ուսուցիչը ասել է, որ Մելիք Շահնազար Երկրորդն է Շուշին տվել թուրքերին:

ԲԱՂԴԱՍԱՐ - Ա՛, ես Մելիք Շահնազարի նամուսը...

ՆԱԽԾՈՒՆ - Արա, խոնցը կողքեն ուշունց չտաս:

ԲԱՂԴԱՍԱՐ - (Զդայնացած): Ա՛, ես Մելիք Շահնազարի նամուսը... Թյո՛ւ (թքում է): Շոն շան որդի, բեյնամուս, հեյվան, հա իմ ծերքն ինզի, մին վեզը հռ անիմ է, հունցը կյուլին վեզն ըմ հլորում:

ՀԱՅԿ - Պապի, հիմա մեր հողում թուրք չկա, մերոնք քշել են:

ԲԱՂԴԱՍԱՐ - Մընք վրենդան մին հափուռ էլ բիդի մնա վնչ թորքեն ծերքեն:

ՀԱՅԿԱՆՈՒԾ - Պապի, քեռի Մեյրանն էլ է այդպես ատում, մեր քեռին է, պապի, գեներալ է:

ԲԱՂԴԱՍԱՐ - Լավ ա ասըմ, ես ընդրա խելքեն մատադ, իմ սրտաս ա խոսում:

ՀԱՅԿ - Պապի, որու էլ իմ սրտից ես խոսում:

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

ԲԱՂԴԱՍԱՐ - (Ուրախացած եւ հպարտ) Հայկ, նկ, նկ էս
արջեն մեսը լոխ կեր, լավ մես ա, կեր, վեր ճնլիի
մըծանաս, մեր վընդը պահիս:

ՆԱԽԾՈՒՆ - Բաղդասար, ասըմ ըմ քյընանք տեսնանք
մեր խոխերը շտե՞ղ ըն ապրում, համ էլ տեսնանք
էս խոնցը տասներ խե՞ չըն սըլորցընըմ:

ԲԱՂԴԱՍԱՐ - Լավ կընի, Նախշուն, կյանքըմլոտ հալա
իսի խոլունք պեն ասած չըս: (Ճաշելուց հետո
պատրաստիում են ճանապարհելու):

S ե u ա p ա ն ե p կ ր ո ր դ

Այգաբաց է: Գուրգենն ու Իսկուիին դեռ քնած են: Դուանը
մոտենում են նախ՝ Հայկը, ապա՝ Հայկանուշը: Նրանց հե-
տեւում են Բաղդասարն ու Նախշունը: Պապիի հազին ոչ-
խարի մորթուց սարքած կարծ շալվար է, Նախշունի տրու-
սիկը կխստարի մորթուց է, ունի նաև կրծքակալ՝ թռչունի
փետուրից սարքած: Հայկը ծեծում է դուռը:

Ի ՍԿՈՒՀԻՆԻ - (Տեղից վեր է թռչում, աչքերը տրորում, բացում դուռը,
ուրախանում). Հայկն է, Հայկանուշն է: (Դիմում է
ամուսնուն) Գուրգենն, Գուրգենն, վեր կաց, երեխսա-
ները նկնի են, Գուրգենն: (Գուրգենը դժվարությամբ
արթնանում է, Իսկուիին բացում է դուռը: Զարմացած է:
Փարվում է երեխսաներին, զարմանքով նայում Բաղդասա-
րին ու Նախշունին): Այս ի՞նչ է, նրա՞զ է, թե՞ ...

ՀԱՅԿ - Երազ չէ, մայրիկ, մի վախեցիր:

ԳՈՒՐԳԵՆ - (Մոտենում է դրանը) Վա՞, սա ի՞նչ է, իսկա-
պես նրա՞զ է, թե՞ տեսիլք...

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

ՀԱՅԿԱՆՈՒԾ - Հայրիկ, նրազ չէ, մի վախեցիր, մամա՝, պապա՝, մեր մեծ պապին է, մեր այտն է, ուրախացե՞ք:

ԳՈՒՐԳԵՆ- (Մեկոսի) Ուրեմն ճիշտ է, որ մեռները կարող են հարություն առնել: (Խաչակրում է): Փա՞ ոք քեզ, Աստված...

ՀԱՅԿ - Հայրիկ, ինչո՞ւ ես զարմացնել, ուրախացիր, մենք գտնել ենք մեր մեծ պապիկին եւ այային:

ԳՈՒՐԳԵՆ - (Զգոն է) Համեցնք, համեցնք, մեծ պապի, այս, համեցնք, ձեր տունն է, ուրախ ենք, որ եկել եք:

ԲԱՂԴԱՍԱՐ - Հա, քեն մատադ, մունք էլ ընք ուրախ, վեր ծեզ նման թռոներ օնիք, ստի էլ ծոռներ (ցույց է տալիս Հայկին ու Հայկանուշին):

Ի ԱԿՈՒՔԻ- (Վյուրերին հրավիրում է սեղանի մոտ) Խնդրեմ, նստեք: (Բաղդասարն ու Նախշունը նստում են, զարմացած դիսում շուրջը):

ԲԱՂԴԱՍԱՐ - Մունք բիդի ճելլի յետ տեսնանք, մեր գործը շատ ա, տոռնը թռղալ ընք պեզ, արջերը, կյուղերը, ըղվըսնեն նի կըտեռնան փոնած կիխտարս օտին: Եկալ ընք ծեզ տեսնանք, համ էլ զիդանք, խեն չը՞ք էս վարդի նման խոնցը տասերը արվորցընըմ:

ԳՈՒՐԳԵՆ- (Ժպտալով) Մեծ պապ, կպատահի, ոչինչ, սրանից հնտո ուշադիր կլինենք: (Դիմում է կնոջը) Իսկուիի, շուտ թեյնիկը դիր գագին, գուցե սուրճ էլ խմեն: Պապին, այան թող նախաճաշեն, հոգնած են, սոված են: (Իսկուիին գնում է խոհանոց):

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

ԲԱՂԴԱՍԱՐ -Տուգնը չընք, ուսութանաա նս մին
կյլստար, մին էլ կես արջ ըմ կերպ: Այան էլ մին
թեշտ ածեզյ ա կերպ, շնորհակալ ընք:

Ի ՍԿՈՒՀԻՒ- (Սինու վրա բերում է արժի թեյնիկը, նրբերշիկ, հաց,
դնում սեղանին): Համեցնք, պապի, այա, համեցնք,
նախաճաշչք:

ՆԱԽՇՈՒԻՆ - (Դիտում, զննում է սեղանին դրած ուտելիքը): Ախ-
չի, էս հի՞նչը օտում, պա էս ուտելի պե՞ն ա
(բառձրացնում է նրբերշիկը): Ախչի, էս կատվի չուրա-
ցած կտետը հո՞ւնց ըք օտում: Էս խն ածեզյ չըս ի-
փում, էս խն արջու մընս չըք օտում, շտե՞ղ ա
կյլստարեն մընսը, ըլբաստրակը, միրհավը, հը՞,
էս հինչ օ՞ր ըք քցալ էս խոնցը, պա հրմանչըմ
չը՞ք, էս հինչ ուրենքըմ ըք ապրում, պա՞հ-պա՞հ-
պա՞հ: Ես էլ ասում ըմ, խն՞ էս խոխենքյը էսքան
ճլագ ըն, հանցըն խնջլող ինին:

ԲԱՂԴԱՍԱՐ - Նախշուն, մին հրցըրու, տնս կընընչե-
ղա՞ն ըն օտում, հրցըրու:

ՆԱԽՇՈՒԻՆ - (Հիմում է Խկուսին): Ախչի, զյուդո՞ւմ ըս հինչ
ա շիրիշը, կըրմըզուկը, անքին, խազավը, թրժնջու-
կը, փիփերթը, սիրելսը, ճրիկոտեմնը, ուվուլուկը,
շենքը, կաճապը, ճռճրուկը, ծմլկթափանը, պեն-
ջարը, տանդրունը, պրավեն պորտը, կրծմընձուկը,
կինձը, սամեթը, անանուխը, ռեհանը, թարխունը,
տաղձը, ծթորենը: Ախչի, էնա ծրմըկնեն լցած,
վախտեն խն քյունը՞ն չըս պիրում, էս խոնցը ուսու-
ցընում, վեր հուշուրնեն լավ ինի: Պատառ էլ տաս
էն վարժուիի՞յ յա, հի՞նչը ասըմ, տաս ուրան, օտի,
ուժուվանա, վեր խոնցը մին պեն արվրցընեն:

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

ԻՍԿՈՒՀԻ- Այա, քո ասած կանաչենին ծանոթ ենք,
Էնքան էլ կերել ենք, կաշիներս կանաչել են: Են
քո ասած փիփերթից ամուսինս էնքան է կերել,
որ բնդերի տեղը փիփերտ է բուսել:

**ՆԱԽՇՈՒ- Ի փիլ մեք, հոմ կերեք, հանցու փուրուներտ
զավի վեչ:** համ էլ մին պեն էլ հըզընիմ: Մա-
զերտ խն էսքան կարճ ա, հանեծ ա՞ ինգյալ, թա
բուչուլ, խն մուլսրունիրավ լրվանը՞մ չըս, խն
կլոլստ թամո՞ւզ չըս պահում, պա խն իմ կլոլսս
հանեծ չի ինգյում, մազերս էլ տեսնըմը՝ հինչ-
քա՞ն ա էրկան:

ԲԱՂԴԱՍԱՐ - Նախշուն, բոլ ա հինչքան խրատ ըս
տվալ: Մեր հարսր հենց ա խնլունք ա, համա վեր
խնցը տասերը սրվլոցընը չի, լավ չի:

ԳՈՒՐԳԵՆ - Պատի, մեր գործն էլ է շատ, մենք էլ ենք
հոգնում: Համ էլ սրանից հետո նրեխաների դա-
սերը լավ կսովորեցնենք:

ԲԱՂԴԱՍԱՐ - Ապրիս, տղաս, մունք քինըմ ընք, քնզ էլ
մին պեն ըմ պահ տալու, մըննատ քոցիս վեչ:

ԳՈՒՐԳԵՆ - Հա, մեծ պապի, պահ տուր:

ԲԱՂԴԱՍԱՐ - Խոնցը լավ յիշեցնք, տասերը սրվլոցընք,
նամուսավ կազեք: Շատ գործ ըրեք, ուրուշու ծեր-
քել յեշիլ մեք, նամուսը տվալ ըն շանը, շոնը կերալ
չի, մեր վրենին էլ լավ վրենի ա, պենդ պլինցնք, թո-
ղնք վեչ թշնամին կյա, ծեր տոշին նստի, ծեր հո-
գին հանի:

ԳՈՒՐԳԵՆ - Հա՝, պապի, ճիշտ ես ասում, խորհուրդդ
չենք մոռանա:

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

ՆԱԽԾՈՒՆ - (Խոկուհուն) Ա հառնը, ես էլ քնզ օնիմ պեն ըսելի: Խոնցը լավ յեշի, մարթիտ համ ծրայն, համ խրատն: Ո-աշիդ կաց: Մնդանին յրա մինակ էն կատվեն կտետը մեր տինիլ: Մեր աշխարհում ամեն հինչ կա: Մինակ լոբավ 15 տեսակ կերակուր կսարքիմ (մատների վրա հաշվում է). խաշած լորի, քաշած լորի, սխսորած լորի, շլորած լորի, լորավ շիլա, լորավ շորվա, լորավ հալվա, մոշավ լորի, կանաչ լորի, լորավ փլավ, ճղպորավ լորի, տպակած լորի, տիբունդավ լորի, թենրխաչ լորի, աղ տիբած լորի: Այսիհ, վե՞ր մինն ասիմ: Հա, դն մունք քինանք: Խոնցը ծեզ ընք պահ տամ: Մարթիտ էլ համ սիրի, համ էլ խրատի:

ԻՍԿՈՒՀՔ- Ծատ լավ, այա, պապի, ձեր խրատը չենք մոռանա:

(Պապն ու այան ուզում են գնալ: Հայկն ու Հայկանուշը վազում են, փարփում նրանց՝ Հայկը՝ պապին, Հայկանուշը՝ այային):

ՀԱՅԿ- Պապի, մի գնա, մեր տանը մնա, ես քնզ սիրում եմ:

ՀԱՅԿԱՆՈՒԾ - Այա, մի գնա, մեր կոյսկեն մնա, որ ածիկ եփես:

ԲԱՂԴԱՍԱՐ - Ձե, մատաղ ինինք ծեզ, մունք քինիք քինանք, վեր ժամանակեն տեղ հրսնինք: Գուրգեն, խոնցը ծեզ ընք պահ տամ: Ծոռներես լավ կյեշիք:

ՆԱԽԾՈՒՆ - Դե, մնացենք պարով, խոյսնք: Խոկուհի, խոնցը տասերը լավ սըլլոցընք, վարժուին էլ

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

ասի, թող հոմ փիփերտ շատ օտի, վեր հիշողությունը կյա տեղը: Մազերտ էլ էրկան պահի, իմ մազերեն նման (ցոյց է տալիս իր մազերը):

(Հնչում է երաժշտությունը: Պապն ու այսն ուզում են թռներին հրաժեշտ տալ: Հայկն ու Հայկանուշը արտասկում են):

ՀԱՅԿ - Պապի, այս, դասերը լավ ենք սովորելու, չանհանգստանաք:

ՀԱՅԿԱՆՈՒՅԾ - (Արտասվելով) Հա՛, պապի, այս, լավ ենք սովորելու, չանհանգստանաք: Այս ամառ գալու ենք ձեզ մոտ, կսպասեք մեզ:

(Հրաժեշտի պահ է: Բաղդասարը շոյում է հայկի գլուխը):

ԲԱՂԴԱՍԱՐ - Հայկ բալա, խելոք ու քաջ նդիր, լավ սովորիր, եւ վեչ մին ժամանակ մոռանաս վեչ խոսք, ես մընք վընդին ա, մընք նրգիրն ա, մընք վընդին վեչ մին թշնամու տաք վեչ:

ՀԱՅԿ - Շատ լավ, պապի, երբեք չենք մոռանա, որ մեր Արցախը մեր պապերից մեզ հասած օջախն է, որ այսի պահպանենք ու պաշտպանենք ձեզ նման, մեզ համար:

Վարագույր

ՎԵՐԶ

2003 - 2006թ.

ՀԵՔԻԱԹ ԻՐԱԿԱՆ *

Մանկապատանելիան թատրոնների համար

Նվիրվում է Արցախի ազգային-
ազատագրական պայքարին

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՊԱՌԱՎ ԱՅԾ	Նախշուն անունով
ԱՅԾ	Զարի անունով, Նախշուն այծի աղջիկը
ՈՒԼ	Նանար անունով, Զարի այծի նրելսան
ԾԱՂԻԿՆԵՐ	Վարդը, Մանուշակը, Մելսակը, Շուշանը, Հասմիկը
Ա. ԳԱՅԼ	Արնախում գորշուկ անունով
Բ. ԳԱՅԼ	Մարդակեր գորշուկ անունով
ՆԵՐԻ	Պետրոս անունով, տարիքով, Նախշուն այծի հարենանը
ԱՐԶ - ՏՈՊՏԻԳԻՆ	Պոլյաչ անունով, պարենտ
ԳԼԽԱՎՈՐ ԱՌՅՈՒԾ	
ՀՈՒՐԵՐ ԿՈՐՅՈՒՆ	
ՄԱՐՍՍՓԱՋԱՅՆ	ԿՈՐՅՈՒՆ
ԱՐԵՎԱՉ ԿՈՐՅՈՒՆ	
ՎԱՐԱԳՆՍԱԿԵՐՊ	ԿՈՐՅՈՒՆ

*) Բնմադրվել է մանկապատանելիան թատրոնում ժողովրդական արտիստ Քաջիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ գլխավորությամբ, ներկայացվել Ստեփանակերտի երիտասարդական պալատում, ՊԲ տարբեր զորամասերում, առանձին մրցույթներում, արժանացել ջերմ ընդունելության:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

S ես առ ան առ աջին

Բնիմը ներկայացնում է արցախյան սրահով մեկ հարկանի տուն: Սրահում իլիկ է մանում Նախշոն այծը: Գարնանային օր է: Իրիկնամուտ: Դրսից վազելով բակ է մտնում Զատի մայր այծը: Մկլում է կարտույթ:

ԶԱՌԻ ԱՅԾ- Մա՛ - ա՛ - ա՛ ... մա՛ - ա՛ - ա՛ ...

ՆԱԽՇՈՒՆ - Զա՞ն, զա՞ն...

ՈՒԼԻԿ - (Սրահի անկյունում կապված է թուկով, որ արձագանքում է մորք)

Մա՛ - մա՛ ...

ՆԱԽՇՈՒՆ- Զա՞ն, զա՞ն...

(Իլիկը դնում է մի կողմ, սրահից իջնում բակ, ձեռքից կաթի աման - կաթսա կամ գավաթ: Նա շոյելով այծին, բռնում է պղղերից, կանգնեցնում մի հարմար տեղ եւ սկսում կթել: Եվ կթում է, եւ երգու)։

Իմ սիրուն այծ, իմ աղջիկ,

Մենք ապրում ենք քո կաթով,

Նեղ օրնի հույսն ես մեր,

Պարտական ենք քեզ կյանքով:

Դու ես պահում մայրիկիդ:

Եվ մինուճար բալիկիդ:

ԶԱՌԻ - Մա՛ - ա՛ - ա՛ ... հա՛ ...

ՆԱԽՇՈՒՆ- (Ավարտում է կիթը, տեղից վեր կենում, շոյում այծի միրուքք եւ ասում)։

Մենքն երկար միրուքիդ,

Գնամ-քնրն ուլիկիդ...

ԴՐԱՄԱՑԻԿԱԿԱՆ ԵՐԿԵՐ

(Կաթի ամանը տանում-դնում է սեղանին, ույին տնηից ազատում, քերում այծի մոտ: Ույիկը թռվալով չորում է մոր առջեն եւ սկսում սնվել կրծքից):

ԶԱՌԻ - Մա՞ - ա՞ - ա՞ ... մա՞ - ա՞ - ա՞ ...

Իմ բալիկ,
Դու իմ բախտի
Զինջ ալիք,
Դու խնլոք ես, սիրուն, հեղ,
Կաթս հալալ լինի քնզ...

(Ույիկը կշտանում է եւ մոր առջեն թռչկոտում):

ՈՒԼԻԿ - Մա՞ , գիտե՞ս ինչ, տատիկը

Անվանում է ինձ Նանար,
Համբուրում է թաթիկը,
Որ պարում եմ իր համար:

ԶԱՌԻ - Սիրում եմ քնզ, իմ Նանար,

Որ լսում ես տատիկին,
Տատին լսող աղջիկը
Դառնում է լավ տանտիկին:

ՈՒԼԻԿ - (Ոգետրված, թռչկոտելով)

Ես սիրում եմ տատիկին,
Դառնալու եմ լավ տիկին:

ԶԱՌԻ - (Խանդաղատանքով)

Մնանեմ ես քո գալիքին
Եվ քո գալիք բալիկին:

ՈՒԼԻԿ - (Ուրախությանը չափ չկա)

Մա՞մ, երբ իջնի երեկոն,
Հացի նստենք երեքով,
Տատը կերգի. «Նա՞ - Նա՞նար»,
Ես կպարեմ քնզ համար:

S ես առան երկրորդ

Երեխո է: Վառվում է սրահի առաստաղից կախված էլեկտրական լամպը: Իրար քով նստած են Նախշունը, Զատին, Ուլիկը:

ՆԱԽՇՈՒՆ- Խնդրենք Նանարին՝

Վեր կենա պարի:

(Երգում է)

Մե՛կ - երկու՝ - երե՛ք - չո՞րս,

Իմ հավան ա՛ տասնչորս:

ԶԱՌԻ - (Ուլիկին)

Նանար բալիկ,

Վեր – պարիր:

ՈՒԼԻԿ - (Թռչկոտելով առաջ է զայխ, տատի օրինակով բարձրածայն երգում են պարուն)

Մե՛կ - երկու՝ - երե՛ք - չո՞րս,

Ես պարում եմ տասնչորս...

(Ուլիկի հետ պարի մեջ են մտնում Նախշունն ու Զատին են ապա քիչ անց դադարեցնում պարը):

ՆԱԽՇՈՒՆ - (Դիմում է Զատին են ապա Ուլիկին)

Արդեն ուշ է, իմ Զատի,

Իմ սիրունիկ, իմ Նանար,

Քնենք, տեսնենք ի՞նչ բարի

Լոյս է բացվում մեզ համար:

ՈՒԼԻԿ - Բարի գիշեր, տատիկ ջան:

ՆԱԽՇՈՒՆ - Գիշեր բարի, բալիկ ջան:

(Բաժանվում են՝ քննկու):

S ես առ ան երբոքդ

(Արավոտ է: Բնիմի հետևից լսկում են այծերի մկրոցներ: Սշխույժ են Նախշունը, Զատին, Ուղիկը: Զատին շտապում է զնալ-միանալ նախիրին):

ՆԱԽՇՈՒՆ- Թեկուզ ոչ է, իմ Զատի,

Մազերդ քիչ հարդարիր:

(Այծը նայում է սցունից կախված հայելուն, մատները լիզում են շոյում միրուքը՝ հարդարվում է):

ՈՒԼԻԿ - Մա - - մա, մա - մա, ինձ էլ տար,

Թե զնում ես Մռով սար,

Մա - մ, տե - ս, հասակ եմ առել,

Դեռ ոչ մի տեղ չես տարել:

ԶԱՌԻ - Դեռ փոքրիկ ե՞ս, իմ Նանար,

Դու տատիկի մոտ մնա,

Իսկ ես զնամ Մռով սար,

Որ կաթ քերեմ քեզ համար:

ՆԱԽՇՈՒՆ - (Ծոյնով Ուղիկին)

Դու իմ խելոք, իմ անգին,

Հրաժեշտ տուր մայրիկին,

Մաման զնա Մռով սար,

Որ կաթ քերի քեզ համար:

ՈՒԼԻԿ - (Հրաժեշտ է տալիս մորը)

Մա - մա, մա - մա, շուտ կգաս,

Որ ինձ քաղցր համբույր տաս:

ՆԱԽՇՈՒՆ - (Հորդորելով)

Իմ Զարուիի, դե՝ զնա,

Նախիրից հետ մի մնա,

Խոր անտառը չմտնես,

Գորշ գայլեր կան, այդ գիտես:

(Զատին շտապ-շտապ հեռանում է քեմից):

S ե u ա p ա n չ n p p n p դ

(Սարեր, ստորոտում կանաչ ծփանք: *Sեղ-տեղ երեսում են ծաղիկների կոկոններ: Արենի շողերի տակ աստիճանաբար կոկոնները բացվում են, հերթով բարձրանում են երգում.*)

ՎԱՐԴ - Մեր սարերի ալ Վարդն եմ ես,
Երգիչների անուշ տաղն եմ,
Սրտով, հոգով հպարտ եմ ես,
Որ երկիրս Ղարաբաղն է:

ՄԱՆՈՒԾԱԿ - Ինձ կոչում են Մանուշակ,
Մեր լեռների հրաշքն եմ,
Ես համեստ եմ, անուշակ,
Սիրո հավերժ կրակն եմ:

ՄԵԽԱԿ- Մեխակն եմ ես նրբազնոյ,
Սիրո հուր եմ, սիրո դեղ,
Զրահարսն եմ Թարթառի,
Սրտով քնքուշ ու բարի:

ՇՈՒԾԱՆ- Սարի Շուշան ծաղիկն եմ,
Երգիչների տաղիկն եմ,
Աղջիկները մեր նազուն,
Իմ անունն են երազում:

ՀԱՍՄԻԿ - Մեր դաշտերում, հանդերում,
Ես ծաղկում եմ քուրավետ,
Մարդկանց խինդ եմ միշտ բերում,
Ես ծնվել եմ սիրո հետ:

ՄԻԱՄԻՆ- (Շորջպար են բռնում են երգում)
Մեր հայրենի Ղարաբաղ,

ԴՐԱՄԱՑԻԿԱԿԱՆ ԵՐԿԵՐ

Մեր սրտերի հույսի շաղ,
Դու մեր մայրն ես լուսաշող,
Մենք՝ դրատերերդ, քեզ պաշտող:
(Այդ պահին երկու գորշ գայլեր անսպասելի, թփերի
արանքից ցատկում են նետվում պարող ծաղիկների մեջ
եւ սկսում տրորել: Ծաղիկները պաշտպանվում են, բայց
չեն կարողանում դիմադրել):

ԱՌԱՋԻՆ ԳԱՅԼ - Ղարաբա՞ղն եք գովերգում:

ԵՐԿՐՈՐԴ ԳԱՅԼ - Տնսեր ո՞նց ենք ձեզ փրթում:

(Ծարունակում են ծաղիկներին տրորել, Բեմի ծայրից
Զարի այծը նկատելով գորշ գայլերի դաժանությունը,
համարձակ վազում է դեպի նրանց եւ սկսում պողահարել)

ՉԱՌԻ - Վայրեննիներ անկշտում,

Ի՞նչ եք անում մեր դաշտում:

(Գորշ գայլերը զգուշանալով շրջապատում են Զարին):

ԱՌԱՋԻՆ ԳԱՅԼ - Կանգնիր, հայի հարամ այծ,

Ի՞նչ ես այստեղ տարածում:

ԵՐԿՐՈՐԴ ԳԱՅԼ - Մեր քրտինքով աճեցրած

Ցորնի ա՞րտն ես արածում:

ՉԱՌԻ - (Զարմացած)

Այստեղ արտ չկա,

Սարեր են, հանդեր:

ԱՌԱՋԻՆ ԳԱՅԼ - (Նենգորեն)

Ուրեմն դու ես

Մեր արտը քանդել:

ԵՐԿՐՈՐԴ ԳԱՅԼ - (Հիմնով առաջին գայլին)

Այս, սա ինքն է, Արնախում գարդաշ,

Մեր թշնամին է, ոստիսը մեր հին,

ԴՐԱՄԱՑԻԿԱԿԱՆ ԵՐԿԵՐ

Սա է միշտ գալիս մեր Մոռվա սար,
Եվ փչացնում թե՛ արտ նու թե՛ ծառ:

ԶԱՂԻ - (Վրդովկած)

Ի՞նչ, Մոռվ սարը ձե՞րն եք համարում:
(Չգտում է պողահարել):

ԱՌԱՋԻ Ն ԳԱՅԼ- Հայի հարամ այծ, ի՞նչ նու համարում:

ԶԱՂԻ - (Համարծակ)

Հարամն էլ եք դուք, զողերն էլ եք դուք,
Մոռվը մեր հին սարն է վնիաշուք,
Այդ դուք եք ուզում տիրանալ նրան,
Զեր կնդտոտ թաթը միշտ պահել վրան:

ԵՐԿՐՈՐԴ ԳԱՅԼ - (Դիմում է Զատիկին)

Լեզուտ քեզ պահիր,
Պոզավոր շնյթան:

ԶԱՂԻ - (Տեղից ուժգին պոկվում է, որ պողահարի)

Ավագակներ արնախում,
Դուք սար չունեք Արցախում...
(Նորից պողահարելու վործ է անում):

ԱՌԱՋԻ Ն ԳԱՅԼ - (Վախով ու հոլորտանքով բռնում է Զատիկի
պողերից, թոկով կապում նու ասում)

Ժամանակ չունենք, որ պատասխանենք,
Ոչինչ, քիչ հետոն կաշիդ կհանենք:

ԵՐԿՐՈՐԴ ԳԱՅԼ - Այ, այդպիս, դե շուշտ, Արնախում
գորշուկ,

(Դիմում է Զատիկին)

Տնս ինչքա՞ն լավն են միար նու կաշին:

ԴՐԱՄԱՑԻԿԱԿԱՆ ԵՐԿԵՐ

ԱՌԱՋԻՆ ԳԱՅԼ - (Արհամարանքով եւ վստահ դիմում է Զարդիկն)

Այծիկ, մերն է անտառը,
Մերն են այս դաշտն ու սարը,
Մեր խոտերն ես դու կերել,
Մեր ծառերն ես դու քերել,
Մազդ կտաս մեր յուրտին,
Իսկ կաթդ՝ մեր չոջուխին:

ԶԱՂԻ - (Համարձակ)

Եվ սարն է մերը, եւ ծառն է մերը,
Անտառն է մերը, Թարթառն է մերը,
Քոչվոր ցեղեր եք, հնովից ներխուժած,
Վանքերն են մերը, բարբառն է մերը:
Քիչ էլ սպասեք, գող ավազակներ,
Պատասխան կտաք առյուծներին մեր:
(Թափով բաց է ընկնում Արնախում-զայլի ճեղքից եւ ուժ-
գին պողահարում Մարդակեր-զայլին: Վերջինս տապալ-
վում է գետնին, նորից վեր կենում: Զարդի պողերից բռնած՝
Արնախումը առջելից քաշում է, Մարդակերը հրում է հե-
տելից):

Վարագույր

ԳՈՐԾՈՂՈԽՅՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

S ես առ ան առ առ զի՞ն

(Առավոտ է: Նախշունը թախծուտ շրջում է բակում: Նրան դիմացի դրնից մոտենում է հարեւան Պետրոս Ներին).

ՊԵՏՐՈՍ - Բարի լոյս քնզ, խնամի Նախշուն,

Շատ նս անհանգիստ, ի՞նչ է պատահեն:

ՆԱԽՇՈՒՆ - Զի վերադարձն հանդից Զատիկն տուն,

Մինչեւ լոյս նրա ճամփան նմ պահեն:

ՊԵՏՐՈՍ - Զատիկն օահեն է, ուժեն է, խիզախ,

Ուր որ է, կգա, ինչո՞ւ նս հուզվում:

ՆԱԽՇՈՒՆ - Փոքրիկ Ուլիկը մինչեւ լուսաբաց

Հա՛ մկլում էր, իր մորն էր ուզում:

Զառուն երեսի գողերն են տարեն,

Քանի՛ զայլի է նա պոզահարեն:

ՈՒԼԻԿ - (Տատիկի մոտից չի հեռանում)

Մա՛ - ա՛ - ա՛, մա՛ - մա՛ ...

ՆԱԽՇՈՒՆ - Մի խորհուրդ տուր ինձ, խնամի Պետի:

ՊԵՏՐՈՍ - Հենց հիմա գնա, դիմիր պարետին:

S ես առ ան երկրորդն

(Պարետասուն՝ փշալարերով շրջափակված: Ծենքը հսկվում է խորհրդային աստղակիր զինվորների կողմից: Մոտենում է Նախշունը՝ Ուլիկի հետ: Զինվոր արջուկները փորձում են ներս չըռղնել: Բայց Նախշունը դիմադրելով ներս է մտնում, հետեւից էլ՝ Ուլիկը):

ՆԱԽՇՈՒՆ - Այս ի՞նչ կարգեն են,

Ինչո՞ւ չեն թռղնում ազատ ներս մտնենք,

Հազար ու մի հոգս ու ցավնը ունենք:

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

ՏՈՂՏԻԳԻՆ-ՊՈԼՅԱԶ - Կարգ ու կանոն կա,

Լսում եմ, պառավ...

ՆԱԽԾՈՒՆ - Մեր գեներալն ես,

Դա հայտնի է մեզ.

Ինչո՞ւ թուրքները

Թալանում են մեզ:

Գյուղում ջթողին

Ոչ կով, ոչ ոչսար,

Չեք պատժում գողին,

Իմ այծն էլ տարան:

ՏՈՂՏԻԳԻՆ-ՊՈԼՅԱԶ - (Ցցում է մատը)

Վերցրու Ուլըդ, հեռացիր:

ՆԱԽԾՈՒՆ - Հաստատ գիտեմ, իմ այծին

Գողացել է դրացին:

Ասա, հիմա

Ի՞նչ անեմ,

Այս որբուկին

Ո՞ւր տանեմ,

Ինչո՞վ սնեմ

Ես նրան,

Գտեք մորը,

Գեներալ...

ՏՈՂՏԻԳԻՆ-ՊՈԼՅԱԶ - (Դանդաղ բարձրանում է տեղից,

ոլորում շեկ բեղերը, բացում գրառումների գրբույկը, իբրեւ

սոսոկում է դեպքը, շոյում է հաստ փորը եւ մեղադրանքով
ասում).

Այծդ խախտել է սահմանն ուրիշի,

Նա պետք է լիներ զգոն եւ ուշիմ,

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

Ինձ հայտնել են, որ նա գաղտագողի,
Աչքը տնկել է հարնաւ հողին:
Ես չեմ զբաղվում գողության հարցով,
Այծդ կարող ես հետ քերել վարձով:

ՆԱԽԾՈՒՆ - (Վրդովմունքով)

Ճիշտ է ասել ժողովուրդը՝
Չուկը գլխից է հոտում:

ՏՈՊՏԻԳԻ Ն-ՊՈԼՅԱԶ - Որ պատիժ տան մեղավորին,
Դիմիր Գորբաչ Թագավորին:

ՆԱԽԾՈՒՆ- (Համարձակ)

Հողեմ գլուխը այդ թագավորի,
Նա ժողովորին հասցրեց այս օրին,
Աստված, տես ո՞վ է երկիրը վարում,
Դու նրա զահը ինչո՞ւ չես վառում:

ՏՈՊՏԻԳԻ Ն-ՊՈԼՅԱԶ – Պառավ, քո այծը գողերն են
տարել,

Մեր թագավորը քեզ ի՞նչ է արել,
Նա շատ քարի է, արդար, անզիջում,
Ինչո՞ւ ես նրան այդպես անիծում:

ՆԱԽԾՈՒՆ - ԹԵ լավ է, իրոք, քո թագավորը,

Այդ չալճակատը,
Ինչո՞ւ է ապա
Վեզիրը վատ,
Իշխանը վատ,
Կարգը վատ,
Միլապետը վատ,
Պարետը վատ,
Կյանքը վատ:
Ինչո՞ւ է նա պաշտոն տալիս գոփողին,

ԴՐԱՄԱՑԻԿԱՍՆ ԵՐԿԵՐ

Եվ գոփողն էլ պաշտպանում է միշտ գողին,
Թուրքն էլ ազատ գողացն է իմ այծին:
Ա՛յս, որտեղի՞ց մնա համար լոյս կբացվի:
Հողեմ գլուխը այդ թագավորի,
Նա՛ ժողովրդին հասցրեց այս օրին:
(Ուլիկի վզից բռնած հեռանում է պարետատնից):

S ես առ առ ն եր բռ բռ դ

(Այցուծների ցոյց: Ամբիոնի մոտ գլխավոր Այցուծն է: Նա խոսում է: Ներս է մտնում Նախշունը՝ Ուլիկի հետ նև կանգնում ցուցարարների մոտ):

ԳԼԽԱՎՈՐ ԱՌՅՈՒՄ - Զեզ նմ դիմում նս, կորյուններ
իմ քաջ,
Ապավիննենք մեր սեփական ուժին,
Արցախը մերն էր տարիներ առաջ,
Նենգ աղվեսները տվին ուրիշի:
Հիմա տաճջում նն մեր ժողովրդին
Գորշ գայլերը նև արջերը ծախու,
Ջի մնոն մեր քաջ պապերի ոգին,
Նա թենածում է մեր մայր Արցախում:
Մենք գորշ գայլերի լուծը պիտ ջարդենք,
Եվ ազատության մեր ուղին հարթենք:

ԿՈՐՅՈՒՆՆԵՐ - Ա՛ - զա՛ - տո՞ւթ - յո՞ւն...

ՆԱԽՇՈՒՆ- (Ճեղեղով ցուցարարների շարքը, Ուլիկի հետ
մոտենում է գլխավոր Այցուծին նև խոսք խնդրում):

ԳԼԽԱՎՈՐ ԱՌՅՈՒՄ – Խոսքը տրվում է Նախշուն
տատիկին:

ՆԱԽՇՈՒՆ - Մեր հոյս ու հավատ,

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

մեր քաջ կորյուններ,
Մեր զավը մեծ է, մեր զատումը՝ թեժ,
Մեզ թալանում են գորշ գայլերը նենզ,
Եկել է պահը, որ կոչենք՝ վիճժ:
Իմ խեղճ Ուլիկի մորն էլ գողացան,
Մոռվ սարի մոտ, Թարթառի ափին,
Հավատով-հույսով նաև արտաքաց
Այսօր դիմեցի Պոլյաշ պարետին:
Նա Գորշ գայլերին պաշտպանեց կրկին
Եվ առաջարկեց բարձր փրկազին,
Ես ինչպե՞ս զննմ իմ այծը փողով,
Չեզ մոտ եմ եկել իմ արտի դողով:

ԳԼԽԱՎՈՐ ԱՌՅՈՒԾ - Երկրի ապավեն կորյուններ
արի,
Մեր հողն են մտել գորշ գայլերն անթիվ,
Վտանգ է սպառնում Արցախ աշխարհին,
Ելնենք՝ փրկելու օջախ ու պատիվ:

ԿՈՐՅՈՒՆՆԵՐ - Ելնենք՝ փրկելու օջախ ու պատիվ:
ԳԼԽԱՎՈՐ ԱՌՅՈՒԾ-Կորյուններ ծնող մեր Լեռնաս-
տանի

Հոյսը ուժն է մայր Առյուծստանի,
Նրանով է մեր սիրտը թենածում,
Կոչենք՝ միացում:

ԿՈՐՅՈՒՆՆԵՐ - Մի՛ - ա՛ - զո՛ւմ, մի՛ - ա՛ - զո՛ւմ...

ԳԼԽԱՎՈՐ ԱՌՅՈՒԾ - Արդար պահանջ, ոչ մի
նահանջ...

ԿՈՐՅՈՒՆՆԵՐ - Արդար պահանջ, ոչ մի նահանջ...

S ես առան չոքքոք

(Արգախյան բնության տեսարան: Ամստառածածկ լինենքր, լեռների վրա՝ վանքեր, գահավիժող գետ: Բեմի հետեւից լսիում են կրակոցներ: Ավտոմատը պատրաստ բռնած բնմ է մտնում Գլխավոր Ազյուծը, հետեւից՝ կորյունները զինված):

ԳԼԽԱՎՈՐ ԱՌՅՈՒԾ - (Դիմում է կորյուններից մեկին՝

Հուրիենին)

Քո ջոկատով, Հուրիենը Կորյուն,

Սարալանջով բարձրացիր վեր:

ՀՌԻՌԵՐ ԿՈՐՅՈՒՆ - (Պատիվ է տալիս)

Կա՛, Սպարապետ...

ԳԼԽԱՎՈՐ ԱՌՅՈՒԾ- Իսկ դու՝ Կորյուն Սարսափա-
ձայն,

Քո ջոկատով անցիր ներքեն:

ՍԱՐՍԱՓԱԶԱՅՆ ԿՈՐՅՈՒՆ - (Պատիվ է տալիս)

Կա՛, Սպարապետ...

ԳԼԽԱՎՈՐ ԱՌՅՈՒԾ- (Դիմում է Արեւաչին)

Արեւաչ Կորյուն, դու քո ջոկատով

Բարձրացիր դեմք վեր, հենց գետի մոտով:

ԱՐԵՎԱՉ ԿՈՐՅՈՒՆ - (Պատիվ է տալիս)

Կա՛, Սպարապետ...

ԳԼԽԱՎՈՐ ԱՌՅՈՒԾ- (Դիմում է Վահագնակերպին)

Վահագն Կորյուն, մենք էլ այստեղ,

Խաչմերուկում լնոնապարի,

Պիտի բռնենք ամուր դիրքեր,

Պահենք ճամփան Գորշ զայլերի:

Գորշ զայլերի ոհմակը մեծ

Թաքնված է ժայռերի տակ,

Նրանց հետ է Պոլյաչը նեռ,

Մաս թշնամուն, առաջ, կրակ:

(Գլխավոր Առյուծը նի կորյունները սկսում են կրակն: Այդ պահին բնմի հետնից ներս է խուժում Գորշ գայլերի մի ոհմակ՝ մեջքներին գրած. «Մաս հայերին»: Նրանք սկսում են կրակն Գլխավոր Առյուծի ջոկատի ուղղությամբ: Թեժանում է կոփիլը: Դիրքափրկում են թշնամական կողմերը: Վահագնակերպ կորյունը կրակահերթով գետնին է տապալում Գորշ գայլերի հրամանատարին: Վերջինիս թիկնապահը վիրակորում է Վահագնակերպ կորյունին: Գլխավոր Առյուծը շարքից հանում է Գորշ գայլերի հրամանատարի թիկնապահին: Այդ պահին կորյունների երեք հրամանատարները բնմ են քշում Տոպոյիզին-Պոլյաչին, Արճալում են Մարդակեր գորշ գայլերին):

ԳԼԽԱՎՈՐ ԱՌՅՈՒՄ – (Իր սանիտարուհուն)

Փաթթարիր վերքը Վահագնակերպի:

(Իր զինակիցներին)

Փոսը նետնցեք այս գորշ գայլերի

Դիակները պիտծ...

(Մոտենում է դիակներին)

Հանդիպնցի՞նք, Պոլյաչ Դահիճ

Եվ գորշ գայլեր՝ Արնախում են Մարդակեր:

ԱՌԱՋԻՆ ԳԱՅԼ- (Ստորացած)

Ես մեղք չունեմ, ինձ խղճացնք...

ԵՐԿՐՈՐԴ ԳԱՅԼ- (Դողալով)

Ինձ էլ խղճացնք, ես էլ չունեմ մեղք...

ՏՈՊՏԻԳԻՆ-ՊՈԼՅԱՉ - (Վստահ)

Ես... ծառայել եմ արցախսցիներին,

Գիտեմ, Առյուծը ինձ պիտի ների...

ԳԼԽԱՎՈՐ ԱՌՅՈՒՄ-Դու թշնամին ես արցախսցիների,

Արցախը, Պոլյաչ, երբեք չի ների:

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

(Հիմում է Հորիեն կոյունին)
Բանտարկնք դրան, թռղ գլխի ընկնի՝
Սրով նկողը սրով է կընկնի:
(Տանում են):

ԱՌԱՋԻՆ ԳԱՅԼ, ԵՐԿՐՈՐԴ ԳԱՅԼ - (Իրար հպված,
շորած, խեցացած, դողացող ձայնով)
Այյուծ քիրվա, ներնցեք մեզ,
Երբեք էլ չենք խանգարի ճեզ,
Քիրվաննը ենք մենք շատ վաղուց,
Սիրտդ մեծ է, ներիր, Այյուծ:
(Այդ պահին երկու կոյուն ներս են բերում Զատի այծին՝
պղերին պարանի փունջ):

ԿՈՐՅՈՒՆ Ա.- (Պատիվ է տալիս Այյուծին)
Այծին փրկնցինք գայլերի որջից...
ԿՈՐՅՈՒՆ Բ.- Կաթ էին ուզում են նրա պղից...

(Ընդհանուր ծիծաղ, շոյում է այծի պղը)
ԶԱՌԻ - (Տեսնելով գորշ գայլերին, վրա է վազում, պղահարելով
երկուսին տապալում գնտնին):
Առեք, արնախում են դաժան գայլեր,
Միշտ գողությամբ եք ամենուր փայլել:

ԿՈՐՅՈՒՆ ՆԵՐ- (Ծափահարելով լիաթոք ծիծաղում են):
ԿՈՐՅՈՒՆ Ա.- (Ծաղրում է Գորշ գայլերին)

Մեզ անվանում են ճուտիկներ խոզի:
ԿՈՐՅՈՒՆ Բ.- Զեն էլ դիմանում մեր այծի պղին:
(Թնդում է կոյունների ծիծաղը: Ընդհանուր ծիծաղի տակ
քեմ է մտնում Նախշունը Ուլիկի հետ):

ՈՒԼԻԿ - (Նկատելով մորը, կարոտով վազում է, փարփում նրան)
Մա՞ - մա՞ , մա՞ - մա՞ , եկե՞լ ենս...

ԶԱՌԻ - (Փայփայում է Ուլիկին).

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

Եկել եմ, բալիկ, իմ սիրուն Նանար,
Մոռվա կաթ եմ քնրնել քնզ համար:

ՆԱԽՇՈՒՆ- (*Մոտենում է Գորշ գայլերին*)

Չեր բրիշակը դուք հնովում թռղել,
Ապրում եք ինչպես արնախում գողեր:

ԳԼԽԱՎՈՐ ԱՌՅՈՒԾ - Լոկ գողեր չեն, Նախշուն
տատի,

Մեր Արզախն են ուզում խլել,
Դեհ, տատի ջան, հրամայիր
Սուրը դրանց սիրտը խրել:

(Պատյանից հանում է սուրը):

ԱՌԱՋԻՆ ԳԱՅԼ,

ԵՐԿՐՈՐԴ ԳԱՅԼ - (*Ծնկաշոր պաղատում են Աղյուծին*)

ԱՌԱՋԻՆ ԳԱՅԼ - - Ներեցնք մեզ, Արյուծ քիրվա...

ԵՐԿՐՈՐԴ ԳԱՅԼ - Հարեւան ենք ամենօրյա...

ՆԱԽՇՈՒՆ - Ավագակ եք, ուրիշ ոչինչ,

Չեզ նմանին մահն էլ է քիչ:

ԳԼԽԱՎՈՐ ԱՌՅՈՒԾ - (*Դիմում է գայլերին*)

Ավագակներ եք, գայլներ՝ անկշտում,
Դուք գողությունն ու թալանն եք պաշտում,
Գնացնք, ապրնք անտառներում ձեր,
Էլ ոտք չդնեք սահմաններում մեր,
Բայց եթե մենք էլ մեր հողը մտնեք,
Դուք ձեր խայտառակ մահը կգտնեք:

(Դիմում է կորյուններին)

Ճանապարհ դրնք, թռող գնան-կորչեն:

(Տանում են):

ՆԱԽՇՈՒՆ - Քո կյանքին, բոյին մեռնեմ,

ԴՐԱՄԱՑԻԿԱԿԱՆ ԵՐԿԵՐ

Այսուհետև՝

Ես ձեր անունին մեռնեմ, կորյուններ:

ԳԼԽԱՎՈՐ ԱՌՅՈՒՄԾ - (Կորյուններին)

Զինվորներ, խնդրենք կորյուն Հորիներին՝

Մեր ազատության դրոշը բնրի:

(Հորիներ կորյունը պատիվ է տալիս նև գնում: Բոլորը սրտատրով սպասում են: Քիչ անց նաև բերում է Արցախի եռագոյնը նև ամրացնում բնմի մեջտեղը: Հնչում է քոչարին, բոլորը շուրջպար են բռնում: Առաջ են գալիս Նախշունը, Ռուիկը, Զատին, Գլխավոր Առյուծը):

ՆԱԽՇՈՒՆ - (Դիմում է դահլիճին).

Սիրուն բալիկներ, մեր այս հնքիաթը

Մեր պատմությունն է իրական ու նոր:

ԶԱՌԻ - Մեր բոլորինն է, իիշենք ամեն օր:

ԳԼԽԱՎՈՐ ԱՌՅՈՒՄԾ - Մենք զավակներն ենք

Հայոց լեռների,

Թշնամիներին երբնք չենք ների,

Մեր երազների մայրն է Մասիսը,

Նրա հետ կապրեն Մոռվն ու Քիրսը:

ՈՒՂԻԿ - (Փարզում է մորը)

Ուրախ է անցնում միշտ նրա՛ օրը,

Ով գտնում է իր հարազատ մորը:

(Փարզում է մորը, մայրը փայփայում է):

(Վերջիններս կրկին միանում են շուրջպարին):

Վարագույր

ՎԵՐՋ

Փետրվար-մարտ-1998թ
փետրվար-մարտ-2006թ.

ՆԱՀԱՏԱԿ ԼՈՒՍՈ (ՄԵՐ ԱՎՈՆ)

Զափածոն դրամա՝ Երեք գործողությամբ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻ ՆՔ

ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ (Ավո)

ԺԱԿ (հայ Երիտասարդ) } (Վրիժառուներ, Մոնթեի
ՄԱՅՔԼ (հայ Երիտասարդ) } ընկերները)

ԴԱՏԱՎՈՐ (Փրանսիացի)

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒՀԻ (Փրանսուիի)

ՍՎԵՏԼԱՆԱ ՑՎԵՏՍԱԵՎԱ (բուլղարուիի)

ՄՈՆԹԵԻ ՊԱՊԸ (տեսիլքային)

ԱՐԳԻՇՏԻ ԹԱԳԱՎՈՐ (տեսիլքային)

ԳՆԴԱՊԵՏ

ԱՌԱՋԻՆ ԿԻՆ (հայուիի)

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՆ (հայուիի)

ԵՐՐՈՐԴ ԿԻՆ (հայուիի)

ՉՈՐՐՈՐԴ ԿԻՆ (հայուիի)

ԱԼՎԱՐԴ (ուսանողուիի)

ԵՐԻՏԱՍԱՐԴ (հայ զինվոր)

ԿՈՄԻՏԱՍ (լեյտենանտ)

Ա. ԹՌԻՌՋ

Բ. ԹՌԻՌՋ

Գ. ԹՌԻՌՋ

ԱԼԻ (թուրք գնդապետ)

ԶԱԲԻ (գնդապետ)

ԱՐԹՈՒՐ (լեյտենանտ)

ԴԻԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

ՆՎԱՐԴ (Արթուրի կինը)
ՍՄԲԱՏ (սպա)
ԱՌԱՄ (սպա)
ՍԵԴԱ (Ավելի Սերը)
ԶԻՆՎՈՐՆԵՐ, ԲՆԱԿԻՉՆԵՐ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

Պ ա տ կ ե ր ա ռ ա զ ի ն

Փարիզ: Դատարանի շենք: Դահլիճում հայորդիներ են:
Նրանց հետ է Մոնթեն Մելքոնյանը, որ նստած է մեղադ-
րյալի աթորին: Սպասում են դատարանի որոշմանը:

ՔԱՌԾՈՒՂԱՐՈՒՀԻ - Ոտքի՝, դատարանն է գալիս:

(Բոլորը ոտքի են կանգնում:

Ներս է մտնում Փարիզի քաղաքային դատարանի գլ-
խավոր դատավորը, զբաղեցնում իր տեղը եւ կարդում
որոշումը).

ԴԱՏԱՎՈՐ - Քաղաքացի Մոնթեն Մելքոնյան:

ՄՈՆԹԵ - (Ոտքի է կանգնում) Լսում եմ:

ԴԱՏԱՎՈՐ - (Կարդում է առօգանությամբ) Փարիզի քաղա-
քային դատարանը, նկատի ունենալով քաղա-
քացի Մոնթեն Մելքոնյանի ահարենկչական ա-
րարքը Փարիզում Թուրքիայի դեսպանատան
հանդեպ, որի արդյունքում զոհվել է Թուրքիայի
դեսպանը, որոշենլ է Ֆրանսիայից վտարենլ՝ նրան
տրամադրենով 24 ժամ ժամանակ:

Պա՞րզ է, քաղաքացի Մոնթեն:

ԴՐԱՄԱՑԻԿԱԿԱՆ ԵՐԿԵՐ

ՄՈՆԹԵ - Պարզ է, հարգելի դատավոր: Սակայն
համաձայն չնմ ինձ ահարելիչ կոչելուն...

Ոչ ես, ոչ էլ իմ ընկերները,
Ովքեր նետված են բանտերը տարբեր,

Ահարելիչ չենք, այլ վրիժառու:

Մեր երկու միլիոն հարազատների
Կորսատի ցավն է մեզ տանջում անվերջ,

Դա ցավ չէ միայն, այլև արդար ճիչ,

Որ կոչ է դարձել մեր իսկ արյան մեջ:
Թուրքիան պետք է որ զոշա, ճանաչի

Յեղասպանությունը 15 թվի,

Թուրքիո պետության մրուտ ճակատին
«Մարդասպան» բառը պետք է որ գրվի:

ԴԱՏԱՎՈՐ - Քաղաքացի Մելքոնյան,

Ֆրանսիան ծանոթ է

Պատմությանն այդ սեւ,

Հայ ժողովրդին ճանաչում է նա,

Եվ ընծայում է խոր հարգանք ու սեր,

Սակայն օրենքը մնում է օրենք,

Եվ պիտի հարգենք թե՛ դուք եւ թե՛ մենք:

ՄՈՆԹԵ - Օրենքն օրենք է, հասկանում եմ ես,

Բայց ո՞չ մոռանանք

Մեր երկրում մորթված մեր պապիկներին,

Մեր տատիկներին ինչպե՞ս մոռանանք,

Եփրատի գիրկը նետված մայրերին,

Քոյլերին մեր նուրբ մոռանանք ինչպե՞ս:

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

Դեր-Զորում ջարդված մեր մանչուկներին,
Աղջնակներին ինչպե՞ս մոռանանք:
Սորբոնի հայտնի կաճառն ավարտած
Սիամանթոյին մոռանանք ինչպե՞ս,
Մեր Վարուժանին ու մեր Զոհրապին
Ինչպե՞ս մոռանանք:
Կորուսյալ էրգիր ունենք, դատավո՞ր,
Էրգիրը մեր հին մոռանանք ինչպե՞ս...
Մեր հայրենիքից Վտարված երգը,
Մեզ տանջող Վերքը ինչպե՞ս մոռանանք:

ԴԱՏԱՎՈՐ - Պարոն Մելքոնյան...

Մեր սրտին մոտ են երգերը ձեր նուրբ,
Իմ հարեւանը Շառլ Ազնավուրն է,
Նրա երգերը սիրո թեւեր են
Ու ձեր կորուսյալ նրկրի մրմուռն է:
Իմ մորապապը, գիտե՞ս, արմենն է,
Սիրած երգչուիխս Ռոզի Արմենն է:
Յնդասպանությունը մոտ ապագայում
Ճանաչելու է ամբողջ Ֆրանսիան,
Սակայն օրենքը մնում է օրենք,
Եվ պիտի հարգենք թե՛ դու և թե՛ մենք:
Քսանչորս Ժամ է տրված ձեզ, Մոնթե՛,
Ուրիշ ելք չկա... օրենքն օրենք է:
(Պատափորը խոսքն ավարտում է, զարկում մուրճը եւ
հետանում):

Պ ա տ կ ե ր ե ր կ ր ո ր դ

(Մոնթեն նի լնկերները գտնվում են Մոնթենի մտերիմ ընկերոջ՝ Ժակի բնակարանում: Բոլորը դատարանի որոշման տպավորության տակ են):

ԺԱԿ - Մոնթեն, ախաղերս, չհուզվնա երբեք,
Մեկտեղ ենք եղել, մեկտեղ կմնանք,
Ինչ էլ պատահի
Մեր ճանապարհին,
Մեր պայքարի մեջ կդառնանք մի կամք:
Ես պատվիրել եմ ավիատոմսն արդեն,
Վաղը կճամփենք քեզ կալիֆոռնիա,
Հարազատներիդ հեռագրել եմ,
Քեզ է սպասում քո Մերն էլ հիմա:

ՄՈՆԹԵ - Ծնորհակալ եմ,
Իմ լավ ընկերներ,
Դեռ առջեւում է
Թնձ պայքարը մեր...
Գաղտնի բանակը մեր ազատակամ
Պետք է որ հասնի իր նպատակին՝
Մուրքիան իր մեղքը պիտի ճանաչի,
Մեր հարվածներից ո՞ւր պիտի փախչի:

ԺԱԿ - Ես հավատում եմ մեր ուժին, կամքին,
Կգա այն օրը,
Երբ ընկերներով
Ծուրջպար կբռնենք Վանա լճափին:

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

(Բոլորն արտահայտում են իրենց խանդավառությունը և երգում միասին ֆիդայական մի երգ: Այդ պահին ծննդում են դուրը: Ներս է մտնում ընկերներից մեկը՝ Մայքլը և բուրյարուիի Ստեղծանա Յվետանեան: Ձերմորեն ողջունում են նրանց):

ՄԱՅՔԼ - Ընկերներ, այսօր մենք շատ թանկագին հյուր ունենք, խնդրենք, ծանոթացնք (ներկայացնում է Սվետլանային: Ծանոթանում են):

Սվետլանան Փարիզ է հասել Երեսանից: Նա նղել է Արցախում, այցելել է Շահումյանի շրջան, նկարահանել հայ ֆիդայիների մղած մարտերը ադրբենջանական զավթիչների և խորհրդային բանակի ջոկատների դեմ:

(Բոլորը հետաքրքրությամբ տեղափոխվում են հետուստացույցի առջեն: Սվետլանան միացնում է կոսնտան: Յուցադրվում է ահեղ ճակատամարտը Շահումյանում):

ՍՎԵՏԼԱՆԱ - (Ֆիլմը դիտելուց հետո) Բարեկամներ,
ահա այդպիս են
ընթանում մարտերն Արցախում: Ադրբենջանական
օմօնք,
խորհրդային զինվորներին միացած,
սանձագերծել է պատերազմ

Արցախի դեմ: Արցախն օգնության կարիք ունի:

ՄՈՆԹԵ - (Տեղից վեր է թռչում և դիմում ընկերոջը): Ժակ,
ես կալիքոռնիա չեմ մենկնելու: Կզնամ Երեսան, իսկ
այնտեղից՝ Արցախ: (Ընկերներն ուրախացած ողջունում են Մոնթեին և արտահայտում իրենց գոհունակությունը):

ՍՎԵՏԼԱՆԱ - Սիրելի Մոնթե...
Արցախ գալու Ձեր վճիռը

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

Մի զինվորի քայլ չէ միայն,
Արհավիրքի այս թեժ պահին
Կամքն ես տանում ողջ Սփյուռքի:
Ես Արցախին ասել եմ՝ մայր...
Ես քնար քոյց եմ, դու ինձ՝ եղբայր:
Մարտերի մեջ անհավասար
Մեզ Արցախը ճեզ է կանչում...
(Սվետլանան միացնում է «Արցախն է կանչում» Երգը: Շիկա-
նում է մշնոլորտը):

ԺԱԿ - (Երգը լսելուց հետո մոտենում է Մոնթենին):

Մոնթեն, եղբայրս, շատ ես հոգնած: Քնի՞ր մի քիչ: Ես
կհոգամ Փարիզ- Երեւան ավիատումսի հարցը:
Քնիր, հանգստացիր: Մենք Սվետլանայի հետ
կգնանք զբոսնելու: (Գնում են):

ՄՈՆԹԵՆ - Տե՛ր Աստված, օգնիր մեզ՝ այս արհավիրքի
մեջ փրկենք մեր Արցախը:
(Մոնթեն պառկում է քննուու: Հոգնած է, քնում է: Երազի մեջ
նրան է այցելում պապը: Միասին բարձրանում են Մասիս
սարի գագաթը: Պապը ճեղքը դնում է Մոնթենի ուսին եւ ա-
սում):

ՊԱՊ - Ինչ որ տեսնում ես, քոնն է, իմ որդի,
Հիշողությանդ թող ժանգ չչոքի,
Քոնն է Տիգրիսը,
Եփրատը քոնն է,
Քոնն են Մասիսը,
Սիփանը, Սիսը...
Մշտ արտերի ծփանքը քոնն է,

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

Սուրբ Կարապետի սուրբ վանքը քոնն է,
Վանա կապուտաչ լճակը քոնն է,
Քոնն է Եւ Ղարսը, Եւ Արդահանը,
Քոնն է Եւ Անին, քոնն է Եւ Վանը,
Հայոց աշխարհի վանքերը բոլոր,
Զարդերից լռած զանգերը բոլոր,
Խաչքարերը պերճ, ամուր բերդերը,
Կապույտ աստղերին մոտիկ ծերպերը,
Երգերի օրբան Նախաջնանը հին,
Հայոց Ուտիքը, Արցախը անգին,
Բոլոր դաշտերը, լանջերը քոնն են,
Քո նախնիների կանչերը քոնն են,
Նրանց հետ, որդիս, խոսիր հայերեն,
Նրանց սրտի մեջ հոսիր հայերեն,
Նրանց պատկերը ա՛ն հոգուդ խորքում,
Եվ առանց նրանց չառնես դադար-քուն:
Մինչեւ չփրկես Հայրենիքը քո,
Չասնա, թեն թռող եմ, իմ պապի Մելքոն:
Փրկես երկիրդ, դու կառնես համբավ,
Իմ որդի Մոնթեն, քեզ քարի ճամփա:
(Մոնթեն վմբ է թշում տնիկց, նստում: Անհանգիստ է: Նորից
պառկում է ու քնում: Այս անգամ նա նրազի մեջ այցելում է Է-
րեբունի, Նրան մոտենում է Արգիշտի թագավորը՝ իր Արծիվ
անունով ձիու սանձից բռնած):

ԱՐԳԻՇՏԻ - Որդիս, կիեծնես, ինչպես արծվաճուտ,
Նժույգիս գույնը արյանդ գույնն է,
Արեւելք գնաս, գնաս արեւմուտք,

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

Հայաստանը քո պապերի բույնն է,
Նրա անունով կապրես աշխարհում,
Նրան կընծայեն ուժերդ բոլոր,
Կկոփենս նրա արենի հրում,
Կչափենս նրա անդունդները խոր,
Եվ այդ խորությամբ կպաշտեն նրան,
Այդ խորությամբ էլ կբարձրանաս վեր,
Պատգամս գրիր քո սրտի վրա,
Իմ սուրբ պատգամով միշտ կառնեն թե՛ւեր,
Կփարվենս հողին քո քաջ պապերի.
Արենի նրա խորքում է քնած,
Նա քո մայրն է սուրբ, նա՝ քո պաշտելին,
Կիհշենս խոսքս, որտեղ էլ գնաս:
(Մոնթեն այս անգամ վեր է թռչում տեղից նու սկսում է
սենյակում քայլել աջ ու ձախ նու ապա մենախոսում է).

ՄՈՆԹԵ - Ծիածանը մեր հին ազգի
Ո՞ւմ մեղերով զնդվեց այսպես,
Ազգն էլ ապրի վտարանդի՞՝,
Ծվեն-ծվեն ամպերի պես:
Պապը Սասնա սարերի ծուռ,
Թոռը՝ օտար ափի ծաղիկ,
Ճակատագիր, ինչո՞ւ նու ծուռ,
Հային տվիր արցունքն աղի:
Տոհմածառի արմատը մեր
Ալսր շա՝ տ էր, շա՝ տ էր ամուր,
Բայց մնացինք որք ու անտեր,

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

Մեր հոգում լույս, սրտում՝ մըմուռ:
Արեւելքի դրների մոտ
Հայոնել էին Երվանդունիք,
Առանց նրանց Դարենիր գոռ
Օտար հյուրեր չեր ընդունում:
Արտաշես Մեծ թագավորի
Հիմնած տունը ինչպես փլվեց,
Տիգրան Մեծը իր թենավոր
Պատգամ-փառքը ո՞ւմ պահ տվեց:
Արշակունյաց զահը հզոր
Ո՞ւմ ավանդով անվերջ սնվեց,
Ինչո՞ւ, ինչո՞ւ մեր Պատմահոր
Հավերժական «Ողբը» ծնվեց:
Տնիմածափ արմատը մեր
Ախր շաւ տ էր, շատ էր ամուր,
Նա ծառս ելավ խալիֆի դեմ,
Ու չմնաց ավեր, ամուլ:
Բազրատունիք ի մի բերին
Ծվեն-ծվեն հողերը մեր,
Մեր արծիվը թենիին տվեց,
Նոր շունչ առան ասքերը մեր...
Սակայն ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ
Արձրունիք դարձան գոռող,
Խոռվեցին Ղարս ու Սյունիք,
Չորագետը թեքվեց խոռվ,
Մի մայր երկիր, իինք թագավոր,

Բյուզանդիոնի, սելջուկի դեմ,
Աշխ, Հայաստան, վնրքնրդ խոր,
Ավերակված՝ հողդ նդեմ:
Աջից եկան, եկան ձախից,
Ավերեցին, զարկին անվերջ,
Տերն էլ չանսաց մեր ախ-վախին,
Մեծ նդեմնի դժոխքի մեջ:
Մեզ Դեր-Զորի բաժին դարձրեց
Յաթաղանի ծարավը սուր,
Եվ քայլում ենք այդ օրվանից
Մեր սրտերում՝ ցավի սարսուռ:

Պ ա տ կ ե ր ե ր բ ռ բ դ

(Ծահումյանի շրջան: Մոռվ սարի հյուակապ տեսարանը: Գյուլիստան գյուղ՝ սարի ստորոտում: Հայ ֆիդայիները դիրքնրի մեջ են: Դիմացը ազնրի հրոսակներն են՝ խորհրդային զինվորների հետ: Միասին կրակում են հայկական դիրքնրի վրա):

ՄՈՆԹԵ - Տղերք, այսօր

Մանաշիդն է մեզ սպասում,
Բաժանվում ենք երեք խմբի...
Մեկն Աշոտը պիտի վարի,
Մեկն՝ Արսենը:
Մենք դեմից, իսկ դուք՝ երկու կողմերից,
Պիտի արցանի մեջ առնենք նրանց,
Գլխովին ջարդենք,
Դեպի Մանաշիդ ու դեպի Էրքեզ

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

Ճանապարհ հարթենք,

Արծիվներ իմ քաջ,

Սարն ի վեր՝ առա՞զ:

(Հայ ֆիդայիներն ուժեղ կրակահերթով ելնում են դիրքերից՝ դիմացից, ազ ու ձախ թեներից օդակի մնջ առնում թշնամուն: Թշնամական զինվորները խուճապի մատնված՝ փախչում են ազ ու ձախ, գլխովին ոչնչացվում: Մոնթենի գլխավորությամբ հայ ֆիդայիները հասնում են քարձունք: Այնտեղ Մանաշիդ զյուղի դարավոր եկեղեցին է: Հայ ազատամարտիկները գոհունակությամբ աղոթում են, սակայն զգույշ են: Այդ պահին նրանց են մոտենում մի զնդապնտ և մի զինվոր: Գնդապնտը բարեւում է, ծանոթանում Մոնթենին և պատրաստվում հայտնվու կարենոր լուր):

ԳՆԴԱՊԵՏ - Հայոց արծիվներ, լսե՛ք ուշադիր:

Ներկայացնում եմ Լեռնային

Ղարաբաղի Պաշտպանության կոմիտեի

հրամանագիրը: (Կարդում է): «Նկատի առնելով

կարծ ժամանակարնթացքում դրսեւորած

խիզախությունն ու կազմակերպչական

զինվորական տաղանդը՝

Մոնթեն Մելքոնյանին նշանակել Մարտունու

պաշտպանական

շրջանի հրամանատար»:

(Բոլորը ոգենորված ողջունում են Մոնթենին և շնորհավորում):

ՄՈՆԹԵ - Շնորհակալ եմ ձեզնից, տղաներ,

Եղեք միշտ արի ու նշանառու,

Թշնամին նենգ է

Եվ արյունաբրու:

Նա կօպաջախվի, ինչ էլ որ անի,
Լինենք միակամ՝ ոնց մի ընտանիք,
Թե՛ս մարտերի մեջ զգանք մեր կողքին
Անդրանիկի եւ Նժդինի ողին...

(Բոլորը շրջապատում են Մոնթեին ու ջերմ վերաբեր-
մունքով հրաժեշտ տալիս):

ԳՈՐԾՈ ՂՈԽԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

Պ ա տ կ ե ր ա ռ ա զ ի ն

(Մոնթեն Մարտոնի քաղաքում է: Տնդափորված է շրջանա-
յին շտաբում: Մենակ է: Բազեն է շրջանի քարտեզը, զննում է:
Հուգված է: Մենախոսում է).

ՄՈՆԹԵ - Որդին չի նրդվում մոր սիրո առաջ.

Թող քացառություն լինի այս անգամ,
Հավատա դու ինձ, վիրավոր Արցախ,
Հեռվից քո գիրկն եմ եկել ինքնակամ:
Իմ նրակները գնտերն են քո խենթ,
Կարկառ ու Վարանդ, Խաչեն ու Թարթառ,
Իմ բաղձանքները սարերն են քո սեզ,
Արեւսար ու Քիրս, Դիզափայտ, Մոռվ:
Իմ նրազները թենիերն են հայոց,
Թենիերիս մնկը դու ես հաղթական,
Ինչ որ փրկվել է, աշխարհում Հայոց,
Իրենց գոյությամբ քեզ են պարտական:
Ով քեզ ընծայնց դաժան օտարին,

Իմ թշնամին է նաև, մայր իմ սուրբ,
Որդուդ հայտնվելը գրկում քո բարի,
Համարիր սիրո, նվիրումի տուրք:
Քո մաքառումն է գիրկդ քերել ինձ,
Եկել եմ ես իմ եղբայրների մոտ,
Քո բաղձանքները միշտ գերել են ինձ,
Իմ մեջ եղել ես ոնց կապոյտ կարոս:
Եկել եմ՝ փրկեմ երազդ անմար,
Որ հար կամարվես Մայր Հայաստանին,
Կիհնեմ քեզ հետ, կապրեմ քեզ համար,
Բախտն այս աշխարհում ինձ ուր էլ տանի:
Վրիժառու եմ, մայր իմ, իմազիր,
Երկու միլիոնի արյան սուրբ կանչով,
Մենք ինչքա՞ն ապրենք այսպես ցանուցիր,
Այսպես քզկտված ու խոր հառաչով:
Գիրկդ եմ եկել ափերից օտար,
Դարձել զավակդ՝ մաճկալաշենցի,
Որդիդ՝ քեզ պաշտպան, մայրդ՝ ինձ սատար,
Ես այս օրվանից մաճկալդ եմ զենքի:
Զինվորի նրդում ես քեզ եմ տալիս
Ու պիտի անսամ քո հրամանին,
Երբ հրամանը մորից է գալիս,
Այնտեղ անելիք չունի թշնամին:
Մայրս հեռու է, մայրություն արա,
Մայրն է տառապում զավակի զավով,
Ինձ նոր անուն ես տվել սիրառատ,
Ընդունում եմ, մայր, ինձ կոչիր՝ Ավո:

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

(Մենախոսությունից հետո ներս են մտնում մի խումբ ֆիդայիններ՝ սպայի հետ: Դրսում ժողովրդի ներկայացուցիչներ են):

- ՍՊԱ - Ժողովուրդը պահանջում է քեզ, Ավո:**
ԱՎՈ - Ի՞նչ է պատահել: (Ծոտապ քայլում է դեպի դուր:
Մի քանի կին հուզված ու տագնապած մոտենում
են նրան):
ԱՌԱՋԻՆ ԿԻՆ - Ավո, մեր որդի՝
Լսի՛ր ուշադիր.
Ամիրանլարը՝ այդ թուրքի գյուղը,
Զարիք է դարձել մեր ճանապարհին,
Ունեն թնդանոթ, գնդացիր, ական,
Կրակ են մաղում Մարտունու վրա:
ԵՐԿՈՌԴ ԿԻՆ - Տարիներ առաջ Մարտունու ծայրին
Եկան, խմբվեցին մի քանի չորսան,
Հետո թուրքերն այդ մոլուցքով վայրի
Ասեն տերերն են մեր բակի, մեր տան:
ԵՐՐՈՌԴ ԿԻՆ - Կուրոպատկինոն՝ հայկական ավան,
Դարձրին թուրքերի ավազակաբուն,
Մեր օջախներում, այգիներում մեր
Նրանց պատճառով չունենք հանգիստ, քուն:
ՉՈՐՐՈՌԴ ԿԻՆ - Դիմացի ձորում Ղարադաղլուն է,
Կրակում են հա՛, գիշեր ու ցերեկ,
Մարդասպաններ են դարձել արնախում,
Մի հայ պատանու մորթեցին երեկ:
(Լաց է լինում)
ԱՌԱՋԻՆ ԿԻՆ - Ի՞նչ անենք, Ավո, ասա՛ ո՞ւր գնանք,
Այս կրակի տակ մենք ինչպե՞ս մնանք:

ԴՐԱՄԱՑԻԿԱՍՆ ԵՐԿԵՐ

ԱՎՈ - (Հանգիստ) Իմ հարազատներ, ո՞ւր պիտի գնանք,
Ո՞ւմ պիտի թողնեք մեր լավ շենքնը,
Մեր օջախներում մենք պիտի մնանք,
Մենք Արցախինն ենք, Արցախը՝ մերը:
Պիտի բռունցքվենք՝ ճակատ ու թիկունք,
Պիտի պաշտպանենք մենք՝ ինքներս մեզ,
Արցախցին ե՞րբ է ցույց տվել թիկունք,
Դժվար օրերն այս կանցնեն ծխի պես:

ԱՌԱՋԻՆ ԿԻՆ - Ավո ջան, ճիշտ եք, կմնանք, այո:
ԵՌԿՐՈՐԴ ԿԻՆ - Ծնորհակալ ենք, մեր որդի Ավո:
ԵՌՌՈՐԴ ԿԻՆ - Եթեն հարկ լինի, մենք էլ կկովենք:
ԱԼՎԱՐԴ - Մեզ էլ զենք տվեք, մենք էլ ենք զինվոր:

Պ ա տ կ ե ր ե ր կ ր ո ր դ

(Երեկո է: Մարտունու կենտրոնում Ավոն խորհուրդներ է տալիս հայ ֆիդայիներին: Հնովում թնդանոթի պայյեյուններ են լսվում: Այդ պահին մի նրիտասարդ ֆիդայի հետին համում է խմբին նույնականացնելու պահանջում):

ԵՌԻՏԱՍԱՐԴ - (Պատիվ է տալիս Ավոյին նույնականացնելու պահանջում):

Ամիրանլարի մոտ
թուրքերը շրջապատեցին մեզ, շատ էին:
Մենք ճեղքեցինք
շրջափակումը, բայց իմ ընկերոջը՝
Կոմիտասին, գերի
տարան: Ավո, կապանեն կոմիտասին,
օգնության հասեք
(արտավում է):

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

ԱՎՈ - Տղերք, ինձ հետ... (Ծոտապում են: Վեռվից կրակողների ձայներ են լսվում: Ավոն իր խմբով մոտենում է Ամիրանլարին: Նկատվում է, որ թուրքերը խարոյի են վառել ու տաճում են կոմիտասին):

Ա. ԹՈՒՌՔ - (Դիմում է կոմիտասին).

Կոմիտա՞ս ես, թե Արմեն ես,
Մեկ է հայ ես, թշնամի,
Խնլոք պատասխանիր մեզ,
Թե չէ այստեղ, այս ժամին,
Այս թեժացած խարոյկում
Քեզ կվառնք կենդանի:

Բ. ԹՈՒՌՔ - Կարաբախ քիմինդի՞ր, ա~...

Գլուխ չես ընկո՞ւմ, վախկոտ նապաստակ,
Ղարաբաղը ո՞ւմն է, ասա՞:

**ԿՈՄԻՏԱՍ - (Կամարձակ) Դա ի՞նչ հարց է, որ տալիս եք,
Դուք էլ գիտեք, որ հայինն է**

Ղարաբաղը,
Մե՞րն է, մե՞րը Ղարաբաղը...

**Ա. ԹՈՒՌՔ - Դուք եկվոր եք, լավ իմացեք,
Թուրքերինն է Ղարաբաղը:**

ԿՈՄԻՏԱՍ - Ոչ, ձերը չէ, սա մեր հողն է,
Տունն ու տնին է մեր պապերի,
Վկան՝ հայոց գիր ու բարն է,-
Ամարասի սուրբ պատերին:
Գանձասարն է, Դադիվանքն է,
Գտչավանքն է հազարամյա:
(Թուրքերը հոկտում են ձեռ առնելու պես):

ԴՐԱՄԱՑԻԿԱԿԱՆ ԵՐԿԵՐ

Գ. ԹՈՒՐՉ - Ես լավ գիտեմ այդ հայ գյաղին,
Մուալիմ է նա պատմության...
(Մոտենում է քծնանքով).
Ադա, Կոմիտաս, քնզ չեն ննրի,
Թեկուզ տղան ես Արսեն դայու։
(Ձեռքը շողոքորթաբար դնում է Կոմիտասի ուսին).
Ասա՝ ձերն է Ղարաբաղը,
Զերն է՝ դուք էլ դեկավարնք,
Թե՛ չէ, գիտե՞ս,
Խարույկի մնջ կվառեն քնզ։

ԿՈՄԻՏԱՍ - (Աներնը) Ղարաբաղը մնրն է նդեն,
Մեր օջախն էլ ախտի մնա,
Ես էլ քնզ լավ գիտեմ, Մամնի,
Դու էլ գողն ես մեր պատմության։

Ա. ԹՈՒՐՉ - Դե, հերիք է, հայի՛ գյաղա,
(Դիմում է ընկերներին).
Պատմությունը կեղծում է դա.
(Թուրքավարի բնրանը ծովոնելով ասում է).
Արա, ա գիծ էրմանի, ըշխարքավս Մին ըք
ըրալ, վեր Ղարսն էլ ա
զերը, Վանն ալ, Արարադ սարն ալ։ Բա վեր
զերն ա, խե՞ զեր զեռքեն
չի, հը՞։ Միննագ էլ ասըմ ըք՝ Ղարաբաղն ա մնը։
Ամեն մինըդ դնուալ
ըք մին Վազգեն քաթողիքոս, մին նասինալիստ
Զորի Բալայան։

ԴՐԱՄԱՑԻԿԱՍԱՆ ԵՐԿԵՐ

Մինազ էլ, ասրմբն, Ամերիկայից ոք մի իմպորտնի
հայ քնրա՞լ,

անըմբն էլ փոխալ, դիրալ Ավո: Արա, էդ հյո՞ւր ոք
վըսրցնում, դուք

գյուղում չը՞ք, վեր ամեն մի թորք մին Քյոռօղի ա:
(Դիմում է ընկերներին).

Հերիք է, սրան խարույկը նետեր...

(Նորից է մոտենում կոմիտասին).

Մոռացել եք Շուշվա դասը.

Բարվի դասը, Սումգայիթի...

(Դիմում է ընկերներին).

Շտապնցեք, իմ ասկյարնե՞ր,

Լավ դաս տվե՞ք այս գիծ հային...

(Թուրքերը իրենով կոմիտասին, մոտենում են խարույկին:

«Ենց այդ պահին հայ ֆիդայիները Ավոյի գլխավորությամբ
վրա են հասնում, ավտոմատներով ոչնչացնում թուրք հրո-
սակներին, ազատում կոմիտասին»):

ԱՎՈ - (Խանդադատանքով).

Ապրե՞ս, Արսեն դայու որդի,

Ղարաբաղը, այո, մերն է,

Պետք է հավերժ մերն էլ մնա,

Բայց խարույկն այս թող դաս լինի,

Զգույշ լինենք, չհավատանք

մեր թշնամուն,

Մաքրենք հողը մեր հայրենի...

«Կիշենք խորհուրդը Ավետարանի.

«Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման»:

Պ ա տ կ ե ր ե ր բ ռ բ դ

(Ուրյան սարի տեսարանն է՝ դեմք հայկական գյուղերի պատկերներ: Սարի գագաթից կրակում են ազերի-թուրքները: Ստորոտում հայ ֆիդայինների ջոկատն է՝ Ավոյի հրամանատարությամբ):

ԱՎՈ - (Դիմում է ֆիդայիններին).

Պետք է, տղերը, հենց այս գիշեր
Վերցնել բարձունքն Ուրյան սարի,
Եթեն թողնենք թուրքի ձեռքին,
Ողջ Մարտունին նա կվարի:
Թվով շատ է մեր թշնամին,
Բայց կցնդվի, ինչպես քամի,
Մեկս տասի դեմ կկռվենք,
Հաղթանակը մեր կկռնեք:
Նրանք սարի գլխին թառել,
Մեր գյուղերն են նշան առել,
Ունեն եւ տանկ, եւ թնդանոթ,
Ականանետ,
Նոնականետ,
Բայց կլինենք խնդ ու մոլոր,
Թե՞ չլինենք զենքերն այդ նոր:
(Գրապանից հանում է պլանը, խորհուրդներ տալիս զինվորներին, խրախուսում).
Հենց այս բացվող արշալոյսին,
Պիտի լինենք սարի ուսին:
(Զոկատը ենում է սարն ի վեր: Թնժանում են կրակոցները:
Ավոն հորդորում է զինվորներին).

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

Որ թշնամին ուշքի չգա,
Արագ ելեք, ելեք թափով,
Մեր հարվածը պիտի զգան
Զավթիչները սարի վրա...

Որ բարձունքում ուշքի չգան,
Թափով ելեք, ելեք արագ:

(Թափով ելնում են հայ ազատամարտիկները, մոտենում սարի գագաթին: Կրակոցներն ուժգնանում են: Մշնամու գնդակից վիրավորվում է մի հայ ֆիդայի: Ընկերը դժվարությամբ իջնցնում է սարից: Ավոյականները կրակի տարափի տակ հակահարված հասցնելով, շրջապատում են սարի գագաթը, շուրջկալ անում թուրք կռվողներին: Գետնին տապալված են մի քանի ազերի զավթիչներ: Գերված թուրքներից մեկն առաջ է զալիս).

Ա. ԹՌԻՌՔ - Մեզ խնայեցնք...

ԱՎՈ - Դուք խնայո՞ւմ եք:

Բ. ԹՌԻՌՔ - (Լրբորեն). Այդ ի՞նչ եք ասում,
Ինչո՞ւ խնայենք եւ հանուն ինչի՞...

Եկել եք, տիրել մեր հողին, ինչքին...

ԱՎՈ - (Զարմացած).

Կորցրել եք, այո, թե՛ խիդ, թե՛ հոգի,

Ի՞նչ ես բարբաջում, տո շուն-շան որդի:

Բ. ԹՌԻՌՔ - Ղարաբաղում մերն է տուն-տեղ,
Հին վանքները թուրքն է կերտել,
Եկեղեցում թուրքն է երգել,
Թուրք է Դավթակ բանաստեղծը,
Թուրք է պատմիչ Գանձակնեցին,

ԴՐԱՄԱՑԻԿԱԿԱՆ ԵՐԿԵՐ

Մերն են բոլոր խաչքարերը,
Կամուրջները կամարակուտ,
Մերն են հին ու նոր դարերը,
Եվ դարավոր վաճք ու մատութ:

ԱՎՈ - (Քահ-քահ ծիծաղում է).

Տն, շան որդի,
Յնորվա՞ծ ես, թե՞ խելազար,
Ստիխ շորենի հագցրել դորթի,
Զարմացնում ես մի ողջ աշխարհ:
(Ավոյի մոտ բորբոքված է կոմիտասը).

ԿՈՄԻՏԱՍ - Տն, շան որդի,
Պապիս տունն ու տեղը հայ է,
Շիրիմը հայ, խաչքարը՝ հայ,
Սրբավայրն ու մատուռը՝ հայ,
Աղքրի ակը ու գուոր հայ,
Պատի հիմքում պատգամը հայ,
Կալի ե՛ւ թին, ե՛ւ կամը՝ հայ,
Պապենական խոսքը արդար,
Ե՛վ հայերեն, ե՛ւ հայատառ,
Ամարասի պատերը կուտ,
Հայերեն են խոսում դարեր,
Հայերեն են աղոթք կարդում,
Գտշավանքի վեմ ու քարեր,
Հայերեն են միշտ զրուցում
Գանձասարի պատերը սեղ,
Հայերենն է իր մատուցում
Դադիվանքը՝ ինչպես մի քնրդ:

ԴՐԱՄԱՑԻԿԱԿԱՆ ԵՐԿԵՐ

ԱՎՈ

- (Դիմում է թուրքին).
Մոգոնում ես դու, շան որդի,
Ծոռում ես քո կնդտու հոգին,
Պատմությունն եք մեր զողանում,
Անցյալ չունեք դուք Արցախում:
Վերցրու քրիչ, բահ եւ ուրագ,
Վեր կաց մի օր, գնա Թուրան,
Փնտրիր գանգը Ալփ-Արալանի,
Որ ավերեց Ղարսն ու Անին,
Լենկ-Թենմուրին փնտրիր այնտեղ,
Որ ծնվել է՝ ոնց մկնդեղ,
Եվ ավերել ու ավարել,
Վարպետներին քշել-տարել,
Դարձած անգդ, դարձած հովագ,
Իրար խառնել հունդ ու ավագ:

ԿՈՄԻՏԱՍՈՒ - (Թուրքին). Գնա Միջին Ասիա, գնա,
Այնտեղ հարցրու քո անցյալից,
Ի՞նչ եք ուզում մեր մանանա
Մեր սրբատուն լեռնաշխարհց:

ԱՎՈ - (Թուրքին). Մենք եք արել խոսքերը ձեր,
Թե՛ պատմաբան, թե՛ բանաստեղծ,
Թե՛ նենգամիտ պրեզիդենտ,
Թե՛ գեներալ՝ պոռտախոս,
Հա՛ գրում եք, գոռում, գոչում,
Իբր՝ ձերն է Ղարաբաղը...
(Ավոն դիմում է ազատամարտիկներին).

ԴՐԱՄԱՑԻԿԱՍՆ ԵՐԿԵՐ

Սրանց տարեք, տարեք շտաբ,
Թող որ դատվեն ըստ օրենքի...

(Ազատամարտիկները եւ Ավոն գերիներին քշելով ուղղվում են դեպի Մարտունի: Ճանապարհին կանգ են առնում քիչ հանգստանալու: Ավոն նայում է շուրջը, Արցախի լեռներին ու զյուղերին եւ տառում).

Լավ լսեք, իմ արծիվներ,
Արցախը թանկ հողն է մեր,

Դպրոցը ու դասը մեր:

Այս կովում ազգը հայոց

Արցախը եթե զիջի,

Հայոցը դարձրած վայոց,

Կփակի էջն իր վերջին:

(Ազատամարտիկները ոգեշնչված արձագանքում են).

Մեր կյանքը կտանք, Ավո՛,

Արցախը չենք տա երբեք...

Արցախը չենք տա երբեք...

Արցախը չենք տա երբեք...

(Ծարունակում են քայլել դեպի Մարտունի):

Պ ա տ կ ե ր չ ո ր բ ո ր դ

(Ֆիզուլի քաղաքի տեսարանը: Քաղաքի մուտքի մոտ՝ մի քարձունքի, ազերիներն են՝ երկու գնդապետների գլխավորությամբ: Թուրքերը զինված են տանկերով, գրադերով, ավտոմատներով, գենքի ժամանակակից այլ տեսակներով:)

ԳՆԴԱՊԵՏ ԱԼԻ - (Դիմում է իր զորագնդին).

Իմ քյոողիներ, դոչիներ իմ քաջ,

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

Բարձունքին այս, որ կա մեր ոտքերի տակ,
Թաղված է հայի մի եկեղեցի...

Մեր քաջ պատճռն են թաղնլ, իմացեք,
Որ սելջուկ մնանք մենք միշտ, ամենուր,
Պիտի ջարդուենք թե՛ վանք, թե՛ մատուռ,
Պիտի վերացնենք տառերը հայի,

Որ էլ չսոսնն դարերը հայի:
ԳՆԴԱՊԵՏ ՀԱԶԻ - Այո, Սելջուկի թոռներն ենք
լսիզախ,

Մեր արտում չկա ոչ սարսափ, ոչ՝ վախ:

Մեր երակներում արյունն է գորշ գայլի:

Պետք է վերացնենք հետքերը հայի.

Մեր Ղարաբաղը դարձրել են Արցախ,

Իբր թե՛ չունեն ոչ ահ ու ոչ՝ վախ:

Մենք այսօր պիտի հասնենք Խանքենդի,

Մալսմար չայ խմենք, խմենք Բրենդի:

ԳՆԴԱՊԵՏ ԱԼԻ - Մաճկալաշենք պիտի գրավենք

Ու կարմիր շուկա մտնենք կեսօրին,

Սակայն, իմ քաջեր, այդ ճամփի վրա

Սպասում է մեզ զորքը Ավոյի,

Ավոյին գիտենք, նա շատ է հմուտ,

Նրա դեմ պետք է մենք լինենք անզութ:

Մենք շատ ենք ուժեղ,

Մեր տաճկերի դեմ, գրադների դեմ

Ավոյի զորքը կդառնա մժեղ:

Տղերք, իմացեք, որ լնոան ուսին

Մեզ սպասում է մեր անգին Շուշին:

ԳՆԴԱՊԵՏ ՀԱԶԻ - Ավոն ունի միայն մի տաճկ,

Մի թնդանոթ, մի բետէր,

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

ԹՇն դարնա էլ կայծակ ու շաճք,
Տեղովը մեկ դարնա վասող,
Ոչինչ անել մեզ չի կարող:

ԳՆԴԱՊԵՏ ԱԼԻ - (Գոռող) Ծղթայակապ ու լրիվ մերկ,
Ավոյին կտանենք Ստեփանակերտ,
Որ արյան մեջ վերջին հայի
Խելագարի նման պարի:

ԳՆԴԱՊԵՏ ՀԱԶԻ - Նա դեռ մեր ուժը չի տեսնի, խամ է,
Նրա արյունը (թաթենրը բռունցքում է) այսպես
կքամենք...

(Քաջին եւ Ալին հրամայում են զորքին: Շարժվում են դեպի
Մաճկալաշեն: Դղրդում է զինված զորքի շարասյունը):

Պ ա տ կ ե ր հ ի ն գ ե ր ո ր դ

(Մաճկալաշեն... Գյուղամերձ ճանապարի: Հայկական դիր-
քերն են: Ավոն շրջում է դիրքից դիրք: Ֆիդայիները տոկուն են,
անվախ):

ԱՎՈ - Արթո՛ւր, ախապերս,
Դիառուկ կլսինք հրասայլերին,
Պետք է որ փակենք այս ճանապարիլ,
Նրանց տանկերը պիտի գրավենք
Եվ մերը դարձնենք զենքի ավարը:

ԱՐԹՈՒՐ - Հանգիստ եղիր, Ավո՛,
Նրանց հախիցը կգանք,
Մոխիրը քամուն կտանք:

(Քիչ անց Ավոյի զորագնդին է մոտենում ազերական զորքը:
Սկսվում է ճակատամարտը: Հայ ազատամարտիկները դի-
պուկ կրակոցներով կանգնեցնում են թշնամական զորքի ա-

ԴՐԱՄԱՑԻԿԱԿԱՆ ԵՐԿԵՐ

ոաջընթացը: Ակսվում է դաժան գոտեմարտ: Ազերիները խուճապահար նահանջում են՝ դիմելով փախուստի: Հայ ատազամարտիկները հետապնդում են նրանց: Գնտնին են թափալփում թշնամիները: Արթուրը կրակ է կտրել: Խփում է աջ ու ձախ: Թշնամու զնդակից անսպասելիորեն զռիփում է մաճկալաշենցի Արթուրը: Ավոն քրտնաթոր ու հուզված՝ զռիյալի մոտ է: Գյուղից դեպի զինվորներն ու Ավոն են զալիս ծերեր, կանայք, երեխաներ: Զոհյալի մայրը լացելով փարփում է որդուն: Արթուրին է մոտենում նաև կինը՝ Նվարդը: Նա լացում է զուսպ ու թախծուու: Քիչ անց Նվարդը դիմում է ներկաներին).

ՆՎԱՐԴ - Մի՛ լացեք, մայրենք, քույրենք, մի՛ լացեք,

Թողեք ես լացեմ Արթուրի համար,
Ես սպասում եմ մեր նոր Արթուրին,
Աշխարհ կրենք նրան այս ամառ:
Նրան Արթուրի անունը կտամ,
Եվ նա կրառնա իր հոր պես՝ Արթուր,
Գրքի հետ նրա ձեռքին կդնեմ
Իր հոր վրեժով կոփված Սասնա թուր...
Իսկ հիմա, Ավո՛,
Ի՞նձ էլ համարենք ֆիդայի-զինվոր,
Ինձ հրազենը տվեք Արթուրիս,
Ես իմ վրեժը պի՛տ լուծեմ թուրքից:
(Բոլորը հուզված են: Ավոն խոհենի մեջ է: Խանդադատնորվ դիմում է Նվարդին).

ԱՎՈ - Ի՞մ անզին քույրիկ,

Քո խոսքով դու մեզ տվիր նոր թենենք,
Ներիք, որ զգույշ չեղանք մարտի մեջ,
Կորցրինք Արթուրին, նա զահ էր անշեց,
Նա իր ջոկատի ոգին էր, ուժը,
Նա էր միշտ հանում մեր սրտի փուշը...
Մաճկալաշենցի իմ լա՛վ ծնողներ,

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

Դուք նք պարզենի անունն իմ՝ Ավո,
Ես զավակն եմ ձեր, ձեր զինվոր որդին,
Արթուրի վրեժը կլուծեն, այո...
Իսկ դու, Նվարդիկ,
Ուսուցչուի նս, դասդ կվարենս,
Պատանիների ազնիկ սրտերում
Յասման, վրեժի հուրը կվառեն,
Դեռ առջեւում է կրիվը մեր թենժ,
Դադիվանքը դեռ սպասում է մեզ...
(Զինվորները մոտենում են Արթուրին, իրազենների վրա դնում
նրան նև սգո թափորով ուղղվում դեպի գյուղ: Արեւը դանդաղ
սարից սահում է վար: Իշխում է խորհրդավոր նրենքն):

Գ Ո Ր Ծ Ո Ղ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ե Ր Ո Ր Դ

Պ ա տ կ ե ր ա ռ ա զ ի ն

(Ժարթառ գնտող անտառապատ ժայռնեն ափերով: Ավոն
իր մարտիկների հետ գնտափին է: Հնովում երեւում են
Դադիվանքի խաչազարդ գմբեթները: Ավոն կարտով
նայում է Դադիվանքի կողմը, դիմում զինվորներին).

ԱՎՈ - Ի՞մ արծիվներ...

Կռվում չամիչ չեն քածանում,
Կռվում գնդակներն են պարում,
Մահը կռվում քեֆ է անում,
Չի կշտանում, չի ալարում
Պիտի կռվնաք առանց զոհի,
Ամեն մենք սյուն է մի տան,
Ամեն մենք թենժ գրոհի
Ոզին է նև հույսի ճամփան,

ԴՐԱՄԱՑԻԿԱԿԱՆ ԵՐԿԵՐ

(Գունդը բարձրանում է Թարթառի ափն ի վեր: Առջնից
Ավոն է: Նրան է դիմում կոմիտասը).

ԿՈՄԻՏԱՍ - Թոյլ տուր, Ավո՛,
Իմ նոր գրած երգը կարդամ:

ԱՎՈ - Հաճելի է, կարդա լսենք...

ԿՈՄԻՏԱՍ - (Կարդում է ոգեւորված).

Իմ Զրաբերդ,
Հոգուս մեջ ես եւ իմ երգում...
Դու մեզ համար սովորական
Մի տարածք չես, դու հայրենի
Մեր օջախն ես՝ բիբլիական,
Դու լեզո՞ւ ես մեր մայրենի,
Ես զգում եմ սիրտը հողիդ,
Ու զրուցում կարոտանքով,
Ամեն մի թիզ հողիդ համար
Չեմ խնայի կյանքս ջահել,
Դու Արցախի վեմ ու կամար,
Դու Արցախի հզոր թեներ...

ԱՎՈ - Ապրես, իրոք, բանաստեղծ ես -
Երկրի զինվոր, երգի զինվոր,
Երք մեկտեղ են զնդակ ու երգ,
Մենք կհաղթենք ամենուրեք...
(Այդ պահին ազերական մի խումբ թվերի հետեւից կրակ
է բացում: Ավոյի գունդը նետվում է մարտի: Ազ ու ձախից
ազատամարտիկները շրջապատում են ու ոչչագնում թշ-
նամուն: Ծարունակում են վերելքի ճամփան: Մոտենում
են Դադիվանքին եւ քիչ կանգ առնում հանգստանալու):

ԿՈՄԻՏԱՍ - (Ժպտարեմ ու ոգեշնչված).

Ավո, երեկ զիշեր, դադարի ժամին

ԴՐԱՄԱՑԻԿԱԿԱՆ ԵՐԿԵՐ

Մի երգ եմ զրել մեր վանքի մասին,
Մեր Դադիվանքի՝
Մեր անզյալ փառքի,
Մեր ծով կարոտի...

ԱՎՈ - Կարդա, կոմիտա՞ս,
Խաչքարերն անգամ երգդ կլսեն:
ԿՈՄԻՏԱՍՈ - Դադիվանքն իմ հրաշք՝
Խաչի պապիս հոգին,
Դարձել է մի երազ,
Թեկուզ մեր տան կողքին:

Գնամ՝ զրերը հին
Կարդամ իմ շուրջերով,
Խաչքարերի փոշին
Սրբնմ իմ մատներով:

Որ նորից-նոր դառնա
Մեր սուրբ ուխտատեղին,
Ինչքա՞ն անտեր մնա
Մոլուցքի մեջ դեղին:

Մեր արարող մտքի
Բացված թեներն է նա,
Մեր դարավոր խղճի
Մետաքս թեներն է նա:

Մեր լեզվով է խոսում,
Աղթում մեր լեզվով,
Մեր սրտով է հնում,
Խորիում մեր նրազով:

ԴՐԱՄԱՑԻԿԱԿԱՆ ԵՐԿԵՐ

Գնամ փարվեմ նրա
Գերված քիվ ու նախշին,
Առնեմ սրտիս վրա
Խաչքարերի փոշին:

ԱՎՈ - (Ուրախ). Ապրե՞ս, կոմիտա՞ս,

Դու պընտ ես՝ կյանքի,
Ծուտով մենք կփարվենք
Մեր սուրբ Դադիվանքին:

(Զինվորները ոգենորված են: Ոգենորում են կոմիտասին:
Մի զինվոր խնդրում է նրան, որ բանաստեղծությունը տա՝
արտագրելու: Կոմիտասը նրան է տալիս երգը եւ խնդրում).

ԿՈՄԻՏԱՍ - Արտագրիր, վերադարձրու:

ԶԻՆՎՈՐ - Լավ, կոմիտա՞ս,
Անգիր պիտի անեմ երգը,
Դա լոկ նրգ չէ, այլ մեր վերքը...

Պ ա տ կ ե ր ե ր կ ր ո ր դ

(Գունդը Դադիվանքի մոտենքում է: Ավոն տանում է դեպի
սրբատեղին: Մոտենալուն պես ազերիները մարտի մեջ են
մտնում: Մարտը թեժանում է: Ազատամարտիկներն անց-
նում են առաջ, շրջապատում վանքը եւ զգոյշ մոտենում
համալիրին: Կոմիտասը վանքի խաչագարդ դուրը տեսնե-
լուն պես չի համբերում, վագրով մոտենում է ու սկսում
կարդալ վիմագիրը: Դարան մտած թուրքը կրակում է
հրազենից: Զոհվում է կոմիտասը... Ավոն ու ազատամար-
տիկները տագնապահար ու զնումով վազում են, գերում
թուրքին: Ֆիդայիները կոմիտասին դուրս են բերում վան-
քի դռան մոտից ու պաղեցնում մուտքի մոտ):

ԴՐԱՄԱՑԻԿԱԿԱՆ ԵՐԿԵՐ

ԱՎՈ - Ինչպե՞ս պատահեց, այս ինչո՞ւ եղավ

Ասել եմ ձեզ չէ՞, որ զգույշ լինեք...

(Բոլորը գլխիկոր սգում են: Զինվորը, որ Կոմիտասից վերցրել էր բանաստեղծությունը, գրպանից հանում է, արտասվելով շոյում ու մոտենում Ավոյին).

ԶԻՆՎՈՐ - Ավո, Կոմիտասի

«Դադիվանք» երգն է...

Այն քեզ եմ հանձնում,

Որ պահեն մոտոդ,

Այն Կոմիտասի շունչն է պահում տաք,

Պահիր հիշատակ:

ԱՎՈ - (Վերցնում է, բացում կարոտով ու ափսոսանքով

նայում, ծալում ու զրովանքով դնում գրպանը: Ապա դիմում է երկու զինվորի:

Զանգել եմ, շուտով մերենան կգա,

Որ Կոմիտասին հասցնեն հոսպիտալ,

Այնտեղից պիտի իրենց զյուղ տանեն,

Ինչպես հերոսի՝ պահ տան մայր հողին...

(Ապա դիմում է զինվորներին).

Տղայք, լսեք ինչ եմ ձեզ ասում,

Քարվաճառն է մեզ սպասում,

Կենտրոնացված ուժերը մեր

Մոտեցել են Քարվաճառին:

Հենց այս զիշեր պիտի փրկենք

Մեզնից խլած քաղաքը մեր,

Այն խլել է թշնամին չար,

Ու մեր հայոց Քարվաճառը

Դարձրել լեզվով իր՝ Քյալքաջար:

Պատկեր երբոքդ

(Զինվորները պատրաստ են նետվելու մարտի: Հետեւում են Ավոյին՝ դեպի Քարվաճառ: Քաղաքին մոտենալուն պես քաղաքի երեք կողմից հայ ազատամարտիկների կողմից հրաձգությունը թնժանում է: Կրիվը շահում են հայ ազատամարտիկները: Քաղաքի կենտրոնում Ավոյին ողջունում են Գորիսի և Ստեփանակերտի պաշտպանական շրջանների հրամանատարները: Հաղթանակի զնություն է: Գորիսի ներկայացուցիչը՝ Մմբատը, առաջ է գալիս և ողջունում Ավոյին).

ԱՄԲԱՏ - Ավո, նղբայր, ուրախ եմ շատ,

Որ հենց այստեղ հանդիպեցինք,
Դու Սփյուռքից, ես՝ Գորիսից,
Իսկ Արամը՝ Մարտակերտից,
Հաղթանակը մեր այսօրվա
Խորհուրդն է մեր միասնության,
Մեծ Զարենցի խորհուրդն է թանկ.
«Ո՞վ հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը
Քո հավաքական ուժի մեջ է»:

ԱՎՈ - Իմաստո՞ւն խորհուրդ է, որ պետք է հիշենք,
Ուր էլ որ լինենք...
Ակսր, տանու ենք տվել դարերում,
Ինչպես հայաշունչ մեր այս սարերում.
Այս ինչպե՞ս են սուր սնապ խրեն՝
Հայոց հողի ու սրտի մեջ,
Մեր շենքները մեզնից լսեն,
Հանգցրեն են զահերն անշենց,
Դարձած դաժան մի կեղեքիչ,

ԴՐԱՄԱՑԻԿԱԿԱՆ ԵՐԿԵՐ

Գողացնի են զիր ու մատյան,
Զարդնի վանք ու նկեղեցի,
Ոչ դատ զիտեն, ոչ էլ ատյան...
Ուր նայում ես՝ հայոց մատուռ,
Հայոց գրեր ու հայոց վանք,
Հողի խորքում կարաս ու խաչ,
Հայոց երազ ու անրջանք:
Նա մեր շունչն է, նա՝ մեր ոգին,
Իսկ մենք՝ նրա զինվոր որդին:
(Սմբատը, Ավոն, Արամը ու Էլի սպաներ խմբվում են:
Մեջտեղում Ավոն է: Հաղթանակի զնծություն է):

Պ ա տ կ ե ր չ ո ր բ ո ր դ

(Մարտունի: Շոտաք: Ավոն Մտքերի հետ է: Սպասում է:
Դուռը ծեծում են: Բացում է: Ներս է մտնում սիրած աղջի-
կը՝ Մենան: Գրկախառնվում են կարոտով, գորովալից...).

ՄՈՆԹԵ - Այնպես լիներ, լիներ այնպես,

Որ խորանվեր հոգիս քո դեմ,
Սիրտս քեզ հետ մտներ եղեմ
Ու մատադեմ զառնուկի պես:

ՄԵԴԱ - Այնպես լիներ, լիներ այնպես,

Որ բուրվառվեր հոգիս քո դեմ,
Որ լուս վառվեր հոգիս քո դեմ
Ու խնկարկեր իմ սիրո պես:

ՄՈՆԹԵ - Այնպես լիներ, լիներ այնպես,

Որ արեներ տենչս ճամփիդ,
Թեներ առներ սիրտս ափիդ,
Քո երազած թռչունի պես:

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

ՄԵԴԱ - Այնպես լիներ, լիներ այնպես,
Որ հուր դառնար սիրտս ափիդ,
Որ ջուր դառնար կյանքս ճամփիդ,
Քո նրազած աղբյուրի պես:

ՄՈՆԹԵ - Այնպես լիներ, լիներ այնպես,
Որ դառնայի նրազը քո,
Որ դառնայի մուրազը քո,
Մեր թագավիր Արայի պես:

ՄԵԴԱ - Այնպես լիներ, լիներ այնպես,
Հերքիաթվնի քո սրտի մեջ,
Միշտ ծաղկնի քո գրկի մեջ,
Մեր թագուհի Նվարդի պես:

ՄՈՆԹԵ - Այնպես լիներ, լիներ այնպես,
Գիրկդ գայի՝ դարձած Մասիս,
Դարձած Մոռվ ու դարձած Քիրս,
Բոլոր գերված սարենրի պես:

ՄԵԴԱ - Այնպես լիներ, լիներ այնպես,
Որ դառնայի ուժը բազկիդ,
Մատյաններում հուշը փառփիդ,
Սասնա Խանդութ խաթունի պես:

ՄՈՆԹԵ - Այնպես լիներ, լիներ այնպես,
Որ ձուլվնինք հայոց շողին,
Որ ձուլվնինք հայոց հողին՝
Սրբանվնի զոհենրի պես:

ՄԵԴԱ - Քոնն եմ, դու իմ Աղբյուր-Սնբոր,
Իմ զորապետ, իմ Արեն - Սնբ...

ՄՈՆԹԵ - Արցախի մեջ դարձած Ավո,
Ես էլ քոնն եմ, դու իմ Սոսե...

Պ ա տ կ ե ր հ ի ն գ ե ր ո ր դ

(Աղքամի հարավային մասում բլուր, շուրջը հասուն արտեր: Ամառ է: Դիրքերում հայ ազատամարտիկներն են: Կենտրոնում Ավոն է: Մոտը սպաներ Սմբատն ու Արամն են: Ավոն հնոտադիտակով դիտում է, հետոն: Երեսում է Աղդամը, ուր ազերիների շարապունն է: Ավոն ձեռքը դնում է Արամի ուսին եւ ատում).

ԱՎՈ - Քանի՝ տարի է՝ գալիս են, գալիս,
Բաղիրով փաշան - հրացաններով,
Վեզիրով փաշան - ավտոմատներով,
Մութալիբով փաշան - գնդացիրներով,
Էլչիբեյ փաշան - ինքնաթիռներով,
Ալին փաշան - նոր հրթիռներով,
Եվ ամեն մեկը երազ ուներ մի՝
Որ Ստովանակերտում մայսմար չայ խմի:

ԱՐԱՄ - Յոթ միլիոնի անունից՝ գոռող-բազրերան,
Դագանակով, մտրակով քշեցին բնիրան
Հազար-հազար ազերի՝ բնողը նոր ծլած,
Հազար-հազար ազերի՝ քունքերը չլած,
Հազար-հազար ազերի՝ չոշումների տեր,
Հազար-հազար ազերի՝ օջախը անտեր,
Հազար-հազար ազերի՝ արտը նոր վարած,
Հազար-հազար ազերի՝ հովիվ, զառնարած...

ԱՄԲԱՏ-Ազգությունը շուր տված, հազար-հազար քուրդ,
Իքք Ազարբայջանի մեծության խորհուրդ,
Քուրդը քիչ էր, քշեցին լեզգի ու թալիշ,
Որ նոր էին աչք բացում եւ ուշքի գալիս:

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

Անցան Իրան ու Թուրքան եւ օրենքով իին
Գնեցին ու քշեցին անթիվ մոջահեղ,
Որ ազերու հետդարձի ճամփան պատնեշեն,
Գնդակի տակ փախչողին գնդակով պատժեն:

ԱՐԱՄ - Հնտու առան ու բերին գանձերով հնչուն,
Հազար-հազար շիկահեր փորձված օդաչու...
ԱՎՈ - Գններալներ օսմանյան, ինգլիզ եւ ռուս,
Այդ ամենը տեսնում է աշխարհն աննամուս...

ՍՄԲԱՏ - Ու ելան, ելան ու ելան անվերջ,
Հայորդիները՝ սրտում մի վառ տենչ,
Ելան, ելան, ելան ցասմամբ,
Մի վճիռվ, դարձած մի կամք.
Նժդեհի թոռ քաջ Սամվելը,
Թեժ Սեյրանը, Արջ Մանվելը,
Սուրբ Բենկորը, Ժայռ Տիգրանը,
Գայլ Խորենը, Սեւ Միհրանը,
Գրադ Ժորան, Գնդակ Վաշոն...
Արեւ Արան, Հրթիռ Խաչոն,
Թուր Մհերը, Արծիվ Բենոն,
Բազե Սոսը, Աստղ Հենոն,
Հոյս Մուրադը, Հմուտ Վիտոն,
Լոյս Վիգենը, Սարսափ Պետոն,
Միրութ Սեմը, Թուլս Կարմենը,
Կրակ Յուրին, Խենթ Արմենը,
Ծուռ Վազգենը, Կաղնի Դավոն...
ԱՐԱՄ (Ձեռքը մեկնում է Ավոյին).
Իմաստուն ու կտրիճ Ավոն,

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

Ելան, ելան թշնամու դեմ,

Որ Արցախսա հողը փրկեն:

ԱՎՈ - Ճիշտ նք, տղայք, մեր Արցախը

Պիտի փրկենք...

(Մի պահ զգուշանում է, դիմում Արամին)

Արամ, նայիր՝ Մարգիլուից

Շարասյունն է ելնում տանկի,

Պետք է դիմենք համազարկի:

(Դիմում է ջռկատին).

Պետք է Մարգիլու զյուղի ճակատին

Առաջինն իջնի մեր հատու թուրը:

Նրանց տանկերը պիտ շարքից հանենք,

Հետո շուրջկալենք հետեւակներին,

Բնակիչ չկա, կրակ կցանք,

Գլուխներին չար ավազակների:

(Ավոն բացականչում է).

Առա՞ջ...

(Նետպում է առաջ: Գունդը հետեւից ալանում է:

Թեժանում է կրիվը, թշնամու տանկերը վառվում են:

Ավոն ճշում է ուրախությունից).

Կրակել այդպես, թո՞ղ այրվի հիմքից,

Բունն այս շարադրտ նու տրվի քամուն:

(Այդ պահին Արամի ու Սմբատի գլխավորությամբ հայ

ազատամարտիկներից մի խումբ մխրճվում է կռվի

խորքը նու շրջափակվում թշնամու կողմից: Արամը

ուղիղութեապով հասցնում է հաղորդել).

Ավո՛, լսո՞ւմ ես, օգնությո՞ւն է պետք:

(Ավոն խում է նու դիմում զինվորներին).

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

ԱՎՈ - Տղաներ, առաջ, իմ հետեւից...

(Հայ ազատամարտիկները Ավոյի դնկավարությամբ շրջապատում են թշնամուն, ոչնչացնում նրան, ազատազրում ընկերներին: Սակայն մոտակա մի դիրքից ազերի հրոսակը կրակում է դեպի Ավոն: Անսպասելի էր: Ավոն ուզում է մնալ ոտքի վրա, բայց չի ստացվում: Արամը գրկում է նրան: Ավոյին զգուշորեն պամենցնում են գետնին: Ավոն մարտնչում է մահվան դեմ: Ասես արեն է մարում: Ընկերները ծնկաչոր շրջապատել են նրան: Տեսիլքային պատկերների աշխարհում է Ավոն: Նա խոսում է Արցախի հետո).

Արցախ իմ, քայլիր հաղթության հունով,
Ծառայել եմ քեզ որդիական սիրով,
Անհունի մեջ էլ որդիդ կմնամ,
Հոգիս վառել եմ քո հոգու հրով,
Կռվոր ոգուդ մեջ մարտի կգնամ:
Կգնամ մարտի վրեժով անհուն,
Մինչեւ որ հասնես քո հաղթանակին...
Երջանիկ եմ ես, մայր իմ, որ հետվում
Զայնդ լսնցի ճիշտ ժամանակին,
Եկա՝ մի հյուլեն դարձա հոյս շողիդ,
Եկա՝ ձուլվեցի սրբազն հողիդ,
Զակնկալեցի ոչ փառք, ոչ համբավ,
Ես գնում եմ, մայր... Քեզ՝ բարի ճամփա...

Վ Ե Ր Զ

Նոյնմբեր - դնկտեմբեր, 2008թ.
Հունվար - փետրվար, 2009թ.

Ո ՈՒ Զ Ա Ն*

Լիբրետոն

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻ ՆՔ

ՀԱՍԱՆ ԶԱԼԱԼ	Խաչենի իշխանապետ
ՄԱՄՔԱ	Զալալի կինը
ՌՈՒԶԱՆ	նրանց աղջիկը
ՆԵՐՍԵՎ	իշխան՝ զորավար, Ռուզանի նշանածը
ԹԵՆԻ	Ռուզանի դայակը
ՄԱՆՈՒԵԱԿ	Ռուզանի նամիշտը
ՓԱՐԱՄԱԶ	Վարանդայի իշխանը
ՖՈՒԿ	քանատնդժ
ՀՈՌՈՄ	Ֆրիկի կինը
ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՉԱԿԵՑԻ	պատմիչ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	սկզբում աղքատ գեղջուկ, ապա զինվոր
ԽԱԶԱՏՈՒՐ	Դիզակի իշխան
ԲԵԳԼՅԱՐ	Գյուլիստանի իշխան
ԲՈՒՐԱ-ՆՈՒԻՆ	մոնղոլ զորապետ
ԱՂՎԱՆՔԻ ԿԱԹՈՂԻԿՈՒ	
Հայ գումկան,	
մոնղոլ գումկան,	
Մոնղոլ զորավարներ,	
Գլխավոր մակար,	
մակարներ,	
քավոր,	
հայ զինվորներ,	
Աղջիկներ,	
տղաներ,	
գեղջուկներ,	
գեղջուկներ	

*Կոմպոզիտոր Էդվարդ Ղազարյանցը գրել է «Ռուզան» բալետի երաժշտությունը: Նա հավանել էր իմ ստեղծած լիբրետոուն: Եղել էր Երևանում, պայմանագործել, որ բալետը բնմադրվի: Սակայն պատերազմական ծակը ու դժվարին օրերին հնարավոր չեղավ բնմադրել այն: Ապա (ափսոս) նա մեկնեց Խարայել են անժամանակ հնարացակ կյանքից: Այդպես էլ բալետի բնմականացումը չիրականացավ:

Սկզբան ԽԱՆՅԱՆ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋՆ
Պ ա տ կ ե ր ա ռ ա զ ի ն

Խաչենի իշխանապետ Հասան-Զալալի պալատը Խոխանաքերդ ամրոցում: Վնովից անտառապատ սարեր են: Սարի վրա բազմած երեսում է Գանձասարի վանքը: Հասան Զալալի աղջկա՝ Ռուզանի հարսանիքն է: Նրան ամուսնացնում են զորավար-իշխան Ներսենի հետ: Փեսան եւ նրա խումբը դեռ չեն հաճախել հարսնացուի տուն: Տան մի անկյունում, վարագույրի հետեւ նստած է Ռուզանը: Հարսանքատանը աշխոյժ իրարանցում է: Ռուզանի նաժիշտը եւ լճկերուսիմենքը զարդարում են Ռուզանին: Այդ պահին հնչում է զուրնա-դիուլի ճայնը: Տանը մոտենում է փեսայի խումբը: Հնչում են նվազն ու քաջականչությունները: Հարսի հայրական տան մոտքի մոտ փեսային եւ լճկերներին դիմավորում են Ռուզանի հայրը եւ մայրը: Ռուզանի մայրն առաջ է զալիս, համբուրում փեսայի եւ քավորի ճակատը, նրանց ձեռքին վառվող մոմեր կան: Մակարները նստում են վարագույրի դիմաց: Նրանց կողքին կանգնում են փեսան ու քավորը: Մոմերը շարունակվում են վառվել: Գալիս է տան ամենաավագը, փեսային նվիրում է արծաթեն զոտի եւ հրավիրում փեսային, որ գրավի իր տեղը: Փեսան նստում է իր զահին: Ռուզանի ազգականներից մեկը մոտենում է փեսային, մի զոյգ գոյնզգոյն գուլպա նվիրում: Փեսան տեղից նևուս է, համբուրում նրա ձեռքը: Մյուս ազգականուինենքը համբուրում են փեսայի եւ քավորի ճակատը: Փեսան ամոթխած է պահում իրեն: Հավաքվում են հարսի լճկերուիները, սկսում են մենապարները, հետո անցնում կողեկտիվ շուրջպարի:

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

Այնուհետեւ բերում են սկուտեն՝ սինի, լի մրգերով եւ ամեն տեսակ քաղցրեղենով, մնջտեղը գինու սափոր, սափորի վրա՝ վառվող մոմեր: Հետո բերում են դարձյալ մրգեղենով զարդարված փայտն սկուտեղները՝ խոնչաները: Դրանք բերում են տարբեր ազգականները: Հետո ամենամերժափորները բերում են ծառեր՝ ճյուղանման սարքած, շիվերից կախված խնձորներ, նոներ, կարմիր ու կանաչ թելեր, աղանձած սիսեններ ու չամիչ: Ծառերի վրա էլ մոմեր են վառվում: Այդ ամենը մատուցում են մակարներին: Ակզբում դրանք շարում են փեսայի դիմաց, այնուհետեւ գլխավոր մակարի ցուցումով նրա օգնականները բաժանում են հարսանքափորներին՝ ճաշակելու: Ամբողջ ընթացքում Վարանդայի իշխան Փարամազը անդադար, վավաշոտ հայացքով հետապնդում է Ռուզանին: Այնուհետեւ սկսվում է նվիրատվություն: Գալիս են երկու դարբիններ: Մեկը գլխից վեր պահում է իր սարքած արորը, մյուսը՝ սուրբ: Փեսային ցոյց տալով, տալիս են գլխավոր մակարին, սա մակարների միջոցով անց է կացնում մյուս սենյակը: Հետո գալիս է հյուսնը՝ բարձր բռնած իր սարքած օրորոցը: Ներս է մտնում Ռուզանի ազգականուիին՝ մի փոքիկ տղա գրկած: Նա այդ երեխային դնում է Ռուզանի գրկում (այսինքը՝ տղա ունենաս): Նվեր է բերում խաղողագործ՝ բարձր բռնած քթոցը խաղողով լիքը: Գալիս է Ֆրիկը՝ կնոջ հետ: Մագաղաթի վրա գրած բանաստեղծություն է կարդում: Աշխուժանում են հարսանքափորները: Ֆրիկը բանաստեղծությունը նվիրում է Ռուզանին: Հետո մոտենում է պատմիչ Կիրակոս Գանձակեցին, նվիրում իր Պատմությունը: Ակտում են պարերը: Գլխավոր մակարը հրավիրում է Ռուզանի ծնող-

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

ներին՝ պարելու: Պարում են Հասան-Զալալն ու կինը: Այնուհետեւ հրավիրվում են հարսն ու փեան: Պարում են: Սիրո խկական հաղթանակ: Նրանք պարից հետո նստում են իրենց գահերին: Ռուզանի մայրը դրամով լիքը քակը ձեռքին առաջ է գալիս եւ ըստ սովորության արծաթել դրամները ցանում է զետնին: Հանկարծակի ամրոցի դարպասների մոտից ներս են խուժում զնցուիներ հագած, աղքատ զյուղացիներ եւ հավաքում դրամները: Աղքատության բնենոի խկական զուցադրում:

Այդ աղքատների մեջ իր հաղթական հասակով աչքի է ընկնում նրիտասարդ Հարությունը: Երբ Փարամազը դուրս էր անում աղքատներին, Ներսենիր նկատում է Հարությունին եւ հրավիրում իր մոտ: Մակարները տեղ են անում, եւ նա նստում է նրանց կողքին:

Յանկանում է պարել զլսավոր մակարը: Նա դեռ տեղից վեր չելած՝ տագնապով ներս է մտնում հայ զուժկանը: Նա հայտնում է, որ մոնղոլները մոտեցել են Խաչենի սահմաններին: Հայ նրկու զինվորներ ներս են բերում մի գերված մոնղոլ զինյալի: Իրարանցում: Հասան Զալալը հուզված է: Մտորում է...

Պ ա տ կ ե ր ե ր կ ր ո ր դ

Նույն տեսարանը: Բայց չկան հարսանքավորները: Միայն Ռուզանն ու Ներսենն են հարսանեկան շորերում: Անհանգիստ են: Տխուր պարում են: Դա բաժանման ու խանգարված հարսանիքի թախծոտ պար է: Ռուզանը լավ քան չի զուշակում: Ներսենիր սփոփում է նրան: Ներս է մտնում Հասան Զալալը: Թիկնապահը բնրում է Ներսենի ուազմական զգնստը, թուրն ու վահանը: Հասան

Զալալը հասկացնում է, որ անհրաժեշտ է կազմակերպել զորահավաք: Ներսնիր փոխում է վերնազգնութը, հագնում զորավարականը: Հասան Զալալն ու թիկնապահը զնում են: Դարձյալ Ռուզանն ու Ներսնին են: Պար: Ռուզանը պարելիս միաժամանակ լցվում է հպարտությամբ: Նա ճանապարհում է զինյալ իր նշանածին, առանց հարսանելիան առազատ մտնելու:

Ռուզանը մենակ է: Տխոր խոհերի մեջ է: Նայում է այս տեղը, ուր քիչ առաջ նստած էր Ներսնիր: Փայփայում է Ներսնիի հարսանքի շորերը: Վատվող երկու մոմերը վերցնում է երկու ձեռքով: Քայլում է: Ասես Ներսնիր իր կողքին է: Ներս է մտնում իշխան Փարամազը: Մոտենում է Ռուզանին: Մեր է բացատրում՝ օգտվելով Ներսնիի բացակայությունից: Պարում են: Տագնապ են ատելություն կա Ռուզանի պարում: Տիրելու ձգուում՝ Փարամազի շարժումներում: Փարամազը զանկանում է հասկացնել, որ մարտից չի վերադառնա Ներսնիր, որ ինքը կառնի Ռուզանին: Կրակի պես գալարվում է Ռուզանը: Փարամազը ճանկում է նրան, ուզում է համբուրել, Ռուզանը թափով իրում է, ապտակում նրան, տագնապած հնոանում բնմից: Անճոռնի զգացում են վիրիժառության մոլուց կա Փարամազի աչքերում:

Պ ա տ կ ե ր ե ր բ ռ բ ռ ռ ռ դ

Խոյսանաբերդի ամրոցի հրապարակը: Հավաքվել են Խաչենի մեծամեծերը: Կենսարունում Հասան Զալալն է: Նրա մոտ է կայթողիկոսը: Ներկա են Ֆրիկն ու Կիրակոս Գանձակեցին: Ներկա են նաևն կանայք: Նրանց հետ Ռուզանը: Խորիրդակցում են՝ ինչպես կազմակերպել

մոնղոլների դեմ մղվող ճակատամարտը: Տեղի է ունեցել զորահավաքը: Ներս է մտնում Ներսենիր իր զորագնդով: Այնուինեւնի իր զորագնդով, դրոշով ու զինանշանով ներս են մտնում Դիզակի իշխան Խաչատուրը, Գյուլխատանի իշխան Բենգլյարը, նրանց հետեւում են զորագնդեր՝ դրոշով ու զինանշանով: Ռազմական նվազի տակ Արցախի զավառների միասնությունը խորհրդանշող պար են պարում Ներսենիր, Խաչատուրը, Բենգլյարը: Հասան Զալալը համբուրում է նրանց ճակատը: Կաթողիկոսը օծում է նրանց, օրինում ճանապարհը: Ֆրիկը ռազմակոչ քանատեղություն է կարդում: Պատմիչ Կիրակոս Գանձակեցին հանում է մագաղաթյա մատյան և սկսում գրի առնել այդ ամենը: Այդ պահին ներս է խուժում մոնղոլ զումկանը՝ մոնղոլական դրոշ-զինանշանով: Նրան մինչեւ Խոխանաքենրդի դրուերը ուղեկցում է դավաճան Փարամազը և զգոյշ թաքնվում: Մոնղոլ զումկանի երեւալը ցնում է բռնորդին: Մոնղոլական ռազմական պարի տակ նա մոտենում է Հասան Զալալին և հանձնում նամակ: Մոնղոլ զորապետ Ըուրա-Նուինը հայտնում է, որ Խաչենի տեղը ենջարկվի և իրեն կնության տա Ռուզանին: Այլապես կբնաջնջի ամբողջ Խաչենը: Խախսապես սրի քաշելով զերպած հազարավոր կանանց, երեսաներին՝ Հասան Զալալը զայրույթի մեջ է: Ներսենիր տաքարյուն ցանկանում է սրախողխող անել մոնղոլ զումկանին, Հասան Զալալը չի թողնում: Վերջինս սակայն վրդովկած պատում է նամակը:

Հարությունը չի համբերում, արծվի պես վրա է տալիս, Մոնղոլի ձեռքից խլում դրոշը, ոտքերի տակ տալիս: Ասպա կռանում է մի բուր հող վնրցնում, համբուրում այն,

նորից քնքշորեն ցանում է իր ոտքերի տակ եւ հպարտութեն կուրծքը դեմ տված քայլում դեպի մոնղոլը: Վերջինս սարսափած հետ-հետ է գնում եւ հեռանում քեմից: Հարությունը ոգեւորփած մոտենում է Ներսնիին եւ հասկացնում, որ ինքը պատրաստ է զինվորագրվելու հող հայրենիի պաշտպանությանը: Ո-ազմակոչ նվազի տակ զորքերն ու զորապետները աղեկոծվում են, որպես պայքարի ազդանշան: Բոլորը դուրս են գնում քեմից: Մնում են Ռուզանն ու Ներսնիը: Պարում են: Թախծոտ է Ռուզանը: Նա խնդրում է Ներսնիին, որ իրեն էլ տանի ռազմադաշտ: Ներսնիը նրան է նվիրում իր փոքրիկ սուրբ, որպես հավատարմության նշան: Ռուզանը համբուրում է սուրբ: Ճանապարհում է Ներսնիին:

Պ Ա Մ Կ Ե Ր Հ Ո Ր Բ Ո Ր Դ

Նոյն տեսարանը: Ռուզանը տառապում է: Նրան տաճում է Խաչենի հազարավոր գերի կանանց եւ երեխաների վիճակը, իր հարցականի տակ դրված սիրո ճակատագիրը: Ի՞նչ անի: Ռ՞ոյց օգնի հայրենիքին ու ժողովրդին, իր հորն ու սիրած Ներսնիին: Ներս է մտնում Ռուզանի նաժիշտը: Զգտում է նրան հանել այդ ծանր ապրումներից: Չի ստացվում: Ռուզանը հոգեկան փոթորկի մեջ է: Նաժիշտը շոյում է Ռուզանին եւ հեռանում: Գալիս է դայակը: Մայրական քնքշանք կա նրա վերաբերմունքում: Հորոդրում է Ռուզանին, որ ամեն ինչ լավ կլինի: Ռուզանը չի խաղաղվում: Ճանապարհ է փնտրում օգնել ժողովրդին, գերյալներին: Նա համոզված է, որ մինչեւ հոր զորագրենքը ազատեն գերյալներին, մոնղոլները կոչնչագնեն նրանց: Ռուզանը զանկանում է

կարծ ճանապարհով հասնել մոնղոլ զորապետին, առն-րնս համաձայնվել՝ նրա կինը դաշնալու, ազատել գե-րյալներին, ժամանակ շահել, որ հոր ու Ներսնի զո-րագնդերը կարողանան հաջողության հասնել: Անդրդ-վելի է դայակը: Վախենում է Հասան Զալալից: Սակայն աստիճանաբար տեսի է տալիս: Խոխանաքերդի գաղտնի ճանապարհ ցույց է տալիս Ռուզանին: Ռուզանը զգես-տի տակ թարցնում է սուրբ եւ գնում: Տագնապած ներս է մտնում Ռուզանի մայրը: Որոնում է, աղջիկը չկա: Խփում է ծնկներին եւ աղոթում աստծոն, որ օգնի աղջկանը:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

Պ ա տ կ ե ր հ ի ն գ ե ր ո ր դ

Բնմի խորքում, հենովից երեւում են մոնղոլական զոր-քերի վրանները, ինչպես նաև հայկական գյուղերը: Մոն-ղոլական զինվորները վխտում են սանձարձակ: Նրանք մտնում են տները, թալանում, ավերում, գերում կանանց ու երեխաններին: Նրանք կենտրոնանում են Ֆրիկի տան բակում: Ցանկանում են խել երեխային: Մոնղոլների հետ է դավաճան Փարամազը: Ֆրիկն ու իր կինը դիմադ-րում են, չեն ցանկանում տալ տղային: Մոնղոլ զինվոր-ներից մեկը գազագում է եւ աչքերն արնակոյս, սրահա-րում Ֆրիկի կնոջը եւ խլում նրա տղային: Իսկ Ֆրիկին կապկառում ու գերի են վերցնում: Համաժողովրդական սուզ է: Բնմի վրա սրախողասող լնկած են ծերունիներ, կանայք: Բնմում շարք են կանգնեցնում գերված կա-նանց ու երեխաններին եւ կապկառում, որպես պատաս-խան Հասան Զալալի հանդուգն վերաբերմունքի: Մոնղո-լական զինվորների չարախնդուն պարեն: Ներս է մտ-

նում մոնղոլ զորապետ Բուրա-Նուինը՝ աչքերում արյուն, չարամիտ ու չարանենգ, զազանորեն հրճվում է զերյալների տառապանքով: Նրա հետեւից քարշ է զալիս դափածան Փարամազը: Գերյալների շարքից Ֆրիկին իր մոտ է ձգում զորապետը: Դափածան Փարամազը նրան առաջարկում է զերյալ կանանց անունից կրկին նամակ գրել Հասան Զալալին, որ Ռուզանին կնության տան մոնղոլ զորապետին, այլապես կապանվեն բոլորը: Ֆրիկը թքում է Փարամազի երեսին, մոնղոլ զինվորները ծնծում են Ֆրիկին: Ողբում են կանայք, նրանց կապկապկած շարքերը տագնապալից երաժշտության տակ զալարվում են այնպես, կարծեն երկրաշարժ է, փլվում է երկինքը, խորտակվում երկիրը:

Պ ա տ կ ե ր կ ե ց ե ր ո ր դ

Նոյն տեսարանը: Իջնում է երեկոն: Ոչ ոք չկա: Միայն զոհվածներն են, մխում են թալանված ու ավերված զյուղները: Տագնապահար ներս է մտնում Ռուզանը: Նայում է չորս կողմ: Մոտենում է մի արյունլվա երեխայի: Հանում է թաշկինակը, սրբում նրա դեմքը: Հետո մոտենում է մի կնոջ: Ճանաչում է, Ֆրիկի կինն է: Բարձրացնում է գլուխը, մազերը շոյում, համբուրում ճակատը: Գալարվում է Ռուզանը: Ողբում է կործանվող Հայրենիքի համար: Նրա յուրաքանչյուր շարժում կարոտի, վշտի եւ միաժամանակ ցասումի արտահայտություն է: Քիչ է մնում խելազարվի: Նրա ականջին կանացի ձայներ են հասնում. «Ռուզա՞ն օգնիր մեզ, օգնի՞ր, Ռուզա՞ն»: Ռուզանը կրկին նայելով զոհվածներին ու մխացող տներին, շտապ հեռանում է քննից:

Պատկեր յոթերորդ

Արեւը արյունոտ աչքով նայում է հորիզոնից: Բնմը ներկայացնում է մոնղոլական զորակայանը: Կենտրոնում Բուրա-Նուինը գլխավոր վրանն է: Բնմի մի կողմում գերյալ կանայք են՝ կապկապկած: Մահվան պար է պարում Բուրան: Նրան հնտենում են մոնղոլ զինվորները: Օդակի մեջ են առնում դաշվաճան Փարամազին: Սա քծնանքի ու ստորության պար է պարում: Բուրան մի պահ կանգ է առնում: Բոլորը հետ են քաշվում: Նա հրամայում է մեկ-մեկ գլխատել գերյալներին եւ հարձակվել Խոխանարերդի վրա: Զինվորներից մեկը հենց որ մոտենում է կանանց շարքին, որ կատարի Բուրայի հրամանը, հնիհենի, այլայլված ներս է մտնում Ռուզանը: Դաշաճան Փարամազը այլանդակ հրճվանքով մոտենում է Բուրային, ճեռով նշան անում, որ Ռուզանը եկել է: Բուրան հրամայում է դադարեցնել կանանց պատժելը: Ռուզանը մոտենում է Բուրային: Վերջինս շլացել է Ռուզանի գեղնցկությամբ: Ռուզանը հասկացնում է, որ ինքը կհամաձայնի նրա կինը լինել միայն այն ժամանակ, եթե Բուրան ազատի գերյալ կանանց, Ֆրիկին, երեխաններին: Բուրան հրամայում է կատարել Ռուզանի ցանկությունը: Բուրայի դիմաց զցվում է Փարամազը: Բուրան նրան է շարտում մի քսակ դրամ: Բուրան պարում է, ոնց սոված գայլ: Նրա ճանկերի մեջ է Ռուզանը: Վերջինս պարում է ինչպես զիշտափի գազանի ճանկերն ընկած նղնիկ: Բուրան ճգտում է համբուրել Ռուզանին: Ռուզանը հասկացնում է, որ սպասի մինչեւ երեկո:

Պ ա տ կ ե ր ո թ ե ր ո ր դ

Իրիկնամուտ է: Լուսինը պառունկը հանում է սարի հետնից: Նոյն տեսարանը: Մոնղոլ զորքերը քիչ խաղաղված են: Նրանց մոտ է Փարամազը: Հրձվանքի մեջ է Բուրան: Նա պատրաստվում է մտնել վրանը: Շոյում է Ռուգանին: Մտնում է վրանը: Մոմ է վառվում վրանում: Բուրան պառկում է հատուկ պատրաստած, բարձրադիր առազաստում: Նա հանվում է, անզեն է: Մտնում է Ռուգանը, հանգչում է մոմը: Մթության մեջ նրա սիլուետն է նրենում: Հանում է վերնազգեստը, պառկում Բուրայի մոտ: Ցոյց է տալիս, որ համբուրում է: Արագությամբ հանում է սուրբ Եւ խրում Բուրայի կուրծքը: Բուրան գոտում է, ձգտում է վեր կենալ, չի ստացվում: Տագնապով իրար են անցնում մոնղոլ զինվորները: Մինչեւ նրանք մոտենում են Բուրայի գլխավոր վրանին, բնմ են մտնում Հասան Զալայի զորագնդերը: Չորքը գլխավորում է Ներսենիը, այդտեղ են օգնության եկած զորքերը, իրենց զորապետներով: Սկսում է մարտը՝ թրենով: Ներսենիի եւ մոնղոլ զորավարներից մեկի միջնու թեժանում է մարտը: Ներսենիը սրախողլսող է անում նրան: Այդ պահին տագնապած դեպի նրան է վագում Ռուգանը: Ներսենիը զարմանում է: Գողեգող, ճարակորեն մոտենում է դավաճան Փարամազը եւ սրահարում Ներսենին: Վերջինս երերում է եւ ընկնում: Նկատելով այդ, Հարությունը անսպասելիորեն հանում է սուրբ եւ սպանում դավաճան Փարամազին: Սկսում են նահանջել մոնղոլները: Դեպի Ռուգանն է գալիս Հասան Զալալը: Գրկում է աղջկանը: Հնովից մոնղոլական մի զինվոր աղեղից արձակում է նետը դեպի

ԴՐԱՄԱՑԹԿԱՎԱՆ ԵՐԿԵՐ

Հասան Զալալը: Իշխանապետը վիրավոր ընկնում է: Խաչատուրը ուժն զատկով թրատում է մոնղոլ զինվորին: Մոնղոլ զորքնը շարունակում են նահանջնել: Նրանցից մեկը նետը ձգում է դեպի Ռուզանը: Խաչատուրը կանգնում է սլացող նետի առաջ, ինքը զոհվում, ազատում Ռուզանին: Բնեմում նահատակվածներն են: Կենդանի են Հասալ Զալալը, Ֆրիկը, Կիրակոս Գանձակնցին, Հարությունը, Ռուզանը: Առաջ է գալիս Ֆրիկը եւ բողոքում ասածոն դեմ: Պատմիչ Կիրակոս Գանձակնցին մախաղից հանում է մազաղաթյա գիրքը եւ սկսում գրել պատմությունն այդ դեպքների: Գլուխը բարձրացնում է Հասան Զալալը, բոլորը նայում են նրան: Նա ասում է. «Կիրակոս, Ֆրիկ, կտակնք սերունդներին, որ միասնական լինեն, Հայրենիքը չտան թշնամուն»: Երգչախումբը բնմի խորքից կրկնում է. «Հայրենիքը չտան թշնամուն»: Ապա Հասան Զալալը իր թուրք հանձնում է Հարությունին, որպես հոոյի պաշտպանի: Ռուզանը առաջ է գալիս՝ սուրբ ձեռքին, նրա կողքից Հարությունը: Դանդաղ հառնում են նահատակները՝ սկզբում Ներսնիը, Խաչատուրը, ապա՝ մյուսները եւ սկսում քայլել Ռուզանի հետեւից, առնս նետվում են մարտի: Բացվում է արշալույսը: Ռուզանը սուրբ ձեռքին դանդաղ ու մարտական քայլում է, կարծենս ձուլվում է բացվող արշալույսին:

1988թ. Ստեփանակերտ

ԵՐԳԻԾԱՆՔ ԵՎ ՀՈՒՄՈՒ



Գրեց-կարդաց, կարդաց-գրեց,
Ամեն մի տող ու բառ ջրեց,
Զրեց, երկը շատ հաստացավ,
Ինքը ոչինչ չհասկացավ,
Կինը ասաց,- Լավ ես ճառել,
Արդ, կանվանեն քեզ հանճարեղ...



Ծաղիկ երգեց, ասին՝ հին է,
Ծաղիկ երգեց, ասին՝ հին է,
Արտեր երգեց, ասին՝ չոր է
Արտեր երգեց, ասին՝ լոր է,
Ճարահատյալ
Թուղթ ու մատիտ մի կողմ դրեց,
Ասին՝ ափսո՞ս, ինչո՞ւ լռեց:



Մեծ էր, եկավ փոխեց հինը,
Ասին - «Գցեց խոսքի զինը,
Այս խենթը տես ի՞նչ է անում,
Կոշտ բառեր է անվերջ ցանում,
Ծուռվիզ ուղտն ի՞նչ ունի երգում,
Անբույր տուղտն ի՞նչ ունի երգում,
Վարդը խեղդեց գոռ ծափի մեջ,
Սարդուն դրեց նեղ ափի մեջ:

ԵՐԳԻԾԱՆՔ ԵՎ ՀՈՒՄՈՒ

Մեր լավ երգը հունից հանեց,
Ընթերցողին մեզնից վանեց...»:
Իսկ երբ մարեց արեւի պես,
Բաց արեցին մի մեծ հանդես,
Թե պուտ էր նա հաղթական,
Մենք նրան ենք միշտ պարտական...



Մի ձախողված բանաստեղծ դարձավ քննադատ,
Ով գոռում էր, նրա դեմ բացեց դաժան դատ:
Հարցրին,- Այսր ամոթ է, այդ ի՞նչ ես անում,
Ասաց.- Հանուն լավ երգի կայծեր եմ ցանում,
Թոռ չգրեն, թոռ իջնի նրանց քանակը
Չէ՞ որ երգի կարոտ չէ մեր ժամանակը:



Բոլորինն է,- ասին,- հո՞ղ, ջո՞ւր,
Բե՞րքը՝ դաշտում ու հանդում...
Սակայն ոչ ո՞ք չասաց.- Բակուր,
Երկիրն ինչո՞ւ ես քանդում:



Կոռապերատիվ ռեստորան
Բացեց մի օր քաջ Յովասը,
Խանութի ողջ միսը տարավ,
Մեկի դիմաց առավ տասը:



Գյուղն ուտողներին պատժեց անվարան
Վարչության պետը՝ «սակավապետ»
Պահեստապետին դարձրեց նախագահ,
Իսկ նախագահին՝ պահեստապետ:



Կոլեկտիվի մեջքին ելավ
Եվ շատերին պայտեց,
Այնքան գռիեց, այնքան կերավ,
Որ վերջապես...պայթեց:



Ազգայինը այնքան հերքեց
Պոռոտախոսն ինքնահավան,
Որ այլազգի ընկերները
Անվանեցին ազգադավան:

ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԿ - Սեթ, Արցախը թողիր, փախար,
Վերք կա սրտի վրա:
Ով ապրում է նայր Արցախում,
Նա էլ նրա տերն է:
ՍԵԹ - Մի՞թե քիչ եմ բացականչում,
Որ Արցախը մերն է:

ԵՐԳԻԾԱՆՔ ԵՎ ՀՈՒՄՈՒ

ՏԳԵՏԸ

Գովում էք նրան ու լսում կանչին,
Բանաստեղծ է նա, իո մի մեծ բա՞ն չի:

ՄԵԾԱՄԻՏԸ

Շատ մի գովեք, հնացել է Մեծ Վարպետը,
Ես եմ հիմա պոեզիայի նավապետը:

ՄՐԱՄԻՏԸ

Անվերջ, անդադար թախանձանքներին,
Լուրջ պատասխանեց որդին իր մորը.
- Ես հալալ ծծկեր որտեղի՞ց առնեմ,
«Խտացված կաթ» է ուտում ծնվողը:

ԶԱՐԴԱՐԱՐԸ

Ես հներին պիտի ջարդեմ,
Որ նորերի ուղին հարթեմ...

«ԱՐԴԱՐԸ»

Գոռում են. - Մեթը ամեն ինչ կերակ
Էլ չեն ասում, թե
Մի աշխատող է ու տասը բերան:

ՓՈՂԱՍԵՐԸ

Ոչ գործ են ուզում, ոչ այգի, ոչ հող,
Ինձ փող տվեք, փող:

ԱՂՎԵՍԱԿԵՐՊԸ

Յաբեթին դարձրին
Յավաբուծական ֆերմայի վարիչ,
Սակայն չգնաց,
Ասաց. - Չեն կարող, արեւս վկա,
Մեր անտառներում էլ աղվես չկա:

ՊԵՏԸ

Բանվորն իր պետի
Թերությունները տեսավ, չներեց,
Ուղիղ տաս տարի
Պետը բանվորի քթիցը բերեց:

ՔԱՐԱՑԱԾԸ

Վերահսկիչը կգա-կգնա,
Բայց մեր կոշիկը նույնը կմնա:

ՀԱՏՈՒՑՈՒՄ

Մի ամբողջ տարի պետի պատճառով
Անբանուկ մնաց նոր երկաթուղին,

ԵՐԳԻԾԱՆՔ ԵՎ ՀՈՒՄՈՒ

Իսկ շրջնորիրդի նիստերից մեկում
Գործից հանեցին պահակ Բարթուղին:

ՎԱՅ ՀԱՑԹՈՒԽԸ

Յացքուխ վարպետը կոնֆերանս գնաց,
Գովեց մեր օդը, մեր լուսաբացը,
Բայց տնաշենը մի բառ էլ չասաց,
Թե ո՞նց լավ թիւն մեր ցորեն հացը:

ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾ

Մի ամբողջ շաբաթ
Վերանորոգման արհեստանոցում
Յանգիստ էր տիրում...
Կարեւոր գործ կար՝
Նոր Վերադասի որոշումն էին ուսումնասիրում:

ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

- Ի՞նչ լավ օրենք է, իսկը՝ հարսանիք,
Կուզեմ կքնեմ, կուզեմ գործ կանեմ,
Ինձ պետք չեն լինի հրաման, կնիք,
Ինչ սիրտս ուզի՝ մեր տուն կտանեմ:

ԻՍԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԿԱՏԱԿՆԵՐ



Կիսաապուշ այս փալանչին
Գյուղապետն է մեր թալանչի:



- Ինչո՞ւ դարձ մեր անգութ է:
- Քանզի կուսակալը բութ է:



Երգը սրտեր շոյող փեշ է,
Ափսոս գնահատողը էշ է:



Գլուխը դատարկ, փորձ տռոզ է,
Դրա համար էլ այդքան գոռոզ է:



- Ի՞նչ ես քնել, թեժ ամառ է:
- Ով աշխատի՝ ինձ համար է:



- Ո՞ւմ են համարում հմուտ նախարար:
- Ով որ դառնում է ճարպիկ գործարար:



Ով դառնում է պատգամավոր,
Նա դրժում է պատգամն իր մոր:



Ով աչքածակ է՝
Գդակը ծակ է:



Քնում է գիշեր ու ցերեկ,
Ու գոռում՝ ռոճիկս բերեք:



Չոքանչիս մատը խառն է,
Որ կյանքս այսքան դառն է:



Սի կերպ սովորեց կլպել խաշած ձու,
Դարձրին գիտության հայտնի թեկնածու:



- Ինչո՞ւ թեթեւ է դարձել գրամը:
- Արժեզրկվել է նաեւ դրամը:



- Ի՞նչ է երազում այս չար ազահը:
- Ուզում է գնել Աստծո գահը:



Փոխվել է դարը՝ ով որ ալարում,
Ուրիշի հաշվին նա է դալարում:



Մեկը դառնում է քաջ սպարապետ,
Մյուսը՝ գաճաճ կուսակցության պետ:

ԵՐԳԻԾԱՆՔ ԵՎ ՀՈՒՄՈՒ

ԱԳԱՅԸ

Սիրտն ամեն օր ահի մեջ,
Կյանքն է տեսնում շահի մեջ:

ՅԱՐԲԵՑՈՂԸ

Եթե ձրի նրան բերեն մի շիշ օղի,
Նա կլքի անգամ իրեն կյանք տվողին:

ՉԱՐԸ

Թե օգնես մաքրի շորերի կեղտը,
Քո դեմ կնետի օրերի կեղտը:

ԱՆՍԿԶԲՈՒՆՔԸ

Այսօր կարող է մեծ ջանքով հերկել,
Վաղը այդ հերկը հեշտությամբ հերքել:

ՆԱԽԱՆՁԸ

Լավ է իր զույգ աչքը հանեն,
Քան ընկերոջն առաջ տամեն:

ԶՐԻԱԿԵՐԸ

Այսօր մեկի հաշվին, վաղը՝ մյուսի,
Ծանր բեռ է դարձել բոլորի ուսին:

ԵՐԿԵՐԵՍԱՆԻՆ

Խոսքով վատին է ատում,
Սակայն լավին է դատում:

ԵՐԱԽՏԱՍՈՌԸ

Իր գործն անես՝ կպաչի,
Բայց միշտ վրադ կհաչի:

ԳՈՂԸ

Չունի դադար, չունի քուն,
Մահվան գույժ կա իր սրտում:

ԳՈՌՈԶԸ

Ինձ ասում են՝ ծիվ-ծիվ են,
Նախանձում են, արծիվ են...

ԲԱԽՏԱԽՆԴԻՐԸ

Ասում են, թե Սահյանը
Նոր խոսք է բերել...
Ես էլ Լորում ծնվեի՝
Բախտս կբերեր:

ՏԳԵՏԸ

Ասում են՝ Մերոն գյուղը լավ գիտեր,
Ախր նա ե՞րբ է մեր գյուղը մտել:

ԷՇԸ

Էշի նալը ռոկուց արին,
Էլի զռռաց էշավարի:

ՄՈԼՈՐՎԱԾ ԶԱՎԱԿԸ

- Նամարդ որդիս,
քեզ ին կաթն եմ տվել ես...
- Փոխարենը մի էծ կառնեմ,
կտամ քեզ:

ԲԱԶՄԱՍԵՐԸ

«Պաշտեց» կնոջը՝ իր «միակ» լորին,
Բոլորին սիրեց՝ փոխվեց աքլորի:

ԱՔԼՈՐԱԿԵՐՊԸ

Այնքան սեր տվեց ու սեր առավ,
Որ պոչը խուզած աքլոր դառավ:

ԱՍԲԱՐԱԿԸ

Յին, իմաստուն ասացվածք է,
Որ շողում է ոնց ճրագ.
«Անձարակին միշտ թվում է,
Թե բոլորն են անձարակ»:

ՍՊՈՐՏԻՆ ԷԼ ԾԻԾԱՌ Է ՊԵՏՔ

ՏԿԱՐ ՖՈՒՏԲՈԼԻՍԸ

Ես նիհար եմ ու տկար,
Դազնեմ շորերս՝ ինչ որ կա,
Զուրս էլ խմեմ՝ մի քիչ գոլ,
Որ կարենամ խփեմ գոլ:

ՄՐՄԿԱՆԸ

Վազքի դասը դրսում է,
Ինչպե՞ս վազեմ, մրսում եմ:

ՇԱՏԱԿԵՐԸ

Եթե ուտեմ ես բոլ-բոլ,
Լավ կխաղամ վոլեյբոլ:

ՍՍԱՊԱՐԾԸ

Աղջիկն ուզեց խաղալ թենիս,
Դայրը ասաց. «ամոթ՝ գենիս»:

ԱՐԴԱՐԱՑՈՒՄ

Մրցության մեջ
Իմ մարզիչը չեր հուշում,
Ահա ինչու՝
Տանուլ տվի ես ուշում:

ՊԵՏՔԸ ՉԵ

Զոքանչիս հանդեպ սերս առատ է,
ինչ ինչի՞ն է պետք ջարդող կարատեն:

ԿԱՐԾԻՔ

ԵՎ հողվոր եմ, ԵՒ քաջ մարտիկ,
ինչո՞ւ դառնամ ըմբշամարտիկ:

ԳՅՈՒՏԱՐԱՐԸ

-Դահուկն ինչո՞ւ առար, Անակ,
-Որ նրանից սարքեն սահնակ:

ԳԻՆԵՄՈԼԸ

Ասում են շատ լավ բան է թոհչքը,
Ախր ես ինչպե՞ս թողնեմ խմիչքը:

ՕՔԵՅ

Երանի ունենայինք հոկեյ,
Որ մեզ էլ ասեին «օքեյ»:

ԶՐՈՒՅՑ

-Քայրիկ, գմիր ջրի գմղակ:
-Զուր չունենք, ի՞նչ ջրագնդակ:

ԵՐԳԻԾԱՆՔ ԵՎ ՀՈՒՄՈՒ

ՅՆԱՍՈԼՆԵՐԸ

Մենք երկիր ենք լուսաշող,
Ոչ վազք է պետք, ոչ էլ լող,
Յավատարիմ մեր բախտին,
Չմոռանանք «ջջլախտին»:

ԶԱՐՍԱՆՔ

Զարմանք է, թե այս թեթև ատլետը
Ոնց է մոռացել յուղոտ կոտլետը:

ՅՈՐ ՊԱՏԳԱՄԸ

Յայրը ասաց. «Իմ Անի,
Ինչի՞ն է պետք հեծանիվ,
Սպորտ պետք չէ քեզ կյանքում,
Ես եմ ճամփան քո հարթուն»:

ՏԱՏԻԿԻ ԶԱՐՍԱՆՔԸ

Թոռանս անունը դրել եմ Պիոն,
Ինչո՞ւ բոլորը կոչում են՝ Չեմպիոն:

ՕՏԱՐԱՄՈԼԻ ԽՐԱՏԸ

Լսիր, որդիս, խառն է դարը,
Յարդի տակով լուր հոսիր,
Որ ընդունի քեզ օտարը,
Նրա լեզվով միշտ խոսիր:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՆԱՔՆԵՐ

ԾՈՒՅՆ ՈՒՍԿԱՌՈՒԻ ԵՐԳԸ

Սիրեցի, յարս տարան,
Սիրտս, աշխարհս տարան,
Ինչպէ՞ս մտնեմ քննության,
Ծածկագիր-դավթարս տարան:

❖
ՔԵԼԵ-ՔԵԼԵ, ՔԵԼՔԻԴ ՄԵՇՆԵՄ,
ՍԻՐՈՒՆ Աղջիկ, ԾԵՇՔԻԴ ՄԵՇՆԵՄ,
ԱՐԻ ՍԵՆՅԱԿՍ ԷԼ ՄԱՔՐԻԴ,
ԳԵՐԱՎԱՆԳԻԿ ԽԵԼՔԻԴ ՄԵՇՆԵՄ:

ԳՈՎՔ ԾԱՇԿԱԳՐԻ

ՈՂԲ ԻՆԱՍԻՏՈՒՏԻՑ ՀԵՌՎԱՑՎՈՒՄ

Ուստի՞, գու քաս, դարիք բլբուլ,
Դու մի լաց լի, ես եմ լալու,

ԵՐԳԻԾԱՆՔ ԵՎ ՀՈՒՄՈՒ

Երրորդ «երկուն» էլ, որ ստացա,
Դու մի լաց լի, ես եմ լալու:

ՈՒՍԱՆՈՂԻ ԴԻՄՈՒՄԸ ԴԱՍԱԽՈՍԻՆ

Դուն էն գըլխեն իմաստուն իս, խելքող հիմարին
բար մի անի,
Առաջին կուրսի տղաներին միզի մե հեսաբ մի անի,
Նրանք սերը չեն հասկանում, էնդուր համար են
լավ սովորում,
Մի «երեք» է, գրիր, գնամ, քեֆս խարաբ մի անի:

ՎԱՏ ՍՈՎՈՐՈՂԻ ԵՐԳԸ

Արի ինձ անգած կալ, այ դիվանա սիրտ,
Պարտեզ սիրե, զբոսնել սիրե, սար սիրե,
Կարմիր դիպլոմը քունն ոլի, հ՞նչ պիտիս տանի,
Խորոված սիրե, գինի սիրե, յար սիրե:

Են բանն արա, վուր լոթիների շարքումն է,
Խըրատնիրըն գրած մեր սեփական վարքումն է,
Երեք բան կա՝ ուսանողի կարքումն է.
Քնել սիրե, խմել սիրե, յար սիրե:

ՍԵՄԻՆԱՐԻՆ ԶՊԱՏՐԱՍՏՎՈՂԻ ԵՐԳԸ

Ճամալսարանի ճամփեքի վրա
Օրերս դանդաղ, ծույլ կղողանջեն,

ԵՐԳԻԾԱՆՔ ԵՎ ՀՈՒՄՈՒ

Կանգնեցեք, օրեր, ինձի կթվա,
Թե ինձ օգնության մի ծեռք կկանչե:

Գնացեք օրեր, ինձ էլ քարշ տվեք,
Քննությունների հուշերի վրա,
Ապրեն իմ քեռին եւ հորեղբայրը,
Ինձ չեն թողնելու փշերի վրա:

ԱՅ ԻՄ ԹԱՐԹԱՌ

Թարթառը եկավ լափին տալով,
Ժեռ քարերին, ափին տալով,
Ինչպե՞ս թաքցնեմ «Երկուներս»,
Չոր գլուխս տափին տալով:

Այ իմ Թարթառ, ջուրդ վարար,
Ինչո՞ւ «վատերն» իմ չտարար,
Ճինա մորս ես ի՞նչ ասեմ,
Խելքս ինձնից, ա՞խ, ո՞վ առավ:

Ամպերն ընկան Մոռվ սարին,
Միշտ քնեցի, անցավ տարին,
Անհոգությունս ինձ խիստ պատժեց,
Կորցրի նաեւ իմ լավ յարին:

Գիշերն անքուն ես ա՞խ կանեմ,
Դարդըս ինձնից ինչպե՞ս վանեմ,
Ինձ հատուցեց ծուլությունս,
«Երկուներս» ինչպե՞ս տանեմ:

ԱՐԾԻՎՍԵՐԸ, ԳԻՇԱՍԳՂՅ
ԵՎ ՑԻՆԵՐԸ
(Առակ)

Աղավնիների սրբազան բնում
Գիշանգղից սերված մի ձագ է ծնվում:
Աղավնու լեզուն սերտում է մորից,
Գիշանգղի լեզուն՝ գիշատիչ հորից,
Խենթ տարիները անցնում են հերթով,
Նա գահ է նստում մի ցինի ձեռքով:
Իր գործերը նա սկսում է ճառով,
Փայլել է ուզում չեղած հանճարով:
Իր նախորդների փետուրը քանդում,
Փառաբանում է իր գործը «անդուլ».
«Բուին զոհ դարձան հավթերը ազնիվ,
Իսկ ապրողները կորան ցանուցիր,
Բազեներ սառան գրկում Յյուսիսի,
Զագերին թողած պինգվինի հույսին:
Քաջ արծիվների հայրենիքը իին,
Բուն կիսեց անսիրտ ու տվեց Ցինին:
Վերակառուցման օրերն են եկել,
Արդարությունը սուրբ, պետք է փրկել»:
Եվ արծիվները փարված այդ կանչին,
Ելան թեւ-թեւի, սիրով առանձին,
Ասացին. «Արդար ժամն է թեւածում»,
Եվ իրենց կոչը դարձրին «միացում»:
Քայց թագավորը լսեց, հռհռաց,
Նրա գիշանգղի արյունը եռաց,

ՇՐՋԻԾԱՆՔ ՇԱՀ ՀՈՒՄՈՒ

Կոնչաց. «Ցինն է իմ հորեղբայրը»,
Արծիվների դեմ լարեց «հանճարը»,
«Զեր սահմանները Լագլագն է գծել,
Զուր եք ձայներդ աշխարհը զցել,
Մոռացել եք ձեր ցեղակիցներին,
Ուզում եք բաժի՞ն դարձնել ցիներին»:
Ասաց, արձակեց ահավոր մի ճիչ,
Ցիները բազում... արծիվները քիչ...
Քաջ արծիվներին ցույց տվեց ժանիք,
Երեք օր սարքեց արյան բաղանիք:
Սարերն է ուզում նրանցից առնել,
Ցեղակիցների հողերին խառնել:
Բայց արծիվը միշտ մնում է արծիվ,
Բույնը՝ սարերում, դարերը՝ անթիվ:
Փարզած երկնամերձ իր Լեռնաստանին,
Թեւերն է մեկնել մայր Արծվաստանին:
Գիշանգղը, սակայն, ցնցվում է, փրփրում,
Իր հրեշածին կրինչն է կրկնում.
«Զեր սահմանները Լագլագն է գծել,
Զուր եք ձայներդ ձորերը զցել»:
Շղթա է նետում սեգ Լեռնաստանին,
ճամփեքը փակում մայր Արծվաստանի:
Գիշատիչ է նա, նենգ է ու դաժան,
Քաջ արծիվներին պահում է բաժան,
Քանդում է արծվաց բույնը սարերում,
Արծիվները, բայց, նրան չեն ներում:
Թեւում են անվերջ աստղերը լույսով,
Մայր Արծվաստանին հասնելու հույսով...

1988թ., Ստեփանակերտ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԳԻԾԱՆՔ

Ստեղծվածէ 2008թ. փետրվարի 19-ին
կայացած նախագահական հետընտրական
իրադարձությունների թարմ հետքերով

ՉԸՆՏՐՎԱԾ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՌՈՎԱՐՏԱԿԸ

Իմ ընտրողներ, իմ արիներ,
Ամենաթեժ մեր տարին է,
Չընտրվեցի ես նախագահ,
Սակայն պիտի գործենք անահ,
Ժայռի նման պիտի հառնենք,
Ընտրվածի հոգին առնենք,
Իմ գահ տանող ճամփան հարթենք,
Ով խանգարի՝ վառենք, ջարդենք,
Չխնայենք կորով ու ջանք,
Խանութները թալանի տանք,
Յորի մատնենք քաղաքն անգամ,
Որ ենթարկվի մեզ ինքնակամ:
Մեր հավաքը խրախճան է,
Ով մեզ հետ չէ՝ դավաճան է...
Չենց որ դարձնեք ինձ նախագահ,
Ամեն մեկիդ կտամ մի զահ,

ԵՐԳԻԾԱՆՔ ԵՎ ՀՈՒՄՈՒ

Մի գործարան, երեք խանութ,
Մեքենաներ ու շինանյութ,
Որ մեր ամուր բերդը կերտենք,
Ով մեզ հետ չէ՝ բանտը նետենք,
Դաշնանք տերեր՝ ոգով շինիչ,
Արցախը տանք եւ ապրենք դինջ...
Ինձ հուշում է միտքս հասուն,
Որ մոռանանք Մուշ ու Սասուն,
Արդահանը, Ղարսն ու Վանը,
Մեզ հերիք է Երեւանը:
Քայլենք, քաջեր, ահեղ ճիշով,
Գահին հասնենք արյան միջով,
Արյանք խլած գահը ձերն է,
Ես ձեր ծառան ու ձեր տերն եմ...
Ղեի, ուրեմն, աճապարենք,
Գահակալի պարը պարենք...

06.03.2008թ.

ՀԱՅՈՑ ՄԱՐՔՍԻՍԸԸ

Ես ընտրել եմ
Լուսե ուղին մարքսիստական,
Որ հին Գյումրին
Նորից դարձնեմ Լենինական:

ԶԸՆՏՐՎԱԾ ՆԱԽԱԳԱՅԻ
ԶԻՆԱԿՑԻ ՎԱԽԸ

Եթե Արցախը
Չվերադարձնենք
Ազերիներին,
Մեր գալիք արքան
Զինակիցներիս
Երբեք չի ների:

ՏԱՊԱԼՎԱԾ ՎԱՐՉԱՊԵՏԻ
ՆՈՐ ԾՐԱԳԻՐԸ

Ես քաջակորով ու խիզախս այր եմ,
Իմ կուսակցության համճարեղ հայրն եմ,
Որոշ է երկրիս ճակատագիրը,
Կազմել եմ արդեն իմ ծրագիրը.
«Երկիրը պիտի դարձնենք խանություն,
Բանակը՝ հսկիչ ոստիկանություն,
Մոռանանք հնոց Նախօնեան-բաղը,
Ազերուն նորից տանք Ղարաբաղը,
Ցեղասպանություն բառը մոռանանք,
Ազրենք ապահով, դինջ ու խանաբար,-
Աթոռ ունեի ես վարչապետի,
Ինձ շատ է սազուն աթոռը պետի:

ՉԸՆՏՐՎԱԾ ԲԱՐԵՐԱՐԻ ԴԻՍՈՒՄԸ

Քանի հարյուր հեռուստացույց
Բաժանեցի ոնց նվեր...
Չընտրվեցի...
Ընտրությունը
Յամարեցեք անվավեր...

ՉԸՆՏՐՎԱԾ ՆԱԽԱԳԱՅԻ
ՄԱՄԼՈ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԿՈՉԸ

Մենք՝ չորս հարյուր հազար հոգի,
Չի մարել մեր հզոր ոգին...
Յայ է միայն հայաստանցին,
Մեզ օտար է ղարաբաղցին...
Կոչում եմ ծեզ՝ հենց այս տարի
Մեզնից նետենք լուծն օտարի,
Պետությունը պիտի խլենք
Որ մեր զուռնան նորեն զլենք,
Ի զե՞ն, առա՞ջ, մեր քաջ այրեր,
Գրպան ու ծոց լցրեք քարեր,
Պատրաստեցեք սուրսայր ձողեր,
Նընակ-շշեր, անվաղողեր,
Մարդարսի որսորդն ինչպես,
Յրացաններ հանեք ի տես,
Զենքերն առեք ձեր անքանակ՝
Ավտոմատ ու ատրճանակ,

«Ոզնի» սարքեք պողպատ-ձողից,
«Վրեժ» կանչեք լսափողից:
Պետությունը պիտի խլենք
Եվ հաղթողի անուն կրենք...
Ով գա մեր դեմ, թշնամի է,
Չվախենաք՝ թույլ քամի է,
Մեր թեկնածուն մեր արքան է,
Մենք նրա գոռ առաքյալն ենք,
Երեւանը հրի մատնենք,
Որ պետության ուղին գտնենք...
Զարդեք դրները խանութների,
Մեր նոր տերը ծեզ կների,
Թալանեցեք, ինչ որ լինի,
Վերցրեք կոնյակ, վերցրեք գինի,
Խսնեք քաղցր մեր կենացը,
Մեր ճամփեքը արդեն բաց են,
Կասկածանքը հեռու վանենք,
Նոր տերերի հոգին հանենք,
Ով ալարի,
Ոչ դալարի...

08.03.2008թ., Ստեփանակերտ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Սուլրատ Խանյան-75	3
Հիշատակարան մեր հին ու նոր գոյանարտի	6
Ազատագրական պայքարը՝ եպիկական շնչով	9
«Արցախի արծիվը» ասք է	12
Խաչի օրինանքն ու թրի շառաչը	15
 ԼԵԳԵՆԴԱՐ, ԲԱԼԼԱԳՆԵՐ, ՊՈԵՄՆԵՐ (1960-2008)	
Հայրենի գյուղ (քնարական պոեմ)	64
Ուխտաձոր (լեգենդ).....	72
Արեւը (լեգենդ).....	74
Արեւսար (լեգենդ).....	75
Էսքիզներ	77
Դեպի հավերժություն.....	80
Բալլադ սիրո մասին	87
Արեւսարի հեքիաթը (բալլադ).....	89
Բալլադ Մամունցի եւ հողի մասին.....	90
Վարպետի հետքերով.....	93
Արցախիները	96
Ազգային հարց	99
Սուրբ հացը վկա (էսքիզներ).....	102
Սեր.....	109
Ղանդիպում	115
Բալլադ պատերազմի կրակից ծնված պատաճի Առամի մասին.....	118
Սիրո կրակներ	120
Եվ դու Եկար միանգամից	125
Թո սերը	130

ՊՈԵՄՆԵՐ

Արցախի արձիվը (պատմական պոեմ)	136
Նահատակ լուսոն (պոեմ)	210
Միեր (վավերագրական պոեմ)	258
Արցախուիի (պոեմ)	284
ԴՐԱՍՏԻԿԱԿԱՆ ԵՐԿԵՐ (1962-2008)	
Աստղերի հյուրը (չափածո դրամա)	316
Ամարասի կանթեղը (պատմական դրամա)	322
Քարանձավի ծայնը (դրամա)	359
Ճերիաք իրական	380
Նահատակ լուսոն (Մեր Ավոն)	399
(չափածո դրամա)	
Ոլոզան (լիբրետո)	438
ԵՐԳԻԾԱՆՔ ԵՎ ՀՈՒՄՈՐ	
Երգիծանք եւ հումոր	450
Իմաստասիրական կատակներ	456
Սպորտին էլ ծիծաղ է պետք	461
Ուսանողական հանաքներ	464
Արժիվները, գիշանգղը եւ ցիները (առակ)	467
Քաղաքական երգիծանք	469

Սուլրատ Աղալարի Խանյան

ԸՆՏԻՐ ԵՐԿԵՐ

Երրորդ հատոր

Խմբագիր՝

Դովիկ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ

Գեղ. Խմբագիր՝

Մնացական ԱԶԻԶՅԱՆ

Տեխ. Խմբագիր՝

Ժաննա ԱՎԱՆԵՍՅԱՆ

Վերստուգող

Գայանե ԴԱՆԻԵԼՅԱՆ

սրբագրիչ՝

Դամնական է շարվածքի 17.11.2009թ.: Ասորագրված է տպագրությամ 24.12.2009 թ.:
Տառատեսակ՝ «Arial Armenian»: Թուղթ՝ օֆսեթ, 42x60 1/16: Տպագրական 30
մամուլ: Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակ՝ 250: Գինը՝ պայմանագրային:



«ՍՈՆԱ» գրահրատարակչություն
ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների, 16

Հեռ. 951555

ՀԱՐԱԳԱՏՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ




Բանաստեղծի պապն ու տատը՝ Խաչատրութ և Նաբաթ Խանյանները




Զալից՝ բանաստեղծի ավագ որդին՝ Համլետը, հորներոր որդին՝ Սեյրանը, խորհութեան՝ Ելենան, հարսը՝ Օյլան, թոռը՝ Ակնքանդը



Զալից՝ բանաստեղծի որդին՝ Կարենը, դուստրը՝ Կարինեն, փեսան՝ Ավետիքը



Թոռան՝ Հայկի հետ




Թոռան՝ Արմենի հետ

ՀԱՐԱԳԱՏՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ



Զայսից՝ որդին՝ Կարենը, հարսը՝ Սուսաննան, կինը՝ Մարգոն



Զայսից՝ թոռը՝ Արամը, հարսը՝ Վարդուհին, ծոռը՝ Ավետիքը



Ա.Խանյանը, թոռուհին՝ Ելենան, որդիններ՝ Համլետը և Սուրենը

ԳՐՁԾԱԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ



Աջից՝ Ժ.Անդրյան, Ի.Ալավերդյան, Ս.Գրիգորյան, Գ.Աղաջանյան, Գ.Գաբրիելյան, Երկրորդ շարում ձախից. Հ.Բենգլարյան, Վ.Աբրահամյան, Ս.Խանյան, Մ.Դովիանիսյան, Վ.Օվյան



Զայսից՝ Ս.Խանյան, Ռ.Գաբրիելյան,
Գ.Գաբրիելյան



Աջից՝ Ս.Խանյան, Ա.Մերանյան,
Գ.Գաբրիելյան

ԳՐՁԾԱԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ



Գրիգոր Նարեկացի համալսարանում հերթական հանդիպումից հետո



Գառնի տաճարում նվազով գրուցում են հեթանոս աստվածների հետ...
Աջից՝ Ս.Խանյանը, Ծովինարը, Ա.Բնալարյանը, Ն.Ավագյանը